



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

NAZIK HOVHANNISYAN

**HANDWRITTEN DICTIONARIES ENTITLED
"HANDES BANASTEGHTSATS"
(DATED FROM THE 13TH TO 18TH CENTURIES)**

Yerevan 2026

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՑ» ԽՈՐԱԳՐՈՎ
ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ (ԺԳ-ԺԸ ԴԱՐԵՐ)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 091:81'374
ԳՄԴ 63.2+81.51-4
Հ 854

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների թեկնածու
Ա.Լ. Սարգսյան
Գրախոսներ՝ Բանասիրական գիտությունների թեկնածուներ
Լ.Գ. Թեյլան, Ա.Վ. Վարդանյան

Հովհաննիսյան Ն. Գ.

Հ 854 «Հանդէս Բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններ
(ԺԳ- ԺԸ դարեր) / Ն. Գ. Հովհաննիսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատա-
րակչություն, 2026.- 242 էջ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով «Հան-
դէս Բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները ավանդվում են
ԺԳ դարից, սույն ուսումնասիրությունը ԺԳ-ԺԸ դարերից ավանդված
գրչագրերի քննությունն է: Ներկայացվում են միջնադարի հայ քերական-
ների՝ հոմանշությանն առնչվող դիտարկումները, ձեռագիր բառարան-
ների տեսակները, կազմությունը, հոմանիշների բառաշարքերի ձևավոր-
ման սկզբունքները, բառաշարքերի բառակազմական և ձևաբանական
առանձնահատկությունները, բառային տարբերակները: Հայ մատենա-
գրության բնագրային օրինակների համեմատությամբ մանրամասնորեն
դիտարկվում են գրչագրերում առկա բառիմաստների փոփոխություն-
ները, նորակազմությունները, առանձնացվում և քննվում են բարբառային
իրողությունները, փոխառյալ բառերը, օտարաբառ կազմությունները:

ՀՏԴ 091:81'374
ԳՄԴ 63.2+81.51-4

ISBN 978-9939-970-20-2
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2026

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Անժխտելի է, որ երկրի տնտեսական, հասարակական, մշակութային վերելքին մեծապես նպաստում է տևական խաղաղությունը: Հայ ժողովրդի գոյության ժ-ԺԴ դդ. պատմական հանգամանքները մեկ անգամ ևս հավաստում են դա:

Բագրատունյաց թագավորության հաստատմամբ և ամրապնդմամբ Հայաստան աշխարհը հասնում է կատարյալ անկախության. Հայաստանն այլևս հարկատու չէր որևէ երկրի և համեմատական խաղաղություն վայելելով՝ անկասելիորեն առաջադիմում էր¹:

ԺԲ դարում արդեն հայկական պետություն է ձևավորվում Կիլիկիայում: Ինչպես նշվում է պատմագիտական ուսումնասիրություններում, Մեծ Հայքից դուրս գոյություն ունեցած հայկական իշխանություններից բոլոր փորձություններին դիմագրավողը լինում է միայն Կիլիկիայի Ռուբինյան իշխանապետությունը, որը գոյատևում է՝ երկարատև ու ծանր պայքար մղելով բյուզանդացիների, սելջուկների, խաչակիրների դեմ: ԺԱ դարավերջին և ԺԲ դարա-

¹Բագրատունիների անկումը ողբերգական հետևանքներ է ունենում Հայաստանի համար. ծայր է առնում զանգվածային արտագաղթ, հետագայում՝ թյուրք-սելջուկյան ծավալուն արշավանքների ժամանակ՝ բռնագաղթ Բյուզանդիա, Եգիպտոս, Կիլիկիա... Հարկ է նկատել, որ 1021 թ. Սենեբերիմ Արծրունին, հանձնելով Վասպուրականը Բյուզանդիային, գաղթում է Սեբաստիա՝ միանալով կայսրությանը, իր հետ տանելով ազնվականության, զինվորականության, բնակչության մի սովորաբար հատված (տե՛ս ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հ. Միքայել վրդ. չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 902 (աշխատությունների խորագրերը տրվում են ըստ տիտղոսաթերթերի՝ պահպանելով ուղղագրությունը), նաև՝ Ի. Орбели, Избранные труды, т. I, М., 1968, стр. 225): Հետագայում նման արտագաղթերը կրկնվում են (Հ. Մանանդյան, Երկեր, Գ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ե., 1977, էջ 30)՝ հիմք դնելով նորանոր հայ գաղթավայրերի մերձավորարևելյան, միջերկրածովյան տարածքներում և այլուր:

սկզբին հաստատված համեմատաբար երկարատև խաղաղությունը նպաստում է Կիլիկիայի ծաղկելուն:

ԺԲ դ. կեսերից հյուսիսային Հայաստանում Ջաքարյան իշխանական տունը, պայքարելով սելջուկյան ամիրայությունների դեմ, կարողանում է ազատագրել, ընդլայնել իր տիրույթները և ձեռք բերել համեմատական անկախ ինքնավարություն²: Քառորդարյա ռազմական գործողությունները հանգեցնում են պատմական Հայաստանի հյուսիսային, արևելյան, մասամբ կենտրոնական նահանգների ազատագրման՝ Շիրակ, Արարատյան դաշտավայր, Գուգարք, Ուտիք, Սյունիք, Արցախ...³:

Հայ ժողովրդի պատմության՝ Թ դ. վերջերից մինչև ԺԴ դ. ընդգրկող, ասել է՝ ընդհատումներով միմյանց հաջորդած Բագրատունյաց, Ռուբինյան, Ջաքարյանների իշխանությունների ժամանակաշրջանը համարվում է հայկական վերածնության շրջան⁴:

Անկախություն ձեռք բերած Հայաստանը՝ իբրև չեզոք երկիր⁵, դառնում է տարանցիկ առևտրի մերձավորարևելյան խոշոր կենտրոն: Ձևավորված և զարգացող ժառանգական հողատիրությունը (ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական) խթանում է անասնապահության, գյուղատնտեսության ճյուղերի զարգացումը: Երեվան են գալիս արհեստագործության տարբեր մասնագիտացումներ. ըստ Վազգեն Չալոյանի՝ «Միայն ձեռագրերի հրատարակումը

² Տե՛ս նաև Մանանդյան, նշվ. աշխ., էջ 183: Թ. Հակոբյան, Անիի պատմությունը, Գիրք II, Ե., 1982, էջ 128-129:

³ Տե՛ս նաև Պատմություն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնէաց, Թիֆլիս, 1910, էջ 391-392: И. Орбели, նշվ. աշխ., էջ 292: Օգտագործվել են նաև հետևյալ աշխատությունները՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, յօրինեալ ի Հ. Միքայէլ վրդ. չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հհ. Ա-Գ, Վենետիկ, 1785-1786: Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X-XI դարերում, Ե., 1940: Г. Микаелян, История Киликийского армянского государства, Е., 1952: Վ. Չալոյան, Հայկական ռենեսանս, Ե., 1964: Լեո, Երկերի ժողովածու, հհ. I, II, Ե., 1967, 1969: Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976:

⁴ Տե՛ս նաև Վ. Չալոյան, նշվ. աշխ., էջ 72-73:

⁵ Այս չեզոքությանը նպաստել էր նաև արտաքին իրադրությունը, ինչպես՝ Բյուզանդիայի և Արարական Խալիֆայության ներքին խնդիրները:

.... պահանջում էր մագաղաթի, կաշվի, արծաթի և ոսկու, ներկելու, մանրանկարչության տարբեր մասնագետների մասնակցություն»⁶: Հիմնված քաղաքները ևս նպաստում են արհեստների, առևտրի, առևտուրն ու արհեստն էլ փոխադարձաբար՝ քաղաքաշինության, քաղաքների ծաղկելուն⁷. պատմագիրները, պատմաբանները հիշատակում են Դվինը, Կարսը, Արծնը, Խլաթը, Անին, Սիսը, Ագուլիսը, Էրզրումը, Այասը⁸ և այլ քաղաքներ: Պատմագիտական աղբյուրները, հնագիտական պեղումները վկայում են, որ ոչ միայն արհեստներն ու առևտուրն են կենտրոնացել քաղաքներում, այլև դրանք մեծավ մասամբ եղել են քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոններ⁹:

Ինչպես իրավացիորեն նկատում է Մանուկ Աբեղյանը, քաղաքական վերածնությունն ուղեկցվում է «կուլտուրական» վերածնությամբ¹⁰: Այն հանգեցնում է աշխարհայացքի, աշխարհընկալման, իրականությունը ճանաչելու փոփոխության, նոր մտածողության, ազատախոհության ձգտման, նորի պահանջի: Զարգանում են հայոց մշակույթն ու գիտությունը՝ մանրանկարչությունը, ճարտարապետությունը, փիլիսոփայությունը, բժշկությունը, գրականությունը...: Մանուկ Աբեղյանի բնութագրմամբ՝ ԺԱ-ԺԷ դդ. հայոց գրականության աշխարհականացման շրջան են՝ նույնպես «արդյունք հայկական ինքնուրույն վերածնության»¹¹: Գրականության

⁶ Վ. Չալոյան, նշվ. աշխ., էջ 19: Տե՛ս նաև Ռ. Իշխանյան, Հայ գիրքը (1912-1920), Ե., 1981, էջ 11, 13-14:

⁷ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 10: Գ. Микаелян, նշվ. աշխ., էջ 177-202: Ի. Орбели, նշվ. աշխ., էջ 257-260: Նաև Լեո, Երկերի ժողովածու, հ. II, էջ 700-703: Հ. Օրբելու վկայությամբ՝ խոսքը վերաբերում է նաև արհեստավորների տեղաշարժին ("перемещение"), որոնք չունեին աշխատանքի մշտական վայր, թափառում էին ժամանակավոր գործ գտնելու նպատակով (տե՛ս Ի. Орбели, նշվ. աշխ., էջ 280):

⁸ Այսս նավահանգիստը համարել են «ծաղկեալ շահաստան», «միջազգային վաճառականության գլխաւոր հրապարակ». տե՛ս Վ. Քիրքճեան, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 16, 41:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք II (XI-XIX դարի 30-ական թ.թ.), Ե., 1946, էջ 582:

¹¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 570:

մեջ ձևավորվում են նոր թեմաներ՝ հայրենասիրական ողբերգություն, աշխարհիկ քնարերգություն, նոր ժանրատեսակներ՝ առակ, նովել, հանելուկ, (խոհա)խրատական և իմաստական բանաստեղծություն¹²:

Առաջընթացն ուղեկցվում է կյանքի աշխարհականացումով, և ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը. «Գրականության մեջ երևան է գալիս 12-րդ դարում կենդանի խոսակցական լեզուն, որն արդեն բավական հեռացած էր գրականության մեջ ընդունված հին լեզվից»¹³:

ԺԴ դ. «առաջին տասնամյակից» «կարծես մի մեծ մոայլ ու ալեկոծ տարածություն են կազմում այդ դարերը, որոնք, չնայելով իրենց փոքր հանգրվաններին՝ աղետալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար...»¹⁴:

Հաջորդող երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում Հայաստանը շարունակաբար եղել է «պատերազմների ասպարեզ», Հայաստանում իշխել են «գանազան տոհմեր՝ մոնղոլ ու թուրքմեն, թուրք ու պարսիկ - բոլորը մահմեդական, թշնամի միմյանց և ավելի ևս հայերին»¹⁵:

1604-1605 թթ. Շահ-Աբբաս I-ի ասպատակության, ապա և Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև երկարատև պատերազմի թատերաբեմը Արարատյան դաշտավայրից Արաքսի փերը ձգվող տարածքն է՝ Նախիջևան-Սյունիք-Հին Զուղա-Գողթն շրջագծով: Եվ պատահական չէ, որ այդ տարածքից էլ ԺԵ դ. կեսերից ծայր են առնում հայոց նոր ժամանակների ազգային-ազատագրական շարժումները՝ գործիչներ և գաղափարախոսներ ունենա-

¹² Նաև հմմտ.՝ Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ.-մբ Պ. Խաչատրյանի, Ե., 2000, էջ 7: Տե՛ս նաև Պ. Սևակ, Անտիպ ուսումնասիրություններ, Ե., 2016, էջ 212:

¹³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 578-579:

¹⁴ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 349:

¹⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 350-351: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 257-258:

լով նույն տարածքի գավակներին¹⁶:

Ըստ Հրաչիկ Միրզոյանի՝ «1616-1639 թթ. պատերազմական թեժ գործողություններն այլևս բացառապես Հայաստանում չէին տեղի ունենում, այլ գլխավորապես նրա սահմաններից դուրս՝ Միջագետքում, ուստի, նույն ավերածությունը չէին պատճառում Հայաստանի տնտեսությանը... Այդ է պատճառը, որ երկիրը սկսում է աստիճանաբար ազատ շունչ քաշել ու կենդանության նշաններ ցուցաբերել»¹⁷:

1639 թ. Օսմանյան կայսրության և Իրանի միջև կնքված խաղաղության դաշնագրից հետո արևելահայությանը վերջապես վիճակվում է ութսունամյա¹⁸ խաղաղ կյանք՝ միասնական ներտնտեսական-հասարակական ըստ ամենայնի լայն հարաբերություններով ու շփումներով: Տարածքային ծավալուն շառավղով միասնական այդ հաղորդակցությունները՝ վերաշինվող նոր գյուղաքաղաքներով ու վայրերով, սնում են աշխարհիկ կյանքի հասարակական նոր հոգեբանություն և գիտակցություն¹⁹:

Ներկայացնելով Միմեոն Ջուղայեցու կյանքն ու գրական ժառանգությունը՝ Հրաչիկ Միրզոյանը համառոտ անդրադառնում է ժամանակաշրջանին ու միջավայրին՝ եզրակացնելով. «Ամբողջությամբ վերցրած 17-րդ դարը կարելի է որակել որպես հայ մտավոր ու նյութական մշակույթի զարթոնքի ու վերակենդանացման դար»²⁰: Եվ դա, ըստ հետազոտողի, վերաբերում է ոչ միայն մայր հայրենիքին, այլև «հայկական բազմաթիվ գաղթօջախներից գեթ մի քանիս»-ին, որոնք սերտորեն առնչվում էին Հայաստանի «տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին, երբեմն խաղում էին ղեկավար ու վճռական դեր: ... առանձնապես աչքի էին ընկ-

¹⁶ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն.- Հայոց լեզվի պատմության հարցեր, III, Ե., 1991, էջ 61:

¹⁷ Հ. Միրզոյան, Միմեոն Ջուղայեցի, Ե., 1971, էջ 14:

¹⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 590:

¹⁹ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 61:

²⁰ Տե՛ս Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 26:

նում Նոր-Ջուղան, Կ.Պոլիսը, Լվովը և այլն»²¹: Մանուկ Աբեղյանը հավելում է նաև Էջմիածինը, որտեղ «արտագրում են բազմաթիվ նոր ձեռագիրներ ... Հորինում են քերականության, տրամաբանության և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից...»²²:

Հարկ է արձանագրել ոչ միայն ԺԷ դարում Հայ Եկեղեցում սկիզբ առած և մինչև ԺԹ դարի կեսերը տևած Սյունյաց Անապատ Տաթև, Էջմիածին, Նոր Ջուղա, Կ.Պոլիս, Վենետիկ (Ս. Ղազար) օջախներով հոգևոր այն մեծ շարժումը, որը կոչված էր ստեղծելու նորը, այլև առհասարակ ծայր առած վերանորոգության ընդհանուր շարժումով և գաղթօջախներում իրականացված հոգևոր նկատելի տեղաշարժերով՝ ԺԷ-ԺԸ դդ. հայոց մշակութային կյանքի աշխուժացումը. դպրոց և մանկավարժություն (Միլիթարյաններ, Նոր Ջուղա) փիլիսոփայական միտք (Մադրասի խմբակ և այլք), պատմագրության վերելք (Առաքել Դավրիժեցի, Երեմիա Քյումուրձյան, Միքայել Չամչանց), պոեզիա (Մայաթ-Նովա), ճարտարապետություն (Էջմիածնի զանգակատուն, Սյունիքի և Արցախի բերդեր), տպագրական գործ (Կ. Պոլիս, Ս. Ղազար, Մադրաս):

Անդրադառնալով լեզվի և ժողովրդի պատմության փոխհարաբերությանը՝ Գևորգ Ջահուկյանը շեշտում է, որ «լեզվի ֆունկցիաների շրջանակի, լեզվի տարատեսակների առաջացման, նրանց փոխազդեցության, նրանց փոխհարաբերության փոփոխության հարցերը տարբեր շրջաններում կապված են ժողովրդի պատմության ընթացքի հետ... տվյալ ժողովրդի... տնտեսական, քաղաքական և մտավոր կյանքի բոլոր կողմերի հետ»²³:

Ըստ հայոց լեզվի գրային շրջանի պատմության ընդունված շրջանաբաժանման՝ Ժ-ԺԱ դդ. նախամիջին ենթաշրջանն են²⁴: Հին շրջանի վերջին ենթաշրջանում, ինչպես արձանագրվում է լեզվաբանական գրականության մեջ, ավելի են խորանում գրական լեզվի

²¹ Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 14:

²² Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 439:

²³ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 35:

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 43:

և խոսակցականի տարբերությունները, հիշատակվում են «քերթողական լեզուն» և «գեղջուկ բարբառը», «գեղջուկ բանը»՝ հուշելով գրիչների «լեզվական նախասիրությունը»²⁵: Նկատի առնելով քննվող ձեռագիր բառարանների (այսուհետև՝ ՁԲ) խորագիրը՝ «Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս», այլև Գասպար Գասպարյանի՝ «Բառարանի հնությունը, ըստ հայտնի ձեռագրերի, հասնում է ԺԲ դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի» դիտարկումը²⁶՝ կարելի է թերևս ենթադրել, որ դրանք ստեղծվել են հենց այդ «վաղ» ժամանակահատվածում:

* *
*
*
*

Բագրատունիների թագավորության վաղաժամ կործանումով, երկրի աննախադեպ ասպատակություններով ու ամայացումով պայմանավորված՝ դանդաղում, արգելակվում է «խոսակցական լեզվի» հետագա «զարգացումը»: Եվ սակայն գոյատևման ընթացքի անշրջանցելի փաստարկ են ժամանակի կենդանի խոսակցական լեզվի զուգակցմամբ շարադրված վիմական արձանագրությունները՝ հատկապես Ժ-ԺԴ դարերից վկայված նոր տեսակներով²⁷: Այդուհանդերձ, Գևորգ Ջահուկյանի հիմնավորմամբ՝ «Գրական հուշարձաններում *մասնակի արտահայտություն գտած* այս լեզուն էր, որ հետագայում հանգում է միջին հայերենին»²⁸ (ընդգծ.՝

²⁵ Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և հաւելուածով Յօրինեաց Հ. Արսէն վ. Այտընեան, Վիէննա, 1866, էջ 147: Է. Սկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980, էջ 4-6: Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը. - Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., 1983, էջ 129: Է. Սկրտչյանի հավաստմամբ՝ «խոսակցական լեզուն ավելի շատ օգտագործվում է հիշատակարաններում, որոնք գրված են Հայաստանի արևմտյան մասերում, այնտեղ, ուր միջին հայերենը պետական-պաշտոնական լեզու էր, ուստի և այդ լեզվին ինչ-որ չափով տուրք տալուց գրիչները չէին խորշում». տե՛ս Է. Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 69:

²⁶ Տե՛ս և Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 34:

²⁷ Տե՛ս և Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (10-14-րդ դդ.), Ե., 1973, էջք 12, 16-17, 23:

²⁸ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 43-44:

Ն. Հ.): Միջին հայերենը, ըստ այդ շրջանաբաժանման, ԺԲ-ԺԶ դդ. լեզուն է: Լեզվաբանները նշում են այս շրջանում գրաբարի և միջին հայերենի գործածության, կիրառության ոլորտների որոշ բաժանում: Միջին գրական հայերենը դառնում է պետական-պաշտոնական գրագրությունների, գիտական-գեղարվեստական գրականության, մասամբ պատմական երկերի, գրաբարը՝ եկեղեցական-կրոնական գրքերի ու արարողությունների, պատմական որոշ աշխատությունների լեզու: Միաժամանակ արձանագրվում է, որ և՛ գրաբարը, և՛ միջին հայերենը միատարր չեն եղել: Միջին շրջանի ԺԲ-ԺԴ դդ. Կիլիկյան նորմավորման ենթաշրջանն են, երբ միջին հայերենը՝ որպես գրական լեզու, դառնում է պետական-պաշտոնական՝ ձգտելով համեմատական նորմավորման, միօրինակացման ու միատարրության: Այս շրջանում միջին գրական հայերենի դրսևորած հնչյունական, ձևաբանական, շարահյուսական կարևոր առանձնահատկությունները ներկայացնելիս լեզվաբանները նշում են բառապաշարում արձանագրվող բազմաթիվ նորակազմություններ, բառակազմական նոր միջոցներ, փոխառություններ²⁹:

Միջին շրջանի ԺԵ-ԺԶ դդ. արդեն աշխարհաբարացման ենթաշրջանն են. հետազոտողների կարծիքով՝ պայմանավորված պետականության անկումով, քաղաքական հիմքի կորստով՝ թուլանում է գրական լեզվի ազդեցությունը, լեզուն ավելի է անմիօրինականում, բարբառայնացվում, բայց և ժամանակի գրական երկերի լեզուն մնում է կենդանի խոսակցականը:

ԺԷ դ. վաղ աշխարհաբարի ենթաշրջանի սկիզբն է: Այդ ենթաշրջանը Գևորգ Ջահուկյանը բնութագրում է «որոշակի միասնականացնող տենդենցներ»-ով, «որոնք էլ հենց հիմք են տալիս ընդհանուր լեզվի և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկցիաները սահմանափակելու համար»³⁰: Գործածությամբ սահմանափակվող գրաբարի և բարբառների հիմքով աստիճանաբար ձևավորվում է լեզվական մի տարբերակ, որը ենթաշրջանի

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 48: Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Գիրք Ա, Ե., 1960, էջք 110, 117:

³⁰ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 50:

լեզվավիճակը քննողները համարում են «քաղաքական» կամ «քաղաքացիական» հայերեն³¹:

ՁԲ-ների քննությունը ներկայացվում է այս շրջանաբաժանմամբ. բառարանի գրչագրերն ըստ դարերի բաշխվել են անհավասարաչափ (տե՛ս 22-րդ էջում). անհրաժեշտությամբ և նպատակահարմարությամբ պայմանավորված՝ համեմատվում են հայոց լեզվի միջին և նոր շրջաններում ստեղծվածներն ու ընդօրինակվածները նկատի առնելով այն կարծիքը, որ «երկրորդ ենթաշրջանի» «առանձնահատկությունները շարունակվում են ընդհուպ XVII դարի վերջը»³², այլև տարբերությունները և ընդհանրությունները առավել մանրամասնորեն ներկայացնելու նպատակով:

Ձեռագիր այս բառարանները ստեղծելու կամ ընդօրինակելու վայրերը, ի տարբերություն ձեռագրերի հիշատակարանների, անհայտ են, և հնարավոր չէ հանգամանորեն անդրադառնալ լեզվական այս կամ այն երևույթը տեղայնացնելու խնդրին: Այդուամենայնիվ, ընդօրինակումները հետաքրքիր են նաև ըստ դարերի ներկայացվող բառային տարբերակներով և հավելումներով:

* *
*

Հանրահայտ է, որ մշակութային կյանքի հիմքը դպրոցն է: Հայկական վերածնության շրջանում, ինչպես նշում են հետազոտողները, վանքերին կից բացված դպրոցներից (վանական)³³, գրա-

³¹ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 62:

³² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության (այսուհետև՝ ԱՄԳՀՊ), հ. Ա, Ե., 1972, էջ 44:

³³ Ըստ Ա. Մովսիսյանի՝ «Ժամանակի պահանջների և երկրի քաղաքական ծանր կացության հետևանքով դպրոցների մեծ մասը կենտրոնանում է վանքերում: ...Միջնադարի, հատկապես 10-15-րդ դդ. վանքաշատ Հայաստանը հայտնի է դառնում նաև իր վանական բազմաթիվ դպրոցներով: ...Միջնադարի հայոց եկեղեցական հաստատությունների ու հատկապես խոշոր վանքերի ամենակարևոր ֆունկցիաներից մեկը կրթության գործի կազմակերպումն է եղել և այդ ավանդաբար շարունակվել է մինչև 19-րդ դարի կեսերը»։ Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958, էջ 72-73:

տուն-գրադարաններից բացի, տարրական և բարձրագույն դպրոցներ, վարժարաններ, ձեմարաններ, համալսարաններ են ստեղծվում նաև քաղաքներում: Հայաստանյայց դպրոցներից շատերը, վայելելով արքունիքի և եպիսկոպոսական աթոռների հովանավորությունը, աջակցություն և օժանդակություն ստանալով նաև քաղաքային ու գյուղական համայնքներից, հետագայում դառնում են ուսումնագիտական կենտրոններ, ինչպես՝ Անիի, Արգինայի, Կարսի, Սանահինի, Հաղպատի, Այրիվանքի, Կեչառիսի, Նարեկա, Գլաձորի, Դրազարկի, Նորավանքի, Հաղարծինի, Նոր Գետիկի, Գանձասարի, Սսի և այլն³⁴: Սրանց մեծ մասը, հիմնվելով Թ-ԺԱ դարերում, բուն գործունեություն է ծավալում ԺԲ-ԺԴ դարերում: Ուսումնագիտական այս կենտրոններում ուսուցչապետած Հովհաննես Իմաստասերի, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու, Վարդան Արևելցու, Մխիթար Գոշի, Եսայի Նչեցու, Դավիթ Քոբայրեցու, Գրիգոր Տաթևացու, Վարդան Այգեկցու, Թովմա Մեծոփեցու և այլոց գործունեությունը, սերտորեն առնչվելով դպրոցին, հետապնդում է ուսուցողական, գործնական նպատակ. գրվում, կազմվում են այբբենարաններ, գրուցարաններ, դասագրքեր, հեղինակվում քերականական, ուղղագրական աշխատություններ³⁵: Վերջինների կարիքը զգացվում էր՝ ելնելով «... հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»³⁶: Ուրեմն և կրթօջախներից շատերը եղել են գրչության արվեստի կենտրոններ, որոնցում լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր³⁷: Այս

³⁴ Տե՛ս նաև Ռ. Իշխանյան, Հայ գիրքը (1912- 1920), էջ 10:

³⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Ե., 1954, էջք 205-221, 243-259, 259-280, 282-291, 292-298: Հեղինակը նկատել է, որ ԺԲ-ԺԳ դդ. հայ քերականությունն «իր լեզվով դառնում է ավելի ժողովրդական ու հասկանալի». Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 225:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Ինչպես վկայում են հետազոտողները, «11-14-րդ դդ. Սանահինի, Հաղպատի և Անիի դպրոցներում, 14-15-րդ դդ.՝ Խոր-Վիրապի, Ռշտունյաց, Մեծոփա, Խիզանի, Երզնկայի և Կիլիկիայի բազմաթիվ դպրոցներում ուսուցանում էին գրչության ար-

կենտրոններում է զարգացել ազգային ու թարգմանական գրականությունը, ուսուցանվել են լեզուներ (հունարեն, ասորերեն, պահլավերեն, լատիներեն, պարսկերեն)³⁸, իբրև դասընթացներ դասավանդվել են պատմագրություն, ճարտասանություն, աստվածաբանություն, քերականություն, տոմարագիտություն, աստղաբաշխություն, իմաստաբանություն, բնագիտություն, երաժշտություն, այլ առարկաներ³⁹:

Հետազոտողների վկայությամբ՝ միջնադարում մտավոր ընդհանուր զարգացման հիմք ու նախապայման է եղել քերականությունը, որը դիտվել է «ամենայն իմաստասիրության դուռն ու բանալին»⁴⁰: Ըստ Հրաչիկ Միրզոյանի՝ տրամաբանությունը «մինչև 17-րդ դարը ուսուցանվել է փիլիսոփայական մյուս գիտությունների և քերականության հետ միահյուսված: Այդ է պատճառը, որ այս շրջանում գրված քերականական և տրամաբանական աշխատություններն ուսումնասիրելիս դժվար է որոշել՝ որտեղ է վերջանում քերականությունը և որտեղ է սկսվում տրամաբանությունը կամ՝ ընդհակառակը»⁴¹: Եվ որքանով հաճախ տրամաբանությունը բնորոշվում է որպես մտածողության քերականություն, ուսումնական ծրագրերում առավել ուշադրություն է հատկացվել ճարտասանու-

վեստը, «արվեստ գրչութեան» և «վայելչագրութիւն ի զանազան կերպս»». տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 386: Ռ. Իշխանյանի կարծիքով՝ «Հայկական գրչության կենտրոններ են եղել նաև Հայաստանից դուրս հայաբնակ վայրերում կառուցված վանքերում, հատկապես Դրիմում, Արևմտյան Անատոլիայում, Պաղեստինում, Լեհաստանում, Իտալիայում, Պարսկաստանում և այլուր»։ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 10:

³⁸ Տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջք 342, 383: Բ. Չուգասյանի հավաստմամբ՝ «Որ պարսկերենը դեռևս XI-XII դարերից ուսուցվել և գիտական լեզու է եղել Հայաստանում, վկայում են ձեռագրական առանձին հաղորդումները և, որ հատկապես շատ արժեքավոր է, Մխիթար Հերացին»։ Բ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Ե., 1963, էջ 35 (տե՛ս նաև 173-րդ էջում):

³⁹ Դասավանդվող առարկաների մասին մանրամասն տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 381-397:

⁴⁰ Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Ե., 1973, էջ 111:

⁴¹ Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 153:

թյանն ու տրամաբանությանը, ասել է՝ մտածել սովորելուն, խոսք կառուցելուն, տրամաբանորեն ընդհանրացնելուն, մտահանգումներին, փաստարկներն ապացուցելուն (կամ հերքելուն), դատողությունը, միտքն ունկնդրին հասցնելուն և համոզելուն:

Դասավանդվող առարկաների բազմազանությունը, հատկապես լեզուների ուսուցումը, զարգացող գիտություններին վերաբերող աշխատությունները, ինչ խոսք, նաև շփումը բազմալեզու առևտրականության հետ թելադրում, պահանջում էին նորանոր ձեռնարկներ, գրուցարաններ, բառարաններ: Եվ հայ բառարանագրության գիտական գրականության մեջ հիշատակվող ծաղկումը և զարգացումն այս շրջանում անխզելի հանգույցներով պայմանավորվում են նշված հանգամանքներով⁴²: Ինչպես նկատել է Հայկ Ամալյանը, հայ բառարանագրությունն ընդհանուր առմամբ ժամանակաշրջանի (ԺԱ-ԺԵ դդ.) գիտության և ուսումնական գործի արտապատկերն է⁴³:

⁴² Հանգամանորեն տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), Ե., 1966, էջ 45: Ս. Ղազարյան, նշվ աշխ., էջ 128: Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 25: Նաև՝ Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ -XIX դ.), հ. 1, Ե., 2006: Գ. Թոսունյան, Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006: Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

⁴³ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), էջ 45:

ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայկ Ամալյանը միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները քննելիս նշում է, որ այդ շրջանում գրված, թարգմանված ամենատարբեր գիտությունների վերաբերող աշխատություններում, այլևայլ ստեղծագործություններում առկա անհասկանալի բառերի մեկնություններն ու բացատրությունները սկզբնապես կցվել են բնագրերին¹: Հետագայում ստեղծվել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպես վկայում է հեղինակը, լինելով փոքրածավալ, չեն արտացոլել լեզվի բառային ողջ կազմը: Այդուհանդերձ, ըստ նրա, դրանք անչափ կարևոր են եղել գիտությանը ծառայելու, ուսումնական գործին նպաստելու առումներով: Այդ է վկայում նաև քննվող ՁԲ-ների խորագիրը՝ «Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս», ասել է՝ օգտագործելով ՁԲ-ների բացատրությունները՝ նորավարժների (դեռակիրթների, աշակերտների) խոսքը կատարելագործելու, ինչպես նաև բառապաշարը հարստացնելու ձեռնարկ²: Հայկ Ամալյանը, ներկայացնելով «Հանդես բանաստեղծաց»-ի, «հոմանիշային խմբերի» կազմությունը, բառերի դասավորության կարգը, նշում է, որ բառարանը նաև «երիտասարդ բանաստեղծների, հավանաբար և ճարտասանների, գեղարվեստական խոսքի կատարելագործման ու բառապաշարի հարստացմանը նպաստող ... մի հետաքրքիր ուսումնական ձեռնարկ» է, «հայ մատենագրության մեջ» «նոր տիպի» բառարան³: Ըստ նրա՝ հոմանիշային խմբերում առկա են բառեր, որոնք «հոմանիշ չեն գլխաբառին կամ շրջապատի մյուս բառերին», բայց և հեղինակի կարծիքով՝ «միևնույն բառախմբում հավաքված

¹ Տե՛ս նաև Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 22:

² Հ. Ամալյան, նշվ աշխ., էջք 130, 132:

³ Տե՛ս նաև Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 123-132:

բոլոր բառերը կարող են գլխաբառի հետ կապվել, համընկնել իմաստային մի որևէ գործածությամբ և առարկային ու երևույթին վերագրել միևնույն հատկանիշը, նախադասության մեջ իրար փոխարինել զանազան խնդրային ու պարագայական դերերում»⁴: Այս առնչությունները բացահայտելու համար հեղինակն օրինակներ՝ «հատած»-ներ է ներկայացնում «Հանդես»-ից՝ քաղելով *Բոց, Ասել, Խազմ, Խաւար, Լոյս* և այլ «բառախմբեր», որոնցից մի քանիստում, ըստ նրա, բառերը «կարելի է ենթաբաժանել», սակայն դրանք «բոլորն էլ իրար հետ ... կապված են ... ընդհանուր հասկացությամբ» և միավորվում են «ընդհանուր գաղափար»-ով⁵: Սրանից բացի՝ արձանագրվում են նաև բառերի՝ «բառախմբերում» փոխաբերական իմաստներով հանդես գալը և «գլխաբառին» առադրվելը⁶:

Հայկ Ամալյանը ներկայացնում է նաև «Հանդես»-ի գրչագրերից իր դիտարկումներով լավագույնը համարվող «№ 2371 ձեռագրի» բառարանի գլխաբառերը՝ «նշելով տվյալ բառով սկսվող բառախմբում եղած բառերի քանակը ... մյուս ձեռագրերի օգնությամբ լրացումներ և մասնակի ճշգրտումներ կատարելով»⁷: Հետագոտողը եզրահանգում է, որ բառարանում՝ ա) «... կենտրոնացված ... բառեր»-ը «գործածական են եղել թե՛ մատենագրության մեջ, և թե՛ դպրոցական-ուսումնական առօրյայում»⁸, բ) «Նրանում հավաքված են գրական և մասամբ ճարտասանական երկերում գործածվող «գեղջուկ» (բարբառային) բառերի հոմանիշները, ինչպես նաև բացարձակ հոմանիշներ չհանդիսացող, սակայն գործածության մի որևէ առումով, որոշակի բառային շրջապատում, գլխաբառի հետ որևէ իմաստային աղերս ունեցող բառեր»⁹, և գ) այն «օգտակար կարող է լինել նաև մի շարք բառերի բազմիմաստությունները, գործածական զանազան դրսևորումները պատմականորեն ուսումնասի-

⁴ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 125:

⁵ Տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 126-127:

⁶ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 128:

⁷ Տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 130:

⁸ Նույն տեղում:

⁹ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 47:

րելու, բառի իմաստային փոփոխություններին հետևելու տեսակետից»¹⁰:

Գասպար Գասպարյանը, անդրադառնալով «միջնադարյան հայերեն ձեռագիր բառարանների մեջ ամենատարածված և կատարյալ բառարաններից մեկ»-ին՝ «Հանդէս բանաստեղծաց»-ին, նշում է, որ դա ինքնուրույն բառարան է, չի առնչվում որևէ որոշակի աշխատության, «ինչպես միջնադարյան «Բառք»-երի մեծ մասը»¹¹: Ներկայացնելով այն որպես ժամանակի բառապաշարը հարըստացնելու լավագույն աղբյուր և հոմանիշների հարուստ բառարան՝ Գասպար Գասպարյանն արձանագրում է, որ նրանում «տրրված են նաև ժողովրդական խոսակցական բառեր», վերնագրի *գեղջուկ* բառն էլ «վկայում է ժողովրդական, բարբառային բառերի առկայությունը»՝ նշելով, որ «բոլոր գլխաբառերը... գրական լեզվից են..., իսկ գեղջուկ բառերը տրված են միայն հոմանիշների շարքում»¹²: Նա նույնպես հանգում է այն եզրակացության, որ «Հանդէս բանաստեղծաց»-ի «մանրագնին ուսումնասիրությունը ի հայտ կրբերի բավական թվով բառեր, որոնք իր ժամանակին «գործածական են եղել մեր գրականության և ժողովրդական խոսվածքի մեջ»¹³: Նրա կարծիքով էլ այս բառարանը «հոմանիշների հարուստ աղբյուր է ծառայել միջնադարի հայ դպրոցների ... համար», և «Բառարանում հավաքված են բանաստեղծական-ճարտասանական ոճեր, աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար»¹⁴:

Իրապես, բառարանի գործնական բնույթով են պայմանավորված և գրչագրերում առկա ծանոթություններն ու հղումները՝ «տե՛ս կամիս զմնացեալսն նման սմին տե՛ս ընդ ո՛յ գրի», «տե՛ս ոչ ճշմարիտ», «զմնացեալսն տե՛ս ի ներքոյ փիւր տառի», «տե՛ս բունն և զլացող մարդ», «տե՛ս աղքատ», «վասն շինութեան աստուծոյ»,

¹⁰ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 132:

¹¹ Տե՛ս Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 33-34: Գ. Գասպարյանը բառարանին անդրադառնում է աշխատության 33-36-րդ էջերում:

¹² Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 34:

¹³ Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 36:

¹⁴ Նույն տեղում:

«վասն որոնելոյ», «վասն հպարտութեան», «վասն պատմելոյ», «վասն ծուլութեան», «վասն առաջօք նմանութեան», «վասն արագութեան» և այլն (տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից (այսուհետև՝ ՄՄՁ) հետևյալները՝ ՄՄՁ 566(II)¹⁵, 3450, 5995, 540, 10223):

Հակոբ Անասյանը «Հանդէս բանաստեղծաց»-ին անդրադառնում է ներկայացվող «բառարանագրական հարուստ նյութեր»-ի շարքում՝ նշելով, որ դրանք վկայում են միջին դարերում «հայ գրավոր մշակույթի բնագավառում» բառարանագրության գրաված կարևոր տեղը: Ըստ նրա՝ դժվար է «պատկերացնել, որ Ե դարում սկսվող և հետզհետե շարունակվող թարգմանական ուժեղ շարժումը կարող էր ընթանալ առանց բառարանային միջոցների՝ բառարանների և բառացանկերի»¹⁶: Արժևորելով Հայկ Ամալյանի և Գասպար Գասպարյանի աշխատությունները՝ նա արձանագրում է, որ դրանցում «ընդգրկված նյութերը սիստեմավորված են և ըստ բնույթի ու բովանդակության վերլուծման ենթարկված. պարզված ու նկարագրված են նրանցում կիրառված բառարանագրական սկզբբունքները»¹⁷: Հակոբ Անասյանը առանձնացնում է «Հանդէս բանաստեղծաց»-ի շուրջ 30 ձեռագիր՝ հիշատակելով նաև դրանց երկու տարբեր՝ այբբենական և ոչ այբբենական խմբագրությունները¹⁸:

Ըստ Հայկ Ամալյանի՝ «Հանդէս բանաստեղծաց»-ը հնագույն բառարաններից է. «այն վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, գրության ստույգ ժամանա-

¹⁵ ՄՄՁ 566-ում առկա է 2 բառարան՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տարից» (234 ք-279 ա) և «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (278 ք- 300 ա). 2-րդը նշվում է ՄՄՁ 566 (II):

¹⁶ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976, էջ 1177:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Տե՛ս Ն. Անասյան, նշվ. աշխ., էջ 1184-1186: ՁԲ-ների երկու տարբեր (այբբենական և ոչ այբբենական) խմբագրությունները նշում է Հ. Ամալյանը (տե՛ս Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 124):

կը, տեղը և հեղինակը անհայտ են»¹⁹: Հետագայում, սակայն, հետեւելով Գասպար Գասպարյանին և ընդունելով նրա դիտարկումը, որ «Բառարանի հնությունը ... հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի»²⁰, «Հայ միջնադարյան բառարանագրությունը» աշխատության մեջ արդէն նշում է. «Իսկական, բառարանագրական մասնագիտական առումով, հոմանիշների բառարանը հայ մատենագրության մեջ «Հանդէս բանաստեղծաց» անունով հայտնի բառարանն է, որի հնագույն ձեռագիրը *XII դ. ընդօրինակություն է*»²¹ (ընդգծ.՝ Ն. Հ.), այլև արձանագրում, որ բառարանը «կազմված է 10-11-րդ դարերում»²², հավանաբար նկատի առնելով Թ-ԺԱ դարերում հիմնված ուսումնագիտական կենտրոնների գործունեությունը:

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով²³ առանձնացվել են «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ներն ամփոփող 63 ձեռագրեր²⁴, որոնք այդ ձեռագրացուցակներում ըստ դարերի բաշխվել են հետևյալ կերպ

¹⁹ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 124: Նույնն է հաստատում նաև Հ. Անասյանը՝ «... ձեռագիր հնագույն օրինակները ԺԲ դարից են» (Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1186): Հ. Ամալյանի վկայությամբ՝ Ն. Ակիկյանը 1930 թ. «Հանդէս ամսօրեայ»-ում Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի գրախոսականում, «հիշատակում է մի շարք հին բառարաններ», նաև «հայտնում իր կարծիքը նրանց ստեղծման ժամանակների մասին» (Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 8): Հարկ է արձանագրել, որ, ինչպես գրախոսականում նշում է Ն. Ակիկյանը, ««Հին Բառագիրքներ»-ը «սովորաբար կը բովանդակեն» ... «3. Հանդէս Բանաստեղծաց»-ը «իբր ԺԱ-ԺԲ. դարէն, ճիսացած յընթացս նոր յաւելուածներով, եւ ենթարկուած նոր խմբագրութիւններու: Հագուադէպ է գտնել ձեռագիրներ, որոնք ըստ ամենայնի նոյն բնագիրը ներկայացնեն» (Հ. Ն. Ակիկեան, Հ. Աճառեան. Հայերէն Արմատական Բառարան, Հանդէս Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8, էջ 491):

²⁰ Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 34:

²¹ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 47:

²² Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 356:

²³ Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Ե., 1965-1970: Նաև հմմտ.՝ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 233-234:

²⁴ Ըստ Հ. Ամալյանի՝ մի շարք բառարաններ «պահպանվել են տասնյակ գրչագրերով», և «Հանդէս բանաստեղծաց»-ի «գրչագրերի ընդհանուր քանակը» 68 է (Հ. Ա-

ԺԳ դ.՝ երկու՝ ՄՄՁ 4612, 5596.

ԺԴ դ.՝ յոթ՝ ՄՄՁ 530, 1654, 2371, 3937, 4149, 5919, 8198.

ԺԵ դ.՝ չորս՝ ՄՄՁ 266, 2335, 5925, 7117.

ԺԶ դ.՝ յոթ՝ ՄՄՁ 532, 538, 2372, 3197, 5126, 7250, 8106.

ԺԷ դ.՝ երեսունուր՝²⁵.

ԺԸ դ.՝ հինգ՝ ՄՄՁ 566(II), 843, 3450, 9166, 9992:

Ինչպես նկատելի է, պայմանավորված նաև հիշատակված պատմական հանգամանքներով, ԺԷ դարից ավանդված ՁԲ-ների քանակը գերակշռում է:

Բառարանի ամբողջական խորագրի մասին խոսելիս Հայկ Ամալյանը նշում է, որ «բառ է գեղջուկք բառերը» ավելացվել են հետագայում «այս վերնագրին, վերջից»²⁶, և ինչպես պարզվում է խորագրերի համեմատությունից, ավելի ստույգ՝ ԺԴ դարում:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված ՁԲ-ները հետևյալ խորագրերով են (նույն խորագրի տարբերությունները ա, բ, գ ... համարակալմամբ են)²⁷

1. «Հանդէք բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն» (ՄՄՁ 4149, 8106).

2. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս» (ՄՄՁ 266, 532, 538, 3197, 3937, 5596, 7250, 8198 (I)).

2. ա. «Հանդէք բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս» (ՄՄՁ 4612).

3. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն բառ է գեղջուկ» (ՄՄՁ 530, 5126).

մալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 138-139): Հանգամանքների բերումով (վերակազմություն, ցուցադրություն) հնարավորություն չի ընձեռվել ծանոթանալու մի քանի գրչագրի:

²⁵ Ձեռագրահամարների ավելորդ կրկնությունից խուսափելու համար դրանք տրվում են ՁԲ-ների խորագրերը ներկայացնելիս (տե՛ս 24-25-րդ էջերում), այլև բառերի այբբենական և ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներն առանձնացնելիս (տե՛ս 29-31-րդ էջերում):

²⁶ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 233-234:

²⁷ Պահպանվում է ՁԲ-ների ուղղագրությունը:

4. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (ՄՄՁ 1654, 2371, 2372, 7117).

4. ա. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ գեղջուկ» (ՄՄՁ 2335, 5919).

4. բ. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս: Բառեր գեղջուկք» (ՄՄՁ 5925).

5. «Բառք նորավարժ» (ՄՄՁ 8198(II)):

Հատկանշական է, որ առկա են միևնույն խորագրով, բառերի և՛ կոպիտ այբբենական, և՛ ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներ (օրինակ՝ ՄՄՁ 530, 5126-ը՝ 3. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն բառ է գեղջուկ», ՄՄՁ 2335, 5919-ը՝ 4.ա. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ գեղջուկ» խորագրերով):

ՄՄՁ 8198-ում բառերի ոչ այբբենական (էջ 54ա-59բ) և կոպիտ այբբենական (էջ 64ա-68ա) դասավորությամբ երկու բառարան է: Վերջինի խորագիրն է «Բառք նորավարժ». սկսվում է *Անհասս*, ավարտվում *Քաջամիտ* հենաբառերով²⁸ հոմանիշների բառաշարքերով²⁹: Այն համեմատվել է բառերի այբբենական դասավորությամբ մյուս գրչագրերի հետ. համեմատությունը հնարավորություն է ընձեռում այն համարելու քննվող ՁԲ-ներից մեկը: Ուստի բառարանները նշվել և նշվելու են ոչ այբբենականը՝ 8198(I), կոպիտ այբբենականը՝ 8198(II) համարակալմամբ:

²⁸ Ընդունված եզրերից պայմանականորեն օգտագործվում է հենաբառը. գրչագրերում այն փոփոխվում է. մի գրչագրի հենաբառը կարող է մյուսում հենաբառ չլինել (հմմտ. ՄՄՁ 530, 5596, 5919, 7117-ում՝ *Դասաւոր* և մյուսներում՝ *Տէր* հենաբառերով, ՄՄՁ 5596, 2372-ում՝ *Պատիլ*, և ՄՄՁ 4612, 3937-ում՝ *Շարիլ*, ՄՄՁ 4612 -ում՝ *Մշտնջենաւոր*, մյուսներում՝ *Միշտ* հենաբառերով բառաշարքերը):

²⁹ Հ. Ամալյանը սույն ՁԲ-ները քննելիս նշում է. «... բառարանում հոմանիշներն իսկական շարք չեն կազմում, ... հիշյալ բառարանի բառալսմբերում կան բազմաթիվ բառեր, որոնք հոմանիշ չեն հիմնաբառին», և դա նկատի ունենալով է ինքը գործածում «հոմանիշային խումբ տերմինը» (Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 65): Ընդունելով Հ. Ամալյանի դիտարկումը՝ պայմանականորեն կիրառվում է *հոմանիշների բառաշարք* ձևակերպումը (այսուհետև՝ ՀԲԸ):

ԺԷ դարում գերակշռում են 4. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» խորագրով ՁԲ-ներ. այս խորագրով կան բառերի և՛ այբբենական (ՄՄՁ 268, 537, 2431(I), 3170, 3261), և՛ ոչ այբբենական (ՄՄՁ 267, 516, 536, 2330, 2331, 2370, 2381, 2431(II), 3257, 3488, 5008, 5995, 7004, 7014, 7995, 8563) դասավորությամբ ՁԲ-ներ³⁰:

Թվարկվածներից³¹ բացի՝ ԺԷ դարից ավանդվածներն ունեն նաև հետևյալ խորագրերը

1.ա. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն» (ՄՄՁ 2295).

3.ա. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժից բառ» (ՄՄՁ 533, 3824).

3.բ. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն բառ գեղջուկք» (ՄՄՁ 540).

3.գ. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն բառ գեղջուկ» (ՄՄՁ 545, 682):

ՄՄՁ 2019-ում, 3286-ում բառարաններն անխորագիր են (երկուսն էլ բառերի ոչ այբբենական դասավորությամբ)³²:

³⁰ Ներկայացվող ձեռագրերի՝ բառերի այբբենական և ոչ այբբենական դասավորությամբ բառարանները տարբերակվում են, այսինքն՝ նույն խորագրով առանձնացվում են բառերի ոչ այբբենական դասավորությամբ (ինչպես՝ 2. և 4.ա խորագրերի դեպքում) և բառերի այբբենական դասավորությամբ բառարանները (ինչպես՝ 3., 3.ա և 3.գ խորագրերի դեպքում):

³¹ Խոսքը վերաբերում է հետևյալ խորագրերին՝ 2. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս» (ՄՄՁ 2281, 2291(I), 6097, 6624). 3. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն բառ է գեղջուկ» (ՄՄՁ 537, 3468, 8606, 10223). 4.ա. «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս բառ գեղջուկ» (ՄՄՁ 529, 2369, 3200):

³² Ըստ Մաշտոցի անվան մասնաճյուղի «Ցուցակ ձեռագրաց» Ա հատորի՝ 2019-ում նշվում է «Հանդէս բանաստեղծաց» խորագիրը, իսկ ըստ «Խայրէկն ձեռագրաց» Մայր ցուցակի՝ այս գրչագրում՝ «162բ-70ա» էջերում, վկայվում է «[Հանդէս բանաստեղծաց՝ փաղանունաբար ստորոզիլ սակս նորավարժիցն. բառ է գեղջուկ. *ձեռ. 530, 59բ-65բ*] -Պարտ՝ պատշաճ, Ի դէպ՝ ի ճահ... զիծ՝ տառք, գծաւորք»: Նույն ձևով է նշվում նաև 3286-ի համար՝ «Բառք Հանդէս բանաստեղծաց», և «293ա- 300բ [Հանդէս բանաստեղծաց, փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն, սակս բառ

ՄՄՁ 8533 բառարանը սկսվում է *Նմանութիւն* հենարանով (փաստորեն 1-ին էջը չկա), և 129ա էջում չկա 60 հենարան (ՀԲՇ-ների թիվը 71 է, բառերի ընդհանուր քանակը՝ 960):

ՄՄՁ 2291-ում և 2431-ում նույնպես առկա է երկուական բառարան: Առաջինում՝ «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս» (էջ 316ա - 325ա) և «Այս բառք գեղջուկք որ կարի պիտոյ է վարժասիրաց. ներխոհեմից» խորագրերով (էջ 344ա -347 ա), իսկ երկրորդում՝ «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» խորագրով (էջ 265բ-282ա և էջ 282ա-298ա), ընդ որում՝ բառերի ոչ այբբենական և կոպիտ այբբենական դասավորությամբ: Առաջին բառարանները նշվել և նշվելու են համապատասխանաբար ՄՄՁ 2291(I) և 2431(I), իսկ երկրորդները՝ ՄՄՁ 2291(II) և 2431(II) համարակալմամբ:

ԺԸ դարից ավանդված ՁԲ-ներից երկուսն ունեն «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս» (ՄՄՁ 843, 9992), երկուսը՝ «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն բառ է գեղջուկ» և «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» խորագրերը (ՄՄՁ 3450, 9166)՝ համապատասխանաբար բառերի ոչ այբբենական և այբբենական դասավորությամբ:

ՄՄՁ 566-ում, ինչպես նշվել է, առկա է երկու բառարան. ՄՄՁ 566(II)-ի խորագիրն է «Հանդէս քանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (էջ 278բ - 300ա):

է գեղջուկ. *ձեռ. 3170, 141ա*]- Պարտ՝ պատշաճ, ի դէպ, ի ճահ, յանկ նման... Ժառանգաւոր՝ կատարիչ, խորհրդածու եւ այլն, որով լնու եկեղեցի եւ խորհրդածութիւն ի Քրիստոս Յիսուս, որ է օրհնեալ յաւիտեանս. *ամէն*»: Տե՛ս և հմմտ. Յուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջք 701, 981, նսակ՝ <https://sur1.li/fmqbsf>, <https://sur1.li/zghmun> (հասանելի են՝ 03.04.2026):

* *
*

Ինչպես վկայում է Հայկ Ամալյանը, և ինչպես արդեն նշվել է, «Ըստ բառերի դասավորության կարգի բառարանն ունի երկու խմբագրություն՝ իսառը, ոչ այբբենական և այբբենական: Առաջին խմբագրությամբ բառարանները, որոնք բառարանի նախագաղափարից են ընդօրինակված, սկզբնաբառերի այբբենական դասավորություն չունեն, սկսվում են **պարտ** բառով և ավարտվում **գիծք, տառք, զծաւորք** բառերով: Այս խմբագրության է պատկանում բառարանի գրչագրերի մեծ մասը: ...Երկրորդ խմբագրությանը պատկանում են բառերի այբբենական դասավորություն ունեցող գրչագրերը: Այբբենական դասավորումը կատարվել է XIV դարում (տե՛ս ձեռ. №N° 4149): Այս խմբի բառարաններն սկսվում են **անհաս** բառով և ավարտվում **մարգարէ, տեսնաւղ** բառերով»³³:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված ՁԲ-ներից 15-ն ունեն բառերի ոչ այբբենական դասավորություն (ՄՄՁ 266*, 530, 532*, 538*, 1654, 2371, 2372, 3197*, 3937*, 4612, 5596, 5919, 7117, 7250*, 8198 (I)*), 6-ը՝ այբբենական (ՄՄՁ 2355*, 4149, 5126*, 5925*, 8106, 8198 (II)): Առաջինները սկսվում են *Պարտ*, ավարտվում *Գիծ(ք)*, կոպիտ այբբենական դասավորությամբ ՁԲ-ները համապատասխանաբար *Անհաս*³⁴ և *Քաջամիտ* հենաբառերով ՀԲԾ-ներով: Աստղանիշով առանձնացվածներն ունեն որոշ տարբերություններ. այսպես՝ ՄՄՁ 266, 532, 538, 3197, 7250-ը ավարտվում են *Արբանեակ* հենաբառով ՀԲԾ-ով. չկա *Գիծք* հենաբառով ՀԲԾ-ն:

ՄՄՁ 3937-ն ավարտվում է *Բժիշկ* հենաբառով ՀԲԾ-ով:

ՄՄՁ 8198-ի մասին արդեն նշվել է:

ՄՄՁ 5925-ն ավարտվում է *Բնաւորել* հենաբառով ՀԲԾ-ով (հաջորդում է *Քաջամիտ* հենաբառով ՀԲԾ-ին). այն կրկնվում է և

³³ Հ. Ամալյան, նշվ. աշխ. էջ 124:

³⁴ *Անհաս* հենաբառով բառարանի մասին նշում է նաև Հ. Ամալյանը. տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 1185:

Բնաւորեալ հենաբառով առկա է ՁԲ-ի այբբենական դասավորությամբ բառերի շարքում:

ՄՄՁ 2335 բառարանը սկսվում է *Ապարանք*³⁵, ավարտվում *Բնաւորել* հենաբառերով ՀԲԾ-ներով. ի տարբերություն նախորդի՝ այն չի կրկնվում:

ՄՄՁ 5126-ը սկսվում է *Աստուածագան*, ավարտվում *Փոփոխել* հենաբառերով ՀԲԾ-ներով:

Երբեմն ՀԲԾ-ները կրկնվում են, այսինքն՝ ոչ միայն առանձնացվում-տրոհվում են՝ ըստ բառերի այբբենական դասավորության, այլև պահպանվում՝ բառերի ոչ այբբենական դասավորությամբ գրչագրերի նմանությամբ: Այսպես՝ ՄՄՁ 4149-ում *Անպարհ* հենաբառով ՀԲԾ-ում առկա է *Մոսկ* հենաբառով ՀԲԾ-ն (353ա), ինչպես ՄՄՁ 2371-ում է (288ա), իսկ 562ա էջում այն առանձնացվում է: ՄՄՁ 5925-ում *Կոճոպել* հենաբառով ՀԲԾ-ն ն՝ առանձնացվում է (95բ), ն՝ առկա է *Ձոջանալ* հենաբառով ՀԲԾ-ում (93ա), ինչպես ՄՄՁ 5596-ում է (223բ):

Այս իրողությունը հետաքրքիր է այն առումով, որ ՄՄՁ 4149, 5925-ի բառարանները բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ են, իսկ ՄՄՁ 2731, 5596-ը՝ ոչ այբբենական: Կարելի է ենթադրել, որ գրիչներն ունեցել են երկու տիպի ՁԲ-ներն էլ:

Արդեն նշվել է, որ ըստ Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ԺԳ դարից են ավանդված ՄՄՁ 4612-ը և ՄՄՁ 5596-ը. առաջինը բաղկացած է 133, երկրորդը՝ 135 ՀԲԾ-ից:

Բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում ՀԲԾ-ների թիվը տատանվում է 128-141՝ ընդգրկելով 3-45 բառ (այսինքն՝ միայն բազմանդամ)³⁶. Բառերի ընդհանուր քանակն է 1481-1526:

Բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ, *Անհաս* հենաբառով ՁԲ-ների (ՄՄՁ 4149, 5925, 8106, 8198(II)) ՀԲԾ-ների թիվը

³⁵ *Ապարանք* հենաբառով բառարանի մասին նշում է նաև Հ. Անասյանը. տե՛ս Հ. Անասյան, նշվ. աշխ., ն.տ.:

³⁶ ՄՄՁ 7117-ում չկան *Կարապետ, Չայն, Կիրք, Տեսանաւոյ, Վտանգ, Հանդերձեալ (ք), Գերունակ, Ամեղել, Եզերք, Չանխուլ, Իրք, Լուտայ, Դուռել, Շամբուշ, Ջգան, Մուրկ* հենաբառերով ՀԲԾ-ները:

141-162 է՝ ընդգրկելով 2-58 բառ (երկանդամ և բազմանդամ): *Ապարանք* հենաբառով բառարանում (ՄՄՁ 2335)՝ համապատասխանաբար 139 և 3-35 բառ է: *Սատուածազան* հենաբառով բառարանում (ՄՄՁ 5126)՝ 132 և 3-43 բառ: Բառերի ընդհանուր քանակը՝ համապատասխանաբար 1541-1579, 1091, 1360³⁷:

Անհաս հենաբառով բոլոր գրչագրերում առկա են ՀԲԾ-ներ, որոնք չկան բառերի ոչ այբբենական դասավորությամբ բառարաններում: Այսպես՝ *Է(ն)*, *Ընդ ձեռամբ*, *Ժամանակ*, *Ժառանկ*³⁸, *Հակաձառք*³⁹, *Ղամբար* (բառն առկա է նաև *Բոց* հենաբառով ՀԲԾ-ում), *Որպէս*, *Ուր*, *Չարչարել*, *Ռահ*, *Ռակա*, *Տենչալ*, *Յմախ*, *Յուպ*, *Յրել*, *Քահանա*, *Քաջամիտ*, *Քեցել*, *Իհլսել* (ընդգծվածներն արձանագրվում են բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում՝ համապատասխանաբար *Հնազանդ*, *Յարել/Շարել Բոց*, *Խազմ*, *Չնջել*, *Քարքել/Պիտալ* հենաբառերով ՀԲԾ-ներում (դրանք առկա են բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բառարաններում)): Այդպես նաև *Արեգակն*, *Անդոյր*, *Ծաւալ* հենաբառերով ՀԲԾ-ներն առկա են բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բառարաններում (ՄՄՁ 4149, 5925, 8106, 8198(II))⁴⁰. մյուսներում *Լոյս*, *Ծագք*, *Խրոխտանալ* հենաբառերով ՀԲԾ-ներն են:

³⁷ Ըստ Չ. Ամալյանի՝ բառարանը «կազմված է 135-140 ... բառախմբերից, որոնք ընդգրկում են 3-ից մինչև 50 բառ և ... բառերի ընդհանուր թիվը, այսինքն ամբողջ բառարանի բառերի քանակը տատանվում է 1470-1570-ի միջև» (Չ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 124-125): Գ. Գասպարյանի դիտարկումներով՝ «Բառարանի սկզբնական օրինակները պարունակում են 138 (ՃՀԼ) բառահոդված, որոնք հետագայում լրացվել և հասցվել են շուրջ 160-ի» (Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 34):

³⁸ *Ժառանկ*. *յետմնացք* ՀԲԾ-ն առկա է ՄՄՁ 4149, 5925, 8198(II)-ում. ՄՄՁ 8106 - ում *յետմնաց*-ն արձանագրվել է *Ժամանակ* հենաբառով ՀԲԾ-ում:

³⁹ ՄՄՁ 5925-ում *Հակաձառք*. *հակադարձք* ՀԲԾ-ն առկա է նաև *Խազմ* հենաբառով ՀԲԾ-ում. մյուսներում *Խազմ* հենաբառով ՀԲԾ չկա:

⁴⁰ ՄՄՁ 4149, 8106, 8198(II)-ում չկան *Ապարանք*, *Առիշեղ*, *Գիծ*, *Խոչոր*, *Հաստատուն* (առկա է ՄՄՁ 8198(II)-ում), *Հատու*, *Միգալ*, *Տեսանալ*, *Փոխել* հենաբառերով ՀԲԾ-ները: Բացի դրանից՝ ՄՄՁ 4149-ում *Լոյս*-ը՝ *Արեգակ*, *Տէր*-ը՝ *Դատարոք*, *Լեզուագարությունք*-ը՝ *Յիմարել* (նաև՝ ՄՄՁ 8106, 8198(II)-ում), *Ծամել*-ը՝ *Տրորել*, *Կոճուպել*-ը՝ *Չղջանալ*, *Սպանդ*-ը՝ *Ճենձերք* հենաբառերով ՀԲԾ-ներում են: ՄՄՁ 5126, 2335 -ում չկան *Հակաձառք*, *Ղամբար*, ՄՄՁ 5126-ում՝ նաև *Տեսանալ* հենա-

ԺԷ դարից ավանդված ՁԲ-ներից բառերի ոչ այբբենական դասավորություն ունեն 27-ը (ՄՄՁ 267, 516, 529, 536, 2019, 2281, 2291(I), 2295, 2330, 2331, 2369, 2370, 2381, 2431(II), 3200, 3257, 3286, 3488, 5008, 5995, 6097, 6624, 7001, 7014, 7995, 8533, 8563), 14-ը բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ են (ՄՄՁ 268*, 533, 537, 540, 545, 682, 2291(II)*, 2431(I)*, 3170*, 3261*, 3468, 3824, 8606, 10223): Այս ՁԲ-ները սկսվում են *Աստուածագան*, ավարտվում *Փնփոխել* հենաբառերով ՀԲԾ-ներով (ինչպես արդեն նշված ՄՄՁ 5126-ը): ՀԲԾ-ների թիվը 132 է, ամեն մեկում՝ 3-47 բառ, բառերի ընդհանուր քանակը՝ 1500-1622: Աստղանիշով առանձնացվածներն ունեն տարբերություններ. այսպես՝ ՄՄՁ 268-ում բառարանը սկսվում է *Աստուածագեաց* հենաբառով ՀԲԾ-ով, որում չկա *աստուածագան* բառը:

ՄՄՁ 2291(II)-ում սկսվում է *Անկումն* և ավարտվում *Փաղանգամայն* հենաբառերով ՀԲԾ-ներով: Սա այբբենական դասավորությամբ հենաբառերով կազմված մեկական ՀԲԾ-ի ցանկ է (բացառյալ *օ*, *ֆ*, *ք* տառերը. *ա*-ով առկա է 3 ՀԲԾ), որը, ինչպես հուշում է խորագիրը, «կարի պիտոյ է վարժասիրաց. ներխոհեմից»: Բառացանկի ՀԲԾ-ների թիվը 36 է, բառերի ընդհանուր քանակը՝ 514: Այս գրչագրում հենաբառերը, բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ՁԲ-ների համեմատությամբ, փոփոխվել են.

ա) հենաբառ է ՁԲ-ների ՀԲԾ-ներում առկա բառերից մեկը, ինչպես՝ *Անկումն*, *Անպատկառ*, *Ընչաւէտ*, *Կաթուղիկէ*, *Մեկնէլ*, *Ոգել*, *Պատուիրանագանց*, *Վկայութիւն* և այլն.

բ) ՀԲԾ-ն ներկայացվում է երկու-երեք շարքերով, օրինակ՝ *Հոյակապը*՝ *Ընչաւէտ* և *Թաթաղուն*, *Ամեղելը*՝ *Ամեղել*, *Անպատկառ* և *Պատուիրանագանց*, *Ծագ(ք)ը*՝ *Անկումն* և *Յպաւորութիւն*, և այլն.

բառերով ՀԲԾ-ները: ՄՄՁ 5126-ում առանձնացվել է *Արդակը*-ը, *Հաստատունը*-ը առկա է *Խոշոր* հենաբառով ՀԲԾ-ում, ՄՄՁ 5925-ում՝ *Ապարանք*, *Առիշտելել*, *Գիծ*, *Ծամել*, *Լոյս*, *Հաստատուն*, *Հատու*, *Միգալ*, *Տեսանաղ* հենաբառերով ՀԲԾ-ներ:

զ) առկա են նոր հենաբառեր, օրինակ՝ *Գեղգեղել, Դեկնու, Յանգել, Չարաբարոյ, Ռահվար*⁴¹, *Փաղանգամայն* և այլն:

ՄՄՁ 2431(I)-ը, 3170-ն ավարտվում են համապատասխանաբար *Փանաքի* և *Իհլթ* հենաբառերով ՀԲԾ-ներով: Առաջինում չկան *Առաջօր, Ամեղել, Անպարհ, Առիշեղ, Շուայտեալ* (առկա է *Պոռնիկ*-ում), *Պահել, Տէր, Տարակուսել, Իհլթ* հենաբառերով ՀԲԾ-ները: Այս ՁԲ-ի ՀԲԾ-ների թիվը 122 է, իսկ բառերի ընդհանուր քանակը՝ 1408:

ՄՄՁ 3261-ում չկա *Վիթխարի* հենաբառով ՀԲԾ:

Բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներից 5-ը (ՄՄՁ 536, 2295, 3286, 6097, 8533) ունեն տարբերություններ: Սկըսվում են *Պարտ*, ավարտվում *Գիծ(ք)* հենաբառերով ՀԲԾ-ներով, որոնց թիվը 136-140⁴² է՝ ներառելով 3-47 բառ. բառերի ընդհանուր քանակը՝ 1014-1573:

ՄՄՁ 536-ն անավարտ է. ընդհատվում է *Չայն* հենաբառով ՀԲԾ-ով (էջ 166բ): ՀԲԾ-ների թիվը 67 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1037:

ՄՄՁ 2295-ն ավարտվում է *Արքանեակ* հենաբառով ՀԲԾ-ով. չկա *Գիծ(ք)* հենաբառով ՀԲԾ:

ՄՄՁ 3286-ի բառարանն անխորագիր է. սկսվում է *Պարտ*, ավարտվում *Բժիշկ* հենաբառերով ՀԲԾ-ներով, ինչպես նշված՝ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 3937-ը, սակայն, ի տարբերություն

⁴¹ Մյուս գրչագրերում *Ռահվար* հենաբառով ՀԲԾ չկա:

⁴² Հ. Ամալյանի դիտարկումն այս առիթով վերաբերում է բառախմբերում «բացակայող բառերին»։ Նա նշում է. «Եթե բառարանի գրչագրերում բառախմբերի քանակը գրեթե միևնույնն է, ապա համապատասխան բառախմբերում բառերի քանակը տարբեր է», և իբրև օրինակ բերելով N 8198 ձեռագիրը՝ արձանագրում, որ **յարմար, պատկան, քատակ, ըմբոն** բառերը **պարտ** բառով սկսվող բառախմբում բացակայում են», և որ դրանք «կան N 2371 և այլ ձեռագրերի համապատասխան հոմանիշային խմբերում» (տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 125)։ Ընդունելով Հ. Ամալյանի դիտարկումը՝ այդուհանդերձ, հարկ է հավելել, որ ՀԲԾ-ների թիվը տատանվում է՝ պայմանավորված ոչ միայն բառերի և ՀԲԾ-ների առկայությամբ կամ «բացակայությամբ», այլև նրանով, որ մի քանի գրչագրում ՀԲԾ-ները առանձնացվում-տրոհվում են. այսպես՝ ՄՄՁ 3200-ում առկա են *Խոշոր* և *Հաստատուն, Հակատել և Խազվ* (նաև՝ ՄՄՁ 2295-ում), *Վտանգ* և *Տիրութիւն, Դուռել* և *Վերապարել*, ՄՄՁ 516-ում՝ *Բիծ* և *Ծրդեալ* հենաբառերով ՀԲԾ-ներ:

վերջինի, *Բժիշկ* հենաբառով ՀԲԾ-ն 16 բառի փոխարեն ընդգրկում է 42-ը: ՀԲԾ-ների թիվը 142 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1573:

ՄՄՁ 6097-ը *Գիծ* հենաբառով ՀԲԾ-ից հետո ունի երկու-երեք բառով բացատրվող 16 բառահոդված. ընդհանուր պատկերացում կազմելու համար հարկ է, թերևս, ներկայացնել մի քանի նմուշ⁴³.

«Ազդևոր. զօրաւոր.

....Կաթնոգին. ըղձալի կամ ցանկալի.

Անջրպետ. բացատ կամ միջոց.

Ալէլուիա. օրհցք կամ զովեցէք գտեր.

....Գուցէ. արդեօք կամ ո՛վ գիտէ.

....Անդրվար. որ յայլմէյայլմէ վարէ կամ տանէիտուն....» (287ա):

ՄՄՁ 8533-ին անդրադարձ եղել է:

ԺԷ դարից ավանդված՝ բառերի ոչ այբբենական դասավորութեամբ գրչագրերում կան ՀԲԾ-ներ, որոնք առկա չեն *Աստուածագան* հենաբառով սկսվող և բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բառարաններում. դրանք են՝ *Մերձ*, *Միշտ*, *Յախունախօս*, *Յարձակումն*, *Նահատակել*, *Նենգոդ*, *Վրիպել*, *Տեսանալ*: Հատկանշական է, որ վերջիններն առկա են ԺԳ-ԺԶ դարերից ավանդված՝ *Անհաս* հենաբառով ՁԲ-ներում⁴⁴:

ԺԸ դարից ավանդվածները բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ (ՄՄՁ 566(II), 3450, 9166) և բառերի ոչ այբբենական դասավորությամբ են (ՄՄՁ 843 և 9992):

ՄՄՁ 566(II)-ը սկսվում է *Անկերացոդ*, ավարտվում *Քահանայ* հենաբառերով ՀԲԾ-ներով, որոնց թիվը 130 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1572: Այս ՁԲ-ում առկա են *Գահերէց*, *Մերձ**, *Միշտ**, *Յախունախօս**, *Նահատակել**, *Նենգոդ**, *Ուրախանալ*, *Չնչին*, *Տեսանօդ**, *Յասնուլ*, *Յնծալ*, *Իիօճեալ*, *Քահանայ*⁴⁵ և չկան բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ մյուս ՁԲ-ներում արձանագրված

⁴³ Հարկ է հիշեցնել, որ պահպանվում է ՁԲ-ի ուղղագրությունը:

⁴⁴ ՄՄՁ 4149, 8106, 8198(II)-ում չկան *Տեսանալ*, ՄՄՁ 2335-ում՝ *Նենգոդ* հենաբառերով ՀԲԾ-ները:

⁴⁵ Աստղանիշով առանձնացվածները, ինչպես արդեն նշվել է, չկան ԺԷ դարից ավանդված՝ բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում:

Զգօն, Զղջանայ, Թափեալ, Ծամել, Կաղալ, Կոճոպել, Կապերտ, Հասուն, Հանճար, Համբակ, Շաղակեր, Շուայտեալ, Պոռնիկ, Պարիլ, Միգալ, Վիթխարի, Տարտողական, Իիւթ, Փոփոխել հենաբառերով ՀԲԾ-ները: Մի քանի ՀԲԾ-ի հենաբառեր էլ փոխվել են. այսպես՝ *Անկերացող* (*Ամեղել*-ի փոխարեն), *Կառափել* (*Հարկանել*-ի փոխարեն), *Ռազմ* (*Խազմ*-ի փոխարեն), *Յարել* (*Շարել*-ի փոխարեն):

ՄՄՁ 3450-ը ևս անավարտ է. ընդհատվում է *Պոռնիկ* հենաբառով ՀԲԾ-ով (ՀԲԾ-ների թիվը 107 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1100):

ՄՄՁ 9166-ում չեն առանձնացվում *Խոշոր* և *Հաստատուն, Ձգել* և *Համոզել* հենաբառերով ՀԲԾ-ները. տրոհված են *Խազմ*-ն ու *Խակատել*-ը. ՀԲԾ-ների թիվը 133 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1623:

ՄՄՁ 843-ն անավարտ է. ընդհատվում է 289ա էջում *դատարկ* բառով (ՀԲԾ-ների թիվը 130 է, բառերի ընդհանուր քանակը՝ 1437):

ՄՄՁ 9992-ն ավարտվում է *Գիծ* հենաբառով ՀԲԾ-ով. այս բառարանում առանձնացվում են *Խոշոր* և *Հաստատուն, Խազմ* և *Հակատել* հենաբառերով ՀԲԾ-ները, որոնց թիվը՝ 144, բառերի ընդհանուր քանակը՝ 1544:

Այսպիսով՝ ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 4612, 5596-ը բառերի ոչ այբբենական դասավորությամբ են, սկսվում են *Պարտ* և ավարտվում *Գիծ* հենաբառերով ՀԲԾ-ներով:

Նույնը և ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 530, 1654, 2371, 5919, 8198(I)-ը՝ բացառությամբ ՄՄՁ 3937-ի, որն ավարտվում է *Բժիշկ* հենաբառով ՀԲԾ-ով: Հետևաբար կարելի է նշել, որ ԺԴ դարից ավանդված այս գրչագրերը նախորդ դարից ավանդվածների ընդօրինակումներ են:

ՄՄՁ 4149, 8198(II)-ը ունեն բառերի այբբենական դասավորություն, սկսվում են *Անհաս* և ավարտվում *Քաջամիտ* հենաբառերով ՀԲԾ-ներով: Ինչպես իրավացիորեն նկատել է Հայկ Ամալյանը, և ինչպես արդեն արձանագրվել է, բառերի այբբենական դասավորությամբ ՁԲ-ները ԺԴ դարից են:

ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 266, 7117-ը բառերի ոչ այբբենական դասավորությամբ են, սկսվում են *Պարտ* և ավարտվում՝ առաջինը՝ *Արբանեակ*, երկրորդը՝ *Գիծք* հենաբառերով ՀԲՇ-ներով. սրանք նույնպես ընդօրինակումներ են:

ՄՄՁ 2335, 5925-ը բառերի կոպիտ այբբենական դասավորություն ունեն, սկսվում են՝ առաջինը՝ *Անհաս*, երկրորդը՝ *Ապարանք*, և ավարտվում *Բնաւորել* հենաբառերով ՀԲՇ-ներով. առաջինն ընդօրինակում է՝ *Բնաւորել* հենաբառով ՀԲՇ-ի հավելումով, երկրորդը՝ նոր խմբագրության բառարան:

ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 532, 538, 2372, 3197, 7250-ը բառերի ոչ այբբենական դասավորությամբ են, սկսվում են *Պարտ* և ավարտվում՝ *Արբանեակ* (ՄՄՁ 532, 538, 7250) և *Գիծք* (ՄՄՁ 2372, 3197) հենաբառերով ՀԲՇ-ներով:

ՄՄՁ 5126, 8106-ը բառերի այբբենական դասավորություն ունեն. առաջինը սկսվում է *Աստուածազան*, երկրորդը՝ *Անհաս*, և ավարտվում են համապատասխանաբար՝ *Փոփոխել* և *Քաջամիտ* հենաբառերով ՀԲՇ-ներով. առաջինը նոր խմբագրության բառարան է:

ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 267, 516, 529, 536, 2019, 2281, 2291(1), 2295, 2330, 2331, 2369, 2370, 2381, 2431, 3200, 3257, 3286, 3488, 5008, 5995, 6097, 6624, 7004, 7014, 7995, 8533, 8563-ը բառերի ոչ այբբենական դասավորությամբ են. սկսվում են *Պարտ* (ՄՄՁ 8533-ը՝ *Նմանութիւն*) և ավարտվում *Գիծ* կամ *Գիծք* (ՄՄՁ 536-ը՝ *Չայն* (այն անավարտ է)), ՄՄՁ 2295-ը՝ *Արբանեակ*, ՄՄՁ 3286-ը՝ *Բժիշկ*, ՄՄՁ 6624-ը՝ *Իրք*) հենաբառերով ՀԲՇ-ներով:

ՄՄՁ 268, 533, 537, 540, 545, 682, 2431(1), 3170, 3261, 3824, 3468, 8606, 10223-ը բառերի այբբենական դասավորություն ունեն. սկսվում են՝ առաջինը՝ *Աստուծազգեաց*, մյուսները՝ *Աստուածազան*, և ավարտվում են *Փոփոխել* հենաբառերով ՀԲՇ-ներով. ՄՄՁ 2431(1), 3170-ն ավարտվում են համապատասխանաբար *Փանաքի* և *Իւթ* հենաբառերով ՀԲՇ-ներով:

Բառերի այբբենական դասավորություն ունի նաև ՄՄՁ 2291 (II)-ը. սկսվում է *Անկումն* և ավարտվում *Փաղանգամայն* հենաբառերով ՀԲՇ-ներով:

ԺԸ դարից ավանդված ՁԲ-ներից բառերի ոչ այբբենական դասավորություն ունեն երկուսը՝ ՄՄՁ 843, 9992-ը. սկսվում են *Պարտ* և ավարտվում՝ առաջինը՝ *Դիսիին* (ձեռագիրն անավարտ է), երկրորդը՝ *Գիծ* հենաբառերով ՀԲՇ-ներով:

ՄՄՁ 566(II), 3450, 9166-ը բառերի այբբենական դասավորություն ունեն. ՄՄՁ 3450, 9166-ը սկսվում են *Աստուծական*, ՄՄՁ 566(II)-ը՝ *Անկերացոյ*, և ավարտվում են ՄՄՁ 3450, 9166-ը՝ *Փոփոխել*, ՄՄՁ 566(II)-ը՝ *Քահանայ* հենաբառերով շարքերով:

Այսպիսով՝ ԺԳ-ԺԴ դարերից ավանդված՝ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ները, ինչպես և արձանագրել են հետագոտողները, երկու խմբագրության են՝ այբբենական (*Անհաս* հենաբառով սկսվող) և ոչ այբբենական (*Պարտ* հենաբառով սկսվող). բառարանի ընդօրինակումներն առկա են նաև ԺԴ-ԺԸ դարերում: ԺԵ-ԺԷ դարերից ավանդված՝ բառերի այբբենական դասավորությամբ նոր խմբագրության բառարանները համապատասխանաբար սկսվում են *Անհաս*, *Ապարանք*, *Աստուածագեաց*, *Աստուածական*, *Անկումն* և *Անկերացոյ* հենաբառերով:

Ուրեմն կարելի է արձանագրել, որ առկա են ԺԳ-ԺԸ դարերից ավանդված «Հանդես բանաստեղծաց» խորագրով՝ բառերի ոչ այբբենական դասավորությամբ մեկ և կոպիտ այբբենական դասավորությամբ վեց ՁԲ-ներ:

ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ

Հայ գիտական գրականության մեջ հայերենի հոմանիշների տեսությանը, դրանց դասակարգմանը, ստեղծման աղբյուրներին, ոճական կիրառություններին առնչվող խնդիրներին անդրադարձել է Աշոտ Սուքիասյանը: Նրա վկայությամբ՝ *հոմանիշ* հասկացության համար հայերենում «տարբեր ժամանակներում գործածվել են մի քանի տերմիններ»¹: Լեզվաբանը, անհրաժեշտ համարելով տեղեկություններ հաղորդել «հին և նոր շրջանի հոմանիշների վերաբերյալ, մեր ժամանակների որոշ մասնագետների մի քանի կարծիքների, ինչպես նաև ժամանակակից լեզվաբանության մի երկու դպրոցի տեսությունների մասին», ներկայացնում է նաև «հոմանիշների հարցերը»՝ հայ քերականների գնահատությամբ: Նա, սակայն, չի անդրադառնում ստորև ներկայացվող քերականների մեկնություններին, այլ նշում է միայն, որ «Հայ իրականության մեջ հոմանիշների մասին առաջին դատողությունները պատկանում են Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչներին՝ Ստեփանոս Սյունեցուն և Անանունին»²: Աշոտ Սուքիասյանը նաև վկայակոչում է Արսեն Բագրատունու և Միքայել Սալլաթյանի քերականությունները՝ արձանագրելով, որ «19-րդ դարի առաջին կեսից սկսած՝ հայ քերականները համառոտիվ խոսում են հոմանիշների մասին... պարզունակ կերպով սահմանում են «հոմանիշ, նույնանշան կամ փաղանուն», այսինքն՝ հոմանիշ բառերը, կամ էլ պարզապես գործնական նպատակներով իրենց քերականություններին կցում են հոմանիշների բառախմբեր կամ շարքեր»³:

¹ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971, էջ 30-33:

² Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 12-13:

³ Նույն տեղում. տե՛ս նաև Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., 33-րդ էջում:

Միջնադարի հայ քերականները *հոմանիշ* հասկացության համար կիրառել են *փաղանուն*-ը⁴՝ մեկնելով այն «ըստ իմաստասիրաց» (փիլիսոփաների) և «ըստ քերթողաց» (քերականների)⁵: Նիկողայոս Ադոնցի քննական հավաստումով՝ Դիոնիսիոս Թրակացին *փաղանուն*-ը վերագրում է ("приписывается") ոչ թե փիլիսոփաներին, այլ քերականներին՝ այն բացատրելով որպես *բազմանուն*. «Փաղանուն է որ ի զանազան անուանս զնոյն ցուցանէ. որզոն խաղ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան»⁶: Ըստ նրա Դավիթ փիլիսոփան *հոմանիշ*-ը մեկնելիս ("при толковании синонима") բառի քերականական իմաստը տարբերակում է փիլիսոփայականից, ինչպես և վարվում են հույն մեկնիչները. նրա վկայությամբ՝ ըստ հույն քերականների՝ փիլիսոփաները (այսինքն՝ պերիպաթետիկները) հոմանիշն անվանում են *բազմանուն* (πολυωνυμα)⁷: Դավիթ փիլիսոփան, Նիկողայոս Ադոնցի վկայությամբ, ընդհակառակը, *բազմանուն*-ը վերագրում է քերականներին՝ նկատի ունենալով, որ միևնույն իրը տարբեր անուններով է բարդվում ("*одна и та же*> вещь нагромождена многими именами"), մինչ փիլիսոփաները կոչում են փաղանուն, քանի որ "...животное заключает в себя названия многихъ естествъ"⁸ (այսինքն՝ նույն սեռի մեջ մտնող բազմաթիվ տեսակների անունները): Ասել է՝ այն, ինչ արձանագրել են «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատության հայ մեկնիչներից Գրիգոր Մագիստրոսը, հետագայում՝ Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին՝ «... փաղանուն ըստ քերդողացն ասի բազմանուն իր-

⁴ Փաղանունը պատճենում է հունարենից և համահավասարաբժեք է հոմանիշին, նույնանիշին. տե՛ս Ա. Սուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971, էջ 225:

⁵ Այս մտտեցումները դրսևորվել են նաև հետագայում. ըստ Ա. Սուքիասյանի՝ հոմանիշները «մերթ լեզվաբանական, մերթ տրամաբանական տեսանկյունով» քննվել են նաև «սովետական լեզվաբանության մեջ». մանրամասն տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 49:

⁶ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, ст. 19:

⁷ Н. Адонц, նշվ. աշխ., էջ CLXX:

⁸ Նույն տեղում, տե՛ս նաև Н. Адонц, նշվ. աշխ., էջ 109:

րու թէ իրն բազում անուանս ունի զիւրեալ բարդեալ: Իսկ ըստ իմաստասիրացն է փաղանուն, զի կենդանին զբազում բնութեանց անուանս փաղեաց»⁹:

Դարձյալ Նիկողայոս Ադոնցի քննությամբ՝ «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատության հայ մեկնիչներից Անանուն Մեկնիչը, Ստեփաննոս Սյունեցին, ընդունելով Թրակացու բացատրությունը և հետևելով դրան, պարզաբանում են՝ «Փաղանուն կոչի, յորժամ մի իր գոլով, բազում անուամբ անուանի, որպէս՝ սուսեր, որ կոչի դալապր, խարբ, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան»¹⁰, «փաղանունք ասին, որ են գոյգ անուանք. անիւ եւ ճղուղ, առեղ եւ աւարտք, հեւան եւ դանդանք, կունդք եւ ականոց, հեց եւ բոյթ, կապերտ եւ գորգ, ձի եւ դզի, երամակապան եւ կուտպան, բիր եւ մահակ, որոց բնութիւն մի եւ անուանք այլ»¹¹:

Այս վերջին բնորոշումով նույն օրինակներն է քաղում Գրիգոր Մագիստրոսը¹²:

Մեկնիչներից առանձնանում է Համամ Արևելցին, որը *փաղանուն*-ը մեկնում է ըստ իմաստասիրաց՝ «Եւ փաղանուն եմ ի յոլովակի բաղադրոցն որ յիս փաղինն իմացմանցն ձեւք»¹³, գտնելով, որ այն հաճախ միավորում է հասկացությունների տեսակները:

Իրենց մեկնություն-վերլուծություններում Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Օրծորեցին *փաղանուն*-ը պարզաբանում են քերականների տեսանկյունից: Ինչպես նշում է Եսայի Նչեցին, «Այլ մեք զքերդողացն տեսցուք աստ, որ փաղանուն ասեն զայն, որ մի իր գոլով բազում անուանս ունի եւ ի զանազան

⁹ Լ. Խաչերեան, Գր. Պահլաունի Մագիստրոս. Կեանքն ու գործունեությունը, Լոս Անձեղըս, 1987, էջ 421: Եսայի Նչեցի, Վերլուծություն քերականութեան, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Ե., 1966, էջ 121: Յովհ. Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անձեղըս, 1983, էջ 217:

¹⁰ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 144:

¹¹ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 209:

¹² Տե՛ս Լ. Խաչերեան, Գր. Պահլաունի Մագիստրոս, էջ 433:

¹³ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 259:

անուանս գնոյն իրս ցուցանէ, որպէս՝ սուսեր, զի կոչի «խարք», «դալապր», «մարտացու», «վաղակաւոր», «սուսեր», «նրան» և այլեւս»¹⁴: Այս կարծիքին են նաև Հովհաննէս Երզնկացին («Այլ զքերթողացն տեսցուք աստ, զի փաղանուն ասի, որ անուամբ այլեւայլ, եւ բնութեամբ՝ մի. եւ մի իր գոլով՝ բազում անուամբ անուանի...»¹⁵) և Հովհաննէս Ծործորեցին («... առ քերդողս փաղանուն «բազմանուն» լսի, իբրու թէ մի իրն բազում անուանս ունի զիրեաւ բարդեալ...»¹⁶)՝ դարձյալ քաղելով նույն օրինակները:

Ուշագրաւ է Եսայի Նչեցու հետևյալ դիտարկումը՝ «Քանզի ի մերում լեզուիս այսպիսի ոչ ունի անունս, քանզի փաղանուն ասին, որ է «զուգանունք»...», որոց բնութիւնք նոյնք, եւ անուանք՝ այլեւայլք»¹⁷, որը Ստեփանոս Սյունեցու՝ արդէն հիշատակված մեկնաբանության կրկնությունն է, այն է՝ «փաղանունք ասին, որ են զոյգ անուանք»: Հովհաննէս Ծործորեցին էլ, *փաղանուն*-ը իբրև *բազմանուն* բնորոշելով, հավելում է. «Արդ՝ այս ի մերս ոչ այսպէս անուանի, այլ են ոմանք փաղանունք... որոց բնութիւնք նոյնք, եւ անուանք՝ այլ»¹⁸:

Վարդան Արևելցիի փաղանունն իմաստավորելիս ընդգծում է. «Ճարտասանի գործ է այս եւ զաւրութիւն, որ զմէկ իրն բազում անուամբ ցուցանէ եւ հարուստ, զոր քերթաւորքն «բազմանուն» ասացին»¹⁹:

Հանրահայտ է, որ քերականները ուսուցչապետել են կրթական օջախներում, եղել են գիտակ ուսուցչության պահանջներին ու դժվարություններին: Ըստ այդմ էլ Վարդան Արևելցու մեկնությունն ի մասնավորի արժեքավոր է՝ հասկանալու համար հոմանիշների բառարանների նպատակն ու անհրաժեշտությունը: Էսպես հենց

¹⁴ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, էջ 121:

¹⁵ Յովհ. Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, էջ 217:

¹⁶ Յովհ. Ծործորեցի, Համառատ տեսութիւն քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1984, էջ 222:

¹⁷ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, էջ 121:

¹⁸ Յովհ. Ծործորեցի, Համառատ տեսութիւն քերականի, էջ 222:

¹⁹ Վարդան Արևելցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Ե., 1972, էջ 116:

այդ էլ ակնարկում է նաև Հայկ Ամալյանը՝ «Հանդէս բանաստեղծաց»-ը համարելով «նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար ճարտասանների գեղարվեստական խոսքի կատարելագործմանն ու բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան»²⁰:

Հովհաննես Քոնեցու մեկնությամբ՝ անվան տեսակներից «յատկականն» ու «հասարակականը» երկուսն են՝ «եզանուն եւ բազմանուն. եզանուն, որ ասի շուն եւ բազմանուն, որ ասի թուր, սուսեր, նրան, դալապր, խաղ, վաղակաւոր»²¹. ըստ այդմ՝ բազմանունները, վերաբերելով հասարակ անվանը²², միևնույն առարկային տրված անուններն են:

Գրիգոր Տաթևացին միայն մի փոքրիկ դիտարկում ունի. այն է՝ «բազմանունն՝ մի է իրօք»²³, ասել է՝ բազմանունն իբրև իր մեկն է՝ փաստորեն հետևելով և մեկնաբանելով «ըստ քերթողաց» (քերականների):

Միմեոն Ջուղայեցին, Հրաչիկ Միրզոյանի հավաստմամբ, փաղանվանն անդրադառնում է *հասկացություն*-ը տրամաբանորեն քննելիս: Նա նշում է, որ Միմեոն Ջուղայեցու կարծիքով՝ «... փաղանունները ... «անվան բանով» բովանդակությամբ ունեն միևնույն նշանակությունը. «Փաղանուն է՝ յորոյ նշանակութենէն իր իմըն ըմբոնի պարզաբար և ենթագրի, և նշանակեալքն նովաւ ըստ անուան բանի են նոյն»²⁴:

Բաղդասար Դպիրը, Գևորգ Ջահուկյանի վկայությամբ, հա-

²⁰ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), էջ 123:

²¹ Յովհ. Քոնեցի, Համառօտ հաւաքումն յաղագս քերականի, Ե., 1977, էջ 168: Քոնեցու երկը, ըստ հետազոտողների, առավել մոտ է հայերենի՝ «հունա-լատինատիպ անվանումով» հայտնի քերականություններին. տե՛ս նշվ. աշխ., էջ 140:

²² Այսպիսի մի ակնարկ՝ «...Փաղանուն՝ հասարակաց», ունի Համամ Արևելցին. տե՛ս և Н. Адоиц, նշվ. աշխ., էջ 261:

²³ Գր. Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ.Պոլիս, 1746, էջ 451. տե՛ս նաև Գր. Տաթևացի, Ոսկեփորիկ, թարգմ. և ծանոթ. Հակոբ Քյոսեյանի, 1995, էջ 197 («...քանզի բազմանուն [որպես] իր մեկ է...»):

²⁴ Հ. Միրզոյան, Միմեոն Ջուղայեցի, էջ 161:

մանիշ բառերն²⁵ անվանում է «բազմաձայններ»։ «Ըստ միևնույն նըշանակության՝ մեկ թե մի քանի բառաձևով արտահայտվելու տարբերվում են «միաձայն» և «բազմաձայն» (համանիշ) բառեր. «բազմաձայնները» հակադրվում են «բազմանշաններին»։ «Եւ տես, զի բազմանշանքն և բազմաձայնքն հակադրեցեալք են իրերաց, վասնզի միոյն ձայնն մի և նշանակութիւն այլ և այլ և միւսոյն նշանակութիւնն մի և ձայնն այլ և այլ»²⁶։

Դավիթ Ջեյթունցու մեկնությունն առավել մանրամասն է, և ինչպես նկատել են Գևորգ Ջահուկյանը և քննական բնագիրն աշխատասիրած Երվանդ Մելքոնյանը, «Ջեյթունցին պարզապես որոշ տեսակների բացատրությունը տվել է կարճ, բայց և սպառիչ»²⁷՝ շատ դեպքերում ցուցաբերելով ինքնուրույն մոտեցում²⁸. այսպես՝ «Փաղանուն ըստ քերթողացն ասի բազմանուն, իբրու թէ մի իրն, որ զբազում անուանս ունի ընդ իւրեաւ բարդեալ: Իսկ ըստ իմաստասիրացն է փաղանուն, զի կենդանին զբազում անուանս փաղեաց, որգոն այլեայլ անուամբ կենդանի նշանակել, որպես՝ հրեշտակ, մարդ, ձի, եգ, արծուի, ճնճղուկ եւ այլ տեսակք կենդանւոյն, զի սոքա զանազան անուամբ զկենդանին յայտնեն: Այլ մեք զքերթողացն տեսցուք աստ, զի փաղանուն ասի, որ անուամբ այլեայլ եւ բնութեամբ մի իր գոլով բազում անուամբ անուանի, որպէս՝ սուսերն, զի կոչի խաղ, խարբ, դալապր, մարտացու, վաղակաւոր, նրան, եւ եւս անիւ, ճղուղ, աւարտ՝ յանգ, վերջ, կապերտ՝ եւ գորգ, օթոց, կրկնոց, ձորձ, վիռոն, բիր՝ եւ մահակ, գաւազան, որոց բնութիւնք եւ իր մի եւ անուանք այլք»²⁹։

²⁵ Հմմտ.՝ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 9, Ե., 1974, էջ 130:

²⁶ Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974, էջ 269:

²⁷ Դավիթ Ջեյթունցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Եր. Մելքոնյանի, Ե., 1981, էջ 42:

²⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները, էջ 336:

²⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 123-124: *Փաղանուն*-ը «բազմանուն» բացատրությամբ առկա է ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 2372-ում՝ «Մեկնութիւն բարից քերականին» երկասիրության մեջ (5բ): *Փաղանուն*-ը իբրև «բազմանուն» է բացատրվում նաև ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 538-ի Dictionarium հատվածում (67բ), այլև Երե-

Որքան էլ հայ քերականները հետևողականորեն կրկնել են Դիոնիսիոս Թրակացուն, այդուհանդերձ Էդուարդ Աղայանը, չթերագնահատելով նրանց դերը, արձանագրում է, որ «նրանք են եղել հայերենի քերականության նախատիպարները, նրանց հիման վրա է, որ հետագայում ստեղծվել են փոքրիշատե ինքնուրույն քերականություններ»՝ պահպանելով տերմինների մեծ մասը, անգամ անփոփոխ թողնելով որոշ սահմանումներ³⁰: Եվ սա է պատճառը, որ, ինչպես նշում է Աշոտ Սուքիասյանը, «հեղինակները հոմանիշների բառարանի կազմության և հոմանիշների տեսության հարցերում գտնվում են իրենց ժամանակաշրջանի մակարդակի վրա»³¹:

Ի հաստատումն այս մտեցման՝ անհրաժեշտ է նշել, որ, ըստ հետազոտողների, փիլիսոփայական երկերը, օրինակ, ժամանակաշրջանի պարտադրանքով *համապարփակ* բնույթ են ունեցել՝ ներառելով փիլիսոփայականը, աստվածաբանականը, տրամաբանականը, հռետորականը, լեզվականը, պատմականը և այլն՝ դրանցից որևէ մեկի գերակշռությամբ³² (ընդգծ.՝ Ն. Հ.):

Հարկ է թերևս նաև հավելել, որ ըստ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ԺԸ դարից ավանդված ՄՄԶ 3110-ի բառարանի (75ա-112ա) «Հուարքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթեոսի վ. Բառգիրք *հոմանիշ բառից*» (ընդգծ.՝ Ն. Հ.) խորագիրը հուշում է, որ ԺԸ դա-

միա Մեղրեցու բառգրքում. տե՛ս Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 322: Հատկանշական է նաև, որ ԺԴ-ԺԷ դդ. հայերեն ձեռագիր քերականություններում չեն հիշատակվում *փաղանուն*-ը, *բազմանուն*-ը, *բազմաձայն*-ը, *հոմանիշ*-ը. տե՛ս Ս. Մանուկյան, Լեզվաբանական տերմինները ԺԴ-ԺԷ դդ. հայերեն ձեռագիր քերականական աշխատություններում, թեկն. ստեն., Ե., 2017. <https://bit.ly/41d6caP> (հասանելի է՝ 31.03.2026):

³⁰ Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Ե., 1958, էջ 85-86:

³¹ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 5:

³² Տե՛ս Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), էջ 104:

րում³³ արդեն գործածվում է արդի հայերենում լայնորեն կիրառվող *հոմանիշ* եզրը: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներում առկա են նաև «Նշանաբումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեան մերոց տառից» խորագրով ձեռագիր բառարաններ: Ուստի կարելի է հավանական համարել, որ *նույնանշան* եզրը տարբերակվում է հենց այս դարից՝ նաև ճշտելով, որ «նոյնանշան բառ»-ն առաջինը կիրառել է Մխիթար Սեբաստացին՝ ոչ միայն *փաղանուն*-ը բացատրելիս նշելով՝ «ըստ քերականաց փաղանուն կոչին փաղանշան անուանք, այսինքն այնոքիկ, որք զանազան ձայնի զնոյն նշանակեն, յորմէ և կոչին նոյնանշանք»³⁴, այլև «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» աշխատության մեջ³⁵:

Ըստ ԺԹ դարում հրատարակված բառարանների՝ առկա են *փաղանուն*-ի հետևյալ բացատրությունները: Մանվել Ջախջախյանն այն մեկնաբանում է քերականների նման («Փաղանուն ասի որպէս սուսեր՝ կոչի խարբ նրան, և բիր՝ մահակ, որոց բնութիւն մի է և անուանք այլք»)՝³⁶ Աղեքսանդր Խոսրոսի Խոսրոսաբառնայնը և Գրիգոր Փեշտրմալճյանը *փաղանուն*-ը բացատրում են որպէս «նույն նշանակությունն ունեցող» բառեր («**Փաղանուն**... *Единозна-*

³³ Ըստ հետազոտողների՝ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները ԺԲ դ. ընդօրինակություններ են, հետևաբար ենթադրելի է, որ ԺԸ դարից ավանդվածները նույնպես կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի»:

³⁴ Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ (այսուհետև՝ ԲՀԼ), Վենետիկ, 1749, էջ 1163 (1230). այսուհետև փակագծերում կնշվեն բառարանների PDF ձևաչափով տարբերակի էջերը:

³⁵ Այն հրատարակվել է Մխիթար Սեբաստացու մահվանից հետո՝ 1769 թ., թեև ըստ «Լեզվաբանական բառարան»-ի՝ «նույնանշան բառեր» «տերմինի առաջին անգամ (կամ համեմատաբար վաղ) գործածողը» Գ. Ավետիքյանն է (1750-1827թթ.). տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարապետյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ VI, 239:

³⁶ Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1422:

*чащій, синонимъ»*³⁷ (ընդգծ.՝ Ն. Հ.), «**Փաղանուն**, //տե՛ս ի վերոյ **Փաղանշան**... այն՝ որ նոյն է նշանակութեամբ. համանշան. նոյնանըշան, որպիսին են բառք տիպար, տիպ. սուր, սուսեր, և այլն»³⁸): Մանվել Ջախջախյանը նույն բացատրությունն է տալիս *նոյնանըշան*-ին. «*Նոյնանշան գնոյն նշանակութիւն ունօղ: -բառք. Sinónimo» (ՋԲ, էջ 1082. աստղանիշը հուշում է, որ այն «նոր բառ» է (տե՛ս ՋԲ, էջ 25)): *Հոմանիշ*-ի հաջորդ հիշատակությունը Մամուէլ Գանթարյանինն է *Synonyme* բառն իբրև «համանուն. հոմանիշ» բացատրելիս³⁹: Միմոն Գաբամաճյանը *հոմանիշ*-ը հիշատակում է «ուրիշ բառի մը ճշդիւ կամ գրեթէ նոյն նշանակութիւն ունեցող բառ. *հկնշ*. Հականիշ. Տ. Փաղանուն» բացատրությամբ և աստղանիշով⁴⁰ իբրև ծանոթություն նշելով, որ «Բառերու առջեւ դրուած աստղանիշը կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀԼ, էջ Ը):

Այսպիսով՝ միջնադարի հայ քերականները որոշակիորեն (փոքր-ինչ տարբեր որակումներով) համակարծիք են՝ *փաղանուն* համարելով միևնույն հասկացությունը ցույց տվող, տարբեր արտասանություն ունեցող բառերը: Ասել է՝ հոմանիշ են դիտել ու համարել երևույթը, իրողությունը, առարկան համակողմանի, բազմակողմանի բնութագրող բառերն առանց իմաստային սահմանափակման կամ «իմաստային-գործառական այլևայլ առնչակցությունների»⁴¹ տարբերակման, եթե համեմատվեն հետագայում առանձնացվող բացարձակ, լրիվ, մասնակի հոմանիշները:

³⁷ Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղեքսանդրի Մակարեան Խուդարաշեանց (այսուհետև՝ ԽԲՀՆ), հ. II, Մոսկով, 1838, էջ 465:

³⁸ Փաղաղիք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի (այսուհետև՝ ՓԲ), հ. II, Կ.Պօլիս, 1846, էջ 847-848:

³⁹ Բառարան գաղղիերեն-հայերեն-տաճկերեն աշխատասիրեաց Հ. Մամուէլ վ. Գանթարեան, Վենետիկ, 1886, էջ 1129-1130:

⁴⁰ Մ. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերեն լեզուի (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջ 833:

⁴¹ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 419:

ԲԱՌԱՇԱՐՔԵՐԸ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ների հոմանիշների բառաշարքերը ներկայացնելիս հարկ է նկատի առնել *հոմանիշություն* ըմբռնումն ըստ միջնադարի հայ քերականների. ամենայն հավանականությամբ, այդ մտտեցումներով են կազմվել քննվող ՁԲ-ները: ԺԳ-ԺԸ դարերից ավանդված գրչագրերում ՀԲՇ-ն ընդգրկում է իմաստային առնչություն ունեցող, հասկացությունը համակողմանի (հնարավորինս համապարփակ) բնութագրող բառեր, կամ ինչպես մի քանի ՀԲՇ-ի դեպքում հավաստում է Հայկ Ամալյանը՝ կապված «ընդհանուր հասկացությամբ», միավորված «ընդհանուր գաղափար»-ով: Ըստ լեզվաբանի՝ այդպես են ձևավորվել *սատված* և *սատանա* հասկացությունները բնորոշող *Լոյս*, *Խաւար* և այլ հենարաններով ՀԲՇ-ները: Ուշագրավ է նրա դիտարկումը *Վտանգ(ք)* հենարանով ՀԲՇ-ն բնութագրելիս. Հայկ Ամալյանը նշում է, որ բառերն առնչվում են «գործողության և դրա հետևանքի գաղափարով», այսինքն՝ «վտանգի դեպքում զանազան ապրումներ և զգացումներ ցույց տվող բառերի իմաստային միասնությամբ»²: Բայց և միաժամանակ «բառախմբում բացակայող» բառերի առնչությամբ անդրադառնալով նաև «գլխաբառին և շրջապատի մյուս» ոչ հոմանիշ այլ բառերի՝ գտնում է, որ «միևնույն բառախմբում հավաքված բոլոր բառերն էլ կարող են գլխաբառի հետ կապվել, համընկնել իմաստային մի որևէ գործածությամբ և առարկային ու երևույթին վերագրել միևնույն հատկանիշը, նախադասության մեջ իրար փոխարինել զանազան խնդրային ու պարագայական դերերում»³: Այ-

¹ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 126-127:

² Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 127-128:

³ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 125: Թերևս նաև կարելի է հիշեցնել Ա. Սուքիասյանի դիտարկումը. «Իրականում հայոց լեզվում հոմանիշների շարքերը կազմվում են ինչպես շարքի անդամների, այնպես էլ՝ դրանց յուրաքանչյուրի և հիմնաբառի հետ ունեցած հոմանշային հարաբերությունների հիման վրա: ... Հոմանշային նույնատիպ, համարժեք հարաբերություններ ոչ միշտ է հնարավոր նկատել շարքի ա-

նուհետև իբրև օրինակ բերելով և քննելով *Բոց, Խաւար, Ասել, Լոյս* «գլխաբառերով բառախմբեր»-ը՝ նա հանգում է այն եզրակացութեան, որ բառախմբերում «լիարժեք հոմանիշներ են ոչ բոլոր բառերը, այլ առանձին բառեր իրար հետ, որոնք բառախմբի ներսում կարելի է ենթաբաժանել... առանձին խմբերի բաժանել»⁴: «Հայ միջնադարյան բառարանագրությունը» գրքում արդեն նշում է, որ «բառարանում հիմնական տեղ են գրավում հայերենի շատ գործածական բառերն իրենց բացարձակ, ինչպէս նաև հարաբերական հոմանիշներով»⁵, բայց և կրկին արձանագրում, որ որոշ բառախմբերում բառերն «առադրվել են նրա համար, որ դրանք բոլորն էլ իրար հետ իմաստային առնչության մեջ են, կապված են ...ընդհանուր հասկացությամբ»⁶: Հայկ Ամալյանը նաև նկատում է, որ դա «բխում է բառարանի էությունից ու նպատակներից», այլև արդեն այս աշխատության մեջ արձանագրում՝ «արդյունք է այն ժամանակ հոմանիշների մասին եղած ըմբռումի»⁷:

Եվ այսպէս՝ *Անջատել. որոշել. տարամերժել. քեցել. տրոհել. գատել. հերքել. տարբերել. տրամատել. պեղել. քակել. մեկնել. հոշկացանել. բաժանել. մեկուսել. ի կողմ հանել. ցանկել. յրաժարել. քակտել. քեր(ք)ել* . մղել. մզել. աւոլոցել** . հանել. արտամերժել. բա-*

ռանձին անդամների ու յուրաքանչյուր անդամի և հիմնաբառի միջև». Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջ 164:

⁴ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 126-127. նաև հմմտ.՝ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 112:

⁵ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 47:

⁶ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 126-127:

⁷ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 110:

* ՉԲ-ներում առկա են *քերքել* և *քերել* բայերը. Նոր հայկազյան բառգիրքը *քերքել*-ը մեկնում է «Հերքել և Քեցել. ի բաց հանել» (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Միրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հ. II, 1837, էջ 1005):

** ՆՀԲ-ն *աւոլոցել*-ն արձանագրում է *Աւոլոց ելանել* հարադրական կազմությամբ՝ միաժամանակ նշելով՝ «Ի Հին բռ. *Աւոլոց կամ աւալոց. արտաքս. ի բաց» (հ. I, 1836, էջ 397: ՆՀԲ-ում բառահոդվածին երբեմն հավելվում է «Ի Հին բռ. Ի կարգի

ցառաքել ՀԲԾ-ում⁸ առկա են գրաբարի բառարաններում որոշակիորեն «անջատել, որոշել, բաժանել, զատել, տրոհել» իմաստները չունեցող բայեր. դրանցից *պեղել*-ը⁹ («փորել, հանել» ՆՀԲ, հ. II, էջ 645), *հերքել*-ը («ի բաց մերժել» ՆՀԲ, հ. I, էջ 95), *մզել*-ը («զտել» ՆՀԲ, հ. II, էջ 258), *մղել*-ը («վանել» ՆՀԲ, հ. II, էջ 1003), *ցանկել*-ը («պարբրսպել» ՆՀԲ, հ. II, էջ 909), *քերել*-ը («ի բաց առնել, հեռացուցանել» ՆՀԲ, հ. II, էջ 1003) իմաստային ընդունելի փոփոխություններով ՁԲ-ում փոխաբերորեն ունեն վերը նշված իմաստները. *փորել-հանել*-իս առանձնացնում, անջատում են, *մերժել-վանել*-ը նույնպես «տարորոշել, զատել» է նշանակում, *մզել-զտել*-ը որոշակիորեն պարունակում է «առանձնացնել» իմաստը (հմմտ. բայի ժամանակակից հայերենում արձանագրված «ընտրել, առանձնացնել» իմաստը¹⁰), *ցանկել*-ը՝ նույնպես (տե՛ս 120-121-րդ էջերում): *Քերել*-ը (հայ. նաև *քերթել, քերծել, քորել*) ստուգաբանորեն առնչվում է հ.-ե. *(s)ker- «կտրել» արմատին¹¹ (կտրելը ենթադրում է անջատել, բաժանել): Ուստի և նշված արմատի մի քանի «ժառանգ ձևերի»՝ «անջատել, բաժանել, կտրել» իմաստների առկայությունը (ՀԱԲ, հ. Դ, էջ 571) հնարավորություն է ընձեռում այս նրբերանգր ենթադրելու սույն ՁԲ-ներում՝ նկատի առնելով նաև ժամանակակից հայերե-

փաղանուանց դին» նշումը. տե՛ս, օրինակ, *Համոզել, Ձեռնածու, Յայտունախասու, Շիւանք, Շոճք, Ուղիվածել, Վառնիկ, Յուց, Փեշատր* բառահոդվածները. տե՛ս համապատասխանաբար՝ հ. II, էջք 29, 152, 314, 479, 489, 532, 548-549, 785, 917, 939-940), որն էլ վկայում է՝ Մխիթարյան միաբանները ծանոթ են եղել այս ՁԲ-ներին): Հմմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ա, Ե., 1971, էջք 360, 362:

⁸ Եթե ձեռագրահամարը և էջերը չեն նշվում, ապա ՀԲԾ-ն ներկայացվում է ԺԳ-ԺԸ դարերից ավանդված բոլոր ձեռագրերի համատեղմամբ: ՀԲԾ-ն նշելու պարագայում հետագա շարադրանքում հիշատակվում է միայն հենաբառը:

⁹ Հ. Աճառյանի հավաստմամբ՝ «Բնիկ հայ բառ՝ հնիս. bel - «կտրել հանել, փորել, փոսացնել» արմատից». ՀԱԲ, հ. Դ, Ե., 1979, էջ 72:

¹⁰ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. II, Ե., 1972, էջ 54: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 382:

¹¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԵԺ), Ե., 1987, էջք 52, 607:

նում *քերեղ-ի*՝ «Մուր գործիքը առարկայի մակերևույթին քսելով նրանից մասնիկներ հեռացնել» (հմմտ.՝ *քերիչ* «գործիք») իմաստը (ԺՀԼԲԲ, հ. IV, 1980, էջ 730-731: ԱՀԲԲ, էջ 1505): *Քերել. քորել* և *Քերթել. մաշկել կամ հանել զմորթն*¹² շարքերում հոմանիշներ են՝ նաև ստուգաբանորեն հ.-ե. *(s)ker- արմատին առնչվող հայերեն արմատի *քեր(ծ), քոր, քերթ* ձայնդարձային տարբերակներով: *Մեկնել, որոշել* բայերի համար Երեմիա Մեղրեցին նշում է «զատել», «բաժանել» իմաստները (ԲՀ, էջք 213, 259), որոնք Ստեփան Մալխասյանցը պահպանում է «հին բառ կամ նշանակություն» նշումով¹³: Արդի հայերենի բառարանները *մեկնել* բայի վերոնշյալ իմաստները չունեն, իսկ *որոշել* բայի նշված իմաստով բնագրային օրինակները քաղված են Ռաֆֆու ստեղծագործությունից (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 120: ԱՀԲԲ, էջ 1150. մերօրյա խոսքում չի օգտագործվում՝ «Նա որոշեց (առանձնացրեց՝ Ն. Հ.) նրանց միջից երկու աղջիկ միայն»¹⁴): Նույնը վերաբերում է *տրամատել-ին*: ՄՀԲԲ-ում «տրոհել, բաժանել» իմաստը «հին բառ կամ նշանակություն» նշումով է (հ. IV, էջ 445): Ըստ ԺՀԼԲԲ-ի՝ բառը արդի հայերենում չի գործածվում, իսկ ահա ԱՀԲԲ -ում «Ճեղքերից իրարից բաժանել, անջատել» բացատրությունն է առանց որևէ նշումի և բնագրային օրինակի (էջ 1459):

Համանման պատկեր է *Քակել կամ քակտել. քայքայել. քանդել. աւերել. փլուզանել. կործանել. աղարտել. հարթայատակ կամ հիմնայատակ առնել (եթէ պիտոյ իցէ դիր) դորդել. խախտել. խարխալել* բառաշարքում: *Քակել. քակտել. քայքայել. քանդել. աւերել. կործանել. աղարտել* բայերը վկայվում են Ե դ. մատենագրության մեջ «քանդել, ավերել, կործանել, քայքայել» իմաստներով (հմմտ.՝ ՀԱԲ, հ. Ա, էջք 114-115, 359, հ. Բ, էջք 345, 649, հ. Դ, էջք 538, 550,

¹² Ուշագրավ է Ա. Մուրվալյանի դիտարկումը. «... մորթել բայի հին («մորթը հանել, մորթագերծ անել») իմաստի համար ժամանակակից հայոց լեզվում հանդես են գալիս այլ բայեր, ինչպիսիք են՝ *մաշկել (բարբառներից անցած), քերթել* և այլն» (ընդգծ.՝ Ն. Հ.). տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 107:

¹³ Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. III, Ե., 1944, էջ 115-116:

¹⁴ Ասել է արդի հայերենում առկա է և՛ բառիմաստի մթագնում, և՛ բառիմաստի փոփոխություն:

551): Ըստ Ռուբեն Ղազարյանի՝ նույն իմաստները, թեև ոչ առաջնային («քանդել, ավերել»), այլ նաև փոխաբերական («քայքայել, ավերել, քանդել, կործանել, խախտել») ունեն *խախտել*. *խարխալել* բայերը¹⁵: Ուրեմն և միանգամայն իրավացի է Հայկ Ամալյանը՝ նրկատելով, որ որոշ բառախմբերում «հատկապես նրանց վերջին մասերի բառերը իրար հետ են կապվում փոխաբերական իմաստով, որպես միևնույն երևույթին, առարկային տարբեր կողմերից բնորոշող, որակող բառեր»¹⁶: Հետևաբար նախորդ ՀԲԾ-ի նմանությամբ սա էլ, թերևս, տրոհելի է հետևյալ շարքերի՝ *քակել*. *քակտել* (*քայքայել*. *քանդել*)- *քանդել*. *աւերել*. *աղարտել*- *փլուզանել*. *կործանել*. *հարթայատակ կամ հիմնայատակ առնել* (*քայքայել*)-*խախտել*. *խարխալել*: Իսկ Ռուբեն Ղազարյանի առանձնացած *դղրդել*-ի «խախտել» իմաստը (ԳԲ, հ.Ա, էջ 379) հավանաբար վերաբերում է փոխաբերորեն «հուզվել, ալեկոծվել, վրդովվել»-ին, որոնք բառարանների սովորյալ առկա են ինչպես «ուշ միջնադարի հայ բառարանագրության գլուխ-գործոց»-ում (ԲՀ, էջք Ե և 80), այնպես էլ արդի հայերենում (ԱՀԲԲ, էջ 303. տե՛ս նաև ՄՀԲԲ, հ. I, էջ 532):

Ընդունելով Հայկ Ամալյանի վերոնշյալ դիտարկումը՝ այդուհանդերձ այն կարելի է լրացնել՝ նկատելով, որ ՁԲ-ներում շարքերն առավել հաճախ ասես ձևավորվում են հետևանքի իմաստային հիմքով՝ որոշ չափով հիշեցնելով *եթե ... ասպա* -ով, պայմանական ձևակերպմամբ, հետևանքային հարաբերությամբ կառույցներ¹⁷: ՀԲԾ-ում, անշուշտ, այսպիսի հարաբերակցություն չկա, սակայն նշմարվում, գծագրվում է, որ գործողությունը (կամ երևույթը, հատկանիշը) ենթադրում, հանգում է, կամ էլ դրան հետևում է (գու-

¹⁵ Տե՛ս Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հ. Ա, Ե., 2000, էջք 548, 561:

¹⁶ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 127:

¹⁷ Հմմտ.՝ Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 128: Լ. Հովհաննիսյանը, քննելով ԺԷ դ. փիլիսոփայական-տրամաբանական երկերի լեզուն, արձանագրում է, որ «բնորոշ պետք է համարել **նախ...ասպա** կառույցների, պատճառի, հիմունքի պարագա երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների առատությունը...». Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 135:

ցե նաև անվերապահորեն) մյուսը: Կարելի է հավանական համարել, որ թերևս հենց այս օրինակաչափությամբ էլ հետագայում առանձնացվել են հատկանիշների աստիճանականությամբ կազմվող շարքերը: Ուրեմն և հարկ է դիմել օրինակների¹⁸:

Թշուառանայ. մարկանայ. տառապիլ. խոհարանայ. խոհարանել. անկաճանայ. տուայտիլ^{*19}. *աղբատք ի հոգետոր և մարմնատոր արգասեաց*^{*}. *հիւանդք մեղաւք*^{*} ՀԲԾ-ից բխում է, որ եթե որևէ մեկը, «թշուառութեան մէջ ընկնել»-ով (ՄՀԲԲ, հ. II, էջ 115-116), թըշվառանում, աղբատանում է, ապա դժբախտանում է, տառապում, տանջվում:

Դեզերել. դանդաղել. աղել^{*20}. *արմանայ. յապաղել. պղերգանայ. ծուլանայ. վատանայ. թուլանայ. վեհերել. դողալ. ինենեշանայ. թուլամորթել*^{*}. *տատամսել. յամրանայ. աղավաղել. հեղգալ. յիրալ. մեղկել. յուլանայ. երկնչիլ. զոփալ. զարհուրել. զահի հարկանել. զանգիտալ. պակնուլ. կեղակարծիլ. կասկածել. սոսկալ. դաւղել. յահաւրել. ջերանիլ. հիանալ*^{*}. *Թմբրիլ*^{*} ՀԲԾ-ում ևս «հապաղել, տատանել» նշանակությամբ *դեզերել*-ը, «դանդաղել, ձգձգել» իմաստով *յապաղել*-ը ենթադրում են ծուլություն, նաև կասկած՝ հանգեցնելով *երկնչել*-ի, *զարուրել*-ի, *սոսկալ*-ի. չէ՞ որ կասկածն ինչ-որ տեղ վախ է ծնում: Եվ ասես ի հաստատումն ասվածի՝ ԺԸ դարից ավանդված ՄՄԶ 6762-ում *Ահ. արհաւիր. ահաբեկութիւն. երկիւղ. զարհուրանք. սարսուռ. տողումն. սարսափումն. սոսկումն* բառաշարքն ավարտվում է հենց *կասկած* բառով²¹:

¹⁸ ՀԲԾ-ները, ինչպես արդեն նշվել է, ներկայացվում են ԺԳ-ԺԸ դարերից ավանդված բոլոր գրչագրերի համատեղմամբ:

¹⁹ Սույն ՀԲԾ-ում աստղանիշով առանձնացվող *տուայտիլ*-ն արձանագրվում է ՄՄԶ 4149 (355բ), 5925 (93բ), *աղբատք ի հոգետոր և ի մարմնատոր արգասեաց. հիւանդք մեղաւք* արտահայտությունները՝ ՄՄԶ 5126(22բ), 2371 (284բ):

²⁰ Սույն ՀԲԾ-ում աստղանիշով առանձնացվող *աղել*-ն արձանագրվում է ՄՄԶ 5126 (21ա), 4612(174բ), 2371 (283բ), 2372(342բ)-ում, ՄՄԶ 3937-ում *թուլամորթել*-ը՝ *վատամորթել* (56ա) ՀԲԾ-ում. *հիանալ*-ը չկա ՄՄԶ 266, 2335, 5951, 1654, 3937, 7117, 8106-ում. *թմբրիլ*-ն առկա է ՄՄԶ 5126 (21ա), 2372 (342բ)-ում:

²¹ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., 2020, էջ 23:

Ճիշտ այդպես էլ *Տարակուսել. բաժանտել. յերկբայել. կեղակարծել* շարքն ավարտվում է *կաղսիկաղս* (ճիշտը՝ *կաղս ի կաղս*՝ «ահիւ»։ ՆՀԲ, հ. I, էջ 1036), *խիրտսիխիրտս* մակբայներով²²։

Նշված հարաբերակցությունը պարզորոշ է նաև *Պահապան. պաշտպան. պատսպարան. սպաստարան. փրկիչ. ապաւեն. հայթայթաւղ. ողորաւղ. մխիթար. աւգնական* և *Խաւար. մուրթ. մեզ. մառն. մոայլ. ստուերամած. շամանդաղ. աղջամուղջ. նսեմ. բալ. աղտամուղտ. խաւարաբորբ. խաւարածին. թուզ. զիշեր. մթին. թուխ. արջնաթոյր. սեւաթոյր. խրթնի. բաւիղ. բորբ. տխուր(ք), ողբ. սաստանա* ՀԲԾ-ներում, որքանով պահապանը պաշտպան է, հետևաբար նաև ամոքող, կարեկցող, քաջալերող, օգնող, օժանդակող ..., իսկ խավարը, մուրթը, տխրությունը ենթադրաբար հանգեցնում են մրոայլության, ուրեմն և տխրության, ողբի (՞)։ տխրությունն ու հուզմունքն էլ ասես մշտապես հուզականորեն, զգայականորեն անբաժան են։

Ծպտել. յապտել. կերպարանել. փթթել. ծաղկել. բողբոջել. ցցուել բառաշարքում արդեն ծպտված-թաքնված վիճակը ենթադրում է նաև այլակերպում, փոխակերպություն, վերջինս էլ հենց «բողբոջել-պտկել» («...ընձիւղել, բողբոջել. ցցուիլ»։ ՆՀԲ, հ. II, էջ 665), «ծաղկել-փթթել-կանաչել»-ն է («...ուռճանալ. ծաղկիլ»։ ՆՀԲ, հ. I, էջ 1047. տե՛ս 201-րդ էջում)։

Խոշոր. կարծր. ընդդիմահար. յաստատուն. պինդ. անշարժ ՀԲԾ-ն²³ նույնպես առանձնանում է նշված հարաբերակցությամբ։ *Խոշոր*-ն ընդհանրապես դիտվում է անշարժ, պինդ, ուրեմն և հաս-

²² ՆՀԲ-ն *խիրտ* բառահոդվածի վերջում նշում է. «Ի Հին բռ. *խիրտս ի խիրտս. յերկբայս» (հ. I, էջ 945), Հ. Աճառյանը՝ վկայում «...*խիրտ ի խիրտս* «երկբայելով, վախվրխելով» (տե՛ս ՀԱԲ, հ. Բ, Ե., 1973, էջ 371)։

²³ Այն չկա ՄՄՁ 4149, 8198(II), 5925, 8106-ում։ Բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ձեռագրերում առկա են *Հաստատուն. պինդ. կարծր* (ՄՄՁ 4149, 399ա. 8198(II), 66բ. 5925, 97ա) և *Խոշոր. կարծր. ընդդիմահար* ՀԲԾ-ները (ՄՄՁ 266, 83բ. 532, 95ա. 5919, 210բ. 7250, 82բ. 5126, 22գ)։ *Խոշոր. հաստատուն. պինդ*-ը՝ ՄՄՁ 538-ում (94բ), 3197-ում (159ա), 3937-ում (58ա), *Խոշոր. հաստատուն*-ը՝ ՄՄՁ 7117-ում (320ա), *Հաստատուն. անշարժ. պինդ*-ը՝ ՄՄՁ 2335-ում (254 ա)-ում։ *Անշարժ* բառը չկա ՄՄՁ 4612-ում, 8198 (I) -ում։

տատուն, հետևաբար՝ ընդդիմացող, դիմադրող. թեև ճիշտ չէր լինի անվերապահորեն պնդել, որ հաստատուն, կայուն դիրք ունենալիս են միշտ դիմադրում և ընդդիմանում (*Խոշոր*-ի մասին տե՛ս 137-138-րդ էջերում):

Այդպես է նաև *Ծամել. ծասկել. մանրել. կակդել. լեսուլ. մալել. խախտել. խարխարել. քայքայել* բառաշարքում²⁴. տրամաբանորեն ենթադրվում է, որ ծամելիս սնունդը մանրացվում, փափկեցվում, փխրեցվում է՝ հանգեցնելով *քայքայել*-ին:

Նշելի է *Առիշեղ**. *խոտորնակ. կողմնակի. ի ձախ. գելակի* շարքը²⁵՝ իմաստային համանման հոմանիշային տարողությամբ: Ասվում է, որ ուղուց շեղվելը միշտ ձախ է, որն էլ անհաջողության մատնվելու, ձախողվելու (*գործը, մի բան ձախ գնալ կամ թեքվել*)²⁶, վատ տրամադրության, հաճախ սխալվելու, օրն անհաջող լինելու (*ձախ ոտքի վրա վեր կենալ. տե՛ս ն.տ.*), անփույթ, անխնամ, կիսատ-պրատ արվածի (*ձախ ձեռքով անել. տե՛ս ն.տ.*) նշան է²⁷: Հարկ է հիշեցնել նաև, որ ՆՀԲ-ում *ահեակ* բառի համար արձանագրվում է. «Նմանութեամբ, որպես թիր, հոռի, չար, անարգ, վատթար, վնասակար, վնաս» (հ. I, էջ 30):

ԺԳ-ԺԷ դարերից ավանդված գրչագրերում առկա են *ի ձախ* և *ի ձոխ/դ* տարբերակները: Նկատի առնելով, որ ակնարկվում է «ուղուց շեղվել, խոտորվելը» (հմմտ. *խոտորնակ* «խոտորեալ կամ շեղեալ յուղղութենէ». ՆՀԲ, հ. I, էջ 970), *կողմ(ա)նակի* «շեղեալ ի մի կողմն» (ՆՀԲ, հ. I, էջ 1112), ապա և ԱԲ-ի մեկնած «անուղղակի» իմաստը (էջ 445), առանձնացվում է *ի ձախ*-ը: Դառնալով *ի ձոխ/դ*-

²⁴ *Ծամել* հենարառով ՀԲՇ չկա ՄՄՁ 4149-ում, 8106-ում, 8198(II)-ում. ՄՄՁ 7117-ում (318ա) *մալել*-ն արձանագրվում է *մաղել* տարբերակով:

* Ճիշտը՝ Առ ի շեղ (ՆՀԲ, հ. II, էջ 474. տե՛ս նաև Առձեռն բառարան հայկագնեսան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 634:

²⁵ Այն չկա ՄՄՁ 4149-ում, 8106-ում, 8196 (II)-ում: ՄՄՁ 5925-ում (91ա), 2335-ում (252 բ), 5919-ում (210 ա), 530-ում (65ա) այն սկսվում է *Առիշեղել* հենարառով:

²⁶ Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (այսուհետև՝ ՀԼԴԲ), Ե., 1975, էջ 375:

²⁷ Նաև հմմտ.՝ Պ. Բեդիրյան, Իմաստի փոփոխությունները հայերենում, թեկն. ա-տեն., Ե., 1955, էջ 256:

ին՝ հարկ է հավելել, որ բառարանները *ձոխիմ/լ*-ը բացատրում են իբրև «շեղիլ, խոտորիլ ի ձախակողմն» (ՆՀԲ, հ. II, էջ 160: ԱԲ, էջ 521): Հրաչյա Աճառյանը, հղելով ԲՀ-ն, վկայում է *ձոխել* («թիրել») և *ձախել* («ծռել») ձևերը (ՀԱԲ, հ. Գ, էջ 157): *թիր-սիսալ*-ը իմաստային անցումով նույն «ոչ ճիշտ, անճիշտ», հետևաբար և «ծուռ, շեղ»-ն է:

Ինչ վերաբերում է *գելակի* բառին, ապա այն արձանագրել է Մանվել Ջախջախյանը՝ «գալարելով, կծկելով» նշանակությամբ և մակբայական կիրառությամբ՝ միաժամանակ բառահոդվածի վերջում հավելելով՝ «առ ի շեղ. կողմնակի. obliquamente», ասել է՝ «շեղվել, թեքվել» (ՋԲ, էջ 347): Հրաչյա Աճառյանի հավաստումով՝ *գել* արմատը դրսևորվում է նաև այլ ձևերով, որոնցից *գիլ*-ը *գել* արմատի (հ.-ե. *wel- «գլորել» արմատից) ձայնդարձն է (ՀԱԲ, հ. Ա, էջք 530, 555)²⁸: Ուստի և ընդունելի է ոչ միայն նշված ոլորված→ծուռ, այլև գլորված→թեք, շեղ (ոչ ուղիղ) իմաստային անցումը, հատկապես եթե համադրվի արդի հայերենի բացատրական բառարաններում նշված *գլոր(վել)*-ի «կործանել, տապալել» փոխաբերական իմաստը (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 412: ԱՀԲԲ, էջ 244): Նշանակում է՝ միջին հայերենում թերևս արդեն ենթադրելի է ուղուց շեղվելու՝ «կործանվելու» իմաստային նրբերանգր²⁹:

Քննությամբ նաև ակնհայտ է դառնում Հայկ Ամալյանի արձանագրածը. բառը տարբեր շարքերում հանդես է գալիս հիմնական և փոխաբերական իմաստներով, ինչպես, օրինակ, *արքանեակ*-ը՝ *Հնագանդ* և *Արքանեակ*, *հաստատել*-ը՝ *Բնավորել* և *Կառուցել*, *տրուպ*-ը՝ *Փանաքի* և *Խոնարի* հենաբառերով ՀԲՇ-ներում: Այս պարագայում ևս նկատելի է վերոնշյալ երևույթը. բառը ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածվելիս ենթադրելի է համանման հարաբերակցություն՝ հիշեցնելով *եթե ...սպա* -ով հետևանքային

²⁸ Լ. Հովհաննիսյանն անդրադարձել է *գելակի*-ին՝ որպես ՆՀԲ-ում և ԱԲ-ում չարձանագրված բառ. Լ. Հովհաննիսյան, Բառաքննական նկատառումներ, Պատմաբանասիրական հանդես, 3, 2003, էջ 193:

²⁹ Հմմտ. Միջին հայերենում վկայվող «գլորիչ, կործանիչ, կործանարար» նշանակությամբ *գլորական* բառը (Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ, 2009), Ե., 2009, էջ 144:

հարաբերությանը կառույցներ. այսպես՝ *ծածուկ* բառն առկա է *Անհաս* և *Ջանխուլ* հենաբառերով ՀԲԾ-ներում, ասել է՝ եթե թաքուն, գաղտնի է պահվում, ապա ենթադրվում է, կամ հետևանքն այն է, որ անըմբռնելի, անմատչելի, անհասանելի է, այսինքն՝ ինչ-որ առումով չբացահայտված: Նույնը՝ *տոշկել* բայի դեպքում. այն առկա է *Պարհել* և *Ջնջել* հենաբառերով ՀԲԾ-ներում. եթե արգելափակում են, ապա կարելի է ենթադրել՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տանջում են, չարչարում, խոշտանգում³⁰: Այդպես էլ՝ *թմբրեալ* (*թմբրիլ*)-ի դեպքում, որ առկա է *Շամբուշ* և *Դեգերել* հենաբառերով ՀԲԾ-ներում. ընդարմանալը, թուլանալը տատանում, կասկած է ծնում, որքանով եռանդով, խանդավառությամբ արվածը, թերևս, կասկածի տեղիք չի տալիս և այլն:

ՀԲԾ-ն ձևավորվում է նաև բառերի իմաստային նրբերանգներով. ինչպես ժամանակակից հայերենի համար նշում է Աշոտ Սուքիասյանը, «բազմանդամ հոմանիշների շարքեր են կազմում իմաստով և ոճական կիրառություններով նրբերանգային տարբերություններ ունեցող հոմանիշները»³¹, որոնք, ըստ հետազոտողի, «վկայում են հայոց լեզվի իմաստաբանական համակարգում հոմանիշային կապերի հարստության և բազմազանության մասին»³²: Կարելի է առանձնացնել հետևյալ ՀԲԾ-ները՝ *Պիտալ. քարքել. ըղձանալ. տարփել. ցանկալ. տենչալ. փափագել. գեղձ(ան)ալ*։ Ճոդոպրեաց. գերծաւ. վրիպեցաւ. պրծաւ. փրթաւ: Ըմբոշխնել. բուծանել. տածիլ. կերակրել. պարենել* և այլն:

³⁰ *Տոշկել* «խոշտանգել»-ն առանձնացվում է որպես հայ թարգմանական գրականության ժողովրդախոսակցական բառաշերտի միավոր. Լ. Հովհաննիսյան, Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար), Ե., 2007, էջ 221: ԱՄԳՀՊ-ում հիշատակվում է *տոճկիլ* «այրվել»-ը՝ որպես «միջին գրական լեզվի վկայած ենթաշերտային բառ» (էջ 193):

³¹ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 143:

³² Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 141-142:

* ՀԲԾ-ն *Տենչալ* հենաբառով է սկսվում ՄՄՁ 4149-ում (362բ), 8189-ում (II. 67բ), 8106-ում (62ա), *Քարքել*-ով՝ ՄՄՁ 2335-ում (256բ), 5925-ում (100ա), 530-ում (64բ), 5919-ում (210ա):

Աշոտ Սուրբիասյանի արձանագրամամբ՝ հայերենում սակավ են երկանդամ չԲԾ-ները, այն էլ հիմնականում ձևավորված նույնանիշներից³³: Եվ, իրոք, բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 4149-ում և 2335-ում հանդիպում են *ժառանգ. յետմնաց(ք): Բուրաստանք. դարաստանք: ժամանակ. ամանակ: Հակաճառք. հակադարձք*, ՄՄՁ 532-ում՝ *Հաստատուն. պինդ* երկանդամ շարքերը: Ավելի հաճախական են եռանդամները, որոնցից միայն *Շաղղակերք. մարմնակերք. գիշախանձք*-ը և *Պաճուճել. պճնել. գեղազարդել*-ն են կազմված նույնանիշներից, մյուսները ձևավորվել են բառերի իմաստային նրբերանգներով կամ դրանց փոխաբերական իմաստներով. *Դիտել. հայել. նկատել*^{*}: *Բուրաստանք. դարաստանք. դրախտք: Դատաւոր. իրաւարար. դատող*³⁴: *Զգաւն. զգոյշ. զգաստ: Խստերախ. խստավիզ. խստաբան*³⁵: *Կառափել. ձաղկել. խողխողել*³⁶: *Կէտ. սահման. նպատակ: Կոճոպել. յապաւել. ծայրատել: Հակատել. խորհել. խոկալ: Յիմարել. լեզուազարել. ընդվայրածել: Նենգոդ. դաւաճանող. պատրոդ: Պիտատութիւն. վկայութիւն. նմանաբերութիւն: Սպրդել. մտնել. մուծանել: Վրիպել. գրկել. զլանալ* և այլն:

Այսպիսով՝ ձեռագիր բառարանների բառաշարքերի քննությունը վկայում է, որ

- դրանք կազմվել են՝ ըստ միջնադարի հայ քերականների՝ հոմանիշության մասին ըմբռնման.
- բառաշարքի միավորներն իմաստներով առնչվում են և միավորվում են «ընդհանուր հասկացությամբ».
- բառաշարքերը ձևավորվում են հետևանքի իմաստային հիմքով՝ որոշ չափով հիշեցնելով *եթե ...սպա*-ով, պայմանական ձևակերպմամբ, հետևանքային հարաբերությամբ կառույցներ.

³³ Տե՛ս Ա. Սուրբիասյան, նշվ. աշխ., էջ 141:

^{**} ՄՄՁ 2281-ում *Յառել. կարկառել. նայել* չԲԾ-ն է (125բ):

³⁴ ՄՄՁ 7117-ում և 5925-ում հավելվել է *քննօող*-ը (310բ, 92բ):

³⁵ ՄՄՁ 532-ում հավելվել է *խստասիրտք*-ը (94ա), 5925-ում՝ *խիստ*-ը (94ա):

³⁶ ՄՄՁ 7117-ում *Հարկանել. կառափել. ձաղկել. խողխողել* չԲԾ-ն է (317բ):

- բառաշարքը կազմվում է նաև բառերի իմաստային նրբերանգներով:

Առանձնացված օրինակներով կարելի է մեկ անգամ ևս ամրագրել այն դիտարկումը, որ ուսումնական գործին նպաստելու համար, պայմանավորված բառարանների գործնական բնույթով՝ հոմանիշների՝ ԺԳ-ԺԸ դարերից ավանդված ՁԲ-ներում բառաշարք կազմելու նախապայմաններից են եղել «իմաստային առնչության մեջ», «գործածության առընթերությամբ կապված» լինելը, մասամբ հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, հիմնական և փոխաբերական իմաստներով գործածվելը³⁷:

³⁷ Տե՛ս Ն. Սմայլյան, նշվ. աշխ., էջ 125-129:

ԲԱՌԱՇԱՐՔԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Քննելով հոմանիշության չափանիշները ժամանակակից հայերենում՝ Աշոտ Սուրբիասյանը նշում է, որ «Ըստ հոմանիշության ձևավորման չափանիշի, հոմանիշները պետք է պատկանեն միևնույն խոսքի մասին, այսինքն՝ հոմանիշության համար որպես անհրաժեշտ նախապայման առաջ է քաշվում միևնույն խոսքի մասին պատկանելու հարցը»²՝ միևնույն ժամանակ չբացատրելով «նաև այն փաստը, երբ որոշ դեպքերում գոյականը և ածականը կամ ածականը և մակբայը միաժամանակ համապատասխանաբար հանդես են գալիս նաև որպես հոմանիշներ»։ Իբրև օրինակ են բերվում *արագ, մեղմ, մեկնիչ* բառերը³։

ԺԳ-ԺԸ դարերից ավանդված ՁԲ-ներում ՀԲՇ-ներ են կազմում գերազանցապես միևնույն խոսքի մասերը. գոյական, ածական, մակբայ⁴, բայ⁵ հենաբառերով ՀԲՇ-ներ են կազմում համապատասխան խոսքի մասերը, ինչպես՝ *Ձեռք. ծղուկ. բազուկ. ոլոք**. *դաստակ(ք). աջ. թեւ. թեկն։ Հաշտ. համբոյր. խաղաղուտ. հեզ. հանդարտ. հաւան. խաղաղ. անքոյթ. հանգիստ։ Մպրդել***. *մուծանել*։

¹ ՀԲՇ-ների ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները ներկայացվում են ըստ այն հատկանիշների, որոնք առաջարկում է Ա. Սուրբիասյանը «ժամանակակից հայերենի հոմանիշ գույգերի կամ հոմանիշների շարքերի հիմնական տիպերը» առանձնացնելիս. Ա. Սուրբիասյան, նշվ. աշխ., էջ 167-174։

² Ա. Սուրբիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջ 57։

³ Նույն տեղում։

⁴ Չթեքվող խոսքի մասերով ձևավորված ՀԲՇ-ների մասին է նշում նաև Ռ. Ղազարյանը (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 155։ Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, Ե., 1993, էջ 74)։

⁵ Ըստ Ա. Սուրբիասյանի՝ «հայերենում համեմատաբար ավելի հարուստ են բայերով և ածականով կազմվող հոմանիշների շարքերը»։ Ա. Սուրբիասյան, նշվ. աշխ., էջ 143։

* *Ոլոք*-ը հավելվել է ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում։

** ՄՄՁ 530-ում *Մպրդեալ. սողեալ. մուծեալ. մտեալ* ՀԲՇ-ն է (63բ)։

մտանել: Որպէս. որպակ. որկէն. որզան. որզոն. որզունակ. որբար. որչանճ. հիպէս. հիկէն. հիզան: Գէթ. գոնեայ. փարթար և այլն:

Բայց և առկա են շուրջ երկու տասնյակ ՀԲԾ-ներ, որոնք ձեւավորվել են տարբեր խոսքի մասերով:

ա) Հենաբառը գոյական լինելու դեպքում նշվում են՝

▪ ածական (*Բիծ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *պղտոր. ծրդեայ. անտորբ. Ծազք* հենաբառով ՀԲԾ-ում՝ *սպառսպտոռ, Լոյս* հենաբառով ՀԲԾ-ում՝ *լուսերանգ, ոսկեփայլ. հրաշափառ. բազմալոյս, Խաւար* հենաբառով ՀԲԾ-ում՝ *խաւարարորբ. խաւարագզած. խաւարամած. սնաթոյր, Սմանութիւն* հենաբառով ՀԲԾ-ում՝ *նոյնադէմ. նոյնաձև. նոյնանման. նոյնակերպ, Գուլթ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *խանդակաթ. ուխտադիր, Բոց* հենաբառով ՀԲԾ-ում՝ *տոչորիչ. կիզիչ. տապակիչ*).

▪ բայ (*Վկայութիւն* հենաբառով ՀԲԾ-ում՝ *հաւաստել, Ջան* հենաբառով ՀԲԾ-ում՝ *հոզալ. կրել. համբերել. ըմբերել. խստամբերել, Պիտառութիւն* հենաբառով ՀԲԾ-ում՝ *յորդորել, Բոց* հենաբառով ՀԲԾ-ում՝ *տոչորել. կիզուլ. տապակել. ապականել. այրել*).

▪ մակբայ (*Դաս* հենաբառով ՀԲԾ-ում՝ *համօրէն. միանգամայն. իսկօրէն*:

բ) Հենաբառը ածական լինելու դեպքում՝

▪ գոյական (*Դիլիտ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *տարակուսանք, Անտառալիտ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *դրալիտ. մացառ. մայրի*).

▪ բայ (*Այտուցեալ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *պանծալ. կոկոզանալ. բարձրավզանալ, ինքնահաճիլ, Յախտունախաւս* հենաբառով ՀԲԾ-ում՝ *շաղակրատել*).

▪ մակբայ (*Թաթաղուն* հենաբառով ՀԲԾ-ում՝ *բնաւ. ըստ ամենայնի, Պատրուակեալ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *զանիլակի⁶*).

▪ նաև բացատրություն (*Սոսկ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *միայն պատահմամբ և ոչ անուամբ միայն*):

գ) Հենաբառը բայ լինելու դեպքում՝

▪ ածական (*Կաղալ* հենաբառով ՀԲԾ-ում՝ *լպիրծ. ոտնառ, Ամեղել* հենաբառով ՀԲԾ-ում՝ *ստարան. երդմնագանց. անպատկառ*.

⁶ ՆՀԲ-ն արձանագրում է. «Ռամկական ոճով՝ իբր Ո՛րչափ» (հ. II, էջ 536):

* ՄՀԲԲ-ում այն դիտվում է «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» (հ. II, էջ 8):

պատուիրագանց. ժպիրի, Անջատել հենաբառով ՀԲՇ-ում՝ մեկուսեալ. քակեալ. մեկնեալ, Դուռել* հենաբառով ՀԲՇ-ում՝ օղագնաց, Փոփոխել հենաբառով ՀԲՇ-ում՝ յեղեղուկ)։

▪ մակբայ (Տարակուսել հենաբառով ՀԲՇ-ում՝ կեղակարծ. կադրսիկադ. կարծիկարծ. խիրտսիխիրտս, Պատրուակել հենաբառով ՀԲՇ-ում՝ աներևակի)։

դ) Մակբայի դեպքում՝

▪ ածական (Վաղվաղակի հենաբառով ՀԲՇ-ում՝ արագագոյն)։

▪ դերբայ (Վաղվաղակի հենաբառով ՀԲՇ-ում՝ արտորալով⁷)։

▪ դերանուն (Նախկին հենաբառով ՀԲՇ-ում՝ յայնմանէ)։

Տարարժեք Կարապետ հենաբառով ՀԲՇ-ում արձանագրվում է մակբայ՝ Կարապետ. նախընթաց. առաջեալ. յովհաննէս. աւետաւոր. յառաջընթաց⁸ և այլն։

Թէն գրչագրերում տրվում է ուղիղ բառաձևը, կան նաև թեր հոլովաձևեր. ինչպես՝ պարենի** . թովչաց. գիտնաց (Վհուկ)***, հանուրբ (Համանգամայն), պատահմամբ, ոչ բնութեամբ (Սոսկ), ի դարանի/է (Պատրուակեալ)։

Բայերն էլ բնականաբար արձանագրվում են անորոշ դերբայով՝ Լոգանալ. մաքրել. լուանալ. սրբել. լիւղել. մկրտել։ Բնավորել. հիմնել. գոյանալ. հաստատել. կազմել. առնել։ Կառափել. ձաղկել. խողխողել. հարկանել և այլն։ Առկա է նաև բայի դիմավոր ձևերով կազմված երկու ՀԲՇ՝ Հասուցի. հատուցի. փոխարինեցի. դարձուցի. տուժեցի. փութացուցի. վճարեցի. ետու. տուի. տուեցի. նուիրեցի. շնորհեցի։ Ճողոպրեաց. գերծաւ. վրիպեցաւ. պրծաւ. փրթաւ։

* Հենաբառի տարբերակների մասին տե՛ս 164-րդ էջում։

⁷ Տե՛ս, նաև հիմնտ.՝ ԱՄԳՀՊ-ում հիշատակվող գրաբարյան վաղվաղակի-ի՝ թեզով և փութով, շտապով «համարժեք»-ները (էջ 182)։

⁸ Համեմատելի է Կարապետ բառահոդվածը՝ «Կարապետ ... Հորդիչ ճանապարհի. Իբրև առաջնորդ, և իբր յառաջընթաց սուրհանդակ. նախընթաց. աւետաւոր... և առաւել սեպիականեալ անուն Յովհաննու մկրտչի...» (ՆՀԲ, հ. I, էջ 1064)։

** ՄՄՁ 566(II)-ում պերենէ տարբերակն է։

*** Փակագծերում տրվում է հենաբառը. եթե փակագծեր չկան, ուրեմն նշվածը հենաբառն է։

Բայի դիմավոր ձևեր են վկայվում նաև առանձին ՀԲՇ-ներում. *Ել. գոլ. եղանել. լինել. լեալ. եղեալ* ՀԲՇ-ն ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում և ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 7117-ում համապատասխանաբար ավարտվում է *ելոյ*-ով և *ելոյր*-ով. վերջինն ըստ ՄՀԲԲ-ի՝ «*Եալ*-ի (եմ բայի անց. դերբ. գրաբարում) սեռ. հոլ. յունաբան հեղինակների մօտ: Փխկ. *Ելոյ. լինելով*» (հ. I, էջ 554):

Աշոտ Աբրահամյանի հավաստմամբ՝ միջին հայերենում մեծ մասամբ ՀԲՇ-ներ են կազմում «առանձին բառական արժեքով» հանդես եկող և որպես ածական ըմբռնվող՝ գրաբարի անցյալ⁹, այլև ենթակայական և *-ի* մասնիկով ապառնի դերբայները: Նա նշում է՝ «Գրաբարի ներսում ևս -ող (-ոյ) մասնիկով ենթակայական դերբայի՝ խոսքի այլ մասերի անցնելու փաստեր կան»¹⁰, արձանագրելով, որ «գրաբարում տարածված երևույթ է» նաև «ապառնի դերբայի *-ի* մասնիկով տարբերակի անցումը ածական անվան»¹¹:

ԺԳ-ԺԴ դդ., ապա նաև ԺԵ-ԺԷ դդ. միջին հայերենի դերբայները քննելիս Սամվել Անթոսյանը առաջին շրջանի համար նշում է, որ «Ապառնի դերբայի *-ի* վերջավորությամբ տարբերակը շատ սակավ կիրառություն ունի», եղած օրինակներն էլ «ստորոգելիական վերադրի կիրառությամբ» են (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 305): Նույնն արձանագրելով երկրորդ շրջանի համար՝ նա հավելում է, որ Ամիրդովլաթ Ամասիացու օգտագործած *գարմանալի* և *ընդունելի* բառերը «.... Առձեռն բառարանը որպես ածական է դնում» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 370): Նրա դիտարկմամբ՝ անցյալ դերբայը «ածական-որոշչի կիրառությամբ» առանձնանում է ԺԵ-ԺԷ դարերում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 372): Ինչ վերաբերում է ենթակայական դերբային, ապա ըստ Սամվել Անթոսյանի՝ «.... *ող-ոյ* վերջավորություններով ենթակայական դերբայները միջին հայերենում շատ ավելի լայն կիրառություն ունեն» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 314), իսկ ԺԵ-ԺԷ դարերում այն «հանդես է գալիս անկախ, որպես գոյական» (ԱՄԳՀՊ,

⁹ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 355:

¹⁰ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջք 396-397, 314:

¹¹ Նույն տեղում:

հ. Ա, էջ 376-377): Նշված դերբայների «առանձին բառական արժեքով» գործածությունը հավաստվում է քննվող ՁԲ-ների՝ *Կորացեալ. ընկճեալ. հողվեալ. հողեալ. ընկեցեալ. շրջեալ. խոնարհեալ. զիջեալ. քահեալ. կորակնեալ. համեստացեալ, նուաստացեալ. զինքն խոնարհեալ. թափեալ: Կառուցեալ. հիմնեալ. հաստատեալ. ստուգեալ. սերտեալ. ամրացեալ. հաւաստեալ: Նենգաւղ. դաւաճանաւղ. խարաւղ պատրոջ: Հասանելի. սահմանելի. ըմբռնելի. ամփոփելի*։ Իիծեալ. հիծեալ. մաշեալ. մաշեցեալ. տկարացեալ. անզորացեալ. նիհարացեալ. վատուծեալ. կամ վատուծացեալ. վտտացեալ* և այլ շարքերով: Հարկ է, սակայն, արձանագրել, որ դրանք հանդիպում են նաև առանձին, ինչպես՝ *սքողեալ. խփեալ (Զանխուլ), թմբրեալ, ցնորեալ, յիմարացեալ (Շամբուշ), ժխտաւղ, նկիրացաւղ, ուրացաւղ (Ամեղել), Տեսանաւղ, քողարորբեալ. քողասուղեալ. որջասուղեալ (Պարունակեալ), տառապեալ. տապալեալ (Փանաքի)* և այլն:

Աշոտ Սուքիասյանի՝ ժամանակակից հայերենի համար «բառաբերականական առանձնահատկությունների, ինչպես նաև կառուցվածքի տեսակետից» առանձնացրած «բառային հոմանիշների շարքեր»-ի տիպերից¹² քննվող ՁԲ-ներում տարբերակվում են տարարմատ, նույնարմատ և նույնաձանց ՀԲԾ-ներ: Հատկանշական է սակայն, որ ՁԲ-ներում նույնարմատ և նույնաձանց հոմանիշները մեծ մասամբ հանդիպում են միևնույն ՀԲԾ-ում. դրանք (մի քանի բացառությամբ միայն) առանձին ՀԲԾ-ներ չեն կազմում: Գերակըշտում են տարարմատները¹³, այսինքն՝ այնպիսիք, որոնց բաղադրիչները տարբեր բառեր են. *Զատ. առանձին. յատուկ. միայն. երկաքանչիւր. աւտար. այլաձին. տրոհ. ուրիշ: Հակատել. խորհել. խո-*

* Այս ՀԲԾ-ն բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ և *Անհաս* հենարանով գրչագրերում *Սահմանելի* հենաբառով է:

¹² Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 170:

¹³ Ա. Սուքիասյանի կարծիքով՝ այս տիպի ՀԲԾ-ների «առաջացման նախապայմանը հոմանշային հարաբերությունների իմաստաբանական չափանիշն է, այսինքն ստուգաբանորեն տարբեր արմատներից կամ հիմնական ձևայիններից կազմված բառերի իմաստների մոտությունը կամ նույնությունը, որի շնորհիվ դրանց միջև հաստատվում են հոմանշային կապեր կամ հարաբերություններ». Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 168:

կալ. պարուրել: Դիտել. նկատել. հայել: Թուրմ. գէջ. խոնաւ. գողտրր. տամուկ. Կակուդ. լոյծ. փափուկ: Լուծումն. թափումն. մերկացումն. գերծանումն. կողոպտումն. կապտումն. յափշտակումն. աւցտումն. գրկումն: Էանալ. գոյանալ. գոյաւորիլ և այլն:

Նույնարմատ ՀԲՇ-ները¹⁴ ներառում են հոմանիշներ՝ կազմված՝

ա) մեկական ընդհանուր և տարբեր հիմնական (արմատական) ձևայիններից, ինչպէս՝ *Աստուածազան. աստուածաքանչ. աստուածազգեաց. քրիստոսափառ. քրիստոսատես: ...լուսաճեմ. ուղիփաճեմ. սպիտակափայլ. արեգակնափայլ. ոսկեփայլ. լուսափայլ: ...հրաշափառ. սպետափառ(ք): ...բազմալոյս. բազմաճառագայթ:...խաւարաբորբ. խաւարագգած. խաւարասէր. խաւարածին. խաւարամած. ստուերամած. արջնաթոյր. սեւաթոյր: Խստերախ. խստավիզ. խստաբան: Ղեկավար. նաւավար. նաւապէտ: ... նկարագիր. կենդանագիր. նոյնադէմ. նոյնաձեւ. նոյնանման. նոյնակերպ: ... բազմազան. զանազան. ամէնազան. զարմանազան. երանգերանգ. ամէներանգ. ամենատես. ամենակերպ. ամենորակ և այլն.*

բ) միևնույն հիմնական (արմատական) և տարբեր բառակազմական ձևայիններից. *նախագիտական. գիտնական (Տեսանաւղ), ծայրագոյն. ծայրացեալ (Գերունակ), տարամերժել. արտամերժել (Անջատել), Նենգաժէտ. նենգաւոր, տոփականք. տոփացաւղք (Պոռնիկ), Նմանութիւն. նմանակ, Միշտ. յարամիշտ և այլն.*

գ) քաղվող օրինակներից նկատելի է, որ ՀԲՇ-ներ են կազմում նաև արմատական ձևայինը և դրանով բաղադրված բառերը, ինչպէս՝ *Լոյս, Խաւար, Անջատել, Դաս* հենաբառերով, այլև *Կիրք (ախտք. ախտակրութիւնք. ախտաժետութիւնք), Ձգել (արտաձգել. մերժել. բացամերժել. արտամերժել), Միշտ (մշտնջենաւոր. մշտակայ. յարամիշտ), Վտանգ (ողբք. ողբալիք), Ասել (առասել), Երգք*

¹⁴ Ա. Սուքիասյանի հավաստմամբ՝ «Կազմության տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նույնարմատ հոմանիշների շարքերը ... Ըստ կազմության դրանք ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր բառեր են». Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 172:

(պարք. գեղապարք), Հայցել (փորձել. հարցափորձել), Ղեկավար (նաւուղ(դ)իչ. նաւագն. նաւաստի. նաւակառոյց) և այլ ՀԲՇ-ներ.

դ) հաճախական են նույնաձանց ՀԲՇ-ները, որոնք ներառում են մինևնույն բառակազմական ձևույթով և տարբեր (ոչ միշտ, սակայն, իմաստային առնչություն ունեցող) արմատական ձևային տարբերով բաղադրված հոմանիշներ. այսպես՝ *գերապանծ. գերահոն. գերամիտ. հոչակաւոր. գլխաւոր. ականաւոր (Հոյակապ), յարաշարել. յարահիւսել (Շարել), անմիտ. անզգա(յ). անիմաց (Ռակա(յ)), անպատկառ. անամաւթ. անլիր. անվեհեր (Ամեղել), անդրագոյն. հեռագոյն (Անպահր), համաւրէն. ժողովաւրէն. իսկաւրէն (Դաս), վրտանզաւոր. աղետաւոր (Դլխիթ), պատենաւոր. խորհրդաւոր (Պատրրուակեալ), արհնութիւն. սրբասացութիւնք. գովութիւնք. փառաբանութիւնք. բարեբանութիւնք (Երգք), յարակայ. յարագնայ. յարամիշտ. յարաձիգն (Միշտ), երեքլուսեան. երեքհրաշեան. երեքսանչեան (Լոյս):*

Անհաս հենարառով ՀԲՇ-ն բոլոր ՁԲ-ներում առանձնանում է մինևնույն բառակազմական ձևույթով՝ *ան-* նախածանցով¹⁵, կազմ-

¹⁵ Միջինհայերենյան շրջանի համար Ռ. Ղազարյանը նշում է. «... բուն ժխտական նախածանցներից գործունը միայն *ան-* նախածանցն է, որը կազմում է հիմնականում ժխտական կամ բացառողական իմաստով ածականներ, մասամբ էլ մակբայներ» (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 137), և Ն. Շնորհալու առակներից (հանելուկներից) քաղում *ան-* ժխտական նախածանցով կազմված «ակնհայտ նորակազմություններ»՝ «վկայված միայն հանելուկներում» (Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 25): Եվ այս առնչությամբ հիշատակելի է Հ. Աճառյանի այն դիտարկումը, որ «Մեսրոպյան հայերենը չզիտե մի խումբ բառեր, որոնք սովորական են հետին հայերենի մեջ». նա առանձնացնում է նաև «*Ան-* մասնիկով կազմված բացասական բառերը», որոնք «չեն կարող իրենց վերջում կրել *-ելի* մասնիկը», և որպես «հետին» թվարկում *անշարժելի, անայլայլելի, անխախտելի, անսասանելի* բառերը (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 86-87): Վ. Առաքելյանը, անդրադառնալով Հ. Աճառյանի «Վիեննայի միաթարյանների նկատած զանազանությունները» ընդհանրացնելուն, Աստվածաշնչից, Խորենացու, Եղիշեի, Եզնիկի, Փարպեցու, Բուզանդի, Բարսեղ Կեսարացու երկերից առանձնացնում է մասնավորապես վերոնշյալ դիտարկվաճնը առնչվող այդպիսի բառեր՝ «դիտողության կարգով» նշելով, որ «այդ կարգի կազմությունները սկզբնապես սակավ են, բայց, այնուամենայնիվ, կան, և դրանց հետևությամբ հետագա գրողները հաճախել են դրանք» (Վ. Առաքելյան, Ակնարկ-

ված հոմանիշներով՝ *անպարիմանալի. անիմանալի. անսահմանելի. անըմբռնելի. անպարունակ/ելի. անայլանուն. անպարագրելի. աներևելի. անբաւելի. անճառելի. անբովանդակելի. անհասանելի. անտանելի. անայլայլելի. անճառ, անպատում. անբաւ. անեգր. անսահման. անձեւ. անորակ. անչափ. անքանակ. անժամանակ. աներբ. անուր. անյաւ. անյաւդ. անքնին. անյայտ. աներևոյթ. անբաւելի. անտարբերական....*¹⁶, որոնցով գրչագրերում բնութագրվում է Աստված:

ե) շատ են ինչպես *-ք* հոգնակերտով հենարառերը, այնպես էլ առանձին ՀԲԾ-ներում առկա բառերը. սա, թերևս, կարող է բացատրվել միջին հայերենում «հոգնակերտների և հավաքական ձևվոյթների գործածության սահմանները խստորեն անջրպետված» չլինելու իրողությամբ (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 35), ինչպես՝ *Գիծք. տառք. գծաւորք: Շաղղակերք. մարմնակերք. գիշախանձք. փաղաղաւորք: Ծոցք. մորիք. խորշք. խորք. փոսք. զոգք. փրթուածք. ալք. անձաւք. որջք. սոյգք. բոյնք. ձորք. ծործորք. վիհք. խորափիտք. այրք. քւէք. ապուզանք: անմարմինք. զաւրութիւնք. անբիծք. արք հոգեկիրք (Սուրբ),լերդահմայք. ձեռնածուք (Վիուկ)* և այլն:

Հարկ է նաև նշել, որ ԺԴ դարից ավանդված ՄՄԶ 4149-ում և 8189(1)-ում վկայվում են գրաբարյան *-ուցան+ել* վերջավորությամբ

ներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Ե., 1981, էջք 92-93, 98-99): Գ. Սուրադյանը «Ժխտական մասնիկով՝ «լի»-ով՝ *անհասանելի, անճառելի, անսահմանելի, անքննելի* և այլ «բայածականներ» դասական հայերենում դիտում է հունարանություններ (Գ. Սուրադյան, Հունարանությունները դասական հայերենում, Ե., 2010, էջ 85-86):

¹⁶ *Անհաս* հենարառով ՀԲԾ-ն ավարտվում է «...*եւ զառ ի յորոց յոջ զինչէն: այլ զոր ինչ ոչն է նշանակէ: եւ այլեւս սոցին նման: Եւ ահա աստուած, ի վեր քան զբան և զփորձ և զբառն և զմիտս և զահման և զհասս. վերագոյն քննեցեալ... և որ այլևս զկնի սոցունց և նման. և ահա աստուած»* նկարագրությամբ (ընդգծ. Ն.Հ.): «... որ է աստուած» արտահայտությամբ է ավարտվում նաև *Լոյս* հենարառով ՀԲԾ-ն: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ղազարյանը, «Միջնադարյան հայ և լատին գրականության մեջ լույսի բազմախորհուրդ բառային գործածությունները (claritas, splendor, resplendentia fulgar, lux, lumen, illumino, lucidus, illustro) եղել են սովորական: Նարեկացու տաղերում Քրիստոսը դիտվել է «արեգակ, լույս, ճառագայթ, հուր և այլն» (Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, Ե., 1980, էջ 15):

պատճառական բայեր, որոնք և՛ հենաբառ են, և՛ առկա են բառաշարքերում (*Հասուցի. դարձուցի. փութացուցի*). ԺԷ դարից ավանդված գրչագրերում, նշվածներից բացի, կան նաև *գեղեցկացուցանել* (*Շինել. ՄՄՁ 3824, 51ա*), *փախուցանել* (*Բռնադատել. ՄՄՁ 2291, 344բ*), *երգիծուցանել, գայրացուցանել* (*Լուտալ. ՄՄՁ 2291, 345բ*), *տամկացուցանել* (*Պիտառութիւն. ՄՄՁ 533, 12բ*), *զգեցուցանօղ* (*Բժիշկ. ՄՄՁ 3286, 300բ*), *հատուցանել* (*Ասել. ՄՄՁ 7995, 42ա*), իսկ ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566(II)-ում՝ *զօրացուցանել, կենդանացուցանել* (*Արծարծել. 281բ*) բայերը:

-*Ցն+ել* վերջավորությամբ *գեղեցկացնել* պատճառական բայն առկա է ԺԳ-ԺԸ դարերից ավանդված հետևյալ գրչագրերում՝ ՄՄՁ 530, 566(II), 1654, 2371, 4612, 5126, 5596, 8198(I): *Կառուցեալ* հեռաբառով ՀԲՇ-ում *արմացնել* (ՄՄՁ 529), *ամրացնել* (ՄՄՁ 6097) տարբերակները վկայվում են ԺԷ դարից ավանդվածներում:

ՀԲՇ-ներում առկա են նաև՝

ա) նախադրություններով և նախդրավոր կազմություններ. *ի սկզբանէ, ի վերուստ, ի վաղնջուց* (*Նախկին*), *ի միասին* (*Համանգամայն*), *ի վեր քան* (*Անհաս*), *ըստ ամենայնի* (*Հոյակապ*), *ընդ անուամբ միայն* (*Սոսկ*), *ի ձախ* (*Առիշեղ*), *ընդ ձեռամբ* (*Հնազանդ*), *ընդ քուով, ընդ գրուանաւ, ընդ վարագորաւ, ի դարանի, ընդ պատրրուակաւ* (*Պատրուակել*), *առանց գիտելոյ*¹⁷ (*Չանխուլ*), *առ վաղիւն* (*Հանդերձեալք*), *ըստ ամենայնի (ազատ)* (*Հոյակապ*) և այլն.

բ) բայական հարադրություններ¹⁸. *յանձին բերել, խոնջ առնել* (*Չան*), *ի վերայ հասանել, մտախոհ/մշտախոհ լինել* (*Հայցել*), *առակըս հրամայել** (*Ասել*), *ընդ միմեանս միավորել*** (*Շարել, Յարել*), *ի բաց առաքել****, *ողոցն տալ* (*Հինիներ*), *զահի հարկանել* (*Դեզերել*), *ի*

¹⁷ ՄՄՁ 843-ում՝ *առանց գիտելու* (286բ):

¹⁸ Այս առիթով հիշատակելի է Ռ. Ղազարյանի դիտարկումը՝ «...միջինհայերենյան տարբեր տիպի բայական հարադրությունների մեջ առանձնապես մեծ թիվ են ներկայացնում այն հարադրավոր բայերը, որոնք կազմված են *ի* նախդրով» (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 129):

* ՄՄՁ 2431-ում՝ *առակս հրամել* տարբերակն է:

** ՄՄՁ 268-ում՝ *միավորել ընդ միմեանս* տարբերակն է:

*** ՄՄՁ 266-ում՝ *բացառաքել* տարբերակն է:

կողմ հանել* (Անջատել), ծաւալ սփռել (Խրոխտալ)¹⁹, յանգ ածել (Շինել), օգնական լինել (Պահապան) և այլն.

զ) բացատրական բառակապակցություններ²⁰. *զինքն խոնարհեալ (Կորացեալ), շիջեալ ցած (Թափեալ), բնաւ անգտանելի (Հոյակապ), ոչ ճշմարիտ կերպարանք, երևոյթ անհաստատ (Առաջաք), միտք թափանցեալ՝ կամ արք հոգեկիրք (Տեսանալ), խարդաւանեալ բռնազբաւսութեամբ (Պոռնիկ), շարժումն մտաց* (Հանճար, Տեսուն, Կարծուն), ընդ ձեռամբ նուաճեալ (Հնազանդ, Անագատ), հիւանդք մեղաւք՝ *** (Դեզերել), յիմարութեան բանք՝ (Լեզուագարութիւնք), յաւետ անյուսից՝ (Վտանգք), աստուածավայելուչ իմացմունք՝, սլացեալ բարձր (Գերունակ), սուտ դիմաւք****, արուեստիւ պատեալ/ծածկեալ/պատուեալ (Պատրուակեալ, Պարունակեալ), աղքատ ի հոգեւոր եւ ի մարմնաւոր արգասեաց՝ (Թշուառանալ), բուռն եւ զլացաւղ մարդիկ՝ (Բռնադատեալ), խորք խորոց (Անհաս), կոկորդալի խօսել (Խրոխտալ), բարեբանութիւն*

* ՄՄՁ 9992-ում՝ կողմ հանել տարբերակն է:

¹⁹ ՆՃԲ-ում՝ Ծաւալ բառահողովածում, նշվում է. «*Խրոխտալ... ճոխաբանել. ծաւալ սփռել. Հին բռ.» (հ. I, էջ 1013):

²⁰ Հ. Ամալյանը նշում է «ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով» արտահայտվող հումանիշտության մասին՝ դրանք պայմանավորելով «բառարանի իսկական գործնական բնույթով» (Հ. Ամալյան, նշվ. աշխ., 129-130): Բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ գրչագրերում հիմնականում չկան բացատրական բառակապակցություններ (զ) և նկարագրական արտահայտություններ (դ): Այսպես՝ զ) և դ) դասակարգումներում մեկ փշիկով առանձնացվածներն արձանագրվում են միայն ՄՄՁ 5126-ում, երկու փշիկովները չկան այդ գրչագրերում: Իսկ այն գրչագրերում, որոնցում առկա են նշված բառակապակցությունները, դրանք ունեն շրջուն շարադասություն, ինչպես՝ *ցած իջեալ, կերպարան. ոչ ճշմարիտ, բռնազբաւսեալ. խարդաւանեալ* (հմմտ.՝ ՄՄՁ 4149, 353 ա, 355բ, 361ա): ՄՄՁ 8189 (II), 5925, 8106-ում չկան նաև *Լոյս, Արեգակն, Խաւար, Անհաս* հենաբառերով ՀԲԾ-ներում առկա բառակապակցությունները. առկայության դեպքում էլ ՀԲԾ-ները մեծ մասամբ ավարտվում են դրանցով:

** ՄՄՁ 2372-ում և ՄՄՁ 7117-ում՝ *Տեսուն* հենաբառով ՀԲԾ-ում, *այք՝ շարժումն մտաց* արտահայտությունն է:

*** ՄՄՁ 556 (II)-ում՝ *հիւանդանալ մեղաւք*-ը (283 բ):

**** ՄՄՁ 2291-ում (347ա) բառակապակցությունը հենաբառ է:

աստուծոյ յարուցելոց իւրոց (Երզ), ընդ անուամբ միայն կամ պատահամբ և ոչ բնութեամբ (Մոսկ), յոհաննէս մկրտիչ (Կարապետ), յանձնատութիւն յոգի և ի մարմին (Կիրք), արհնեալ յաւիտեանս (Լոյս)*, ըստ ամենայնի ազատ (Հոյակապ), Քրիստոս և հոգի նորա (Պահապան)**, արհնութիւն աստուծոյ (Երզք), պատերազմել ռիտրիմք (Ոգորել²¹), յաւերժ տևող (Միշտ), ոչ ճշմարիտ կերպարանք (Առաջաւթ) և այլն.

դ) նկարագրական արտահայտություններ. կամ եզակյան թուով զբազմաց ասել (Համանգամայն), այսպես անուանին եւ լուսաւորքն երկնից եւ արք սուրբք ըստ նոսա մերձաւոր մաքրութեան"*** (Սուրբ), յիսուս քրիստոս երէկ եւ այսաւր նոյն եւ յաւիտեանս՝ (Միշտ), եւ/կամ անոպայ մարդիկ ի հողմոյ տարուբերք"**** (Ձայն), որում հաւատով ակն ունիմք"***** (Հանդերձեալք), որպէս Ղուկաս գտեառնէ եւ զհրէից ցուցանէ" (Եզերք), որպէս հրեայքն հայիռ-յիչք(ն) եւ նենգաւորք եւ պատուիրանազանցք"(Ամեղել, Անկերացող), յոգնատեսակ է սա"***** (Ձանխուլ), պնդեալ որպէս գտերն ի խաչին, որպէս Խաչն տէրունական եւ գործուածք հիւսանաց" (Մածեալ), եւ զառ ի յորոց յոչ զինչէն: այլ զոր ինչ ոչն է նշանակէ: եւ այ-

* Առկա է միայն ՄՄՁ 5596-ում (217բ):

** Առկա է միայն ՄՄՁ 2281-ում (127ա):

²¹ Մի քանի գրչագրում *Ոգորել*-ի փոխարեն *Ոգորել* հենաբառն է, որը Ս. Մալխասյանցը վկայում է «Վրէժ ունենալ, բախլել, նախանձել» նշանակությամբ, «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն», նաև (անստ. բառ) նշումներով (ՄՀԲԲ, հ. I, էջ 552):

*** ՄՄՁ 533-ում՝ *արք սուրբ ընդ առ նոցա մերձաւոր մաքրութեան. այսպէս անուանին և լուսաւորք յերկնից* (13բ): Առկա է նաև կամ *արք սուրբ. կամ ըստ առ նոսա մերձաւոր մաքրութեամբ (այսպէս անուանին և լուսաւորք երկնից)* (Սուրբ) տարբերակը (ՄՄՁ 2281, 127բ):

**** ՄՄՁ 268-ում *ի հողմանց տարուբերք* տարբերակն է, ՄՄՁ 2431-ում՝ *....ի հողմոյ տարբերք* սխալագրությունը (292բ):

***** ՄՄՁ 553-ում՝ *Հանդերձեալ* հենաբառով ՀԲՇ-ում՝ *որպէս հաւատով ակնկալութիւն* տարբերակն է (228բ), ՄՄՁ 10223-ում՝ *որպէս հաւատով ակնունելը* (197բ):

***** ՄՄՁ 545-ում՝ *Ձանխուլ որպէս յոգնատեսակք* (188 ա): Հատկանշական է, որ ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում այս արտահայտությունը չկա:

լեւս սոցին նմանն այլ նման սոցունց: Եւ ահա աստուած, ի վեր քան զբան և զփորձ և զբառն և զմիտս և զսահման և զհասս. վերագոյն քննեցեալ... և որ այլևս զկնի սոցունց և նման. և ահա աստուած (Անհաս), որ է աստուած (Լոյս, Արեգակն)*, որ է սատանայ (Խաւար)**, որ է վարդան ըստ հոգոյ (Փանաքի), յիսուս քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս (Միշտ), բարեբանութիւն աստուծոյ յարուցելոց իւրոյ (Երգք), որ է պատրուսել (Յարել), և այլն որ ով լնու եկեղեցի. և խորհրդածութիւն ի քրիստոս յիսուս: Որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն (Բժիշկ), կամ մանրամասն ժամու կամ մասն ինչ նուրբ որք են տրամատականք' (Ըոպէ) և այլն.

ե) հղումներ. զմնացեալսն տե՛ս ի ներքոյ փիւր տառի (Չնչին), եթէ կամիս զմնացեալսն նման սմին տե՛ս ընդ ո՛յ գրի (Յնծալ), տե՛ս ոչ ճշմարիտ կերպարանք (Առաջաւք), տե՛ս բուռն և զլացօղ մարդիկ, տե՛ս աղքատ, վասն շինութեան աստուծոյ, վասն որոնելոյ, վասն հպարտութեան և այլն.

զ) հականիշներ²². Սուրբ ապականիչ (ՄՄՁ 7014, 136բ), ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 3937-ում Հրաշափառ. հրաշաւոր. ա-հագին. սոսկալի ՀԲՇ-ին (էջ 58բ) հավելվել է քստմնելի բառը:

Այսպիսով՝ գրչագրերի քննությամբ արձանագրվում է, որ՝

- բառաշարքեր են կազմում գերազանցապես միևնույն խոսքի մասերը.

- գերակշռում են տարարմատ հոմանիշների բառաշարքերը, իսկ նույնարմատ հոմանիշների բառաշարքերը ներառում են հոմանիշներ՝ կազմված՝ ա) մեկական ընդհանուր և տարբեր արմատական ձևույթներից, բ) միևնույն հիմնական արմատական և տարբեր բառակազմական ձևույթներից, գ) արմատական ձևույթից

* ՄՄՁ 5596-ում այս բացատրությանը հետևում է *արինեալ յաւիտենս* արտահայտությունը. այն առկա չէ որևէ գրչագրում:

** ՄՄՁ 5596-ում այս բացատրությանը հետևում է *չասացալ բաւանդակ* արտահայտությունը, որը չկա որևէ գրչագրում:

²² Հ. Ամալյանի հավաստմամբ՝ միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններում «հազվագյուտ դեպքերում հանդիպում են նաև գլխաբառի հականիշային մեկնություններ». Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 60:

և դրանով բաղադրված բառերից, դ) նույնաձանց բառաշարքերը ընդգրկում են միևնույն բառակազմական ձևությամբ և տարբեր արմատական ձևությամբ բաղադրված հոմանիշներ.

- հոմանիշների բառաշարքերում առկա են նաև՝ նախադրություններով և նախդրավոր կազմություններ, բայական հարադրություններ, բացատրական բառակապակցություններ, նկարագրական արտահայտություններ, հղումներ, որոնք բխում են «բառարանի էությունից և նպատակներից»:

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԿԱՄ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ

Հայկական վերածնության շրջանում, ինչպես արդեն նշվել է, կրթության օջախներում, գրչության արվեստի կենտրոններում լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ընդօրինակողները ձգտել են հարազատ մնալ բուն օրինակին, քանի որ «չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»¹: Բայց և արտագրել են՝ ըստ լեզվին տիրապետելու մակարդակի, և չի կարելի բացառել ընդօրինակողի «ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը», հետևաբար ձեռագրերում հավանական են գրչագրական, ուղղագրական շեղումները, սխալագրությունները², այլև բառային տարբերակները:

Միալագրությունները գրչագրերում հաճախական են մի քանի օրինակ: ԺԴ-ԺԵ դարերից ավանդված ՄՄՁ 1654 (259բ), 2371(287բ), 7117 (319բ)-ում *Նուագ. նուադ. դուն. խուն. սուն. սուդ. սակաւ. դուզնաքեայ. դոյզն* ՀԲԾ-ն ավարտվում է *նժար*³ բառով, և միայն ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 5126-ում է նշվում *նիխար* բառը (27բ)⁴: Գևորգ Զահուկյանը վաղնջահայերենից հին հայերենին անցման հնագույն շրջանի բառապաշարի հիմնաշերտի բարբառային տարբերակները քննելիս արձանագրում է *նզար*-ը (*ներգել-նիհար-վտիտ-նզար*) «ուշ» նշումով, ասել է՝ իբրև «V դ. առաջին կեսի երկերում չհանդիպող» բառ (ՀԼՊՆԺ, էջ 404): Հովհաննես Մուրադյանի հավաստմամբ՝ *նզար*-ը պրսկ. *nizar* «վտիտ, նիհար» բառն է (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 70), որը միջին հայերենում վկայվում է *նիզար*

¹ Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում. - Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, Ե., 1991, էջ 8-9:

² Ա. Այտրնյանի վկայությամբ՝ «... եւ հաճախ ուղղագրութեան սխալները, ամէն տեղ եւ ամէն ատեն միաձեւ միօրինակ եւ իբր թէ ժառանգական եղած են». տե՛ս Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և հաւելուածով Յօրինեաց Հ. Արսէն վ. Այտրնեան, էջ 141-142:

³ «Միջին գրական լեզվի վկայած ենթաշերտային բառերի» շարքում նշվում է *նժուրիլ*-ը «հյուծվել» նշանակությամբ (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 193):

⁴ Բառը վկայվում է ԺԵ դարից ավանդված գրչագրերում (ՄՄՁ 268, 537, 545, 3216):

տարբերակով (ՄՀԲ, 2009, էջ 573), իսկ Ռուբեն Ղազարյանը միջին հայերենի բնիկ բառերի շարքում նշում է *նծվաղ/նծուաղ*-ը՝ «ադոտ, նվագ»⁵. այն վկայվում է ՄՀԲ-ում՝ նաև «2. Հյուսված*, տկար» նշանակությամբ (ն. տ.):

ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 5126-ում և ԺԷ դարից ավանդված՝ բառերի այբբենական դասավորությամբ ՄՄՁ 268, 533, 537, 540, 545, 682, 3261, 3468, 3824, 8606, 10223-ում արձանագրվում է *նիխար*-ը, ՄՄՁ 2431, 3170-ում՝ *նիխար*-ը: Բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 267, 516, 2281, 2291, 2330, 2370, 2372, 2381, 3257, 5995, 7014, 7995, 8563-ում՝ *նծար*, ՄՄՁ 6624-ում՝ *նծար*, ՄՄՁ 3488-ում՝ *ղծար*, ՄՄՁ 5008-ում՝ *ըծար*, ՄՄՁ 7004-ում՝ *ծար* տարբերակները: Մյուս ձեռագրերում բառը չկա:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9166, 3450-ում առկա է *նիխար*-ը: Այսպիսով՝ *նծար* սխալագրության համար ենթադրելի են *նզար* և *նծուաղ* (*նծվաղ*) բառերը: Ինչ վերաբերում է *նիխար*-ին, կարելի է հավանական համարել, որ ընդօրինակողը, չհասկանալով *նծար*-ը, այն փոխարինել է իր իմացածով: Լինելով, սակայն, բարբառախոս այն տարածքի ներկայացուցիչ, որի համար միավորող, այլև տարբերակիչ հատկանիշ է *հ-ի* համապատասխանությունը (Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Դիաղիների բարբառներ, նաև Մշո բարբառի Արճեշի, Արծկեի, Խլաթի և Բաղեշի խոսվածքներ)⁶՝ ընդօրինակողը *նիխար*-ի փոխարեն գրել է *նիխար*: Թեև հարկ է արձանագրել, որ հայերենի բարբառներում, ըստ բառարանների, գործածվում է *լղար* բառը⁷, մասնավորապես Վանի, Մուշի բարբառախոս վայրե-

⁵ Տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 70:

* Թերևս վրիպակ է. պետք է լինի «հյուծված»:

⁶ Նշված տարածքում *հ-ի* համապատասխանության մասին տե՛ս Վ. Վատվայան, Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016, էջ 123-130:

⁷ Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 252: Հայերեն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան (այսուհետև՝ ՀԳԲ), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 427:

րում՝ *լաղար* տարբերակը⁸:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված՝ բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 266, 532, 538, 3197, 4612, 5596, 7250, 8198-ում՝ *Պոռնիկ* հենարառով ՀԲՇ-ում, առանձնացվում են *լոռփականք*, *լոռփականք*, *դուպականք*, *լուփականք* բառերը: ՄՄՁ 1654, 2371, 2372-ում *Լաւղ. փականք*, *փակ*-ը, ՄՄՁ 3937-ում *Լոռ. փականք*-ը, ՄՄՁ 7117-ում *Յաւղ. փականք*, *փակ*-ը վկայված են որպես առանձին ՀԲՇ-ներ, մինչդեռ բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 4149, 8106-ում առկա են *տոռփականք*, *տոռփացողք* (361ա և 61ա), ՄՄՁ 5925-ում՝ *լոռփականք*, *տոռփացողք* (99բ), ՄՄՁ 8198-ում՝ միայն *տոռփացողք* (67ա) բառերը: ՄՄՁ 530, 2355, 5126, 5919-ում դրանք չկան: Այդպես էլ՝ նույն ՀԲՇ-ում վկայված *աստղիկեանք* (ՄՄՁ 4149, 361ա. 8106, 61ա), *աստղեանք* (ՄՄՁ 5925, 99բ. 8198, 67ա) բառերը, որոնք վերը նշված գրչագրերում վկայվում են համապատասխանաբար *ասղիկեանք*, *ասկղեանք* և *ասկլեանք* տարբերակներով:

ԺԷ դարից ավանդված գրչագրերում գերակշռում է *Լօղ(//Լաւղ). փականք. փակ* ՀԲՇ-ն, իսկ *Պոռնիկ* և *Շուայտեալ* հենարաներով ՀԲՇ-ներում առկա են *լուփականք* (ՄՄՁ 843, 2295), *լոռփականք* (ՄՄՁ 3286), *լուռփականք* (ՄՄՁ 2431), *աւռ. փականք* (ՄՄՁ 2281, 2291), *ասկաեղեանք* (ՄՄՁ 7995), *ասկեղեանք* (ՄՄՁ 5008), *ասկաղեանք* (ՄՄՁ 3488), *ասկղեանք* (ՄՄՁ 3286), *ասկաղեանք* (ՄՄՁ 2281), *ասկղեանք* (ՄՄՁ 2291, 2295, 3286) տարբերակները: ՄՄՁ 267-ում(192բ), 516-ում (107բ), 7014-ում (114ա) ՀԲՇ-ն ավարտվում է *ափրոդիտեանք* բառով: Միայն ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 843, 9992-ում են արձանագրվում համապատասխանաբար *ափրոդիտեանք*, *լոփականք*, *ասկղեանք*-ը (*Պոռնիկ*) և *ափրոդիտեանք*, *աստղիկեանք*, *տոռփականք*-ը (*Շուայտեալ*):

ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում և ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 268-ում *Պարունակեալ* հենարառով ՀԲՇ-ում վկայվում է

⁸ Հայոց լեզվի բարբառային բառերի բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե., 2002, էջ 232: *Լաղար* տարբերակն է վկայում նաև ՄՀԲ-ն (տե՛ս ՄՀԲ, 2009, էջ 282):

ընկրկեալ-ը, որի համար ՆՀԲ-ում նշվում է. «Մերթ շփոթի ընդ ձայնիս **ընդգրկել**, որ և **ընգրկել**» (հ. I, էջ 782):

Անհաս հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 530, 532, 2335, 4149, 5919, 5925, 8106, 8198(I)) վկայվող *անպարհիմանալի*-ն ՄՄՁ 266, 1654, 2371, 2372, 3937, 5126, 7117-ում, այլև ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566(II)-ում առկա է *անպար* և *անիմանալի* բառերով: Դրանք արձանագրվում են ՆՀԲ-ում, սակայն *անպար*-ը՝ բոլորովին այլ իմաստով՝ «Որ ոչ գիտե պարել օրինօք. անկիրթ. անկարգ» (հ. I, էջք 154, 229): Հետևաբար ենթադրելի է, որ ընդօրինակողը մեքենայորեն տրոհել, առանձնացրել է *անպարհիմանալի*-ն, այլև միասին գրելով՝ վրիպում թույլ տվել:

Համանման գրչագրական սխալ է *վճարելք*-ը *Օազք* հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 1654, 2371, 2372, 3197, 7117, 8198(I)), իսկ ՄՄՁ 266, 532, 538, 4149, 4612, 5596, 5925, 7250, 8106-ում՝ նույն հենաբառով ՀԲՇ-ում, առանձին վկայվում են՝ *վճար*-ը («Վերջ, վախճան, լրումն, դադարումն...», ՆՀԲ, հ. II, էջ 826) և *ելք*-ը («Վախճան և լրումն, կատարած. վերջ». ՆՀԲ, հ. I, էջ 648): ԺԵ դարից ավանդված գրչագրերում (ՄՄՁ 268, 533, 537, 2017, 3200) նշված սխալագրությանը հավելվում է *վճարել*-ը:

ՄՄՁ 545-ում՝ *Վտանկ* հենաբառով ՀԲՇ-ում, առկա է *յաւետ յանուսիցն* (194ա) մյուս գրչագրերում վկայվող *յաւետ անյուսից*-ի փոխարեն:

ՄՄՁ 4612-ում և հետագա բոլոր գրչագրերում *Ըոպէ. մանրամասն* ՀԲՇ-ում (170բ) արձանագրվում է *քթթելական*-ը բառարաններում վկայվող *քթթել ական*-ի փոխարեն՝ «թարթել աչաց», «ակնթարթ», «վայրկեան» (ՆՀԲ, հ. II, էջ 1005: ԱԲ, էջ 834: ՄՀԲԲ, հ. IV, էջ 572):

Թեև ամենավաղ ընդօրինակված ՄՄՁ 4149, 5596-ում՝ *Թըշուտանալ* հենաբառով ՀԲՇ-ում, առկա են *խոնարհանալ* և *խոհարանալ** բայերը, բայց առավել հաճախական է վերջինը *խոհարա-*

* Բառն արձանագրված չէ հայոց լեզվի բառարաններում: Այն վկայվում է հետագա դարերից ավանդված գրչագրերում. տե՛ս նաև Ն. Պողոսյան, Նորահայտ բառեր

նել-ի գուգադրությամբ, որը ՄՄՁ 5925-ում առկա է *խոնարհարանեալ* տարբերակով:

Հովհաննես Մուրադյանը, վերոնշյալը հին ձեռագրերում սովորական երևույթ համարելով, հակված է դրանք գրչագրական շեղումներ դիտարկելու⁹, միաժամանակ նշելով, որ հարցը վերջնականորեն կարող է լուծվել միայն մանրամասն ուսումնասիրությամբ:

Լեզվաբանական աշխատություններում քննվում են իմաստային նույնությունն և հնչյունական որոշ զանազանությունն դրսևորող բառեր, որոնք դիտվում են բառային տարբերակներ կամ գուգաձևեր¹⁰: Այդպիսիք հայերենի վաղնջական և հնագույն շրջանների համար արձանագրել և քննել է Գևորգ Ջահուկյանը՝ բարբառային տարբերակներ ձևակերպումով (ՀԼՊԽԺ, էջք 252-256, 371-381), Ե դ. գրաբարում՝ Լավրենտի Հովհաննիսյանը¹¹: Ժամանակակից հայերենի բառապաշարը քննելիս բառային տարբերակներ կամ բառատարբերակներ հասկացությունը բնութագրել և սահմանել է Էդուարդ Աղայանը՝ նշելով, որ դրանք «միևնույն բառի հնչյունական (ձևական), բառակազմական կամ ձևաբանական այն բոլոր տարբեր ձևերը կամ գուգահեռներ»-ն են, որոնք լեզվում «գործող գործընթացների հետևանքով և որոշակի ներլեզվական օրինաչափությունների թելադրանքով հանդես են գալիս տվյալ փուլում, անկախ նրանց գործածականությունից, կանոնականությունից, գործառական ու սոցիալական բնութագրերից»։ նա նաև դրանք

վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014, էջ 97: *Խոնարան* բառը «մտածելու բուն տեղը, միտք, ինքը» իմաստով, վկայում է ԱԲ-ն (էջ 384):

⁹ Տե՛ս նաև Ն. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն: Հնչյունաբանություն, հ. I, Ե., 1982, էջ 227:

¹⁰ Մանրամասն տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 146- 166: Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում, էջ 5-9: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը, գիտական գրականության մեջ գործածվում են նաև «գուգաձևեր, գուգաձևություններ, տարբերակային ձևեր տերմինները» (տե՛ս ն.ս.):

¹¹ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 9-58:

տարբերակել ու մանրամասնորեն դասակարգել է¹²: Լավրենտի Հովհաննիսյանը, ընդունելով Էդուարդ Աղայանի դիտարկումները, այդուհանդերձ համարում է, որ նա, պայմանավորված «աշխատանքի բնույթով ու նպատակներով», «տարբերակներ հասկացության ավելի լայն սահմաններ է ընդունում»՝ ներառելով տարբադադրիչ համանիշները, հավելադրական բարդությունները, կեղծ գրական բառերը և այլն, որոնք ինքը տարբերակներ չի դիտում¹³: Ստորև որդեգրվում է այս մոտեցումը: Երևույթը հավաք և ամբողջական ներկայացնելու, կրկնություններից խուսափելու, շարադրանքն արհեստականորեն չձանրաբեռնելու, չընդարձակելու նպատակով բառային տարբերակները ներկայացվում են ըստ հայոց լեզվի շրջանաբաժանման փուլերի՝ ԺԳ-ԺՁ դդ., այնուհետև՝ ԺԷ և ԺԸ դարեր¹⁴: Բառային տարբերակները ստորև առանձնացվում են նշված բոլոր գրչագրերի համատեղմամբ: Փաստերն արձանագրելիս հիմնականն առավել վաղ ընդօրինակություններն են, որքանով «լեզվի պատմության համար ավելի էական են տվյալ հնչյունական երեվույթի ավելի վաղ վկայությունները...» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 57):

Ինչպես արդեն նշվել է, ըստ Հայկ Ամալյանի՝ ««Հանդես բանաստեղծացր» վկայված է ԺԲ դ. «Զմամառի N 204 ձեռագրով». «... նախագաղափար օրինակը չի պահպանված, նրա գրության ստույգ ժամանակը, տեղն ու հեղինակը անհայտ են»: Եվ քանի որ ԶԲ-ն

¹² Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 148:

¹³ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 7:

¹⁴ Ռ. Ղազարյանի հավաստմամբ՝ «Վաղ արևելահայերենի գրավոր աղբյուրներում, ընդհուպ մինչև ԺԹ դարի կեսերը, հնչյունափոխական երևույթները ամբողջապես և որոշակիորեն համակարգված չէին. չունեին միօրինակ ու կայուն արտահայտություններ: Նորմավորված չէր գրության և արտասանության միջև գոյություն ունեցող կապը: Հնչյունական ուղղագրության մեջ շատ անգամ չպահպանելով ավանդական կանոնները՝ գրությունը համապատասխանում էր արտասանությանը, որի հետևանքով առաջ էին գալիս բառերի գրության բազմազան երկձևություններ...» (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 189-206): Ռ. Ղազարյանը ձայնավորների, բաղաձայնների, երկբարբառների փոփոխությունները, հնչյունների սղումը, անկումը, հավելումը նշում է միջինհասրեկյան հնչյունափոխական երևույթների շարքում (Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 190-206: Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 43-63):

ստեղծելու ու ընդօրինակումների ժամանակները տարբեր են, ուստի կարևորվում են դրանց՝ ըստ դարերի դրսևորած, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գուգաձևերը՝ ըստ հնարավորին շոշափելով ընդօրինակությունների՝ Հայաստանի արևելյան կամ արևմտյան տարածքներին պատկանելը:

Ա. *Հնչյունական տարբերակներ*

ա) *Չայնավորային փոփոխություններով գուգաձևեր*¹⁵

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում մեկական օրինակով են հանդիպում *ա/օ* և *ա/ե* գուգաձևերը. *թասել* (*Հինհնել*. ՄՄԶ 266, 530, 532, 538, 2355, 2371, 3197, 3937, 4149, 4612, 5919, 5596, 5925, 7250, 8106, 8198(I))//*թասթել* (ՄՄԶ 1654, 2372,7117) - *թօսել* (ՄՄԶ 5126). *պարենի* (ՄՄԶ 530, 3197, 3937, 4149, 5596, 5925, 7250, 8106)-*պերենի* (ՄՄԶ 2371, 2372, 7117) //*պերանի* (ՄՄԶ 266, 532, 538, 2335, 4612, 5919, 8198 (I, II)):

Եթե առաջին գուգաձևերը հիշեցնում են *ա>օ* փոփոխությունը Համշենի, Հաճնի և Ագուլիսի բարբառներում¹⁶ (Համշենի բարբառում *թասել*-ն¹⁷ առկա է *թաստել* ձևով¹⁸. ըստ ՆՀԲ-ի՝ այն մասամբ պահպանել է պարսկերենի հնչողությունը (h. I, էջ 797)), ապա *ա/ե* գուգաձևերի գոյությունն ակնհայտորեն պայմանավորված է փոխազդեցական հնչյունափոխությամբ:

ԺԷ դարից ավանդված գրչագրերում առկա են *թասել* (ՄՄԶ 2281, 2295, 2431, 3286, 6097, 529, 2019, 2331, 2369, 3200. ընդգրծվածներում հենաբառը՝ *Հինել*), *թասթել* (ՄՄԶ 267, 2330, 2381, 2431,

¹⁵ Զուգաձևերը ներկայացնելիս այսուհետև առանձնացվում է դրանց միայն մեկ տարբերակը, քանի որ մյուս գրչագրերում համապատասխան ձայնավորներով տարբերակներն են: Նույնը՝ նաև մյուս հնչյունական գուգաձևերի դեպքում: Բառային տարբերակներին կից՝ փակագծերում, տրվում է հենաբառը (փակագծեր չլինելու դեպքում նշվածը հենաբառ է), այնուհետև՝ ձեռագրահամար(ներ)ը, որոշ դեպքերում՝ էջ(եր)ը:

¹⁶ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 109:

¹⁷ Բառի ստուգաբանությունը տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005, էջ 29-30:

¹⁸ ՀԳԲ, էջ 351: ՀԱԲ, հ. Բ, էջ 15: Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 45, 229:

3170, 3257, 3488, 5008), *թասել* (ՄՄՁ 516, 2370), *թօսել* (ՄՄՁ 533, 537, 540, 545, 682, 3261, 3468, 3824, 8606, 10223), *թաթսել* (ՄՄՁ 536) գուգաձևերը. *պարենի*-ն (ՄՄՁ 529, 2019, 2295, 2331, 2369...), *պերենի*-ն (ՄՄՁ 267, 2281, 2291, 2330, 2370...) և *պերանի*-ն (ՄՄՁ 268, 533, 537, 540, 545...) համարյա հավասարաչափ են արձանագրվում (10:13:13 հարաբերությամբ). մեկական՝ *պերենի* (ՄՄՁ 6624), *պերինի* (ՄՄՁ 516), *պարենի* (ՄՄՁ 843), *պիտանի* (ՄՄՁ 3824) տարբերակները:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 3450, 9116-ում *թօսել* գուգաձևն է, ՄՄՁ 556(II)-ում՝ *թասթել*-ը, 9992-ում՝ *թասել*-ը:

Հովհաննես Մուրադյանը, միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող *ա>է* հնչյունափոխության օրինակների մեծ մասը (*երեխտաւոր, յերջև, սերկեւագ, դեհեկան, ջեղաց*) համարելով փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջացած ձևեր, առաջին վկայությունը «հասցնում է մինչև XII դ.»¹⁹. դրան կարելի է հավելել ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 5596-ում առկա *տարեկուսանել*-ը (*Դիսիին*). այն ԺԵ-ԺԷ դարերից ավանդված գրչագրերում վկայվում է *տարեկուսան* (ՄՄՁ 266, 2295, 7250) և *տարեկուսան* (ՄՄՁ 533, 3197) գուգաձևերով: ԺԷ դարից ավանդվածներում *պատենակատրոնի*-ն է (*Պոռնիկ*. ՄՄՁ 2431, 3261, 3824):

Գևորգ Ջահուկյանը ԺԴ-ԺԵ դդ. հիշատակարաններում «*ա-ի* դիմաց» *է և է* արձանագրել է գելեքսան անձնանվան մեջ²⁰:

Ե/Է: ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում առկա են հետևյալ տարբերակները՝ *Նենգաժետ* (ՄՄՁ 266, 2335, 3197, 3937, 4149, 4612, 7117, 7250, 8198(II), 5596)//*նենգայժետ* (ՄՄՁ 5925)- *նենգաժետ* (ՄՄՁ 530, 532, 1654, 2371, 5126, 8106): Հարկ է նշել, որ միևնույն *ժետ* իրանական փոխառյալ արմատը²¹ *ախտաժետտութիւն(ք)* (*Կիրք*) բառում (բոլոր գրչագրերում, բացառյալ ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2281-ը (128ր)), վկայվում է *է*-ով:

¹⁹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 108-109:

²⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997, էջ 29:

²¹ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում, էջ 12:

Նաւապէտ (*Ղեկավար*. ՄՄՁ 266, 530, 532, 537, 4149, 4612, 5596, 7250, 8106, 8198(I)) - *նաւապէտ* (ՄՄՁ 1654, 2371, 2372, 3937, 5919). բայց և *վարժապէտ*-ը (*Բետոր*) բոլոր գրչագրերում առկա է է-ով, իսկ *վարդապէտ*-ը ՄՄՁ 4149, 5925, 8106, 8198(II)-ում՝ միայն է-ով:

Գէթ (ՄՄՁ 530, 532, 538, 4612, 5596, 5925, 7250, 8198(I))-*գէթ* (ՄՄՁ 266, 2335, 3197, 4149, 5919, 7117, 3937, 8106, 8198(II)) // *էթ* (ՄՄՁ 2371, 2372) - *էթ*²² (ՄՄՁ 1654):

ԺԷ դարից ավանդված ՁԲ-ներում *նենգաժէտ*-*նենգաժէտ* գուգաձևերն առկա են համարյա հավասարաչափ՝ 20:24:

ՄՄՁ 529, 3200-ում չկա *վարդապէտ* բառը. *վարդապէտ* գուգաձևն է ՄՄՁ 536, 2370, 3257, 6624-ում, մյուսներում (ՄՄՁ 267, 516, 2281, 2381, 3286, 5008, 6097)՝ *վարդապէտ*-ը: Նույն պատկերն է *վարժապէտ*-ի դեպքում (*վարժապէտ*՝ ՄՄՁ 516, 2019, 3257, 6624, *վարժապէտ*՝ ՄՄՁ 267, 529, 536, 2370, 2369(*վաժապէտ*), 3200, 5008):

Բառերի այբբենական դասավորությամբ գրչագրերում *նաւապէտ* գուգաձևն է (բացառյալ ՄՄՁ 268-ը (309ա)): Բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում նույնպես *նաւապէտ* գուգաձևն է, ՄՄՁ 2331-ում՝ *նաւագէտ*-ը (229 ա):

Սույն գրչագրերում գերակշռողը *գէթ*, *էթ* գուգաձևերն են, ՄՄՁ 2331, 2431-ում՝ *գէթ* -ը:

ԺԸ դարից ավանդված ՁԲ-ներում նույնպես գերակշռում է *նենգաժէտ*-ը (ՄՄՁ 843, 3450, 9166), և միայն ՄՄՁ 9992-ում է առկա *նենգաժէտ*-ը: ՄՄՁ 843, 3450, 9166, 9992-ում միայն *նաւապէտ* գուգաձևն է: *Գէթ* գուգաձևն է ՄՄՁ 843, 9992-ում, ՄՄՁ 3450-ում՝ *գէտ*-ը և ՄՄՁ 9166-ում՝ *էթ*-ը:

Նշվածներին կարելի է հավելել բազմիցս հանդիպող *ամեն/ամէն*, *գոնէ/գոնէ*, *կաթողիկէ/կաթուղիկէ*, *յաւեժ/յաւեժ* և այլ գուգաձևեր, որոնց մասին՝ ստորև: Ձեռագրահամարների թվարկումը, թերևս, մասնակիորեն է հնարավորություն ընձեռում՝ պարզելու, թե

²² ՆՀԲ-ն արձանագրում է *էթ*-ը՝ նշելով. «... Տե՛ս գտառն Ը. և զբառոյ ԵԻԵԹ, ԵԹԷ, ԳԷԹ» (հ. I, էջ 647):

որոնց են բնորոշ *ե*-ով և որոնց *է*-ով գուգաձևերը, քանի որ գրչագրերում առկա հնչյունական գուգաձևերը խառն են, թեև նկատելի է՝ ԺԷ դարից ավանդվածներում գերակշռում են *ե*-ով (*նաւապետ, վարդապետ*) տարբերակները:

Ե/Ի և *Ի/Ե*: Ըստ Հովհաննես Մուրադյանի՝ *ե > ի* հնչյունափոխության առաջին վկայությունները Ժ դարից են²³: *Ե/ի* ձայնավորային փոփոխությամբ գուգաձևեր առկա են ԺԷ դարից ավանդված գրչագրերում՝ *գեճ (Պոռնիկ) - զիճ* (ՄՄՁ 2431), *աւերել (Ջնջել)-աւիրել* (ՄՄՁ 6624). վերջինս, Հովհաննես Մուրադյանի վկայությամբ, բավական հաճախադեպ է խոսակցական լեզվում և համեմատաբար լայն տարածում ունի հայ բարբառներում²⁴: *Ե-ի* դիմաց *ի* է արձանագրում նաև Գևորգ Ջահուկյանը ԺԴ-ԺԵ դդ. հիշատակարաններում²⁵:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում առկա են *բագմաշառաւիղ (Անտառախիտ. ՄՄՁ 1654, 2371, 2372, 3937, 4612)- բագմաշառաւեղ*²⁶ (ՄՄՁ 4149, 5596, 8189(II)) // *բագմայշառաւեղ* (8106) (ՄՄՁ 266, 532, 538, 3197, 5126, 5925, 7250, 8198(I)-ում՝ նույն ՀԲԾ-ում, *բագմաշաւիղ* բառն է), *բաւիղ (Խաւար. ՄՄՁ 2371, 5126, 4612)-բաւեղ* (ՄՄՁ 530, 532, 2335, 4149, 5596)), *դիմավոր (Նմանութիւն. ՄՄՁ 530, 532, 2335, 4149, 4612, 5596)-դեմավոր* (ՄՄՁ 2371, 2372, 5126), *միտել (Փոփոխել. ՄՄՁ 5126)-մետել* (ՄՄՁ 530, 532, 3937, 4612, 5596, 5919) // *մէտել* (ՄՄՁ 1654, 2371, 2372) տարբերակները:

ԺԴ-ԺԶ դարերից ավանդված ՄՄՁ 266, 532, 538, 3197, 4149, 7250-ում (համապատասխանաբար՝ էջք 78ա, 89բ, 88բ, 15ա, 359ա, 77ա) արձանագրվում է *նաւուղեղ* գուգաձևը (մյուս ՁԲ-ներում՝ *նաւուղիղ*): Հովհաննես Մուրադյանը *ուղիղ > ուղեղ* հնչյունափոխությամբ

²³ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 117:

²⁴ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 118-119:

²⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 17:

²⁶ Թեև Ն. Մուրադյանի հավաստումով *ի-ի* *ե* գրության առաջին ստույգ տվյալները վերաբերում են ԺԳ-ԺԴ դդ. (Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 123), *շառաւիղ-շառաւեղ* գուգաձևերն առկա են Ե դ. մատենագրության մեջ (Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 12):

յան «ավելի վատահեղի օրինակներ» է առանձնացնում ԺԳ դ. Մանր ժամանակագրություններից²⁷:

ԺԷ դարից ավանդված գրչագրերում *բազմայշատաւեղ** (ՄՄՁ 516)- *բազմաշաւիղ* (ՄՄՁ 268, 533, 537, 545, 2431, 3286, 6097), *բազմայշաւիղ* (ՄՄՁ 3261), *դեմաւոր* (ՄՄՁ 268, 516), *բաւեղ* (ՄՄՁ 529, 843, 2019, 2431, 3200, 6624. *բօւեղ* ՄՄՁ 2369), *մէտեղ* (ՄՄՁ 2330, 2381, 7014), *մետեղ* (ՄՄՁ 267, 516, 529, 536, 2281, 2331, 2369, 2431, 3468), *մետիղ* (ՄՄՁ 3200), *մտեղ* (ՄՄՁ 6097) զուգաձևերին առադրվում է հունարենից փոխառյալ *վիռոնի** -ը (*վիռ* կամ *վիռն*. ՆՀԲ, հ. II, էջ 825)՝ *վեռոն* (*Կարպետ*. ՄՄՁ 516) տարբերակով: Առկա են նաև *գոնեա* (*Գէթ*. ՄՄՁ 537, 3216)- *գոնիայ* (ՄՄՁ 3468) զուգաձևերը:

Գևորգ Ջահուկյանը «ի-ի դիմաց» է է արձանագրում ԺԷ դ. հիշատակարաններում²⁸:

ԺԸ դարից ավանդվածներում *բազմաշատաւիղ* (ՄՄՁ 566(II)), *բազմաշաւիղ* (ՄՄՁ 843, 9992), *բազմայշաւիղ* (ՄՄՁ 9166), *մտեղ* (ՄՄՁ 9992) զուգաձևերն են:

Բ/ՈՒ: Ինչպես նշում է Լավրենտի Հովհաննիսյանը, այս կարգի զուգաձևությունները Ե դ. գրաբարում շատ չեն: **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում դրանք սահմանափակվում են *ծղիկ* (*Ձեռք*. ՄՄՁ 4149, 5925, 8198 (II))- *ծղուկ* (ՄՄՁ 530, 532, 1654, 2371, 3937, 4612, 5919, 5126, 5596, 8198(I)) զուգաձևերով, որոնք իբրև գրվածքներ արձանագրում է ՆՀԲ-ն (հ. I, էջ 1019):

ԺԷ դարից ավանդված գրչագրերում առկա է միայն *ծղուկ*-ը. բառը չկա ՄՄՁ 3200, 3824, 6097-ում:

ԺԸ դարից ավանդվածներում նույնպես գերակշռում է *ծղուկ* -ը (ՄՄՁ 566(II), 843, 3450, 9166, 9992):

Ո/Ա: **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում մեկական օրինակով են վկայվում *n/w* զուգաձևերը. *աւորոցեղ* (*Անջատեղ*. ՄՄՁ 1654, 2335, 2371, 3937, 4149, 4612, 5596, 5919, 8106...) - *աւալոցեղ*

²⁷ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 123:

* Բառը չկա ՄՄՁ 529, 2019-ում:

** *Վիռոն* տարբերակն արձանագրված է ՄՀԲԲ -ում (հ. IV, Ե., 1945, էջ 345):

²⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 17:

(ՄՄՁ 530).

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 843-ում առկա է *աւալոցել*-ը:

Ոյ/ՈԲ: *Կաթողիկոս-կաթուղիկոս* զուգաձևերն արձանագրվում են Ե դ. մատենագրության մեջ՝ «եթե վերջինս վրիպակ չէ» նըշումով²⁹:

Կաթողիկե (Դաս. ՄՄՁ 5596)//կաթողիկե (ՄՄՁ 530, 532)-կաթուղիկե (ՄՄՁ 266, 538, 1654, 2371, 2372, 3197, 3937, 5919, 7117, 7250, 8198(I), ինչպես նաև բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բոլոր գրչագրերում) զուգաձևերն են **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդվածներում: Հովհաննես Մուրադյանն այսպիսի եռագրություն նշում է *կաթողիկոսություն* բառի համար ԺԴ դ. մի ձեռագրում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 85):

ԺԷ դարից ավանդված գրչագրերում գերակշռողը *կաթուղիկե*-ն է, *կաթողիկե*-ն՝ ՄՄՁ 268, 516, 843, 2331, 5008, 5995, 6624, *կաթողիկե*-ն՝ միայն ՄՄՁ 2369-ում:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566(II), 9166-ում առկա է *կաթուղիկե*-ն, ՄՄՁ 843-ում՝ *կաթողիկե*-ն. մյուս գրչագրերում բառը չկա:

Ոյ/ՈԲ: Այս հնչյունափոխության վկայություններն ըստ Հովհաննես Մուրադյանի «հանդիպում են արդեն X-XI դարերի գրավոր աղբյուրներում» և բնորոշ են համարվում արևմտյան տարածքի բարբառներին³⁰:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում հնչյունական զուգաձևերն են՝ *զգոյշ (Զգաւն. ՄՄՁ 530, 2330, 2371, 3197, 4149, 5596, 5919, 7250) - զգուշ (ՄՄՁ 532, 4612, 5126), նոյնադէմ (Նմանութիւն. ՄՄՁ 530, 532, 538, 266, 2335, 3197, 3937, 4149, 4612, 5596, 5925, 5919, 7250, 8106, 8198(II)) - նունադէմ (ՄՄՁ 1654, 2371, 2372, 5126): ՄՄՁ 7117-ում և ՄՄՁ 2371-ում նոյնադէմ-ին առադրվում են նունաձև, նունակերպ, նունանման բառերը (309բ, 276ա):*

²⁹ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 13:

³⁰ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 180-181: *Ոյ/ու* զուգաձևեր արձանագրվում են Ե դ. գրաբարում (*առոյգութիւն-առուզութիւն, գերագունութիւն- գերագոյնութիւն*). տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 16:

ԺԷ դարից ավանդվածներում, արձանագրված *զգուշ*-ից (ՄՄՁ 545, 2331, 2431), *նունաղէւ*-ից (ՄՄՁ 266, 267, 516, 533, 537, 2330, 2381, 2431, 3468, 7014) բացի, առկա են *Գոյթ*³¹ (ՄՄՁ 533 (4բ), 3824 (48ա), մյուսներում՝ *Գութ*), *դուզն* (*Նուագ*. ՄՄՁ 7014), *համայզուզ* (*Համանգամայն*. ՄՄՁ 516), *համբուր* (*Պարտ*. ՄՄՁ 3261, 6624*, *նուակառուց* (*Ղեկավար*. ՄՄՁ 3261), *նունաձև*, *նունակերպ*, *նունանման* (ՄՄՁ 537, 3468) զուգաձևերը: Հովհաննես Մուրադյանը այսպիսի բազմաթիվ օրինակներ է նշում «Ամիրդովլաթի «Ուսումն քժշկութեան» հեղինակային» ձեռագրում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 103):

ԺԸ դարից ավանդվածներում այսպիսիք չկան:

Ե/ԻԻ: **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում միակ օրինակը *հեղինակ*-ն է (ՄՄՁ 530, 2355, 2371, 5919)՝ *ի > ա* փոխազդեցական հետադարձ հնչյունափոխությամբ վկայված՝ *հեղանակ* տարբերակով ՄՄՁ 5596, 5925-ում, և *հիւղինակ* (ՄՄՁ 1654, 2372, 4149, 5126, 7117, 8198(I)), *հիւղանակ* (ՄՄՁ 266, 532, 538, 3197, 7250), *հիւինակ* (ՄՄՁ 8106), *հիւանակ* (ՄՄՁ 8198 (II)), *հիւղական* (ՄՄՁ 4612, 3937) երկբարբառային զուգաձևերով (ՆՀԲ-ն նշում է նաև *հեղիւնակ* տարբերակը. հ. I, էջ 83):

ԺԷ դարից ավանդվածներում գերակշռողը *հիւղինակ*-ն է. *հեղինակ*-ն առկա է ՄՄՁ 529, 2019, 2295, 2331, 2369, 2370, 3200, 7004-ում, *հիւղանակ*-ը՝ ՄՄՁ 2281, 2291, 2431, 3286, 6097-ում:

Նույն հարաբերակցությունն է **ԺԸ** դարից ավանդվածներում. *հիւղինակ*-ն առկա է ՄՄՁ 3450, 9166, 9992-ում, *հեղինակ*-ը՝ ՄՄՁ 566(II)-ում, *հիւղանակ*-ը՝ ՄՄՁ 843-ում:

Ե/ԵԱ: **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում՝ *զոնէ* (*Գեթ //զէթ*. ՄՄՁ 5596, 5925) // *զոնէ* (ՄՄՁ 266, 530, 532, 2335, 4149, 8198 (I))-*զոնէայ* (ՄՄՁ 2371, 2372, 4612, 5126, 7117). *սորէկ* (*Սուրբ*. ՄՄՁ 2371, 3937, 4149, 5126, 5596, 8106, 8198(I)) // *սորէծ* (ՄՄՁ 4612) // *սորէ* (ՄՄՁ 532, 538, 3197, 7250)-*սորէակ* (ՄՄՁ 530, 2335). նշված զուգաձևերը արձանագրվում են ՆՀԲ-ում (հ. I, էջ 571, հ. II, էջ 730):

³¹ Հ. Աճառյանը Ումի բարբառում արձանագրում է *գ'ույթ* ձևը (ՀԱԲ, հ. Ա, էջ 587):

* Այս գրչագրում՝ *Հաշտ* հենարառով ՀԲԾ-ում, առկա է *համբոյթ*-ը (142բ):

ԺԷ դարից ավանդվածներում, բացի նշված *գոնէ*, *գոնէայ*-ից, որոնցից գերակշռում է *գոնէ*-ն, առկա են հետևյալները՝ *գոյնէա* (ՄՄՁ 533,7995), *գոյնէայ* (ՄՄՁ 5008), *գոնիայ* (ՄՄՁ 3468), *գոնայ* (ՄՄՁ 6624). առավել հաճախական է *գոնէա*-ն: *Սորեկ-սորեակ* գուգաձևերից կրկնակի շատ է առաջինը. *սորեակ*-ն առկա է ՄՄՁ 529, 2019, 2369, 6097 (ընդգծվածներում *Պարզ* հենաբառն է), *սորէկ*-ը՝ ՄՄՁ 682, 2281, 243-ում (*Պարզ*), *սորիկ*-ը՝ ՄՄՁ 516-ում (*Սուրբ*), *սորէ*-ն՝ ՄՄՁ 2295 -ում:

ԺԸ դարից ավանդվածներում գերակշռում են *գոնէ* (ՄՄՁ 843, 9992) և *սորեկ* (ՄՄՁ 566(II)) գուգաձևերը. *սորեակ*-ը վկայվում է միայն ՄՄՁ 9992-ում, *սորէ*-ն՝ ՄՄՁ 843-ում:

ԻԻ/ՈԻ: *Իւ > ու* փոփոխությունը, ըստ Հովհաննես Մուրադյանի, տեղի է ունեցել Մուշ-Սասուն-Երզնկա-Ակն-Մալաթիա-Կարին - Շապին-Գարահիսար տարածքի բարբառներում³² և բնորոշ է միջին հայերենի տարբերակների մեծ մասին (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 105): Այդ փոփոխությամբ բառեր կան ԺԳ-ԺԶ դդ. հիշատակարաններում³³:

Իւ > ու հնչյունական գուգաձևերից **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում առկա են *հիւթ* (ՄՄՁ 266, 530, 532, 538, 2335, 3197, 3937, 4149, 4612, 5919, 5925, 7250, 8106, 8198(II)) // *իւթ* (ՄՄՁ 1654, 2371, 2372, 7117)- *հութ*-ը (ՄՄՁ 5596):

ԺԷ դարից ավանդվածներում նույնպես գերակշռում է *հիւթ* տարբերակը, *իւթ*-ը՝ ՄՄՁ 267, 516, 2330, 2331, 2381, 3257, 5995, 7014, 8563-ում. բառը չկա ՄՄՁ 2431, 8533-ում: Բառերի այբբենական դասավորությամբ ձեռագրերում հանդիպում է միայն բառի՝ *ւ*-ով սկսվող տարբերակը, որն իբրև գլխաբառ՝ «Տ. Հիւթ» նշումով առանձնացնում է ՆՀԲ-ն՝ վկայակոչելով Շարականներն ու Ճառընտիրները, այլև Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Երզնկացու երկերը (հ. II, էջ 922):

³² Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 189:

³³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջք 17, 30:

ԺԸ դարից ավանդվածներում առկա են *ւ*-ով սկսվող տարբերակը (ՄՄՁ 9166) և *հիւթ-ը* (ՄՄՁ 843, 9992). սրանք նախորդ դարերից ավանդված գրչագրերի ընդօրինակումներ են:

ՄԻ/Օ: Ինչպես նշում են հետազոտողները, *աւ>օ* հնչյունափոխությունը ԺԲ-ԺԳ դարերում ամբողջովին ձևավորված և «բավարար փաստերով հաստատված երևույթ» էր, որը, սակայն, երկար ժամանակ գրության մեջ շարունակում էր արտահայտվել *աւ*-ով³⁴: Աշոտ Աբրահամյանի հավաստմամբ՝ «ուշ միջնադարում հայկական ձեռագրերում *օ* հանդիպում է նաև այնպիսի տեղերում, որտեղ չպիտի լիներ, այսինքն բառամիջում, ձայնավորից առաջ և բառավերջում». նրա կարծիքով՝ դրանք «հազիվ թե արտասանական հիմք ունենային, ավելի ճիշտ՝ մի տեսակ գրային բաղարկության հետևանք են»³⁵: Ըստ Հովհաննես Մուրադյանի դիտարկումների՝ *օ*-ն սկսում է հետևողականորեն կիրառվել միայն ԺԴ դարում՝ երբեմն հանգելով չափազանցությունների այնպիսի դիրքերում, որոնցում այդ հնչյունափոխությունը բացառվում էր (ինչպես *ելօ, մեռօ*. տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 97-98):

Գրչագրերում նույնպես առկա են նման օրինակներ. *ընդ գրուանօ**, *ընդ պատրուակօ* (*Ձանխուլ*), *աղօաղել* (*Լուտալ*), *օարտ* (*Ծագք*), *արգօանդ* (*Մուրկ*), *բնօին* (*Համանգամայն*, ՄՄՁ 532), *վօաշ* (*Պոռնիկ*), *հարօ* (*Իրք, Հոդմ*, ՄՄՁ 538), *անօթ* (*Օոցք*, ՄՄՁ 1654), *խնօ* (*Թուրմ*, ՄՄՁ 7250), *տակօին* (*Միշտ*, ՄՄՁ 538, 3197), նօավար (*Ղեկավար*, ՄՄՁ 1654), *համահօաք/համահօազ* (*Համանգամայն*, ՄՄՁ 532, 1654): Առավել շատ են *-աւոր* ածանցի - *օոր* գրությամբ տարբերակները. *անցօոր* (*Պարենի*), *գլխօոր* (*Հոյակապ*, ՄՄՁ 538), *մշտնջենօոր* (*Միշտ*), *դատօոր* (*Տէր*), *սհօոր* (*Անհաս*), *ականօոր*, *հոչակօոր* (*Հոյակապ*, ՄՄՁ 532), *վտանգօոր* (*Դլխիթ*,

³⁴ Մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության. Մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ՀՄՍՌ ԳԱ Տեղեկագիր. հասարակական գիտություններ, 4, 1957, էջք 74-75, 77:

³⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 73:

* Նույն ձեռագրում՝ *Պատրուակեալ* հենարառով ՀԲԾ-ում, վկայվում է *ընդ գրուաւաւ* ձևը:

ՄՄՁ 2372), *խորհրդոք* (*Պատրուակեալ*, ՄՄՁ 1654) և այլն: Նշված գրչագրերից միայն ՄՄՁ 1654-ն է ավանդված **ԺԴ** դարից, մյուսները **ԺՁ** դարից են, և եթե **ԺԴ** դարից ավանդված գրչագրում նման օրինակները չորսն են (*անձօք*, *նօավար*, *համահօագ*, *խորհրդոք*), ապա հետագա դարերից ավանդվածներում դրանք բազմաթիվ են: Մինչև **ԺԴ** դ. ընդօրինակվածներում *օ*-ի գրության այդպիսի դեպքեր չկան՝ հաստատելով Հովհաննես Մուրադյանի վերոնշյալ դիտարկումը: Նշված գրչագրերում միաժամանակ արձանագրվում են *-աւոր* ածանցով տարբերակներ, ինչպես՝ *հովանաւոր*, *վարսաւոր* (*Անտառախիտ*), *գլխաւոր* (*Հոյակապ*), *փառանգաւոր* (*Կապարձք*. ՄՄՁ 532), *հնարաւոր* (*Նենգաժէտ*), *փէշաւոր* (*Նմանութիւն*. ՄՄՁ 1654), *հնարաւոր*, *դեմաւոր* (*Նմանութիւն*), *անգաւոր* (*Հոյակապ*. ՄՄՁ 2372):

Նույն երևույթն է նկատվում **ԺԷ** դարից ավանդվածներում³⁶՝ *հնարօք*, *նենգօք* (*Նենգաժէտ*. ՄՄՁ 7004, 5008), *նենգօք* (ՄՄՁ 8533), *դատօք*³⁷ (ՄՄՁ 2019, 2219), *բեղնօք* (*Մուրկ*. ՄՄՁ 2291), *սպասօք* (*Հնագանդ*. ՄՄՁ 2369, 7014), *ախօք*^{*} (ՄՄՁ 536), *չքօք* (*Փանաքի*. ՄՄՁ 2369), *հոչակօք*^{*}, *դիմօք*, *փէշօք* (*Նմանութիւն*. ՄՄՁ 2369), *մերձօք* (*Նմանութիւն*. ՄՄՁ 536), *դիմօք* (ՄՄՁ 536, 7014), *փէշօք*, *անգօք*, *հարկօքրել* (*Նմանութիւն*. Հայց ՄՄՁ 7014), *զծօքք* (*Գիծք*. ՄՄՁ 3200):

Օ տառի գոյությունը բացառող դեպքերից են՝ *անբօ* (*Անհաս*. ՄՄՁ 2019), *պարսօ* (*Լուտալ*. ՄՄՁ 2019), *պրծօ*, *զերծօ*, *վիրիպեցօ* (*Ճողոպրեաց*), *վօաշ*^{*} (*Շուայտեալ*), *գրօ*, *օարտ*^{*} (*Ծագք*. ՄՄՁ 2369), *խննօ*^{*} (*Թուրմ*. ՄՄՁ 3200), *բնօ* (*Հոյակապ*. ՄՄՁ 7014), *նօավար*^{*}, *նօագ*, *նօայետ* (*Ղեկավար*. ՄՄՁ 2019, 2369), *նօայետ* (ՄՄՁ 536),

³⁶ Հմմտ.՝ Վ. Կաժյան, Հնչյունները և հնչյունափոխական իրողությունները Զարարիա Ագուլեցու «Օրագրության» մեջ, Ասպիրանտական գիտական աշխատությունների ժողովածու, 8, պրակ II, Ե., 1975, էջ 438: Գ. Զահուկյանը նույն դարերի հիշատակարաններում այսպիսի երևույթ չի արձանագրում (տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ.):

³⁷ Աստղանիշով տարբերակները (նաև հաջորդիվ նշվող) առկա են նախորդ շրջանում:

*համահո(վ)աք** (ՄՄՁ 2019, 2369), *անիրօ* (*Նմանութիւն*. ՄՄՁ 2369), *օռչոցել* (ՄՄՁ 533, 3824), *խօարասէր* (*Խաւար*. ՄՄՁ 7014):

Աւ > օ փոփոխությամբ ձևերը շատ են **ԺԷ** դարից ավանդված ՄՄՁ 536, 2291, 2369, 7014-ում, որոնցում, բացի նշվածներից, առկա են նաև հետևյալները՝ *ղօանել*, *հօանել*, *օերել*, *տօիղ*, *սպօէն*, *հօան*, *յօէտ*, *յօէժ* (ՄՄՁ 536, 2369), *խօարասէր*, *սպասօրագոյն*, *հարկօորել* (ՄՄՁ 7014), *մերձօռք*, *ընչօէտ*, *սպաօրտակ*, *խօարասէր*, *բօեղ*, *դիւօռք*, *համահօաք*, *հօասար*, *խօարածին*, *խօարամած*, *փէշօռք* (ՄՄՁ 2369): Մի քանիսն էլ արձանագրվում են ՄՄՁ 2019-ում (*իքօարար* (*Տէր*), *յապօել* (*Կոճոպել*), ՄՄՁ 8533-ում (*բօիղ*), ՄՄՁ 516-ում (*արշօք* (*Խազկ*)), ՄՄՁ 2381-ում (*սպաշօել* *Ջղջանակ*)): Միաժամանակ ՄՄՁ 2369, 7014-ում վկայվում են համապատասխանաբար *անրաւ* (*Անհաս*. 261ա) և *մերձաւոր* (*Արդակ*. 136ա) ձևերը:

ԺԸ դարից ավանդվածներում *օ* տառի գրությունը բացառող տարբերակներ չկան:

Ձայնավորների հավելմամբ և անկմամբ գուգաձևեր

Մ/Օ: Միջնավանկի *ա* ձայնավորի անկում արձանագրվում է հիշատակարաններում³⁸, և ըստ Հովհաննես Մուրադյանի՝ այն բրնորոշ է «կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին»³⁹:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում առկա են *կողմանակի* (*Առիշեղ*. ՄՄՁ 1654, 2373, 3197)- *կողմնակի* (ՄՄՁ 532, 2371, 5596), *կողմանակ* (*Առիշեղ*. ՄՄՁ 3937, 4612, 7117)-*կողմնակ* (ՄՄՁ 530, 2335, 5925, 8198(I)) տարբերակները. սրանք թերևս հարկ է ընդունել իբրև մեկը, որքանով գուգաձևերի առաջին եզրերը ՆՀԲ-ն վկայում է (հ. I, էջ 112):

Բ ձայնավորի անկումով են *անձոռն* (*Վիրթխարի*. ՄՄՁ 5925), *վաղվաղակ*, *փութանակ* (*Վաղվաղակ(ի)*. ՄՄՁ 266, 7250, 8106) գու-

³⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջք 11, 15, 30:

³⁹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 86-87: ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 74: Ռ. Ղազարյանի հավաստմամբ՝ այն միջինհայերենյան հնչյունափոխական երևույթներից է (տե՛ս Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 189):

գաձերը: Հավելական (թերևս պայմանականորեն) *ի*-ով՝ *փարթար*-ը (*Գէթ*. ՄՄՁ 5596, 532, 2335, 2371, 2372, 4149, 7117)- *փարթարի* (ՄՄՁ 530, 3937, 4612, 5925, 8198(I))⁴⁰:

Ո-ի հավելմամբ միակ օրինակը *վոհուկ* (ՄՄՁ 4149, 5919)-*վիուկ*-ն է (ՄՄՁ 2371, 5596, 5925, 8106): Ջուգաձևերն արձանագրել է Լավրենտի Հովհաննիսյանը Եփրեմ Ասորու ճառերից մեկում և Հովհան Ոսկեբերանի՝ Եսայի մարգարեի մեկնություններում⁴¹:

ԺԷ դարից ավանդվածներում գերակշռում է *կողմանակի*-ն. արձանագրվում են *կողմնակի*-ն, *կողմնակ*-ը, *կողմանակ*-ը. ՀԲՇ-ն չկա ՄՄՁ 516-ում: Մեկական են վկայվում *խորամանկ* (*Նենգածետ*)-*խորմանք* (ՄՄՁ 2281), *ծառանց* (*Անտառախիտ*) - *ծառնց* (ՄՄՁ 5925) գուգաձերը:

ՄՄՁ 2331-ում՝ *Ջնջել* հենաբառով ՀԲՇ-ում, *սպականել*-ի փոխարեն արձանագրվում է *սպկընել*-ը (231ա), ՄՄՁ 2369-ում՝ *սպկնել*-ը (261ա):

Վկայվում են *փարթարի* (ՄՄՁ 2371), *փարթառ* (ՄՄՁ 2019) տարբերակները (անգամ՝ *խարթարի* (ՄՄՁ 2431) և *փարթամ* (ՄՄՁ 3261, 3468), *Վտխարի* (ՄՄՁ 5008) սխալագրությունները):

Կիշիռ (*Արդակ*. ՄՄՁ 7995) - *կշիռ*, *վիրիպեցո* (Ճոդոպրեաց. ՄՄՁ 2369), *վիրիպեցաւ* (ՄՄՁ 5008)-*վրիպեցաւ* գուգաձևերում ակրնհայտորեն կարելի է արձանագրել *ը*-ի լիաձայնություն. ըստ Գևորգ Ջահուկյանի՝ համանման երևույթ է առկա ԺԴ-ԺԵ դդ. հիշատակարաններում⁴², այլև «արևմտահայ» և «արևելահայ» միշարք «բարբառախոս վայրերում»⁴³:

Ու ձայնավորի հավելում է վկայվում ՄՄՁ 3286-ում՝ *երդումնազանց* (*Ամեղել*), և անկում՝ *դժարին* (*Դլխիտ*. ՄՄՁ 2431) բառերում. սրանք չկան ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում: Գեվորգ Ջահուկյանը ԺԲ դ. հիշատակարաններում հանդիպող *դժար*-

⁴⁰ Գրչագրերում չեն վկայվում *պարենի* և *անի* (*Դուար*) բառերի ուղիղ ձևերը. առկա է *անիս*-ը (ՄՄՁ 532, 538, 4149, 5596):

⁴¹ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 14:

⁴² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 29:

⁴³ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 64:

ը համարում է խոսակցական-բարբառային գործածություն⁴⁴: Այն առկա է Արարատյան, Թբիլիսիի, Հավարիկի, Սասունի, Վանի, Խոտորջուրի բարբառներում (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 330):

Վռհուկ-ը վկայվում է ՄՄՁ 529, 2369, 3200-ում, նաև մեկ անգամ *վեհուկ* տարբերակով ՄՄՁ 243-ում:

ԺԸ դարից ավանդվածներում միայն մեկ անգամ է վկայվում *վաղվաղակ*-ը (ՄՄՁ 843). մյուսներում *ի*-ն առկա է:

Ի ձայնավորի հավելումով են արձանագրվում *փարթարի*-ն (Գեթ. ՄՄՁ 9992), *յիքաւոր*-ը (*Փանաքի*. ՄՄՁ 9166):

ԱԲ/Թ: *Փառանգաւոր* (*Կասարճ(ք)*). ՄՄՁ 532, 2335, 2371, 2372, 1654, 5126, 5919, 7117) - *փառանգոր* (ՄՄՁ 266, 530, 538, 3197, 3937, 5596, 7250, 81989(II))//*փառանգոր* (ՄՄՁ 4149, 5925, 8106):

ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2019, 2331, 2431, 3286, 6097-ում առկա է *փառանգոր*-ը:

Փառանգաւոր-ը միայն **ԺԸ** դարից ավանդված ՄՄՁ 9992-ում է: Նկատելի է, որ *փառանգոր* հնչյունական տարբերակն առկա է այն գրչագրերում, որոնցում *-աւոր* ածանցն ունի *-օոր* գրությունը (ՄՄՁ 583, 2369, 3197)⁴⁵:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 556(II)-ում՝ *Հրճուել* ՀԲՇ-ում, *ուի* անկումով *րախանալ* բայն է, որը Ստեփան Մալխասյանցը համարում է «հագուաղէպ բառ» (ՄՀԲԲ, հ. IV, էջ 453). նույն ՀԲՇ-ում վկայվում է նաև *ուրախանալ*-ը:

բ) *Բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր*⁴⁶

Բազմաթիվ են բաղաձայնական փոփոխություններով հրնչ-

⁴⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջք 31, 48:

⁴⁵ Միջնադարյան ձեռագրերում *-աւոր* ածանցի ուղղագրական շեղում է արձանագրել Հ. Մուրադյանը, երբ հապավվել է ածանցի *ւ* տառը (տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 101):

⁴⁶ Ձուգաձևերը ներկայացնելիս նույնպես առանձնացվում է դրանց միայն ձայնեղ կամ խուլ բաղաձայնով տարբերակը, քանի որ մյուս գրչագրերում համապատասխանաբար միայն խուլ կամ միայն ձայնեղ բաղաձայնով տարբերակներն են: Նույնը նաև՝ մյուս հնչյունական զուգաձևերի դեպքում:

յունական գուգաձևերը, որոնց շարքում էլ՝

ձայնեղ/խուլ բաղաձայններով գուգաձևերը⁴⁷:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում առկա են հետևյալները.

Բ/Պ: *Բեւկէ* (*Բոց*, ՄՄՁ 2331, 2335, 530, 5919)- *պեւկէ** (ՄՄՁ 532, 3197, 4149, 4612, 5596): ՄՄՁ 8106-ում *ըմպոշխնել*-ն է. մյուսներում *բ* բաղաձայնն է:

Գ/Կ: *Ճառանգ* (ՄՄՁ 5925, 8198(II)) - *Ճառանկ*⁴⁸ (ՄՄՁ 4149), *Լոզանալ* (ՄՄՁ 1654, 2335, 2371, 3937, 4149, 4612, 5596, 5925)-*Լոկանալ* (ՄՄՁ 8106), *խոշտանգել* (*Ջնջել*, ՄՄՁ 532, 2371, 4612, 5596) - *խոշտանկել* (ՄՄՁ 530, 5126, 5925), *Ծազք* (ՄՄՁ 266, 530, 532, 538, 1654, 2335, 2371, 3937, 4146, 4612, 5126, 5596, 5919, 7117, 7250, 8106, 8198(I))-*Ծակք* (ՄՄՁ 5925, 8198 (II)), *նուազք* (*Երզք*, ՄՄՁ 4149, 4612, 5126, 5596, 5925) - *նուակք* (ՄՄՁ 532), *Վտանգք* (ՄՄՁ 266, 538, 1654, 2371, 3197, 3937, 4612, 5126, 5925, 7250, 8198 (II)) - *Վտանկք* (ՄՄՁ 530, 532, 2335, 4149, 5919, 8106) // *Վտակք* (ՄՄՁ 8198 (I)), *սիզալ* (*Ջոջալ*, ՄՄՁ 4149)- *սիկալ* (ՄՄՁ 8106):

Դ/Տ: *Հանդարտ* (*Հաշտ*, ՄՄՁ 4149, 5126) - *հանտարտ* (ՄՄՁ 532, 5596), *Սպանդ* (ՄՄՁ 266, 538, 2371, 8198(I)) - *Սպանտ* (ՄՄՁ 532), *Սպրդել* (ՄՄՁ 2371, 3937, 4149, 5596, 5925, 7117, 8198 (I, II)) - *Սպրտել* (ՄՄՁ 8106), *պանդոյր* (*Փանաքի*, ՄՄՁ 2371) - *պանտոյր* (ՄՄՁ 4612):

⁴⁷ Նկատի առնելով Ռ. Ղազարյանի այն դիտարկումը, որ «Մանրամասնությունների մեջ չմտնելով՝ միայն նշենք, որ միջինհայերենյան շրջանում բաղաձայնական (պայթականների և պայթաշփականների) տարբեր համակարգերի մեջ առանձնանում է հատկապես եռաստիճան այն համակարգը՝ ձայնեղ պայթական» խուլ, խուլ պայթական > ձայնեղ տեղաշարժերով, որ բնորոշ է ոչ միայն կիլիկյան գրական հայերենին, այլև արևմտյան՝ կը ճյուղի մի շարք բարբառներին» (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 199)՝ կարելի է թերևս ենթադրել, որ գրչագրերի մեծ մասն ընդօրինակվել է Հայաստանի արևմտյան տարածքներում:

* ՆՀԲ-ն նշում է, որ հին բառարաններում (ԺԳ-ԺԴ դդ.) առկա են *Բոց*, *հուր*, *ջահ*, *պեւկէ* փաղանունները՝ հավելելով «որ չէ ի դեպ» (ՆՀԲ, հ. II, էջ 647):

⁴⁸ Տե՛ս նաև Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 200:

Ձ/Օ: Ընծիւղել (Ծագել ՄՄՁ 530, 532, 5126, 5596) - ընծիւղել (ՄՄՁ 2371, 4149) // ընծեղել (ՄՄՁ 2335):

Ջ/Ճ: Գէջ // գէջ (ՄՄՁ 5919, 2335, 2371, 4149, 4612, 5596, 5216), գէճ// գէճ (Թուրմ, Պոռնիկ. ՄՄՁ 530, 532, 4149, 4612)-խնջոյ (Խազմ. ՄՄՁ 532, 2335, 4612, 5596, 5925)- խնճոյ (ՄՄՁ 530, 2371, 5126):

Խուլ/ձայնեղ բաղաձայններով գուգաձեր.

Կ/Գ: Գայթակղել (Բոնադատել. ՄՄՁ 266, 532, 538, 3197, 3937, 5126) - գայթագղել (ՄՄՁ 2371, 4149, 5596), ընկեցեալ (Կորակնեալ. ՄՄՁ 530, 532, 2335, 5126) - ընգեցեալ (ՄՄՁ 538, 5596), լոկ (Սոսկ. ՄՄՁ 5919, 530, 3937) - լոգ (ՄՄՁ 4612), խորամանկ (Նենգաժե/ժէտ. ՄՄՁ 532, 2335, 4612, 5126)-խորամանգ (ՄՄՁ 530, 2371, 5596), մանկութիւն, մանկակերտ, մանկատիս (Համբակ. ՄՄՁ 2371, 3197, 5925) -մանգութիւն, մանգակերտ, մանգատիս (ՄՄՁ 5596), մանկագիտեալ (Պոռնիկ. ՄՄՁ 8198(II)) -մանգագիտեալ (ՄՄՁ 4149), վանգ (Չայնք. ՄՄՁ 532, 2371, 4149, 4612, 5126, 5919, 5925) - վանկ (ՄՄՁ 530), սիգալ (Ջղջալ. ՄՄՁ 4149) - սիկալ (ՄՄՁ 8106), տնանկ (Փանաքի. ՄՄՁ 532, 2372, 4612, 5126, 5596) - տնանգ (ՄՄՁ 530, 2335, 4149):

Տ/Դ: Բոնադատել (Հայցել. ՄՄՁ 2335, 2371, 4149, 5596, 8106) - բոնադադել (ՄՄՁ 8198 (II)), ընտանեգոյն (Պարտ. ՄՄՁ 2371, 4612, 5596) -ընդանեգոյն (ՄՄՁ 4149, 5126) // ընդանեգոյն (ՄՄՁ 532), ընտիր (Սուրբ. ՄՄՁ 532, 2371, 4149, 4612) - ընդիր (ՄՄՁ 266, 3937, 5126, 5596, 8106, 8198(II)):

Ծ/Չ: Գեղապանծ (Հոյակապ. ՄՄՁ 2335, 2371) // Գերապանծ (ՄՄՁ 532, 4612, 5126, 5596, 8198(I)) - Գեղապանձ (ՄՄՁ 530, 4149), ընձայք (Սպանդ. ՄՄՁ 538, 2371, 4612) // ընձայ (ՄՄՁ 5126) - ընձայ (ՄՄՁ 530, 2335) // ընձա (ՄՄՁ 5919), պանձալ (Այտուցեալ. ՄՄՁ 2371, 2372, 5126) // պաձալ (ՄՄՁ 532) - պանձալ (ՄՄՁ 530, 4149, 4612, 5596) // խաչապանձալ (ՄՄՁ 2335) :

Ճ/Ջ: Անձոռնի (Վիրթխարի. ՄՄՁ 530, 532, 2335, 2371, 4149, 4612, 5126, 5596) - անջոռնի (ՄՄՁ 266, 538, 2295, 7250), խուձապ (Խազմ. ՄՄՁ 530, 532, 2335, 2371, 4612, 5925, 5596) - խուջապ (ՄՄՁ

8106), *վախճան (Ծագք. ՄՄՁ 2371, 4149, 5596, 5919)- վաղջան (ՄՄՁ 4612)*:

Հետևելով ձեռագրահամարներին՝ նկատելի է, որ մի քանի գրչագրում գերակշռում են ձայնեղ բաղաձայններով գուգաձևերը, թեև նույն գրչագրերում արձանագրվում են նաև խուլ բաղաձայններով գուգաձևեր: Այսպես՝ ՄՄՁ 530-ում՝ *արձագանգ, գեղապանձ, ընձայ, խորամանգ, պանձալ, տնանգ*, բայց և՛ *խոշտանկել, ինձոյ, վանկ, վտանկք*. ՄՄՁ 532-ում՝ *աւոոց, ընդանէգոյն, հաջել, շանդիւք*, այլև՝ *արձականք, հանտարտ, սպանտ, վտանկք*. ՄՄՁ 5596-ում՝ *ընգեցեալ, գայթագղել, ընդիր, խորամանգ, մանգակերտ, մանգատիս, մանգութիւն, շանդիւք, պանձալ*, միաժամանակ՝ *հանտարտ*. ՄՄՁ 8106-ում՝ *ընդիր, խուջապ*, բայց և՛ *լոկանալ⁴⁹, սիկալ, վտանկք*. ՄՄՁ 4149-ում՝ *հաջել, մանգագիտեալ, ներգել, շանդիւք, տնանգ*, նաև՝ *ընծիւղել, ժառանկ, վտանկք*. ՄՄՁ 5126-ում՝ *երեգսքանչեան, ընդանէգոյն, ընդիր, օոոց*, այլև՝ *խոշտանկել* և այլն: Ակնհայտորեն գերակշռող դիրքը *ն* ոնգայինից հետո է: Խուլի ձայնեղացում (մասնավորապես նշված դիրքում) Գևորգ Ջահուկյանն արձանագրում է հիշատակարանների լեզվում. հնչյունական այս կարգի երևույթ է առկա Վանում, Մուշում, Շատախում, Մոկսում, Աղվանքում գրառված հիշատակարաններում⁵⁰:

Նախորդ շրջանում արձանագրված և **ԺԷ** դարից ավանդված մեկից ավելի գրչագրերում⁵¹ վկայվող *խուլ/ձայնեղ (գայթագղել (ՄՄՁ 2281, 6624, 6097), խորամանգ (ՄՄՁ 516, 540, 2019, 2295, 2330, 2381, 2431*, 3170, 3824**), մանգութիւն (ՄՄՁ 533), վանգ (ՄՄՁ 516,*

⁴⁹ Այս բառաձևը Հ. Աճառյանը քաղում է Ս. Անեցու շարականներից (ՀԱԲ, հ. Բ, էջ 291):

⁵⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջք 12, 16, 22, 27-28:

⁵¹ ԺԷ-ԺԸ դարերից ավանդվածներում վկայվող գուգաձևերը ներկայացնելիս (քանի որ արդեն նշվել են մեկից ավելի գրչագրերում արձանագրվածները) առանձնացվում է դրանց միայն ձայնեղ կամ խուլ բաղաձայնով տարբերակը, որովհետև մյուս գրչագրերում համապատասխանաբար միայն խուլ կամ միայն ձայնեղ բաղաձայնով տարբերակն է: Նույնը և՛ մյուս հնչյունական գուգաձևերի դեպքում:

* Մույն ՁԲ-ում *խորամանգեալ* տարբերակն է (295ա):

** Նույն գրչագրի 51բ էջում արձանագրվում է *խորամանկել*-ը:

529, 2369), *տնանգ* (ՄՄՁ 529, 2331)) և *ձայնեղ/խուլ բաղաձայններով*⁵² զուգաձևերին (*վտանկք* (ՄՄՁ 3170), *խոշտանկել* (ՄՄՁ 268, 533, 6624)) առադրվում են *խուլ/ձայնեղ (անգումն* (Ծագք. ՄՄՁ 529), *երգ* (Ջան. ՄՄՁ 6624), *կորագնեալ* (Կորացեալ. ՄՄՁ 2295), *կրկտել - կրգտել* (Հայցել. ՄՄՁ 545), *Ղեգավար* (ՄՄՁ 3261), *յանգագոյն* (Արդակ. ՄՄՁ 6624), *նգարագիր* (Նմանութիւն. ՄՄՁ 6624), *ցանգացող* (Պոռնիկ. ՄՄՁ 533), *երեգ* (Միշտ. ՄՄՁ 2330)) և *ձայնեղ/խուլ բաղաձայններով* զուգաձևերը (*արձականք* (Ջայն. ՄՄՁ 2369), *լուսերանկ** (Լոյս. ՄՄՁ 529), *կայթել* (Կաղալ. ՄՄՁ 682, 3450, 3468), *հանկուցել* (Հարել. ՄՄՁ 2281), *վտանկաւոր* (Դլիխտ. ՄՄՁ 2431), *պակշոտ*⁵³ (Պոռնիկ. ՄՄՁ 268, 2431)):

Ձայնեղ/խուլ բաղաձայններով զուգաձևեր.

Բ/Պ: Մեկական են վկայվում *ամպարյալաճ* (Այտուցեալ. ՄՄՁ 529), *անըմպոնելի* (Անհաս. ՄՄՁ 8533), *ըմպոնելի* (Հասանելի. ՄՄՁ 537, Անհաս. ՄՄՁ 8533), *բամպասել* (Լուտալ. ՄՄՁ 2370), *ի հողմոյ տարուպերք* (Ջայն. ՄՄՁ 3261), *ըմպոն* (Պարտ. ՄՄՁ 2330, 2370)** զուգաձևերը:

Դ/Տ: ՄՄՁ 545-ում *ճշմարիդ*-ն է, ՄՄՁ 3824-ում՝ *տժուարին*-ը (Դլիխտ), մեկից ավելի ձեռագրերում՝ *սպրդել-սպրտել* (գերակշռող տարբերակ), *արգաւանտ* (Մուրկ. ՄՄՁ 2431, 3170), *պինս*⁵⁴-(Հաստատուն. ՄՄՁ 268, 533, 2285), մեկում՝ *տրտուել* (Փոփոխել. ՄՄՁ 7014), *տանտաղիլ* (Դեգերել. ՄՄՁ 3468), *տուզնաքեայ*, *տոյզն* (Նուտաղ. ՄՄՁ 2295) զուգաձևերը:

⁵² Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ ԺԷ դարում «Առհասարակ, դ>թ, գ>լ, նան կ>գ, գ>բ հնչյունափոխության բազմաթիվ օրինակները վկայում են այդ դարաշրջանում բարբառային հնչյունական համապատասխան արտասանության մասին»։ Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը. - Լեզվի և ոճի հարցեր, VII, էջ 153:

* *Լուսերանկ*-ը *լուսներանկ* տարբերակով առկա է ԺԲ դ. հիշատակարաններում (Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 16):

⁵³ *Պակշոտ*-ը արձանագրվում է Ե դ. մատենագրության մեջ (Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 18):

** ՄՄՁ 2330-ում առկա է նաև *ըմբոն* զուգաձևը (97բ):

⁵⁴ Այս և հաջորդիվ ընդգծվողներն առկա են Ե դ. մատենագրության մեջ *ընդրեմ*, *ընդանի*, *պնտել*, *ընձայ* զուգաձևերով (տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 19):

Չ/Ծ: Սահմանափակվում է երկու տարբերակով՝ *սսնծել* (*Յարել*, ՄՄՁ 2295), *մերծաւոր* (*Արդակ*, ՄՄՁ 7014):

Ձ/Ճ: *Գիճ*, *գէճ* (ՄՄՁ 2431) գուգաձևից բացի՝ առկա են *Անճա-տել*-ը (ՄՄՁ 6097) և *խոնճ* (*առնել*)-ը (*Ջան*, ՄՄՁ 3261):

Խուլ/ձայնեղ բաղաձայններով գուգաձևեր.

Պ/Բ: Մեկական են վկայվում *Կողորուտ* (ՄՄՁ 516), *հրաբու-րոջ* (*Տարտողական*, ՄՄՁ 682), *վրիբեցո* (*Ճողոպրեաց*, ՄՄՁ 533), *կրգտել* (*Հայցել*, ՄՄՁ 545), *Ղեգավար* (ՄՄՁ 3261), *Բոբէ* (ՄՄՁ 6624) գուգաձևերը. մեկից ավելի գրչագրերում՝ *ամպրոբ* -ը (*Խսագմ*, ՄՄՁ 2331, 3468, 3824), *տրուբ*-ը (*Խոնարհ*, ՄՄՁ 266, 533, 537):

Տ/Դ: Դարձյալ մեկական օրինակով են առկա *անյայդ* (*Անհաս*, ՄՄՁ 8606), *դադավճիռ* (*Անհաս*, ՄՄՁ 8606), *քնդանէգոյն* (ՄՄՁ 6624), *դարժանելի* (*Դիսիին*, ՄՄՁ 2431), *վարդապեղ* (*Հեղինակ*, ՄՄՁ 536) գուգաձևերը. *քնդիր*-ը՝ երկու գրչագրում՝ ՄՄՁ 533, 3257:

Ծ/Չ: Սահմանափակվում է երկու տարբերակով՝ *ձողուկ* (*Չեռք*, ՄՄՁ 267), *քնձայ* (ՄՄՁ 529, 3824):

Ճ/Ջ: Նախորդ շրջանի գրչագրերում արձանագրված *անջոռնի* (ՄՄՁ 2265) տարբերակից բացի՝ վկայվում են *քոռջիկ* (*Պերանի*, ՄՄՁ 2431, 3170, 7014), *ինքնահաջ* (*Այտուցեալ*, ՄՄՁ 540), *պատ-շաջ* (*Պարտ*, ՄՄՁ 3261), *Հրջվել* (ՄՄՁ 3261) գուգաձևերը:

Ըստ Գևորգ Ջահուկյանի՝ *ք*-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի հետձայնավորային դիրքում խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն առկա է «արևմտահայ» բարբառախոս վայրեր»-ում, «որոնց բարբառային կենտրոնները տեղադրված են Եվրոպայում և Արևմտյան Փոքր Ասիայում»⁵⁵:

ԺԸ դարից ավանդվածներում վկայվում են՝
Ձայնեղ / խուլ բաղաձայններով գուգաձևեր.

Բ/Պ: Առանձնանում են ՄՄՁ 9166-ը՝ *քմպոնելի* (*Հասանելի*), ՄՄՁ 843, 9992-ը՝ *քմբահկեալ-քմպահակեալ* (*Այտուցեալ*):

Գ/Կ: ՄՄՁ 843-ում առկա է *սրինկ* (*Երգ*), ՄՄՁ 9992-ում՝ *վտանկք*, *վտանկաւոր*, *Նենկաժէտ* գուգաձևերը:

Դ/Տ: ՄՄՁ 843-ում վկայվում է *սիինտ*-ը (*Հաստատուն*):

⁵⁵ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջք 32, 46:

Խուլ/ ձայնեղ բաղաձայններով զուգաձևեր.

Պ/Բ: ամբրոպ (Խագմ. ՄՄՁ 9992):

Կ/Գ: ցանգել (Անջատել), ընգեցեալ (Կորացեալ), գայթազել (ՄՄՁ 843), Ղեգավար, զուգազջիռ (Արդակ. ՄՄՁ 9166), անգա-նուրդ, անգումն (Ծագք), Խորամանգ, Ղեգավար (ՄՄՁ 9992):

Ճ/Ջ: Արձանագրվում է նախորդ շրջանում հանդիպող անջոռ-նի-ն (ՄՄՁ 843):

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում առկա են նաև՝
ձայնեղ/ շնչեղ խուլ բաղաձայններով զուգաձևեր.

Գ/Ք: Լոգանալ (ՄՄՁ 1654, 2335, 2371, 3937, 4612, 4149, 5596, 5925) - լոքտանալ (ՄՄՁ 5126), հեգ (Փանաքի. ՄՄՁ 5596, 7117)- հեք (ՄՄՁ 530, 532, 2371, 4149, 4612, 5126)//հէք (ՄՄՁ 2335, 2371), յոգ-նաւրինակ (Բագմապատիկ. ՄՄՁ 5596, 5925) //յոգնօրինակ (ՄՄՁ 532) - յոքնաւրինակ (ՄՄՁ 2335, 2371, 8198(II)) // յոքնօրինակ (ՄՄՁ 5126) // ոքնօրինակ (ՄՄՁ 4612), շոգմոզող (Քահանայ. ՄՄՁ 4149, 8189(II)) - շոքմոքող (ՄՄՁ 8106), սեգ/սէգ (Հոյակապ. ՄՄՁ 532, 2335, 2371, 3937, 4149, 4612, 5126, 5596) - սէք (ՄՄՁ 530), Փափագել (Պիտալ, Քարքել. ՄՄՁ 2335, 2371, 5596, 5919)- փափաքել (ՄՄՁ 530, 532, 4149, 4612, 8198(II)), փարագ (Պոռնիկ. ՄՄՁ 532, 2371, 4149, 4612)- պարաք (ՄՄՁ 530, 2335, 5919):

Ձ/Յ: օցտումն (Լուծումն. ՄՄՁ 533):

Շնչեղ խուլ/ ձայնեղ բաղաձայններով զուգաձևեր.

Ք/Գ: Արձագանք (Ձայնք. ՄՄՁ 266, 3197, 3937, 4149, 8198(I)) - արձագանգ (ՄՄՁ 530, 538, 2335, 5919)//արձակագանգք (ՄՄՁ 7250), բուք (Իրք, Միտք. ՄՄՁ 532, 2371, 4149, 4612, 5126, 5596) - բուգ (ՄՄՁ 2335), թաքչիլ (Դուռել. ՄՄՁ 530, 2335, 2371, 5126, 5919, Դուղել. ՄՄՁ 4149, Դուղել. ՄՄՁ 532, 4612) - թագչիլ (Դուրթել. ՄՄՁ 8189(II)), ներքեւեալ (Փանաքի. ՄՄՁ 5126)- ներգել (ՄՄՁ 532, 2335, 2371, 3937, 4612, 4149, 5596, 5919):*

* Ե դ. գրաբարում առկա են *թագուցեալ/թաքուցեալ* տարբերակները (Լ. Հովհան-նիսյան, նշվ. աշխ., էջ 22) :

Թ/Դ: Աւթոց (Կարպետ. ՄՄՁ 538, 2335, 5371, 3197, 4149, 5596, 7250, 8198(I)) - աւղոց (ՄՄՁ 532, 4612) // օղոց (ՄՄՁ 5126):

Չ/Ջ: Հայել (Ձայն. ՄՄՁ 5126, 5596, 8198(II)) // հաչ (ՄՄՁ 4612, 7250) - հաջել (ՄՄՁ 532, 2371, 3937, 4149):

ԺԷ դարից ավանդվածներում վկայվում են ա) *ձայնեղ/չնչեղ խուլ* (Գ/Ք) և բ) *չնչեղ խուլ/ձայնեղ* (Ք/Գ) բաղաձայններով գուգաձևեր: Արդեն արձանագրվածներին՝ *արձագանգ* (ՄՄՁ 529, 3200, 2019), *թագչիլ* (ՄՄՁ 533, 3824, 7014), *սայթագել* (*Բոնադատել*. ՄՄՁ 3824), *լոքտանալ* (ՄՄՁ 537, 3468, 10223), *փափաքել* (ՄՄՁ 529, 533, 2295, 3257, 7995), *երեզուսեան, երեզաքանչեան* (*Լոյս*, ՄՄՁ 8533), *գոյք* (*Արդակ*. ՄՄՁ 533, 3170), հավելվում են մեկ-երկու ձեռագրով սահմանափակվող *առագիհանալ* (*Նահատակել*. ՄՄՁ 6624), *բարգոդել* (*Լուտալ*. ՄՄՁ 3824), *բացառագել* (*Անջատել*. ՄՄՁ 6624), *համահաւագ* (*Համանգամայն*. ՄՄՁ 516, 3257), *մագրել* (*Լոգանալ*. ՄՄՁ 533, 3257, 3824), *ողողել, ամոզել* (*Համոզել*. ՄՄՁ 533), *երեզուսեան, երեզաքանչեան* (*Լոյս*. ՄՄՁ 8533), *յանդուքն* (*Ամեղել*. ՄՄՁ 2291), *պաքշոտեալ* (*Պոռնիկ*. ՄՄՁ 3468, 6624), *ջայլանգ* (*Վտանգք*. ՄՄՁ 2281), *տաքնապել* (*Հինել*. ՄՄՁ 2369, 3824. *Վաղվաղակի*. ՄՄՁ 2369, 3170) գուգաձևերը:

Թ/Դ: Տարբերակն արդեն արձանագրված *օղոց*-ն է (*Կապերտ*. ՄՄՁ 540, 582, 3450, 2369), նաև՝ *շանդիկք*-ը (*Բոց*. ՄՄՁ 7995):

Փ/Բ: Զուգաձևը մեկն է՝ *գաղարար* (*Նմանութիւն*. ՄՄՁ 7004):

Չ/Ջ: Նախորդ շրջանից վկայվող *հաչել-հաջել*-ին առադրվում են *հոջակաւոր* (*Հոյակապ*. ՄՄՁ 533), *աստուածավայելուջ* (*Գերունակ*. ՄՄՁ 53), *ճաճանջ* (*Լոյս*. ՄՄՁ 3824, 8606), *յաջաղկոտ* (*Նենգաժէտ*. ՄՄՁ 8533), *շունջ* (*Իրք*. ՄՄՁ 8606), *վայելուջ* (*Պարտ*. ՄՄՁ 3824) գուգաձևերը:

ԺԸ դարից ավանդված գրչագրերում առկա գուգաձևերն են.

Ձայնեղ/չնչեղ խուլ բաղաձայններով.

Բ/Փ: *արփուն* (*Համբակ*. ՄՄՁ 843):

Գ/Ք: *փափաքել* (*Պիտալ, Յանկալ, Ըղձանալ*. ՄՄՁ 566(II), 843), *քագպէ* (*Ռէտիին*), *յանդուքն* (*Ամեղել*. ՄՄՁ 843), *համագոյք* (*Համանգամայն*. ՄՄՁ 9992):

Շնչեղ խուլ/ձայնեղ բաղաձայններով.

Թ/Ն: շանդիք (Բոց. ՄՄՁ 843):

Ճ/Ջ: հակիրջ, կարճավջիռ (Հատու. ՄՄՁ 3450):

Ք/Գ: սայթազել (Բռնադատել. ՄՄՁ 9992):

ԺԳ-ԺԶ դարերից ավանդվածներում *շնչեղ խուլ/ խուլ բաղաձայններով* տարբերակները սահմանափակվում են մեկ զուգաձեվով՝ *փարագ (Պոռնիկ. ՄՄՁ 532, 2371, 4149, 4612) - պարաք (ՄՄՁ 530, 2335, 5919), փղփչացեալ (Այտուցեալ. ՄՄՁ 4612)-պղպլացեալ (ՄՄՁ 8106):*

ԺԷ դարից ավանդվածներում առկա են հետևյալները.

Փ/Պ: Փարագ- պարաք-ին (ՄՄՁ 529, 2019) հավելվում են անչափ - անչապ-ը (Անհաս. ՄՄՁ 545), տրուպ - տրուփ-ը (Խոնարհ. ՄՄՁ 540, 3261, 8606, 10223):

Կ/Ք: խորամանք (Նենգաժետ. ՄՄՁ 2281), ծանաք, հերատուք (Պոռնիկ. ՄՄՁ 545), պաքշոտ (Պոռնիկ. ՄՄՁ 3468), հաք (Մուրկ. ՄՄՁ 2431), Պոռնիք (ՄՄՁ 2369), վաստաք (Ջան. ՄՄՁ 3170), տընանք (Փանաքի. ՄՄՁ 8533):

Ք/Կ: Սահմանափակվում են մեկական գրչագրով և օրինակով՝ թակչիլ (Դուռել. ՄՄՁ 6624), սայթակել (Բռնադատել. ՄՄՁ 682):

Նույնը և՛ Թ/Տ: յադտանդամ (Վիթխարի. ՄՄՁ 533), սադարտափթիթ (Անտառախիտ. ՄՄՁ 6624), Վտխարի (ՄՄՁ 5008):

Ց/Ծ: Ծոծ (ՄՄՁ 10223):

ԺԸ դարից ավանդված գրչագրերում վկայվող զուգաձևեր.

Փ/Պ: շտափել (Հինիներ. ՄՄՁ 3450):

Ք/Կ: սայթակել (Բռնադատել. ՄՄՁ 3450), կնիկ (Նմանութիւն. ՄՄՁ 3450), քարկել (Պիտալ. ՄՄՁ 566 (II)), սիք- սիկ (Իրք. ՄՄՁ 843):

Չ/Ճ: տոճորել (Բոց. ՄՄՁ 9992):

Պ/Փ: փղփչացեալ (Այտուցեալ. ՄՄՁ 9992):

Այլ կարգի բաղաձայնական փոփոխություններով զուգաձևեր

Խ/Ղ: Հովհաննես Մուրադյանի հավաստումով՝ ԺԲ դ. վերջե-

րից ձեռագրերում սովորական է *ղ-ի* և *խ-ի* գրության շփոթը⁵⁶: Լավ-րենտի Հովհաննիսյանի հիմնավորումով էլ Ե դ. մատենագրության մեջ լծորդ հնչյունները ներկայանում են նաև *ղխ/խղ* հնչյունախմբով⁵⁷: Նման դեպքեր վկայվում են **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում. *զեխ* (*Պոռնիկ*. ՄՄԶ 530, 2335, 2371, 5126, 5596, 5919) - *զեխղ* (ՄՄԶ 532, 3197, 4612, 7117) // *զեղխ* (4149), *ընդկողունել** (*Ջնջել*. ՄՄԶ 538, 266, 3937, 4149, 4612, 7250, 8189(I))-*ընդկողունել* (ՄՄԶ 1654, 2371, 2372, 7117), *թախճան* (*Վտանգք*. ՄՄԶ 4612, 5126, 5596)-*թաղճանք* (ՄՄԶ 4149)//*թաղխճանք* (ՄՄԶ 2371), *թախանձք* ** (ՄՄԶ 530, 538, 3197, 5919, 7250) - *թաղանձք* (ՄՄԶ 532), *ժխոր* (*Խազմ*. ՄՄԶ 530, 532, 2371, 4612, 5126, 5596, 5925) - *ժղոր* (ՄՄԶ 2335), *ի ձոխ* (*Առիշեղ*. ՄՄԶ 530, 532, 538, 266, 2335, 5925) - *ի ձող* (ՄՄԶ 7250, 8189 (II)), *յաղթանդամ* (*Վիթխարի*. ՄՄԶ 266, 530, 532, 2335, 2371, 4149, 4612, 5126, 5596) - *յախթանդամ* (ՄՄԶ 5596), *վախճան* (*Ծագք*. ՄՄԶ 2371, 4149, 5596, 5919)- *վաղճան* (ՄՄԶ 532, 5126) // *վաղջան* (ՄՄԶ 4612) // *վաղխճան* (ՄՄԶ 530):

ԺԷ դարից ավանդվածներում առկա են արդեն արձանագրված *ընդկողունել* (ՄՄԶ 2431, 3170, 3261), *վաղճան* (ՄՄԶ 268, 834, 3824, 8533), *յախթ* գուգաձևերը. վերջինս նաև՝ *յախթել* (*Բոնադատել*. ՄՄԶ 2431): Նոր տարբերակներից են՝ *աղքատ-ախքատ* (*Փանաքի*. ՄՄԶ 3170), *խախտել-խաղտել* (*Յարել*. ՄՄԶ 2431), *աղջամուղջ-աղջամուխջ* (*Խաւար*. ՄՄԶ 540, 545), *ձախկել* (*Հարկանել*. ՄՄԶ 3261), *ուխտաղիր-ուղտաղիր* (*Գութ*. ՄՄԶ 545), *սխալ-սղալ* ⁵⁸ (*Տարատողական*. ՄՄԶ 529). վերջինի՝ տարբեր հոլովաձևերով վր-

⁵⁶ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 212: Տե՛ս նաև ԱՄԳՀՊ, հ.Ա, էջ 131:

⁵⁷ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 20:

* Ճիշտը՝ *ընդ կոխ ունել* «ոտնատակ տալ, կոխկոտել». ՄՀԲԲ-ում՝ «հագուադեպ բառ կամ նշանակություն» նշումով (ՄՀԲԲ, հ. II, էջ 457):

** *Թախանձք*-ն ու *թախճանք*-ը արձանագրված են նույն ՀԲԾ-ում. առաջինը, ինչպես և *թաղանձք*-ը թերևս սխալագրություն են:

⁵⁸ Ըստ Ն. Մուրադյանի՝ «Այսպիսի գրչություններում պարզապես գործ ունենք լր-ծորդ հնչյուններն արտահայտող տառերի շփոթի հետ» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 132):

կայություններ է արձանագրում Գևորգ Ջահուկյանը Կիլիկիայում, Երզնկայում գրառված ԺԳ դ. հիշատակարաններում⁵⁹:

ԺԴ: ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում միակ օրինակը միջին պարսկերենից փոխառյալ *նժդեհ*-ն է (*Փանաքի*. ՄՄՁ 530, 2371, 4612, 5126)՝ *նշդեհ** (ՄՄՁ 532, 538, 2335, 3197, 3286, 4149, 5596, 7004) հնչյունական զուգաձևերով:

ԺԵ դարից ավանդվածներում *նժդեհ*-ը վկայվում է միայն բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 516-ում և բառերի այբբենական դասավորությամբ ՄՄՁ 268, 533, 537, ՄՄՁ 3824-ում՝ *նժտեհ* զուգաձևով:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում առկա է *նշդեհ*-ը:

ՁՄ: Ջզոն հենաբառով ՀԲԾ-ի *զզոն* և *զգաստ* բառերը *սզոն* և *սզաստ** հնչյունական զուգաձևերով արձանագրվում են միայն **ԺԴ** դարից ավանդված ՄՄՁ 3937-ում (57ա), բայց և նույն ձեռագրում՝ նույն ՀԲԾ-ում, առկա է *զզոյշ* բառը:

Խաւարագգած-ը (*Խաւար*. ՄՄՁ 530, 532, 2335, 2371, 4149, 4612, 5126...) *խաւարասգած* զուգաձևով է միայն ՄՄՁ 5596-ում (ՄՄՁ 8189(Ի)-ում՝ *խաւարգած* սխալագրությունն է):

Այդ շարքում արձանագրելով նաև *աստուածագգեստ* (*Աստուածագան*. ՄՄՁ 530, 532) -*աստուածասգեստ* (ՄՄՁ 266, 538, 2335, 3197, 7250) զուգաձևերը՝ հարկ է նշել, որ մի քանի գրչագրում՝ *Աստուածագան* հենաբառով ՀԲԾ-ում, վկայվում է *աստուածագգեացր* (ՄՄՁ 2371, 4149, 4612, 5126, 5596):

ԺԷ դարից ավանդված բոլոր գրչագրերում *զզոն*, *զգաստ* և *խաւարագգած* տարբերակներն են. *Ջզոն* հենաբառով ՀԲԾ-ն չկա

⁵⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջ 23:

* Առկա է Ե դ. գրաբարում. տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 31:

* *Սզաստ*-ն առկա է Ե դ. գրաբարում (Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 21): Բառասկզբի նախաբաղաձայնական դիրքում *զ* -ի իլացման օրինակներ, ըստ Հ. Մուրադյանի, կարելի է գտնել հիշատակարաններում (Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 248-249): Ռ. Ղազարյանն այն հիշատակում է միջինհայերենյան հնչյունավորական երևույթների շարքում՝ «մասնակիորեն» նշումով (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 199):

ՄՄՁ 3488, 5008, 7004, 7995-ում: *Աստուածասգեստ*-ն առկա է ՄՄՁ 2019-ում, և չկա ՄՄՁ 228-ում:

Մ/Խ: Միակը նաև Ե դ. մատենագրության մեջ վկայվող *ղը-րախտ (Բուրաստան*. ՄՄՁ 530, 2335, 5919, 5925)-*ղրաստ* գուգաձևն է⁶⁰ (ՄՄՁ 2371, 4612). ՄՄՁ 2371-ում այն նախորդում է *ղրախտ*-ին, ՄՄՁ 4612-ում առկա է առանց *ղրախտ* հոմանիշի:

ԺԷ դարից ավանդվածներում *ղրաստ*-ն արձանագրվում է ՄՄՁ 267, 513, 2281, 2370 -ում (ՄՄՁ 3257-ում՝ *ղրաստ* սխալագրությունն է):

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում՝ *ղրախտ (Բնութին)*:

Լ/Ռ: *Յախուրնախաւս* (ՄՄՁ 2372, 4612, 4149, 5919, 5925, 7117) - *Յախուրնախաւս* (ՄՄՁ 266, 538, 2335, 3197, 8106, 8198(II)). *ղեկավար* և *փարագ* բառերը *ղեկավար* և *փառագ* գուգաձևերով են վկայվում ՄՄՁ 3197-ում, մինչ *յախուրնախաւս*-ը այդ գրչագրում արձանագրվում է նաև *ր*-ով՝ *յախուրնախաւս*:

ԺԷ դարից ավանդված միայն երկու գրչագրում է առկա *յախուրնախու* (ՄՄՁ 529, 9992): Վկայվում է նաև *պրծաւ - պոծաւ (Ճոռոպրեաց*. ՄՄՁ 2431, 3170) գուգաձևը:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 3450-ում հիշատակվում են *խտտոնակ (Առիշէղ)*, ՄՄՁ 843, 9992-ում՝ *յախուրնախու* տարբերակները:

Ռ>ր հնչյունափոխություն առկա է հայերենի բարբառներում⁶¹ և միջին հայերեն գրված մի շարք ձեռագրերում⁶²: Ըստ Գևորգ Զահուկյանի՝ *ռ*-ի և *ր*-ի շփոթություն ոչ նախաբաղաձայնական դիրքում նկատվում է Կուտիի, Հաճնի, Թավրիզի, Թբիլիսիի, Տումիի, Բուրդուրի և Մարաղայի բարբառներում, առավելապես «արևելահայ» բարբառախոս վայրերում, նաև ԺԲ - ԺԵ դդ. հիշատակարաններում⁶³:

⁶⁰ *Ղրաստ*-ի մասին տե՛ս 212-րդ էջում:

⁶¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջք 51-62, 48:

⁶² Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 222:

⁶³ Տե՛ս Գ. Զահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջք 17, 22, 28:

Հովհաննես Մուրադյանը սրանք համարում է «բանավոր լեզվի առանձին տարբերակներում կատարված փոփոխություններ...», երբեմն նաև անհատական լեզվի առանձնահատկություններ, որոնք գրիչ-փորագրողների և արտագրողների կողմից մուծվել են գրավոր լեզվի մեջ» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 141):

Լ/Ղ: Լ-ի և ղ-ի գրության շփոթ արձանագրելով «մեզ հասած առաջին իսկ ձեռագրերում»՝ Հովհաննես Մուրադյանը դրանց փոխանցումները նշում է մինչև ԺԲ դ. վերջերը՝ ավելի ուշ շրջանի համար այդ երևույթը համարելով եզակի արտահայտություն⁶⁴:

Այդուհանդերձ, **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում վկայվում են *հողեալ*⁶⁵ (*Կորացեալ*. ՄՄԶ 530, 2335, 5919) - *հոլեալ* (ՄՄԶ 266, 538, 3197, 5596, 7250), *մալել* (*Ծամել*. ՄՄԶ 530, 2335, 5919)-*մաղել* (ՄՄԶ 7117) գուգաձևերը:

ԺԷ դարերից ավանդվածներում գերակշռող գուգաձևը *հոլովեալ*-ն է (ՄՄԶ 268, 2330, 2381, 3257, 3286, 3450, 5995, 8563). *հոլեալ*-ը (ՄՄԶ 536, 2281, 3488, 7995) և *հողեալ*-ը (ՄՄԶ 529, 2019, 3200) համարյա հավասարաչափ են վկայվում (*հղեալ*-ը (ՄՄԶ 7004) և *հոշեալ*-ը (ՄՄԶ 6097) սխալագրություններ են): Առկա է միայն *աւոռոցել*-ը (ՄՄԶ 529, 2369, 3200, 6097):

ԺԸ դարից ավանդվածներում առկա են նաև *հոլովեալ* (ՄՄԶ 566 (II), 3450, 9166), *հովեալ* (ՄՄԶ 843) և *հոշեալ* (ՄՄԶ 9992) գուգաձևերը:

Ինչպես արդեն նշվել է, ՄՄԶ 5596-ում հանդիպում է *հոլեալ*-ը: Հրայր Աճառյանը *հոլ*-ի համար նշում է. «Պարզ արմատը հնիս. *pel-*, *pol-* «բանալ, տարածել, պարզել, փռել» տալիս է հյ. *հոլ* և *հող ...*» (ՀԱԲ, հ. Գ, էջ 109. ընդգծ.՝ Ն. Հ.): Հետևաբար կարելի է ընդունելի համարել և՛ *հոլեալ*-ը, և՛ *հողեալ*-ը՝ «արհամարհված, անպիտան, անարգ» իմաստներով, քանի որ փոփոգ, փոփած մարդը արհամարհված է, անպատիվ (անկախ այն հանգամանքից, թե ինչ-որ

⁶⁴ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջք 211, 206 -217:

⁶⁵ Ըստ ՀԱԲ-ի՝ *հողեալ*-ը «ընկեցեալ» իմաստով «ունի միայն Բառ. երեւմ.» (ՀԱԲ, հ. Գ, էջ 112):

մեկի առջև է փոփում-տարածվում կամ փովել- տարածվել, ասել է՝ ծառայում, սպասավորում, թե ինքն է փոված-մեկնված, այսինքն՝ անհոգ, անդարդ-անցավ ապրում):

Այս գուգաձևերի առիթով հարկ է, թերևս, անդրադառնալ նաև ԺԳ-ԺԷ դարերից ավանդված գրչագրերում՝ *Լոգանալ. մաքրել. լուանալ. սրբել. լիղել. մկրտել* ՀԲՇ-ում, ձայնավորային փոփոխություններով արտահայտվող *լիղել*-ին: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *լող* («լողալու գործողությունը») արմատի «ընդարձակ զարգացում»-ը «երևում է *լող, լոյղ, լիղ, և* սրանցից ածանցուած *լօղ, լուղ, լեղ* ձևերով, որոնք գրուելով նաև նախաձայն *ղ*-ով՝ տալիս են *ղող, դոյղ, դիղ, դօղ, դուղ, դեղ* ձևերը (ընդամենը 12 ձև).... (այս բոլորը երեք բայական լծորդությամբ՝ *-ել, -իլ, -ալ*)....» (ՀԱԲ, հ. Բ, էջ 292)⁶⁶: Գրչագրերում առկա են ոչ միայն նշված *լողանալ* (ՄՄՁ 2331)*, *լիղալ* (ՄՄՁ 532, 536, 2281, 2291(I)), 2431, 3286, 3488, 5008, 5995, 4149, 5925, 7995, 8198(II)), *լիղել* (ՄՄՁ 267, 268, 516, 533, 537, 538, 540, 545, 682, 1654, 2330, 2370, 2371, 2372, 2381, 3170, 3197, 3257, 3823, 3468, 4612, 5126, 5596, 6624, 7004, 7014, 7117, 7250, 8533, 8563, 8606, 10223), *լօղալ* (ՄՄՁ 2295), *լուղալ* (ՄՄՁ 3937), *դիղալ* (ՄՄՁ 8198 (I)), *դիղանալ* (ՄՄՁ 6097), *դուղանալ* (ՄՄՁ 529, 2369, 5919), այլև *ղաղանալ* (ՄՄՁ 530, 2335), *լիղալ* (ՄՄՁ 8106) գուգաձևերը:

ԺԸ դարից ավանդվածներում՝ *Լոգանալ* հենաբառով ՀԲՇ-ում, մեկական են վկայվում *լիղել*-ը (ՄՄՁ 566(II)), *լիվալ*-ը (ՄՄՁ 843), *դիղանալ*-ը (ՄՄՁ 9992):

Ն/Մ: *Սնրիծ(ք)* (*Սուրք*. ՄՄՁ 532, 538, 2371, 4612, 5126)- *ամրիծ* (ՄՄՁ 530, 2335, 4149, 5596, 5919, 7250, 8198(I)), *բամբասել* (*Լուտալ*. ՄՄՁ 530, 2335, 2371, 4149, 4612, 5126, 5596, 5919)- *բանբասել* (ՄՄՁ 532, 3937, 4612):

ԺԷ դարից ավանդվածներում *ամրիծք*-ն առկա է երեքում (ՄՄՁ 529, 2019, 3170), *բանբասել*-ը՝ ՄՄՁ 529, 3824-ում: ՄՄՁ 6624, 7004-ում *բարբասել*-ն է: Մեկական են վկայվում *անպրոպ*-ը (ՄՄՁ

⁶⁶ Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 421:

* Ընդգծվածները ԺԷ դարից ավանդված գրչագրեր են:

529), *անփոփելի*-ն (*Հասանելի*. ՄՄՁ 533, 3286) և *շանքուշ*-ը (ՄՄՁ 3286)⁶⁷:

Հ/Խ: *Պահեալ* (ՄՄՁ 3937, 4612) - *Պախեալ* (ՄՄՁ 4149, 5596, 5925, 8106, 8198(II)). *նիխար* բառն է վկայվում ՄՄՁ 5126-ում (բառի մյուս զուգաձևերը տե՛ս 70-րդ էջում): Ըստ Գևորգ Չահուկյանի՝ «ոչ - տարնմանական **խ-հ**» է առկա Ագուլիսի բարբառում⁶⁸:

Հ > խ հնչյունափոխությունը, ինչպես նշում է Հովհաննես Մուրադյանը, հատուկ էր միայն «Վասպուրականի և նրան հարող շրջանների հայերեն խոսվածքներին» և ոչ տիպական միջին գրական հայերենին (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջք 133-134)⁶⁹:

Այս դարից ավանդված գրչագրերում *պախեալ* չկա. գերակշռում է *նիխար*-ը:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 3450-ում նույնպես առկա է *նիխար*-ը:

Բաղաձայնների անկումով և հավելումով զուգաձևեր

Բ/Փ: **ԺԳ-ԺՁ** դարերից ավանդված գրչագրերում առկա են *Շամբուշ* (ՄՄՁ 532, 2371, 2372, 4612, 7250...) - *Շամուշ* (ՄՄՁ 3937), *թմբրեալ* (*Շամբուշ*, *Դեզերել*. ՄՄՁ 538, 2371, 4149, 4612, 5126, 5596) - *թմրեալ* (ՄՄՁ 532, 5596) զուգաձևերը*:

⁶⁷ Այս զուգաձևերի (դրանք առկա են ՆՀԲ-ում. հ. I, էջք 56, 123, 430, 436) առկայությունը պայմանավորվում է փոխազդեցական հնչյունափոխությամբ: Ինչպես նրշվում է գիտական քերականություններում, շրթնային պայթյականի առկայությամբ *ն* -ն առնմանությամբ փոխվում է *մ* -ի:

⁶⁸ Տե՛ս Գ. Չահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջք 47, 59:

⁶⁹ Ատորական աղբյուրներում, ինչպես նշում է Լ. Տեր-Պետրոսյանը, «թեն սվո՛րաբար... հայերեն հ-ին համապատասխանում է հ..., սակայն Mlex ... և Xethum ... բառերը խախտում են այս օրինաչափությունը և հավաստում միջին հայերենում հ>խ մասնակի (Վասպուրականին հատուկ) հնչյունափոխության առկայությունը» (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, 3, 1974, էջ 153): Հայերենի բարբառներում *հ-խ* համապատասխանության մասին մանրամասն տե՛ս Վ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 63-75:

* Չուգաձևերն արձանագրված են Ե դ. գրաբարում (Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 29):

ԺԷ դարից ավանդվածներում գերակշռողը *շամբուշ*-ն է. մեկական են վկայվում *շամիռուշեղ*-ը (ՄՄՁ 3257) և *շամիռուշեղ*-ը (ՄՄՁ 5995):

Մյուս գուգաձևերից են հետևյալները. *թմբրեալ* (ՄՄՁ 237, 238, 533, 537, 3286)- *թմրեալ* (ՄՄՁ 516, 2281, 3468), *թմբրեկ* (ՄՄՁ 2381, 3488, 5008, 6097)-*թմրեկ* (ՄՄՁ 537, 3261, 10223, 3488, 7004)**, *թմբրիլ* (ՄՄՁ 267, 2370, 2431, 5008, 5996, 6624, 7955) -*թմրիլ* (ՄՄՁ 513, 2281, 3257):

ԺԸ դարից ավանդվածներում նույնպես գերակշռողը *շամբուշ*-ն է: ՀԲՇ-ում առկա է *թմբրեալ*-ը:

Գ/Օ: **ԺԳ** դարից ավանդված գրչագրերում *Գեթ//Գէթ - Եթ // Էթ*-ի մասին արդեն նշվել է:

Բաղաձայնների անկում-հավելումով մյուս գուգաձևերը մեծ մասամբ վկայվում են Ե դ. գրաբարում: Այսպես՝

Ը/Օ: **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդվածներում *յավերժ* (*Միշտ*. ՄՄՁ 2335, 5919) // *յավերժ* (ՄՄՁ 530) - *յավեժ* (ՄՄՁ 4612) // *յավէժ* (ՄՄՁ 538, 1654, 2371, 4149, 7117), *Պարհեկ* (ՄՄՁ 1654, 2371, 2372, 7117)-*Պահեկ* (ՄՄՁ 266, 532, 538, 2335, 3197, 5126, 7250, 5919, 8198(I)) գուգաձևերն են:

Ը-ի հավելում. *թաշկինակ* (*Կարպետ*. ՄՄՁ 532, 238, 1397, 5925, 7250) - *թարշկինակ* (ՄՄՁ 530, 1654, 2371, 4149, 5596, 8106). *թարշինակ* գուգաձևը (ՄՄՁ 2335, 2372, 4612, 5126, 7117, 8198(I)) ՆՀԲ-ն արձանագրում է իբրև «ռամկօրէն» (h. I, էջ 799): *Բաժամտեկ* (*Տարակուսեկ*. ՄՄՁ 2371, 4149, 4612, 5126, 8198(II)) -*բարժամտեկ* (ՄՄՁ 532, 538, 1397, 5596), *տաժանեկի* (*Դլխիթ*. ՄՄՁ 2335, 2371, 4612, 4149, 5126, 5919)-*տարժանեկի* (ՄՄՁ 266, 530, 532, 538)՝ վկայված նաև *տարժանեկ* (ՄՄՁ 7250), *տարժանեկին* (ՄՄՁ 5596) տարբերակներով. վերջինս, ամենայն հավանականությամբ, կազմվել է ՀԲՇ-ում նախորդող *դժուարին* բառի նմանությամբ. հաջորդող *անհանդուրժեկին* նույնպես բառավերջում -ն հավելումով է:

ԺԷ դարից ավանդված՝ բառերի այբբենական դասավորությամբ գրչագրերում չկա *Միշտ* հենաբառով ՀԲՇ: Մյուսներում առկա

** Ընդգծված ձևազրահամարներում արձանագրվում է նաև *թրմիլ* ձևը:

են *յաւերժ* (ՄՄՁ 529, 3200) // *յօերժ* (ՄՄՁ 2369) - *յաւեժ* (ՄՄՁ 516, 267, 2019, 2281) // *յօեժ* (ՄՄՁ 536, 7014), *Պահեղ* (ՄՄՁ 529, 2295, 2369, 3200) // *Պահեաղ* (ՄՄՁ 540, 2019, 2281, 2291, 2331, 2431, 3286, 6097)-*Պարհեղ* (ՄՄՁ 516, 2330, 2370, 2381, 3170, 3257, 3488, 5008, 5995, 6624, 7004, 7014, 7995, 8563, 8606) գուգաձևերը: Գերակշռում է ՆՀԲ-ում իբրև «ոամկօրէն» նշված *թարշինակ*-ը, միայն ՄՄՁ 2331-ում է հանդիպում *թարշկինակ*-ը:

Ը-ի հավելում է առկա արդեն արձանագրված *տարժանելի* (ՄՄՁ 2295) գուգաձևում:

Ն-ի հավելումով է ԺԴ դարից և ԺԵ դարից ավանդված գրչագրերում վկայվող *թափառնական*-ը (*Փանաքի*. ՄՄՁ 536), որն առկա է նաև Ե դ. գրաբարում⁷⁰: Մեկական են արձանագրվում *բանբանսել*-ը (ՄՄՁ 3937) և *փառանգնաւոր*-ը (ՄՄՁ 3468): Ն-ի անկումով է առկա *երդմագանց*-ը (*Ամեղել*. ՄՄՁ 545):

ԺԸ դարից ավանդվածներում արդեն արձանագրված *տարժանելի*-ն (ՄՄՁ 9992) և *բարժամտել*-ն են (ՄՄՁ 843, 9992): ՄՄՁ 843-ում առկա է *թաշկինակ*-ը, այլև *ն*-ի հավելումով *Թափառնական*-ը, ՄՄՁ 3450, 9166-ում՝ *ր*-ի հավելումով և *կ*-ի անկումով *թարշինակ* գուգաձևը: Ն-ի անկումով՝ *աճոռնի*-ն (*Վիթխարի*. ՄՄՁ 9992):

Հ/Յ: ԺԳ-ԺՁ դարերից ավանդված բոլոր գրչագրերում (այլև հետագա դարերից ավանդվածներում)՝ *Ըտոր* տարբերակն է, որը ՆՀԲ-ն վկայում է «Հին քեր.»-ից և հղում *Հոետոր*-ը (հ. II, էջ 903), *հսկայ** (*Վիթխարի*. ՄՄՁ 532, 2335, 2371, 4612, 5126, 5925) - *սկայ** (ՄՄՁ 530, 5919, 8198 (II)) // *սկա* (ՄՄՁ 538, 4149, 5596), *Հիւթ* - *իւթ* (տե՛ս 82-րդ էջում):

ԺԵ դարից ավանդված և բառերի այբբենական դասավորութայամբ ՁԲ-ներում գերակշռող *հսկայ*-ին առադրվում են նաև *սկայ* (ՄՄՁ 529, 2019, 2369, 2431) // *սկա* (ՄՄՁ 6097) // *ըսկայ* (ՄՄՁ 2295) տարբերակները:

⁷⁰ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 28:

* Աստղանիշով գուգաձևերն առկա են Ե դ. գրաբարում (ՆՀԲ, հ. II, էջք 128, 718):

Այս դարի գրչագրերում վկայվում են առանց *հ-ի` աղթանդամ* (*Վիթխարի*. ՄՄՁ 5995), *անդուզն* (*Ամեդել*. ՄՄՁ 268), *արածիզն*, *արամնայարար* (*Միշտ*. ՄՄՁ 3257), *ափշտակումն* (*Լուծումն*. ՄՄՁ 8533, 5995) տարբերակները:

Հ-ի հավելումով է *ապաշխարհել-ը* (*Ձղջանալ*. ՄՄՁ 545):

Միայն **ԺԸ** դարից ավանդված ՄՄՁ 9992-ում և ՄՄՁ 843-ում առկա են համապատասխանաբար *սկա-ն* և *սկայ-ը*:

Յ/Օ: Բառավերջում *յ-ի* անկում արձանագրելիս գրեթե միշտ առկա է նաև *-յ*- ով զուգաձևը, այնպես որ կարելի է առանձնացնել բառավերջում *-յ/Օ* հնչյունական զուգաձևերը, ինչպես արդեն նրշված *հսկայ-սկա*, *յարակայ-յարակա*, *փիլիսոփայ-փիլիսոփա*, այնպես էլ այլ օրինակներում:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում միջձայնավորային դիրքում *-յ-ի* անկումով զուգաձևերն են *գռանալ* (*Բնաւորել*. ՄՄՁ 3937), *հսել* (*Դիտել*. ՄՄՁ 3937), *Հոակապ* (ՄՄՁ 5925, 8198 (II)), *տըւընջենաին* (*Լոյս*)//*տունջենաին* (ՄՄՁ 4612)//*տւնջենաին*⁷¹ (ՄՄՁ 538). մյուս գրչագրերում *յ-*ն առկա է:

ԺԷ դարից ավանդվածներում` *Հոակապ* (ՄՄՁ 2369), *հրամաել* (*Ասել*. ՄՄՁ 2019), *նսել* (*Հայցել*. ՄՄՁ 2019 5008), *վկաութիւն*⁷² (*Պիտաութիւն*. ՄՄՁ 6624), *միայնգաման* (*Համանգաման*. ՄՄՁ 516):

Յ-ի անկում է առկա բառասկզբում` *անդուզն* (*Ամեդել*. ՄՄՁ 268). մյուս գրչագրերում *յանդուզն* զուգաձևն է:

Բառամիջյան դիրքում *յ-ի* հավելում է արձանագրվում **ԺԳ-ԺԷ** դարերից ավանդված ՄՄՁ 4612, 8601-ում. *աշխարհայլուր* (*Հոյակապ*), *որովայնայկոչ* (*Վհուկ*), *խորայմանկել* (*Պատրուակել*), *մենայմարտել* (*Նահատակել*), *խորայփիտ* (*Ծոցք*), *բազմայշառաւեղ* (*Անտառախիտ*), *հակայճառ* (*Խազմ*), *արձայգանգք* (*Ձայն*) և *եայպատիւ* // *էայպատիւ* (*Հիւղական*, *Հիւինակ*):

⁷¹ Է. Մկրտչյանը ԺԵ դ. հիշատակարաններում արձանագրում է *տուընջենի* հոլովաձևը. տե՛ս Է. Մկրտչյան, նշվ. աշխ. էջ 96:

⁷² Բառն արձանագրել է Գ. Ջահուկյանը ԺԴ-ԺԵ դդ. հիշատակարաններում (Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջ 28):

Յ-ի հավելումներն առավել շատ են **ԺԷ** դարից ավանդվածներում. ՄՄՁ 516-ում դրանք հավելվում են մասնավորապես բարդ և ածանցավոր բառերում *ա* հոդակապից հետո՝ *զճայգրութիւն (Նմանութիւն), կենդանայգիր, հրաշայփառ, լուսայկիզն (Լոյս), բազմաճառագաթ, խաւարայբորբ (Խաւար), խորայխորհուրդ, քոյայբորբեալ (Պատրուակեալ), համայգոյգ, համայհաւագ, միայհադոյն, հակայճառ, հակայդարձ (Խազմ), մենայմարտել (Նահատակել), սնայպարծ, սնայփառ (Սյտուցեալ), Յախուռնայխօս, պաճուճայբան, տարայմերժել (Ձգել) և այլն, այնպէս էլ հայնգոյն, ըմբոյն (Արդակ), խորայմանգեալ, միայնգաման* բառերում⁷³: Այսպիսի հավելումներ կան ՄՄՁ 5008-ում (*խորայմանկ, հայնգոյն, հրայժարել, նաւայվար, մանրայխուզել, կիսայգոռոզ, գերայմիտ, անժամայնակ, հրայպարակել, իստայվիզ*), ՄՄՁ 3261-ում (*բազմայբեր (Հոյակապ), ապայգովել (Լուտալ)*), ՄՄՁ 2295-ում (*էայպատիւ*), ՄՄՁ 6624-ում (*տարայկուսանք (Դիխիթ), քրիստոսայփառ (Աստուածագան)*), (*հողմայարոյցք (Չայն), տերեւայխիտ (Անտառախիտ)*), *գոյնեա (Գէթ)*, ՄՄՁ 7995-ում (*լուսայկիզն (Լոյս), համայհաւաք (Համանգամայն), անժամայնակ (Անհաս)*), ՄՄՁ 2331-ում (*խաւարամայծ (Խաւար)*), ՄՄՁ 7014-ում (*ուղփայճեմ (Լոյս)*), ՄՄՁ 8533-ում (*դատայվճիռ (Անհաս)*):

ԺԳ-ԺԶ և ԺԷ դարերից ավանդված գրչագրերում (ՄՄՁ 536, 2281, 2431, 3286, 5008, 7004) համարյա հավասարաչափ է առկա բառասկզբում *յ/Յ* զուգաձևերից *ապահով (Հեղինակ. ՄՄՁ 1654, 2371, 2372, 5126, 7117)*- *յապահով*-ը (ՄՄՁ 532, 538, 3937, 4612, 4149, 5596, 7250):

Բառամիջյան դիրքում *յ*-ի հավելումով բառերը շատ են նաև **ԺԸ** դարից ավանդված ՄՄՁ 9166-ում՝ *բազմայգան (Բազմայպատիկ), բազմայշաւիղ (Անտառախիտ), բոնայդատել (Հայցել), ապայգովել (Լուտալ), միայնգամայն (Համանգամայն), իմաստայսեր (Բե-*

⁷³ Ռ. Ղազարյանը համանման երևույթ է արձանագրում «միջին հայերենի գրավոր աղբյուրներում» վկայված բարդություններում (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 132-133): Նույն երևույթն է առկա Զ. Ագուլեցու «Օրագրության» մեջ (Վ. Կաժյան, նշվ. առեն., էջ 440):

տոր), մանկայտիս (Համբակ), իմաստայսեր (Բետոր), մանկայգիտիք (Պոռնիկ), բազմայբեր (Հոյակայա):

ՄՄՁ 556(II)-ում Հրճուել ՀԲՇ-ում, առկա է իս-ի անկումով *բախճանակ* բայը, որը Ստեփան Մալխասյանցը համարում է «հագուադէպ բառ» (ՄՀԲԲ, հ. IV, էջ 453):

Դրափոխությանը և առանց դրափոխության գուգաձևեր

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում դրանց գոյությունը պայմանավորված է *բ*-ի դիրքով. *անպահր* (ՄՄՁ 1654, 2371, 2372, 5126, 5596) - *Անպարհ* (ՄՄՁ 266, 532, 538, 3197, 3937, 4149, 4612, 5925, 7117, 8198 (II)) // *Անպարհան* (ՄՄՁ 8198(I)), *դարովել* (*Լուտայ*. ՄՄՁ 2371, 4149, 4612, 5126, 5596) - *դարովել* (ՄՄՁ 532, 538, 7250, 8106), *Կարպետ* (ՄՄՁ 266, 532, 2335, 5596, 4612, 5919, 5925, 7250, 8198(II)) // *Կարպետ* (ՄՄՁ 3197)- *Կապերտ* (ՄՄՁ 530, 538, 1654, 2371, 2372, 3937, 4149, 5126, 7117, 7250, 8106), *կորանկեալ* (*Կորացեալ*. ՄՄՁ 4612)* - *կորակնեալ* (ՄՄՁ 2371):

ԺԷ դարից ավանդվածներում գերակշռում է *դարովել*-ը. *դարսովել*-ն առկա է ՄՄՁ 516, 2295-ում: Մեկ անգամ *ժխոր*-ի փոխարեն վկայվում է *խժոր*-ը (*Խազմ*. ՄՄՁ 3824): *Կարպետ* - *Կապերտ* գուգաձևերից գերակշռում է վերջինը. առկա են *կարպիտ*-ը (ՄՄՁ 2431) և *կարապետ* սխալագրությունը (ՄՄՁ 6097):

ԺԸ դարից ավանդվածներում նկատվում է նույն երևույթը՝ առավել շատ է *դարովել*-ը. *կարպետ* - *կապերտ* գուգաձևերին հավելվում է *կարապետ* սխալագրությունը. սրանք մեկական են՝ համապատասխանաբար ՄՄՁ 9992, 3450 և 843-ում:

Բ. Ձևաբանական գուգաձևեր

Գևորգ Զահուկյանի արձանագրած այս գուգաձևերից **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում առկա են «բարբառային» *լոսել*⁷⁴ և *պողել*//*պառել*-ը՝ գրական *լեսել* և *պեղել* բայերի «ձայնդարձա-

* ՄՄՁ 5596-ում *կորանգանել* տարբերակն է:

⁷⁴ Միջին հայերենում՝ *լեսուլ>լոսել* բառային տարբերակներում, *ե>ո* ձայնավորների փոփոխություն է արձանագրում Ռ. Ղազարյանը (Ռ. Ղազարյան, նշվ. աշխ.,

յին տարբեր աստիճաններ» (տե՛ս ա՛ն՝ ՀԼՊՆԺ, էջք 254-255, 277): Առաջինի համար գերակշռում է գրական բայի զուգաձևը՝ *լեսել* (*Ծամել*. ՄՄՁ 2335, 2371, 4612, 5925, 5919, 5596) - *լոսել* (ՄՄՁ 532, 2361. *լսել* սխալագրությունն է ՄՄՁ 266, 538, 1654, 7250-ում), *պեղել* բայն ընդամենը երկու գրչագրում է՝ *պեղել* (ՄՄՁ 2371, 4149) - *պողել* (ՄՄՁ 266, 538, 3197, 3937, 4612, 5596, 7250, 8198(I)) // *պաղել* (ՄՄՁ 532): *Ծամել* հենաբառը չկա ՄՄՁ 4149, 8106, 8198 (II)-ում, *Պեղել* (*Յանկել*)-ը՝ ՄՄՁ 2335, 5919, 5925, 8198(II)-ում:

Միևնույն գրչագրերում ձայնդարձային զուգաձևեր չկան:

ԺԷ դարից ավանդվածներում գերակշռում են հետևյալները՝ *լեսել* (*Ծամել*. ՄՄՁ 267, 516, 529, 530, 2281, 2369, 2431, 5925, 5919, 5596 - *լոսել* ՄՄՁ 268, 532, 533, 537, 540, 545, 2361. *լսել* սխալագրությունն է առկա ՄՄՁ 2019, 2331, 2431, 7014-ում) և *պեղել* (ՄՄՁ 267, 268, 516, 533, 536, 537, 2330, 2370, 2381, 5008, 8533 - *պողել* ՄՄՁ 2281, 2291, 2295, 3286, 6097): *Լեսել*-ը չկա ՄՄՁ 6097, 8533, *Պեղել* (*Յանկել*)-ը՝ ՄՄՁ 529, 2019, 2335, 5919, 5925, 8198(II)-ում: Ձեռագրահամարներից նկատելի է, որ ձայնդարձային առաջին զուգաձևերը միևնույն ձեռագրերում են:

ԺԸ դարից ավանդվածներում առկա են *լոսել* (*Ծամել*. ՄՄՁ 3450, 9166) և *պեղել* (*Անջատել*. ՄՄՁ 566(II), 3450, 9166) - *պողել* (ՄՄՁ 843, 9992) տարբերակները:

ԺԳ-ԺԶ դարերից ավանդված գրչագրերում *հիմքակազմ զուգաձևեր* առկա է միայն բայարմատ-կատարյալի հիմք (*Օ/ա*) տարբերակով զուգաձևը, այն էլ՝ միայն մեկ օրինակով՝ *հիմնեալ* (*Կառուցեալ*. ՄՄՁ 2371, 5126)-*հիմնացեալ* (ՄՄՁ 530, 2335, 4149). ՄՄՁ 8106-ում արձանագրված է պատճառական հիմքով *հիմնացուցեալ*-ը (59ա):

ԺԷ դարից ավանդվածներում՝ նշված տարբերակով զուգաձևը միայն մեկ անգամ է վկայվում՝ *հիմնեալ* (*Կառուցեալ*. ՄՄՁ

էջ 191): Ըստ Է. Աղայանի՝ բարբառներում լայնորեն գործածվող *լոսել*-ի՝ «մանրել» իմաստային անցումը «կապված է արմատի հնագույն (հնդեվրոպական) «տրորել» նշանակության հետ»։ Է. Աղայան, Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 75-76:

267, 516, 536, 2281, 2330, 2370, 2381, 2431, 3257, 5008, 6624, 7004, 7995, 8563) - *հիմնացեալ* (ՄՄՁ 7014). նույն ՀԲՇ-ում առկա են նաև *ամացել* (ՄՄՁ 2369, 3200) սխալագրությունը և *ամրացեալ* (ՄՄՁ 2019), *արմացնել* (ՄՄՁ 529), *ամրացնել* (ՄՄՁ 6097) տարբերակները (վերջին երկուսը պատճառական *-ցն+ել* վերջավորությամբ միակ բայերն են սույն գրչագրերում):

Գ. Բառակազմական զուգաձևեր

*Սծանցային զուգաձևերը*⁷⁵ վերաբերում են միայն բայական *-ան-* միջաձանցի առկայությանն ու բացակայությանը. այսպես՝ **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում *անկածիլ* (*Թշուառանալ*. ՄՄՁ 266, 530, 532, 3197, 4612, 5596, 7250, 8198(I, II)* - *անկածանալ* (ՄՄՁ 2371, 2372, 5126, 7117), *գեղձալ* (*Պիտալ*. ՄՄՁ 4612, 7117) - *գեղձանալ* (ՄՄՁ 1654, 2371, 2372, 5126), *գերծումն* (*Լուծումն*. ՄՄՁ 530, 2335, 3937, 5596, 5919, 8198(I)) - *գերծանումն* (ՄՄՁ 532, 1654, 2371, 3197, 4612, 5126, 7117, 7250, 8106), *ըղձալ* (*Պիտալ*. ՄՄՁ 5126) - *ըղձանալ* (ՄՄՁ 2371, 4149, 4612, 5596), *մտել*⁷⁶ (*Սպրդել* ՄՄՁ 4149) - *մտանել* (ՄՄՁ 2371, 5126): Ինչպես կարելի է նկատել ձեռագրահամարների թվարկումից, ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում գերակշռում են *-ան-* միջաձանցով զուգաձևերը: Հարկ է թերևս նշել, որ Վարազ Առաքելյանը դեռևս Աստվածաշնչում է արձանագրել բայական փոփոխակներ (միննույն բայի և՛ պարզ, և՛ ա-

⁷⁵ Այսպիսիք Գ. Ջահուկյանը ներկայացնում է «Ձևաբանական տարբերակներ» ենթախմբում՝ նշելով, որ «Բայական համակարգում արդեն վաղնջահայերենում պիտի նկատվեին խոնարհման հիմքերի փոխանցումներ»՝ հ.-ե. ռնգայինով հիմքերի հետագա քայքայումը հավանականորեն հանգեցնելով «վ.-հ. *- a-ne-mi և *-e-mi > հ.հ. -ան-եմ և -եմ ձևերի փոխանցումներին՝ **անիծանեմ և անիծեմ, թքանեմ և թքեմ...**» (տե՛ս Ն.Պ.Մ. Էջ 255): Հատկանշական է, որ միայն ՄՄՁ 4149-ում է առկա *անիծանել* բայը:

* ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 8106-ում *Սնկածել* -ն է:

⁷⁶ Այս ձևն է առանձնացրել նաև Հ. Մուրադյանը միջին հայերենում՝ արձանագրելով, որ «ինչպես այս (միջին հայերենում՝ Ն. Հ.)..., այնպես էլ Վայոց ձորում բառամիջի *-ն*-ի անկման դեպքերը միայն առանձին բարբառներում կատարված փոփոխություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 148):

ծանցավոր ձևեր)⁷⁷: Գևորգ Չահուկյանի հավաստումով էլ «դատելով -և- ածանցով և անածանց ձևերի հետագա բարբառային բաշխումից՝ կարելի է ասել, որ ածանցավոր ձևերն ավելի բնորոշ են եղել արևմտյան, անածանց ձևերը՝ արևելյան տարածքներին, բայց ոչ հոծ կերպով» (ՀԼՊՆԺ, էջ 377-378):

Պատկերը հետևյալն է **ԺԷ** դարից ավանդվածներում. *անկածիլ-անկածանալ, գերծումն-գերծանումն, ըղձալ-ըղձանալ* զուգաձևերը համարյա հավասարաչափ են կիրառվում. միջածանցավոր զուգաձևերով առանձնանում են ՄՄՁ 268, 533, 536, 537, 2431:

Գեղձալ-գեղձանալ, մտել-մտանել, մուծել-մուծանել զուգաձևերի դեպքում կրկնակի շատ են միջածանցավորները. դարձյալ առանձնանում են վերը նշված գրչագրերը և ՄՄՁ 2330, 2370, 2381, 3257-ը:

ԺԸ դարից ավանդվածներում նույնպես հավասարաչափ են վկայվում՝ *անկածիլ* (ՄՄՁ 3450, 9992) - *անկածանալ* (ՄՄՁ 566(II), 9166) զուգաձևերը: Արձանագրված *գերծումն* (ՄՄՁ 3450) - *գերծանումն* (ՄՄՁ 9166) զուգաձևերին ՄՄՁ 566(II)-ում առադրվում է *գերծացումն*-ը: Առկա են նաև *սպանել-սպանանել* (*Ջնջել*. ՄՄՁ 566 (II), *կառուցել* (ՄՄՁ 3450)- *կառուցանել* (ՄՄՁ 566(II)) զուգաձևվերը:

*Հողակապով և առանց հողակապի զուգաձևերից*⁷⁸ **ԺԳ-ԺԶ** դարերից ավանդված գրչագրերում առկա են հետևյալները. *ընդդիմահար* (*Խոշոր*. ՄՄՁ 533) - *ընդիմհար* (ՄՄՁ 8606), *վատարախտ* (*Փանաքի*. ՄՄՁ 2371, 5126, 5925)//*վատարաղտ* (ՄՄՁ 4149)//*վատավախտ* (ՄՄՁ 7117) - *վատրախտ** (ՄՄՁ 266, 532, 538, 4612, 5596, 8198 (I)), *յարկա* (*Միշտ*. ՄՄՁ 8106)-*յարակա* (ՄՄՁ 532, 4149, 5596)) //*յարակայ* (ՄՄՁ 4612, 8198 (II)), *համագոյգ* (*Համանգամայն*. ՄՄՁ

⁷⁷ Տե՛ս Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրական լեզուն և ոճը, Ե., 1984, էջ 151-152:

⁷⁸ Է. Աղայանը սրանք դիտում է «հողակապային տարբերակներ». Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 150:

* ԺԳ դարից ավանդվածներում սույն տարբերակն է:

4149, 4612, 5596)-*համզոյգ* (ՄՄՁ 8198(II))//*համզոյք* (ՄՄՁ 5126)//*հայզոյգ* (ՄՄՁ 530):

ԺԷ դարից ավանդվածներում առկա են արդեն առանձնացված *վատրախտ*-ը (ՄՄՁ 2431), նաև *ընդիմահար* (*Խոշոր*) - *ընդիմահար*-ը (ՄՄՁ 8606), *ստուերամած* (*Խաւար*) - *ստուերամած*-ը (ՄՄՁ 8533): Արձանագրվում է *ա* հոդակապի հավելման մեկ օրինակ՝ *ոսկէփայլ* (*Լոյս*, ՄՄՁ 2431(I)). մյուս գրչագրերում *ոսկէփայլ*-ն է:

ԺԸ դարից ավանդվածներում *ա* հոդակապով է *նեղասրտիչ*-ը (*Յասնույ*, ՄՄՁ 566 (II)):

Քննությամբ պարզվում է, որ բազմաթիվ են հնչյունական տարբերակները. ձևաբանականները երկուսն են, բառակազմականները սահմանափակվում են ածանցային մի քանի տարբերակով:

Համփոփումն ԺԳ-ԺԸ դարերից ավանդված գրչագրերում առկա բառային տարբերակների կամ զուգաձևերի քննության կարելի է արձանագրել, որ բնական է ձայնավորային և բաղաձայնական փոփոխություններով այնպիսի զուգաձևերի առկայությունը, որոնք հետագոտողները վկայել են գրաբարում, միջնադարյան գրավոր աղբյուրներում. որոշակիորեն հետագոտողների նշած՝ ձայնավորային փոփոխություններով զուգաձևերին հավելվում են այլ վկայություններ: Հարկ է նաև նկատել՝

- ձայնավորային փոփոխություններով որոշ զուգաձևերով կարելի է պատկերացում կազմել, թե ո՞ր ձևագրից են ընդօրինակված հետագա դարերից ավանդված գրչագրերը, ինչպես, օրինակ, ենթադրել կամ հավանական համարել, որ ԺԷ և ԺԸ դարերից ավանդված այն գրչագրերը, որոնցում *թօսել*-ն է, ընդօրինակվել են ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 5126-ից: Իսկ ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 529, 2369, 3200-ը ընդօրինակվել են ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149, 5919, քանի որ միայն դրանցում է առկա *n*-ի հավելմամբ *վոհուկ*-ը:

- Ինչ վերաբերում է բաղաձայնական փոփոխություններով զուգաձևերին, նկատելի է, որ միննույն գրչագրում առկա են և՛ ձայնեղ, և՛ խուլ բաղաձայններով զուգաձևեր: Որոշ դիրքերում բաղա-

ձայնների ձայնեղությանը զուգաձևերը, ըստ հետազոտողների, և ինչպես արդեն նշվել է, առավելապես բնորոշ են «արևմտահայ բարբառախոս վայրերի»: Հետևապես, կարելի է թերևս ենթադրել, որ գրչագրերի մեծ մասն ընդօրինակվել է Հայաստանի արևմտյան տարածքներում:

ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՐԲԵՐԱՆԳՆԵՐ

Աշոտ Սուքիասյանը, անդրադառնալով հոմանիշների «իմաստաբանական չափանիշների» սահմանմանը և վկայակոչելով Յուրի Ապրեսյանին, նշում է, որ «հստակորեն դեռ չի որոշվել հոմանիշների իմաստների մոտիկության կամ թույլատրելի տարբերության սահմանները կամ աստիճանները»: Նա միաժամանակ արձանագրում է Յուրի Ապրեսյանի այն դիտարկումը, որ «Իմաստի նրբերանգը իմաստի իմաստաբանական հատկությունը կամ առանձնահատկությունն է, որ նրա մոտ երևան է գալիս լեզվում գոյություն ունեցող մի քանի բառային միավորների՝ միևնույն հասկացությունն արտահայտելու շնորհիվ»: Աշոտ Սուքիասյանը նաև հավելում է Արսեն Այտրնյանի և Ստեփանոս Պալասանյանի դրրույթները, ըստ որոնց՝ հոմանիշները հաճախ տարբերակվում են իմաստային զանազան տարբերություններով և նրբերանգներով, այլև «լեզվում գոյություն ունեն ինչպես նույն իմաստն արտահայտող, այնպես էլ՝ իմաստի նրբերանգային տարբերություններ ունեցող հոմանիշներ»¹: Նա արծարծում է հոմանիշների՝ հոմանիշության հիմնական չափանիշ չհանդիսացող՝ մասնակի փոխարինելիության հարցը²:

Այս տեսանկյունից դիտարկելիս գրչագրերում առկա բառիմաստների փոփոխությունները զանազանելու խնդիրը բավական բարդ է. դժվար է վստահաբար պնդել, որ բառը նոր իմաստ, իմաստային նոր երանգ է ձեռք բերել, քանի որ ՁԲ-ները, ինչպես արդեն նշվել է, չունեն բնագրային օրինակներ:

Էդուարդ Ադայանը, ճշգրտելով ժամանակակից հայերենի իմաստափոխության ժամանակային սահմանները, նշում է, որ «նույնը կատարել է նաև գրաբարի նկատմամբ». գրաբարյան են համարվել այն իմաստափոխությունները, որոնք տեղի են ունեցել

¹ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջք 62-63, 14, 18:

² Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 64-65:

Ե-ԺԸ դդ. գրաբարալեզու գրականության մեջ, «բայց առանձնապես՝ 5-11-րդ դարերի մատենագրության մեջ»³: Հարկ է նաև հիշատակել լեզվաբանների այն մտեցումը, որ թեև «միջին հայերենի իմաստափոխությունները տեղի են ունեցել հասկապես 12-16-րդ դարերում, սակայն պետք է ընդունել, որ այս իմաստափոխություններից շատերն ավելի վաղ շրջանի արդյունք են: Դրանք գոյություն են ունեցել ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում և ուղղակիորեն անցել են գրական լեզվին հիշյալ դարերի ընթացքում»⁴: Նրկատի առնելով այն, որ ՁԲ-ների ստեղծման ժամանակը հայտնի չէ (ինչպես նշվել է, ըստ հետազոտողների՝ ամենավաղ ընդօրինակումները ԺԲ դարից են, բայց և հավանական է՝ դրանք ստեղծվել են ավելի վաղ «10-11-րդ դարերում»), բառերի իմաստափոխությունը ճշտելու համար համեմատվել են նաև գրաբարի տպագիր բառարանները⁵:

Շարադրանքը չճանրաբեռնելու համար չանդրադառնալով իմաստափոխության ենթարկված, լեզվաբանական գրականության մեջ արձանագրված՝ ՁԲ-ներում վկայվող բառերին՝ հարկ է պարզապես թվարկել դրանք՝ *անձոռնի, աշխոյժ, արբանեակ, բառացի, դեգերել, թարմատար, համբակ, հաստոց, մարտկոց, պաշտօնեայ, պարետ, պիտակ, ռոճիկ, սերտել* և այլն⁶, այլև արձանագրել, որ գրչագրերում առկա բառերը մեծ մասամբ պահպանում են գրաբար-

³ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 74-75:

⁴ Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 187:

⁵ Խոսքը վերաբերում է հետևյալ բառարաններին՝ ՆՀԲ, ԱԲ, Նոր բառգիրք հայկազգեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով, հհ. 1-5, Ժնև, 1990: Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ԳՀԲ), Անթիլիաս, 2006: Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳՀԲ), Անթիլիաս, 2000: Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Նորայայտ բառեր գրաբարում, Ե., 2007: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:

⁶ Մանրամասն տե՛ս ՀԱԲ, հհ. Ա-Դ: Ա. Մուրվայան, Հայոց լեզվի բառային կազմը: Պ. Բեդիրյան, Իմաստի փոփոխությունները հայերենում, թեկն. ատեն.: Պ. Բեդիրյան, Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մասին, Գիտական աշխատությունների Հայոց լեզվի բաժին N 1, Խ.Ս.բովյանի անվ. ՀՊՄԻ, Ե., 1965, էջ 120-131: Ա. Մուրիսյան, նշվ. աշխ.: Է. Աղայան, նշվ. աշխ.:

րյան բառարաններում նշված իմաստները. դա հավանաբար պայմանավորվում է հետազոտողների նշած՝ վանքերին կից բացված (վանական) դպրոցներով և բխում է բառարանների ուսուցողական, գործնական բնույթից: Բառերի մեծ մասն արդի հայերենի բացատրական բառարաններն արձանագրում են «հնց.», «հին», «գրք.» նրշումներով, ինչպես՝ *խնդրել* «որոնել, փնտրել»⁷, *խմրանալ* «ուշանալ, դանդաղել» (հմմտ.՝ համրընթաց, համրաքայլ), *խուզել* «քննել, հետազոտել» (հմմտ.՝ քննախույզ, հետախույզ), *գայթակղել* «գայթեցնել», *թուլամորթել* «թուլամորթ դառնալ» և այլն: Ռուբեն Ղազարյանի վկայությամբ՝ հոմանիշ բառերը սերտորեն առնչվում են բառապաշարի փոփոխությանը. ըստ նրա՝ լեզվի զարգացման տարբեր փուլերում հոմանիշ բառերի շարքերում «տեղի են ունենում քանակական փոփոխություններ՝ պայմանավորված հոմանիշությամբ հարաբերակցվող անդամների նվազմամբ կամ աճմամբ»⁸: Աշոտ Սուքիասյանի հավաստմամբ էլ՝ «Հայերենում հոմանիշների առաջացման հիմնական գործոններն են բառերի իմաստափոխությունը և նորաբանությունները»⁹:

Արդ **ԺԳ դարից** ավանդված գրչագրերից առանձնացվող այն բառերի մասին, որոնք գրչագրում առկա են նոր իմաստով կամ իմաստային նոր երանգով¹⁰:

Հրաշափառ. հրաշալուր. սխրալի. սոսկալի ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 177բ. 5596, 225բ) առկա ***ահագին*** բառը ՆՀԲ-ում վկայվում է Ե դարից՝ «Ահաւոր յոյժ. ահարկու. զարհուրելի. սոսկալի. դժնդակ ... Իբր մեծ և երևելի. ծանր և սաստիկ. բազում. անհնարին» նշանակություններով և մակբայական կիրառությամբ՝ «Ահարկու օրինակաւ. անհնարին սաստկութեամբ. ահաւորութեամբ» (հ. I, էջ 28): Մխիթար Սեբաստացին նույնպես, հղելով Աստվածաշունչը, վկա-

⁷ Է. Աղայանն այս բառի համար արդի հայերենում նշում է իմաստի փոխազորում. Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 106:

⁸ Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 9:

⁹ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 175:

¹⁰ Հարկ է արձանագրել, որ ստորև առանձնացվող բառերն առկա են նաև ԺԵ դարից ավանդված, մասնավորապես նախորդ դարերից ընդօրինակված գրչագրերում:

յում է՝ «յոյժ ահաւոր. կամ ահեղ. կամ զարհուրելի. կամ սուկալի. և կամ ահռելի» (ԲՀԼ, էջ 12 (41)): Նշված ՀԲԾ-ում *ահագին* բառի «ահարկու, զարհուրելի, սուկալի» իմաստներով առկայությունը բացատրվում է բառաշարքի կազմության սկզբունքով, որքանով «հիանալին, յոյժ հիանալին, հրաշալին, սքանչելին» կարող է երկյուղ առաջացնել, ահազդու, ահարկու լինել (հմմտ.՝ նաև *ահաւոր* բառը): Եվ այս դեպքում հիշատակելի է Հրաչյա Աճառյանի՝ *հոյ* «երկիր, սարսափ» արմատի և *հոյակապ* բառի՝ «իմաստի զարգացման համար» նշած՝ *ահ*-ի և *ահագին*-ի «սարսափելի. 2. մեծ, խոշոր, վիթխարի» համեմատությունը (ՀԱԲ, հ. Գ, էջ 113). այն Գևորգ Չահուկյանը կասկածելի է համարում իմաստային տարբերության պատճառով (ՀԼՊՆԺ, էջ 187-188):

ԺՀԼԲԲ-ն «ահարկու, ահ ազդող» իմաստի համար ունի «հզվդ.», իսկ ԱՀԲԲ-ն՝ «հնց.» նշումը՝ արձանագրելով հիմնական «մեծ, վիթխարի»-ն (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 29: ԱՀԲԲ, էջ 19). նույն են վկայում արևմտահայերենի բառարանները¹¹: Հարկ է նաև նշել, որ *ահագին*-ի «շատ մեծ, հսկայական, մեծ չափով» նշանակությունը Ժամանակակից հայոց լեզվում դիտվում է բառիմաստի շրջում¹²:

Անհաս հենարանով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 173բ. 5596, 221ա) վկայվող *ահաւոր* բառը, ըստ ՆՀԲ-ի, դարձյալ Ե դարից է՝ «Ահարկու. զարհուրելի. ահագին. պատկառելի. ակնածելի. հիանալի. ահեղ. շքեղ. փառաւոր. մեծ» իմաստներով (հ. I, էջ 29): Միսիթար Մեբաստացին ևս նշում է որպես «ահեղ. կամ զարհուրելի. կամ սու-

¹¹ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան Յօրինեց Պետրոս վարդ. Ճիզմեճեան, հ. I, Հալեպ, 1954, էջ 79: Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ.Կ. Տօնիկեան, Պէյրութ, 1968, էջ 5: Ա. վրդ. Կռանեան, Բառգիրք գործնական հայերենի, Պէյրութ, 1998, էջ 13: «Տ. Ահարկու» հորում ունի Հ. Գայայանը (Յ. Գայայեան, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Գահիրե, 1938, էջ 7): «Ահռելի, վախազդեցիկ» իմաստ է հիշատակվում «Հայոց լեզուի նոր բառարան»-ում (Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճերեճեան, Փ.Կ. Տօնիկեան, Ա. Տեր Խաչատուրեան, հ. I, Պէյրութ, 1992, էջ 19):

¹² Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 80-81:

կալի»՝ արձանագրելով՝ «ռուկ. վախնալու» (ԲՀԼ, էջ 12 (41)): Բնչպես նախորդի, այս բառի դեպքում էլ, ըստ բառաշարքի կազմության սկզբունքի, *անհասանելի*-ն անըմբռնելի է լինում, վերջինս էլ ազդում, ներգործում է, այլև հիացնում... (հմմտ. *Սհաւոր*-ի «վսեմ» իմաստը ԱԲ-ում. էջ 13): Հետևաբար կարելի է հավանական համարել *սհաւոր*-ի «անըմբռնելի, հիացնող. ազդեցիկ» իմաստները, որոնք էլ, թերևս, կարելի արդարացնել, այլև հիմնավորել մերօրյա խոսակցականում օգտագործվող *սհավոր խելոք*, *սհավոր սիրուն* արտահայտություններով (հմմտ. ռուս. ужасно красивый, այլև չեխերեն úžas «հիացմունք, սարսափ», պլովակերեն úžas «հիացմունք, սարսափ», úžasníč «հիանալ» բառերը)¹³: Հարկ է հիշատակել Մխիթար Սեբաստացու՝ *սհաւոր* բառին «նոյնանշան բառից յարադրութեամբ» առադրած նաև *սօս*, *խրոխտ* և *յոխորտ* բառերը (ԲՀԼՄՍ, էջ 9 (1038)), որոնց՝ ՆՀԲ-ում, ՄՀԲԲ-ում («իբրու նմանեալ սօսույ. սեգ և սոնք. պերճ...»), «պանծացօղ և պանծալի» (ՆՀԲ, հ. I, էջ 994, հ. II, էջ 768: ՄՀԲԲ, հ. II, էջ 310. հմմտ.՝ ԳՀԲ-ի *Խրոխտ* բառահոդվածը. էջ 349)), այլև արդի հայերենում բառի համար արձանագրված «իր ուժով՝ գեղեցկությամբ՝ վեհությամբ հպարտ. վեհ, վեհապանծ. պերճ, փառահեղ» (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 284: ԱՀԲԲ, էջ 1287) նշանակություններով էլ կարելի է ընդունելի համարել *սհաւոր*-ի «հիացնող. ազդեցիկ» իմաստները: Արդի հայերենի բացատրական բառարանները փոխաբերական իմաստով նշում են *սհաւոր* բառի «խիստ ազդու, հիացք առաջացնող» (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 30), «ծայրահեղ, երկյուղ առաջացնելու չափ, ապշեցնելու չափ» (ԱՀԲԲ, էջ 19) նշանակությունները¹⁴:

Նենգաժէտ. խորամանկ. հնարաւոր. պատուիրանազանց. յայտաղկոտ. մախացաւղ. նենգաւոր ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 218ա) *անմեկին* բառի՝ ՆՀԲ-ում վկայվող իմաստներն են «անբացատրելի, անմեկնելի, անբացայայտ» (հ. I, էջ 202: Տե՛ս նաև՝ ԱԲ, էջ

¹³ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 4, М., 1973, с. 151:

¹⁴ Պ. Ճիզմեճյանը նշում է նաև *սհաւոր*-ի հումանիշները՝ «սուկալի, ահեղ սհարկու, ահեղի, սարսափելի, քասքնելի, զարհուրելի, քսամնելի, պակուցիչ». Հայերեն աշխարհարար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 80-81:

77): Մխիթար Սեբաստացին արձանագրում է «ծածուկ» նշանակությունը (ԲՀԼՄՍ, էջ 32(645)): Եվ դարձյալ կարելի է նշել, որ ոչ բացահայտ արվածը (թերևս թաքուն, գաղտնի) և անբացատրելի ներառում են նենգության, խորամանկության ինչ-որ տարր կամ երանգ (անշուշտ վերապահությամբ), որքանով ոչ բացահայտն ու անբացատրելին խորհրդավորություն են հաղորդում, այլև թաքցնում են, քողարկում, կոծկում: Ուստի կարելի է ընդունելի համարել *անմեկիհն*-ի «նենգ, խորամանկ» նրբիմաստը: ԲՀ-ն նշում է «պատուիրանագանց» բացատրությունը (էջ 29):

Լուտալ հենաբառով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա) առկա *գանեղ*-ը վկայվում է Ե դարից «ձաղկել, ծեծել, խոշտանգել, չարչարել» նշանակությամբ (ՆՀԲ, հ. I, էջ 529): Մխիթար Սեբաստացին ԺԲ դարից ամրագրում է «Իսկ մերթ նշանակե զնախատելըն. և կամ զկշտամբելն» իմաստը (ԲՀԼ, էջ 171 (200)): Նշված, այլև «թշնամանել, պատուհասել կշտամբանօք» իմաստները հավաստվում են ԺԲ-ԺԳ դդ. մատենագրությամբ (ՆՀԲ, ն.տ.: ՀԱԲ, հ. Ա, էջ 514): ԱՄԳՀՊ-ում (հ.Ա, էջ 183) և ՄՀԲ-ում (հ.Ա, էջ 138) առկա է «վրնասել, վիրավորել» նշանակությունը. արևմտահայերենի բառարանները նշում են «ծաղր ընել», «ծաղրել, հեզել, նշաւակել, արհամարհել»¹⁵: Այնպես որ ՆՀԲ-ի և ՄՀԲ-ի, այլև արևմտահայերենի բառարանների արձանագրածը հաստատվում է ավելի վաղ ստեղծված ՁԲ-ներով:

Հայցել. զննել. այցել. հայտնել. յուզել. խնդրել. քննել. յղկել. պատկատել. պահանջել. փորձել. հարցափորձել. որոնել. բռնադատել. հետազատել. կրկտել. գտանել. հարկաւորել. խուզել. չափել. մանրախուզել. թախանձել. մտախոհ լինել. ի վերայ հասանել ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 173բ. 5596, 220բ) առկա *գգրել* բայը Երեմիա Մեղրեցու բառգրքում «խոչել» բացատրությամբ է (ԲՀ, էջ 65)¹⁶: Իբրև «նո-

¹⁵ Յ. Գայայեան, նշվ. բառ. էջ 74: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 17: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 86: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 367:

¹⁶ Նույն բացատրությունն է ՄՄՁ 2372-ում՝ «Բառք քերթողականք» բառարանում. «Այս բառք են քերթողականք վասն չափից հոմերական տողից. վասն զի քերթո-

րագիւտ բառ»՝ այն նշում է ՀԱԲ-ը՝ «գործած յանցանքի վրայ մտածելով ափսոսալ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 548): ԳՀԲ-ն արձանագրում է *Գգրել, ապաշատել, գոջալ, գովալ* բառաշարքը (ԳՀԲ, էջ 187): Եթե *գգրել*-ը բխեցվի *գգիր* բառից, ինչպես վկայում է ԲՀ-ն, ապա ենթադրելի է պրսկ. گیزر [gizir]-ը, որի ծագումն ու բուն իմաստը Հրաչյա Աճառյանը հղում է *վճիռ* բառին՝ «պիլ. *vičir* «վճիռ, որոշում, դատարան» (հմմտ.՝ *վճռել, վճռորոշ, վճաբեկ* բառերը), պրսկ. گیزر *gizir*, *gizir*-ը համարելով «նոյն բառի նոր ձև» (ՀԱԲ, հ. Դ, էջ 346): Իսկ վճիռ կայացնելը ենթադրում է նաև քննություն, զննություն, հայցում և, ըստ ՄՀԲԲ-ի, ունեցել է նաև «հետամուտ լինել, փնտռել» նշանակությունը (հ. III, էջ 42), այնպես որ հավանական է *գգրել*-ի՝ *հետամուտ լինել*-ին, *փնտրել*-ին, փոխաբերորեն *մեկի գործերին, արարքներին հետևել*-ին առնչվող *մտատանջվել*-ը, *մտմտալ*-ը: Ասել է այն, ինչ առանձնացրել է Լավրենտի Հովհաննիսյանը՝ Հրաչյա Աճառյանի «նորագիւտ բառ»-ի բնագրային օրինակից («Իսկ եթե մերթ խոշտանգեմք զմիտս և մերթ ծուլանամք, զի՞նչ ինչ ի գգրելոյն շահիցիմք. եւ զի՞նչ օգուտ իցէ ասեն զմտաւ ածել, բայց զի աւելի ևս տրսմութիւն շահիցիմք. զի աստ **զմիտս ուտիցեմք** և անդ զպատիժսն կրիցեմք...» (ընդգծ.՝ Ն.Հ.))¹⁷ *գգրել*-ը բացատրելով «գործած հանցանքի շուրջ մտածել, ափսոսալ»¹⁸:

ՆՀԲ-ն Ե դարից վկայվող ***հերքել*** բայի համար նշում է «....ի բաց վարել կամ վանել. հալածել. յաղթահարել. կարօղ լինել... բաւել, զօրել. տօկալ. ընդդէմ կալ» (հ. I, էջ 295), ԱԲ-ն առանձնացնում է «յաղթել» (էջ 494), ԲՀ-ն՝ «յաղթել, կամ հալածել, կամ վնասել» իմաստները (էջ 185): Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ *հերքել*-ը նոր գրականում ձեռք է բերել «մեկի ասածը մերժել, սխալ լինելը ցոյց տալ» իմաստը (ՀԱԲ, հ. Գ, էջ 89): ՄՀԲԲ-ն արձանագրում է

դական արհեստք չափաբերականք են և չափով վարին: Եւ են որ գեղջուկք են որով ճարտասանքն վարին զի հաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանի: Եւ հարկ է յոքնահամար եղանիլ» նշումով (201բ):

¹⁷ Մանավանդ ՆՀԲ-ն նշում է. «Նմանութեամբ ասի. *Զմիտս և զմարմինս ուտեն (խղճիւ). ոմկ. իրենք զիրենք կուտեն» (հ. II, էջ 557), այսինքն՝ «բորբոքվել, անհանգստանալ» (հմմտ.՝ ՀԼԴԲ, էջ 250):

¹⁸ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 84:

նանս՝ «4. Ընդհանրապես՝ մի գրուածքի կամ լուրի սխալ լինելը ցոյց տալ» (հ. III, էջ 102): Բայն առկա է *Բռնադատել. յաղթել. դրդուել. շարժել. խախտել* ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա)՝ ասես «նախապատրաստելով» բայի՝ Հրայր Աճառյանի նշած ձեռք բերելիք նոր իմաստը (եթե հաղթում ես, ուրեմն ճիշտ ես, հետևաբար (անշուշտ, դարձյալ վերապահությամբ) սխալ է դիմացինը): Արդի հայերենում արձանագրվում է հենց այս իմաստը¹⁹: Հարկ է նշել, որ նույն գրչագրերում *հերքել* բայը վկայվում է նաև *Անջատել* հենաբառով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 171 ա. 5596, 219ա. 4149, 352բ)՝ փաստելով ՆՀԲ-ում վկայված «ի բաց վարել կամ վանել» իմաստը:

Հնարատր բառի՝ ՆՀԲ-ում վկայվող «Հնարող. ճարտարող. կարող. ձեռնհաս. ճարտար. հնարագիտ. հնարադիր. մեքենագործ. Տ. հնարագետ», այսինքն՝ «Որ գիտե զհնարս. խորագետ. ճարտար» իմաստը (հ. II, էջ 106-107) *Նենգածես* հենաբառով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 218ա) ունի բացասական երանգ: Մխիթար Մեբաստացին *հնարագործ*-ին «նոյնանշան բառից յարադրությամբ» առադրում է «տե՛ս Հնարագետ և Խաբեբայ, և Խորամանկ» (ԲՀԼՄՍ, էջ 358 (1387)): Արդի հայերենում նույնպես հնարագիտությունը, առավել ևս մեքենայությունը ստացել են բացասական (վերջինս՝ միայն բացասական) երանգ (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. III, էջ 525: ԱՀԲԲ, էջ 1003)՝ ի հակադրություն գրաբարյան «վարպետության, ճարտարության, արվեստի» (հատկապես՝ պատերազմական. հմմտ.՝ ՆՀԲ, հ. II, էջ 106, 257-258: ԱԲ, էջ 499): Ենթադրելի է՝ հնարամիտ- հնարագետ-հնար գտնող-ը (հմմտ.՝ նաև «ճար ճարակ գտնող. կրցող». ԳՆԲՀԼ, էջ 823) պետք է խորամանկ էլ լինի, մանավանդ եթե հնարչունի, և հույսը կտրվել է, ուրեմն, հավանական է, նաև նենգ (տե՛ս ՀԼՀԲ-ի *Խորամանկ* բառահոդվածը (էջ 272), այլև հմմտ.՝ *ճար անել, ճար(ը) գտնել/կտրել, ճար չկա, ճարս ինչ* դարձվածային միավորները (ՀԼԴԲ, էջ 401-402)): Հարկ է հավելել նաև, որ ՀԼՀԲ-ում *Հնարագետ* և *Ճարպիկ* բառաշարքերում առկա է *կախարդ* բառը (հոմանիշ՝ *խարդախ, խաբեբա*), իսկ *Հնարամիտ* բառաշարքում հիշա-

¹⁹ Հմմտ.՝ Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 287: Ա. վրդ. Կոստեան, նշվ. բառ., էջ 253:

տակվում են *խորամանկ*-ը, այլև բարբառներում գործածվող *սատանա*-ն (էջք 297, 392, 422. հմմտ.՝ *սատանի ճուտ* «խորամանկ, չարածճի, խաբեբա», *սատանա խաբող* «հնարագետ, խորամանկ», *սատանի պոչ* «շատ խորամանկ մարդ» և այլ դարձվածային միավորներ. էջ 514-517): ՄՀԲԲ-ն առադրում է «Ինչ որ կարելի է՝ մի բան աջողեցնելու համար» իմաստը (հ. III, էջ 116): Հետևաբար կարելի է ընդունելի համարել *հնարաւոր* բառի՝ ԺԳ դարում հիշատակվող «խորամանկ, նենգ, խարդախ» իմաստը:

Պարունակեալ. փարադրեալ . բովանդակեալ* ՀԲԾ-ում (ՄՄՁ 5596, 225բ) առկա *ընդգրկեալ*** բայը վկայվում է Ե դարից՝ «Ի գիրկըս առնուլ. գիրկս արկանել. փարիլ. և սիրով ընդունել. գրկել. գիրկը առնել» և «կասեցուցանել» իմաստներով (ՆՀԲ, հ. I, էջ 766-767)²⁰: Մխիթար Սեբաստացին նույնպես բացատրում է՝ «գիրկը առնել. գրկել. վրան առնել» (ԲՀԼՄՄ, էջ 136 (749)): ՀԲԾ-ից պարզորոշ է նոր՝ «իր մեջ ամփոփել, պարունակել, ներառել» իմաստը. այն «փոխ.» նշումով են առանձնացնում ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 54), ԺՀԼԲԲ-ն (հ. II, էջ 93), ԱՀԲԲ-ն (էջ 400). արևմտահայերենի բառարաններում առաջնային են «բովանդակել, ներփակել»²¹, այլև «փարիլ, ողջագուրել, իր գիրկին մեջ առնել» նշանակությունները²²:

Անջատել ՀԲԾ-ում (ՄՄՁ 5596, 219ա) առկա *ցանգել* բայը^{***} ՆՀԲ-ն վկայում է Ե դարից՝ բացատրելով իբրև «ցանկապատել, պարըսպել, ամրացուցանել» (հ. II, էջ 909), Մխիթար Սեբաստացին

* ՄՄՁ 566 (II)-ում *Պարունակեալ. պարագրեալ. պարփակեալ. բովանդակեալ* ՀԲԾ-ն է (294 բ):

** ՄՄՁ 4612-ում (177ա) և ԺԵ դարից ավանդված՝ բառերի այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում (ՄՄՁ 268 (310 բ), 533 (13 ա), 537 (227 ա), 2019 (170 ա), 2281 (131 ա) և այլն) առկա է *ընկրկեալ* տարբերակը:

²⁰ ԳՀԲ-ն արձանագրում է *Ընդգրկել, նր. Գրկել, գիրկս առնել* հոմանիշների շարքը (էջ 271):

²¹ Տե՛ս նաև Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 341: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 130:

²² Տե՛ս Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 137: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 166: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 645:

*** ՄՄՁ 4612-ում *ցանկեալ* տարբերակն է (171բ):

նան հավելում՝ «չորս դին պատել» (ԲՀԼՄՍ, էջ 394 (1007)): Բարբառային բառարանները բայը՝ «ցանկապատ քաշել շուրջը» իմաստով, արձանագրում են Ակնում (ՀԳԲ, էջ 1052: ՀԼԲԲ, հ. 2, էջ 265): Բնականաբար «ցանկապատել, պարսպել»-ը ենթադրում է «անջատում, տրոհում, բաժանում», ինչպես *ցանկապատել*-ի համար «փխբ.» նըշումով «անջատել, անջրպետել, իրարից բաժանել» իմաստներն է վկայում ԱՀԲԲ-ն (էջ 1469): Հետևապես ընդունելի է միջին հայերենում *ցանկել*-ի «անջատել, գատել, մեկուսացնել» նրբիմաստը:

Շաղղակերք. մարմնակերք. գիշախանձք ՀԲՇ-ին (ՄՄՁ 5596, 224ա) ՄՄՁ 4612-ում հավելվել է *փաղաղողք*-ը (176ա)²³, ՄՄՁ 532-ին՝ *գիշակերք*-ը (93բ)*: *Փաղաղել*-ը նան «գիշատել» է նշանակում՝ «գէշ գէշ պատառել. յօշատել. պատառօտել» (ՆՀԲ, հ.1, էջ 554. հ. 2, էջ 925: ԱԲ, էջ 804), որն էլ ենթադրում է թերևս անշունչ, անկենդան մարմին: Գրաբարի տպագիր բառարանները *գիշակերք*-ը մեկնում են՝ «Կերօղ գիշոյ. ուտօղ զմեռելոտի» (ՆՀԲ, հ. I, էջ 554), «Հում միս ուտող՝ բզբքտելով» (ԱԲ, էջ 215): ՄՄՁ 3468-ում հավելվում է նան *մսակերք*-ը**, որն ընդհանրապես «միս ճաշակող»-ն է (ՆՀԲ, հ. II, էջ 302)՝ ի հակադրություն *խոտակեր, բուսակեր, ամենակեր*-ի: Մխիթար Սեբաստացին վկայում է «ուտօղ զմիս» բացատրությունը (ԲՀԼՄՍ, էջ 681 (730)): Տվյալ դեպքում, ինչպես նշում է ՆՀԲ-ն, «Միս տե՛ս Մարմին»՝ «Որպէս Միս՝ դիմաբաժանեալ ընդ արին, և ընդ ոսկր» (հ. II, էջք 226, 281), ասել է՝ *մսակերք*-ը նան *մարմնակերք*-ը, *գիշակերք*-ը *գիշատիչ*-ն է, որոնք էլ արձանագրում են արդի հայերենի բացատրական բառարանները՝ սակայն առաջնային նշելով «հիմնականում մտով սնվող, միս ուտող» իմաստը (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 562: ԱՀԲԲ, էջ 1030)²⁴:

²³ Այն առկա է նան ԺԷ դարից ավանդված գրչագրերում:

* Բառը վկայվում է նան ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 3468-ում (463բ):

** Բառն առկա է նան ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 10223 -ում (199բ):

²⁴ Ըստ բառարանների՝ արդի հայերենում բառի ունեցած իմաստին զուգորդվում է նորը. Է. Աղայանի ձևակերպմամբ՝ բառը, պահպանելով հինը, ձեռք է բերում նոր իմաստ (Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 101):

ՄՄՁ 4612-ում և ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 3937-ում (57թ)* *մարմնակեր(ք)*-ի փոխարեն ***հմակեր(ք)*** բառն է: Միխիթար Սեբաստացին վկայում է «գհում և զանեփ իրս ուտող, որպիսիք են գագանք. և կամ գագանային մարդիկ, որք ուտեն զմիս առանց եփելոյ» նշանակությունը (ԲՀԼ, էջ 540 (585) և «նոյնանշան բառից յարադրութեամբ» բառահոդվածին առադրում՝ «հում ուտող, կամ հում միս ուտող» իմաստը (ԲՀԼՄՍ, էջ 365 (1394)): ՆՀԲ-ում այս բառի վկայությունները Ժ դարից են՝ «Կերող կամ ուտող զմիս հում. շաղղակեր» իմաստով (հ. II, էջ 104. նաև՝ ԱԲ, էջ 498): Նույնն է նշում ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 112): Արդի հայերենում արձանագրվում է միմիայն «Սնունդը հում՝ առանց եփելու ուտող» իմաստը (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 356: ԱՀԲԲ, էջ 875): Հետևաբար արդի հայերենում կարելի է դիտել բառիմաստի ընդլայնում:

Ուշագրավ է ***սաղարթափթիթ*** և ***սաղարթախիտ*** բառերի գործածությունը: *Սաղարթափթիթ*-ն առկա է *Անտառախիտ. հովանաւոր. վարսաւոր. տերեւախիտ. բազմաշառաւիղ. ծառանոց. դրախտ. թփուտ. մացառ. մայրի. թաւվայր*²⁵ ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 177ա. 5569, 225ա): *Սաղարթախիտ*-ն առկա է ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 537-ում (218ա), 3286-ում (300 ա): ՆՀԲ-ում *սաղարթափթիթ*-ը վկայվում է Ժ-ԺԱ դարերից, *սաղարթախիտ*-ը՝ Է դարից, համապատասխանաբար «Որոյ սաղարթք են փթթեալ՝ ցցուեալ և բացեալ»²⁶ և «Ուտախիտ. տերեւախիտ. սաղարթագեղ» բացատրություններով (հ. II, էջ 689): ՄՀԲԲ-ն նույնպես առանձնացնում է այս երկու բառերը (հ. IV, էջ 177): Անդրադառնալով բառարանների մեկնություններին

* Բառը վկայվում է նաև ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2281-ում (130ա), 3488-ում (117 ա), 7004-ում (135ա), 7995-ում (44ա):

²⁵ Հ. Աճառյանը *Մայր* բառահոդվածում որպես «նորագիտ բառ» առանձնացնում է «անտառախիտ» իմաստով *թաւամայրի*-ն (ՀԱԲ, հ. Գ, էջ 247): ՄՄՁ 3468-ում ՀԲԾ-ն ավարտվում է *անտառ* բառով (458բ):

²⁶ Մխ. Սեբաստացին նշում է բառի՝ «եափրախով (սաղարթով, տերևով՝ Ն.Հ.) զարդարված» նշանակությունը. Բառգիրք հայկազգեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Միխիթարայ մեծի աբբայի, և րարունապետին սեբաստացոյ (այսուհետև՝ ԲՀԼՄՍ, Վէնետիկ, 1769, էջ 348 (961):

(հմմտ.՝ նաև ԱԲ-ի նշած իմաստները՝ «կանանչ տերևով՝ ճղերով լեցուն», «տերևները դուրս տուած, ծլած» (ԱԲ, էջ 715))՝ կարելի է ենթադրել, որ տերևախիտ, խիտ սաղարթներով վայրը կամ տեղանքը, ըստ գրիչների, լիովին չի բնորոշել *անտառ* հասկացությունը, հետևաբար ստեղծվել է *սաղարթափթիթ*-ը: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ՀԼՀԲ-ում չկա *սաղարթափթիթ* բառը, արդի բացատրական բառարաններն էլ այն նշում են առանց բնագրային օրինակի (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 266: ԱՀԲԲ, էջ 1273):

ՄՄՁ 3937-ում՝ *Շամբուշ. անուղղայ. մաւրոս. իսաւլ. իւելագար. թմբրեալ. ցնորական* ՀԲՇ-ում (57ա) առկա են ***անհրահանգ. անվարժ*** բառերը*: ՆՀԲ-ն *անհրահանգ*-ը բացատրում է «անկիրթ. անվարժ. անփորձ» (ՆՀԲ, հ. I, էջ 189), իսկ *անվարժ*-ը՝ «ոչ վարժեալ. անուս. անմարգ. անկիրթ. տրմուղ»՝ վկայված Ե դարից (ՆՀԲ, հ. I, էջ 240): *Ան-* նախածանցով և համապատասխանաբար *հրահանգ* և *վարժ* փոխառյալ իրանական արմատներով բաղադրված այս բառերը հավելելով՝ ձեռագիրն ընդօրինակողը, թերևս, ցանկացել է հավաստել, որ ուսում չստացած, չկրթված մարդը ոչ միայն անգետ, տգետ, այլև հիմար, խենթ է: Եվ ասես ի հաստատումն ասվածի և ի հավելումն *ցնորական*-ի («ցնորվածին յատուկ, յիմարական». ՄՀԲԲ, հ. IV, էջ 467)՝ ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 3286-ի նույն ՀԲՇ-ին հավելվում է նաև *յիմար* բառը: Հարկ է նշել, որ *շամբուշ*-ը ՆՀԲ-ում վկայվում է նաև «Բուր՝ մտօք կամ աչօք» իմաստով (հ. II, էջ 463), Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ Ստեփանոս Լեհացու՝ Դինիսիոս Արիոպագացու երկի «ի լատինէ» նոր թարգմանությունից բաղված միակ օրինակով (ՀԱԲ, հ. Ա, էջ 34-35):

Նույն գրչագրում *Մպանդ. զոհ. ձենձեր. ջաշանց. նուէր. պատարագ. ընծայք. ողջակէզք*²⁷. *գենմունք* ՀԲՇ-ին (58ա) հավելվում են

* Առանձնացված բառերն առկա են նաև ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 3286-ում (298 ա): *Խսաւլ*-ը չկա ՄՄՁ 266, 532, 538, 3197, 4612, 5596, 7250, 8198 (I)-ում:

²⁷ Հրեաների մատուցած 3 տեսակի զոհերից առաջինը *ողջակէզ*-ն էր, որի ժամանակ այն ամբողջությամբ այրվում էր. մանրամասնորեն տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, Կոնստանդնուպոլիս, 1881, էջ 204:

աղերս, կորբան բառերը*: ՆՀԲ-ն *աղերս*-ը բացատրում է «իբր Ուղերձ. ընծայ. տուրք. պարգև. ձիրք. շնորհք» (հ. I, էջ 38), իսկ երբայերեն *կորբան*-ը՝ «Պատարագ աստուծոյ. ընծայ. նուէր» (հ. I, էջ 1119. տե՛ս նաև՝ ՀԱԲ, հ. Բ, էջ 645-646): Հայերենի բարբառներում այն գործածվում է արաբահունչ *դուրբան* ձևով՝ «գոհ, մատաղ» նըշանակությամբ (ՄՀԲԲ, հ. III, էջ 188: ՀԼԲԲ, հ. Գ, էջ 360): Ըստ «Բառարան Սուրբ Գրոց»-ի՝ գոհը Աստծուն մատուցվող նվերն էր և տարբերվում էր ընծայից. «Զոհը սպանդ էր, ուր ընծայն էր պարզ նուէր կամ տուրք», «... բայց մեր թարգմանութեան մեջ ընծան երբեմն կը նշանակէ նաև գոհ»²⁸: Վազգեն Առաջին կաթողիկոսի հավաստումով էլ՝ «Պատարագը (Liturgie) իր բառացի իմաստով իսկ նշանակում է «գոհաբերություն»»²⁹: Ասել է՝ առանձնացված բառերն առնչվում են միննույն՝ «գոհի, գոհաբերության» իմաստով:

Նույն գրչագրում *Հրաշափառ* հենաբառով ՀԲԾ-ին հավելվել է **քստմնելի** բառը (էջ 58բ): Մխիթար Սեբաստացին մեկնում է միայն «փշաքաղիլ» (ԲՀԼՄՄ, էջ 412 (1025)): Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *քրստըմնիլ*-ը «մազերը փուշ փուշ լինել, սոսկալ» *քիստ* «ցորենի հասկը պատող փշոտ մազերը» արմատից է (ՀԱԲ, հ. Դ, էջ 580)³⁰: ՆՀԲ-ն *քստմնելի*-ն բացատրում է «Արժանի քստմնելոյ. քստմնեցուցիչ. գարշելի. սոսկալի. ահաուր, ահեղ, և սխրալի. *փշաքաղելու և արմըննալու*» (հ. II, էջ 1014): ԱԲ-ն *քստմնելի*-ն նշում է «փշաքաղելու,

* Առանձնացված բառերն առկա են նաև ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 3286-ում (299 բ): Բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ ՄՄՁ 4149, 5925, 8106, 8198 (II)-ում հենաբառը *ճենճերք*-ն է. *բարեխասս(ք)*-ը արձանագրված է ՄՄՁ 2371, 2372, 1654, 7117-ում. *ճենճեր(ք)*-ը չկա ՄՄՁ 530, 2335, 5919-ում: ՆՀԲ-ն *ճենճեր(ք)*-ը մեկնում է «...ն՝ ծուխ և՛ հոտ գոհի» (հ. II, էջ 179):

²⁸ Բառարան Սուրբ Գրոց, էջք 203, 209:

²⁹ Վազգեն վարդապետ, Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 2008, էջ 41: Բառի ստուգաբանության մասին տե՛ս նաև ՀԱԲ, հ. Դ, էջ 37: *Պատարագ-նուէր*-ի «գոհ» իմաստի մասին տե՛ս նաև Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 189:

³⁰ Հայերենում *քիստ*-ը ստուգաբանված չէ: Լ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ քննվող բառի համար առաջարկվող հայերեն ստուգաբանություններում հաշվի չեն առել այն ծագում է «ծղոտ» իմաստով ասորերեն բառից, տե՛ս Լ.Тер-Петросян, Армения и христианская Сирия: культурные связи (IV-V вв.), Ереван, 2022, ст. 128:

խրտնելու, վախենալու. հիանալի» իմաստներով (էջ 838): ՄՀԲ-ն վկայում է *քսմտիլ*-ը՝ «փշաքաղվել, սարսռալ, քստմնել» (ՄՀԲ, 2009, էջ 818): ՄՀԲ-ն վերը նշվածին առադրում է «Ամենագազիր, ամենագզուելի, գարշանք առաջ բերող» իմաստը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 591): Արդի հայերենի բացատրական բառարանները *քստմնելի*-ն բացատրում են իբրև «սոսկում առաջ բերող... փշաքաղող, սարսրոեցնող» (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 751), նաև «քարմանք առաջացնող» (ԱՀԲԲ, էջ 1577)՝ միաժամանակ *քարմանք*-ը մեկնելով «Զարհուրանքից՝ զզվանքից՝ գարշանքից փշաքաղվել» (ՀԼԲԲ, ն.տ.: ԱՀԲԲ, ն.տ.): Բառարանների տվյալներով *քստմնելի*-ն ունեցել է նաև «սխրալի», այն է՝ «սքանչելի, հրաշալի, հիանալի» իմաստը (ՆՀԲ, հ. II, էջ 718), և փաստորեն ՆՀԲ-ի, ԱԲ-ի՝ *քստմնելի*-ի համար արձանագրած «սխրալի», «հիանալի» իմաստը մեկ անգամ ևս հավաստվում է քննվող ՁԲ-ներով: *Քստմնելի*-ի «սքանչելի, հրաշալի, հիանալի» իմաստը ընդունելի կարելի է համարել, եթե համեմատվեն Հրաչյա Աճառյանի արձանագրած, արդեն հիշատակված *հոյ-հոյակասք, ահ-ահագին* «իմաստային զարգացումները» (ՀԱԲ, հ. Գ, էջ 113), քանի որ փշաքաղվել կարելի է նաև հիացմունքից, զարմանքից: Հետագայում իմաստի բնեռացմամբ պահպանվել է միայն «զզվանքից՝ գարշանքից փշաքաղվել»-ը:

Միայն ՄՄՁ 4149-ում՝ *Վհուկ. որովայնակոչ. մաղաբովթ. լերդահմայք. ձեռնածուք. կեսից. թովիչք. կախարդք. մոզք. դիւթք* հենարառով ՀԲԾ-ում առկա է *դեղատու(ք)*-ը (362բ): Մխիթար Սեբաստացին արձանագրում է «դեղ տուօղ. դեղ խմցնօղ», այլև «գեհիր տուօղ կամ խմցնօղ. գեհիրով սպանօղ» նշանակությունները (ԲՀԼՄՄ, էջ 102 (715)): ՆՀԲ-ն և հետագայում լույս տեսած բառարանները բացատրում են՝ «Տուող գդեղ, մանաւանդ գմահադեղ. կախարդ....» (ՆՀԲ, հ. I, էջ 608: ԲՀ, 76: ԽԲՀՌ, հ. I, էջ 313): Բառը հիշատակված իմաստներով, նաև «հին բառ կամ նշանակութիւն» նրշումով են արձանագրում ՄՀԲԲ-ն (հ. I, էջ 502), ԱՀԲԲ-ն (էջ 287), իսկ ԺՀԼԲԲ-ն՝ միայն «դեղանյութեր պարունակող, որից դեղ է ստացվում» (հ. I, էջ 491)՝ *մեղրատու, յուղատու* բառերի նմանությամբ: Այս բառի առնչությամբ պարզապես հարկ է հիշատակել *դեղ*

արմատի՝ Էդուարդ Աղայանի նշած գործառական հիմունքով իմաստափոխությունը³¹, և *դեղատու* բառի համար արդի հայերենում արձանագրել իմաստի բնեռացում³²:

ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 7117-ում վերոնշյալ ՀԲՇ-ին (319ա) հավելվել է **գարընկեց**-ը³³: *Գարընկեց*-ը հիշատակում է Մխիթար Սեբաստացին «*գարի ձգող ...//...գարեհմայ. հատընկեց. հատահմայ*» «նոյնանշան բառից յարադրութեամբ» (ԲՀԼՍՄ, էջ 102 (1131): Այն Կյուրեղ Ալեքսանդրացու երկի թարգմանությունից առանձնացնում են նաև ՆՀԲ-ն՝ «Որ գարիս ընկենու ի հմայել. գարեդիւթ» բացատրությամբ (հ. I, էջ 530-531), և ԱԲ-ն (էջ 204): Հետագայում լույս տեսած բառարաններից ՄՀԲԲ-ն հիշատակում է *գարընկեց, գարեդիւթ, գարեհմայ* բառերը (հ. I, էջ 414-415): *Գարընկեց*-ն արձանագրում են ԺՀԼԲԲ-ը՝ հղելով *գարեհմա*-ին (հ. I, էջ 374), ՀԼՀԲ-ն՝ «բրբ.» նշումով՝ *Գարեդյութ, գարեհմա, բախտագուշակ, գուշակ, բախտ բացող, գարի գցող* բառաշարքում (էջ 137): ՀԼԴԲ-ում *գարի գցել* և *գարի գցող* դարձվածային միավորները «խսկց.» նշումով են (էջ 134). *գարի ձգել*-ն առկա է «Միջին հայերենի բառարան»-ում³⁴:

Բառային տարբերակները քննելիս անդրադառնալով *Նուագ* հենարառով ՀԲՇ-ին՝ նշվել է, որ միայն **ԺԶ դարից** ավանդված ՄՄՁ 5126-ում է արձանագրվում միջին պարսկերենից փոխառյալ *նիհար*-ի (ՀԱԲ, հ. Գ, էջ 452)՝ հայերենի բարբառներում գործածվող **նիխար** տարբերակը՝ ՆՀԲ-ում արձանագրվող «վտիտ. հիւժեալ.

³¹ «... **դեղ** գրաբարում նշանակել է «խոտ», ապա մասնավորապես՝ «բուժական նպատակներով օգտագործվող բույս»...» (ՀԱԲ, հ. Ա, էջ 647-648: Նաև՝ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 82-83):

³² Վ. Համբարձումյանը *դեղ* բառի համար «նոր շրջանի» գրաբարում արձանագրում է իմաստային այլ բնեռացում՝ «հատկապես «դեղամիջոց» և «ներկ, գույն» իմաստների հակադրության պայմաններում». տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու, ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990, էջ 238-239:

³³ Բառն առկա է նաև ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 6097-ում (147ա), ՄՄՁ 6624-ում (287բ), այլև ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (4բ):

³⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), հ. Ա, Ե., 1987, էջ 140:

մաշեալ և նուազեալ յանսուաղութենէ» իմաստով (հ. II, էջ 425): Իսկ ահա նույն դարից ավանդված ՄՄՁ 532-ում՝ նույն ՀԲԾ-ում, առկա *քիչ*-ը (94բ) որևէ այլ ձեռագրում չկա: Այն փոխառություն է դիտվում իրանական լեզուներից՝ վկայված ԺԱ դարից (ՆՀԲ, հ. II, էջ 1007: ՀԱԲ, հ. Դ, էջ 580)³⁵, թեև Հրաչյա Աճառյանը հավանական է համարում բնիկ թաթարական բառ լինելը՝ համեմատելով «տձկ. kučuk, թթր. kičik» և այլ ձևեր (ՀԱԲ, ն.ս.): Նրա մոտեցման թեական լինելը կարելի է, թերևս, ամրագրել հետևյալ փաստերով. *քիչ*-ը չի հիշատակվում Գևորգ Ջահուկյանի և Լավրենտի Հովհաննիսյանի առանձնացրած իրանական փոխառությունների ցանկերում³⁶: Այն գործածվում է հայերենի բարբառներում (մասնավորապես Մեղրու, Կարճևանի, Ղարաբաղի, Ագուլիսի)՝ *կի նջի* «քիչ. փոքրիկ», *կիճի* «քիչ. փոքր. փոքրիկ. մանրիկ» տարբերակներով³⁷. ասել է՝ վերոբերյալ ձևերը ժամանակագրորեն ավելի վաղ են փոխառվել, ինչպես փաստարկում են Գևորգ Ջահուկյանը և Լավրենտի Հովհաննիսյանը՝ գտնելով, որ «... հին և միջին իրանական լեզուների համար բընորոշ է խուլ պայթական և կիսաշփական բաղաձայնների ոչ շնչեղ արտասանությունը. այս առումով *p, t, k, č* բաղաձայնների դիմաց հայերենում *պ, տ, կ, ճ* պարզ խուլերի առկայությունը վկայում է նրանց ժամանակագրական ավելի վաղ շերտերի պատկանելու մասին՝ ի տարբերություն *փ, թ, ք, չ* արտացոլումների ...»³⁸:

ԺԷ դարից ավանդված գրչագրերում (ՄՄՁ 268 (307ա), 533 (8ա), 537 (222բ), 2330 (98բ) և այլն)՝ *Կորացեալ. ընկճեալ. ընկեցեալ.*

³⁵ ՄՀԲ, հ. Բ, Ե., 1992, էջ 444:

³⁶ Տե՛ս ԶԼՊՆԺ, էջ 488-582: Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 263-271:

³⁷ Է. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 311: Հ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Ե., 1960, էջ 218: ՀԳԲ, էջ 925:

³⁸ ԶԼՊՆԺ, էջ 559: Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 78: ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 682-ում՝ *Նուագ* հենարանով ՀԲԾ-ում (6ա), *նիխար*-ին հավելվել է *վոխու*-ը (այն առկա է նաև ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 3450-ում (78բ)), որը ՆՀԲ-ում վկայվում է «որպես թե... նուազեալ. ոսին. սին. նուրբ. մանր. տկար. նուագ» (հ. II, էջ 834): Մեկ այլ հավելում՝ «Դոյգն. սակա. խուն. չափաուր. սուղ. թեթև» նշանակությամբ *փոքր* բառը (ՆՀԲ, հ. II, էջ 960), առկա է ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 6097-ի նույն ՀԲԾ-ում (285բ. այն վկայվում է նաև ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (4բ)):

շրջեալ. զիջեալ. քահեալ. կորակնեալ ՀԲԾ-ում, առանձնացող **հոյովեալ***-ն ակնհայտորեն փոխաբերորեն «կյանքի հատակն ընկած, գլորված, ընկճված» իմաստն ունի: ՆՀԲ-ն, *հոյովելի*-ի «Գլել. գլորել. թաւալել. շրջեալ. իրօք կամ նմանութեամբ. փոփոխել. յեղեղել. բռլորել. գալարել. կուտել» նշանակություններից բացի, հղում է նաև Աթանաս Ալեքսանդրացու ճառերը և Ներսես Լամբրոնացու մեկնությունները՝ առաջինում արձանագրելով հունական ոճ՝ «անկցին» («Առաջի նորա հոյովեացին եթովպացիք»), երկրորդում՝ ռակական՝ «իբր ռմկ. ընկած, ձգած» («Ծերն հոյովեալ է և գառանցեալ». հ. I, էջ 115): Մխիթար Մեբաստացին *հոյովելի*-ը նշում է *Գլորելի* բառահոդվածում՝ «նոյնանշան բառից յարադրութեամբ» նաև «թաւալել... տապալել. տապալեցուցանել» իմաստով (ԲՀԼՄՍ, էջ 113 (1142))³⁹:

Ստահակ-ը հավելվել է միայն բառերի այբբենական դասավորությամբ ՄՄՁ 3824-ում՝ *Այտուցեալ. փքացեալ. ամբարշտեալ. բողբացեալ. ամբարձեալ. կիսագոռոզ. հպարտ. ամբարտաւան. անձնահաճ. սնապարծ. սնափառ. ստափառ. ամբարհաւաճ. ըմբարհակեալ. ընդվզել. խրոխտալ. խանչալ. խանծալ. պանծալ. փռռնկալ. կոկզանալ. կոտզանալ. բարձրավզիլ. ինքնահաճ և վէս* ՀԲԾ-ում (47ա): ՆՀԲ-ն բառը բացատրում է «... (իբրև ի հետտութիւն հակ, կամ ըստահակեալ...) Անսաստ. ստամբակ. անկարգ. անխրատ. անառակ. խռովարար. իւեռ. ըմբոստ. յանդուգն. իխիտ» (հ. II, էջ 741): Հրայրա Աճառյանը բառը համարում է «թերևս փոխառեալ իրան. *stāhak ձևից...» (ՀԱԲ, հ. Դ, էջ 268): Էդուարդ Աղայանը, համեմատելով ՆՀԲ-ի վկայությունները, կարծում է, որ «մեծագույն մասին ավելի հարմար է «անկարգ, մոլար, անխրատ» իմաստը»,

* ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 5596 (219 բ)-ում, ԺԴ դարից՝ ՄՄՁ 8198 (I, 56 ա)-ում, ԺԵ դարից՝ ՄՄՁ 266 (78 ա)-ում, ԺԶ դարից՝ ՄՄՁ 532 (89բ), 538 (88ա), 3197(149 բ), 7250 (77ա)-ում՝ *հոյեալ* տարբերակն է, ԺԴ դարից՝ ՄՄՁ 530 (61բ), 5919 (206ա)-ում, ԺԵ դարից՝ ՄՄՁ 2335 (254 ա)-ում՝ *հոյեալ*-ը:

³⁹ Ա. Մուրվալյանն առանձնացնում է *հոյովելի*-ը նշելով «բառիմաստի մասնագիտական տարբերակում» (Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 112). այս՝ «բառի ձևը փոփոխել՝ տարբեր հոյովներ կազմելու համար» իմաստն առաջնային է արդի հայերենի բացատրական բառարաններում (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 370: ԱՀԲԲ, էջ 888):

ուստի «բառի նախնական իմաստը պետք է համարել «մոլար, մոլի, ստամետ»... կազմված *սուտ* և *հակ* արմատներից»⁴⁰: Այս վարկածին է հակված Լավրենտի Հովհաննիսյանը՝ *ստահակ*-ն առանձնացնելով իրանական փոխառությունների ցանկից⁴¹: Գևորգ Ջահուկյանը *ստահակ*-ը համարում է իրանական փոխառություն՝ համեմատելով նաև միջին պարսկերենի պազենդական *vastāx*՝ «վստահ, ինքնավստահ, համարձակ, անպատկառ, լիրբ», պարսկերեն *ustāx*՝ «վստահ, համարձակ, լկտի» տարբերակները (ՀԼՊՆԺ, էջ 544): Այդուհանդերձ, *այտուցեալ, փքացեալ, ամբարշտեալ, ըմբահրկեալ* բառերի իմաստների քննությունից ելնելով՝ հարկ է անդրադառնալ բառ-հավելմանը, որքանով ՆՀԲ-ի նշած բնագրային մի քանի օրինակում (ինչպես՝ «Մտահակք են, որք արտաքոյ կամաց ա՛յ և առաջնորդաց գործս գործեն», «Որ ստահակ իշխան ունիցի, այնպես համարէ՛ թէ քարավեժ լինիցի հանապազ», և կամ՝ «Թերևս ստահակ ուն էր եղբայրն. յաղագս որոյ մատեաւ առ յիսուս գտանել իրաւունս» (ՆՀԲ, ն.տ.)) եղուարդ Աղայանի առանձնացրած նախնական («... մոլար, մոլի, ստամետ» ... կազմված *սուտ* և *հակ* արմատներից») իմաստն այնքան էլ որոշակի, ստույգ չէ, այլև Հրաչյա Աճառյանի և Գևորգ Ջահուկյանի՝ բառի համեմատության համար առանձնացրած իրանական լեզուներում առկա վերոբերյալ իմաստները հնարավորություն են ընձեռում *ստահակ*-ը հավելելու նշված ՀԲԾ-ին: Թեև անվերապահորեն չի կարելի պնդել, որ ինքնավստահ, համարձակ, անպատկառ, լիրբ անձը մշտապես ստության է հակված, բայց և միաժամանակ գոռոզ-ը, ամբարիշտ (անհաշտ)-ը, բնականաբար որոշ վերապահությամբ, անհնազանդ և ըմբոստ կարող է լինել: Այս առիթով *ստահակ*-ը բացատրելիս հարկ է հիշատակել Միխիթար Մեբաստացու նշած *զայլըմ* բառը (ԲՀԼ, էջ 1008 (1067)⁴², որը Հրաչյա Աճառյանը «թուրքերենէ փոխա-

⁴⁰ Է. Աղայան, Բառաբնական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 135-136:

⁴¹ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 230:

⁴² Միս. Մեբաստացին *ստահակ*-ի համար նշում է «խեռ. կամ հեստ. կամ ըմբոստ. կամ դիմադարձ. կամ անզգամ. և կամ զեղիս վարուք... Բսկ մերթ անաստ. կամ

ոեալ» բառ է համարում՝ «անգույթ, բռնակալ, անողոք, հարստահարիչ, խիստ չար» նշանակություններով⁴³, իսկ ՀԼԲԲ-ն հավելում է բարբառներում գործածվող «1.Շատ ճարպիկ, համարձակ, ամեն ինչ ձեռքից եկող (մարդ):3. Կատաղի, մոլեգին: 4. Շատ, չափազանց: 5. Ուժեղ, սաստիկ» իմաստները (հ. Ա, էջ 394): ՀԼԲԲ-ն էլ *Խարդախ* գլխաբառով բառահողվածում վկայում է *ստահակ* և *սրիկա* բառերը (էջ 259): ԺՀԼԲԲ-ը *ստահակ*-ը բացատրելիս «անգուսպ, բուն, հանդուգն»-ը նշում է «հնց.»՝ առաջնային համարելով «անկարգ, թոկից փախած, սրիկա»-ն (հ. IV, էջ 330), իսկ ԱՀԲԲ-ը առանց որևէ նշումի՝ «1....խարդախ, նենգ, վատ: 2. Անկարգ, սանձարձակ (մարդ)....» (էջ 1328): Ուստի կարելի է արձանագրել, որ բառն իմաստային այլ երանգ է ձեռք բերել արդի հայերենում:

Ինչ վերաբերում է *Այտուցեալ* հենաբառին, այն ձևաիմաստային առումով *ուռուցեալ*-ի նմանակումն է (ՆՀԲ, հ. II, էջ 554): ԲՀ-ն արձանագրում է և՛ *այտուցեալ*-ը, և՛ *փքացեալ*-ը՝ որպես «ուռուցեալ, կամ փքացեալ, կամ հպարտացեալ» (ԲՀ, էջք 17, 328): Ենթադրելի է, որ այսօր էլ խոսակցական լեզվում օգտագործվող *ուռածփքված* արտահայտության համար աղբյուր կարող են լինել քննվող բառարանները: Արդի բացատրական բառարանները «գոռոզանալ, ամբարտավանանալ» փոխաբերական իմաստով ունեն և՛ փքվելը, և՛ ուռչելը, և՛ ուռած-փքվածը (ԺՀԼԲԲ, հ. IV, էջք 605-606, 693: ԱՀԲԲ, էջք 1496 -1497, 1544): Մերօրյա ժողովրդախոսակցականում *ուռչել*-ով երբեմն բնորոշվում է նաև «նեղանալը» (տե՛ս ՀԼԲԲ, էջք 483, 645: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 606: ԱՀԲԲ, էջ 1497), իսկ նեղացած լինելը, խռովելն ինչ-որ չափով անհաշտ լինելն է (ՀԼԲԲ, ն.տ.): Եվ եթե *անհաշտ*-ը նաև *ամբարիշտ*-ն է, ինչպես «խոսակցական» նշումով առանձնացնում են ՀԼԲԲ-ն (էջ 53), ԱՀԲԲ-ն (էջ 30), ՀԼԲԲ-ն (հ. Ա, էջ 50), և այն բնորոշ է դիտվում Արարատյան բարբառին (ՀԼԲԲ, հ. Ա,

անգուսպ. կամ աննուաճելի. և կամ ամեհի.... Երբեմն ևս դժնդակ. կամ դժնեայ. և կամ անտանելի». տե՛ս անդ):

⁴³ Հ. Աճառեան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 83:

էջ 48), ապա միանգամայն ընդունելի կարող է համարվել *ամբարիշտ*-ի՝ նաև «գոռոզ լինել»-ը: Այսինքն՝ ուռած-փքված անձը գոռոզ է, ամբարիշտ (-անհաշտ), վերջինս էլ, բնականաբար որոշ վերապահությամբ, կարող է *անհնագանդ* և *ըմբոստ* լինել: Այնպես որ գրչագրերի ՀԲԾ-ի կազմության սկզբունքով, իմաստային հավանական նրբերանգ-տարբերակներով ընդունելի է *ամբարշտեալ*-ի և *ըմբահկել*-ի առկայությունը ՀԲԾ-ում:

ՀԲԾ-ում առանձնանում են նաև *փղփչացեալ* և *բողբոջացեալ* բառերը⁴⁴: Հրաչյա Աճառյանը *փղփջանալ* տարբերակը՝ «խմորի ուռչիլը» իմաստով, հիշատակում է *Պղպջակ* «ջրի երեսին ձևացած բշտիկ» բառահոդվածում. «Բնիկ հայ բառ՝ հնիս. bul-«ուռչիլ» արմատից, որ երևան է գալիս նաև bol-, bhel-, phel- ևն հոմանիշ ձևերով ...» (ՀԱԲ, հ. IV, էջ 90): Նրա հավաստմամբ՝ «Նոյն արմատի ժառանգներից» է «հայերենի մէջ և բողբոջ.... (հնիս. bhel-, bhel- արմատից)» (ն.տ.): ՆՀԲ-ն *ուռնում/ուռչիւ*-ը մեկնում է նաև «փքանալ, ամբարտաւանիլ, հպարտանալ» (հ. II, էջ 554), *բողբոջանամ*-ը՝ նաև «ցցուիլ» (հ. I, էջ 504): Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *ցցուիլ*-ը *ցից* արմատի «սաստկականն» է, որը նաև նշանակում է «դուրս տրնկուիլ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 457): Եվ եթե համադրվեն ՆՀԲ-ում արձանագրված իմաստները, ապա *փղփչացեալ*-ը, նմանեցնելով *ուռած-փքված*-ին, *բողբոջացեալ*-ը՝ *ցից լինել*-ին («տնկվել, կանգնել». ՀԼԴԲ, էջ 568), *ցից* -ին («ցցված, ցցի նման/պես տնկված, դեպի վեր ձգված՝ խոյացած». ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 558: ԱՀԲԲ, էջ 1476), դրանք փոխաբերորեն կարող են ներկայացվել իբրև «(դուրս) ցցվող, ցից»: Իսկ ամենուր երևալ ցանկացողը, անընդհատ «ցից լինողը» սովորաբար լինում է ինքնահավան, սնապարծ մեկը: Ի հաստատումն *բողբոջա-*

⁴⁴ ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 5596-ում և ՄՄՁ 4612-ում, ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 532-ում *փղփչացեալ* բառն է, ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում՝ *փղպջացեալ*-ը, ՄՄՁ 2371-ում՝ *բողբոջացեալ*-ը, ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 532-ում՝ *փղփչացեալ*-ը, ՄՄՁ 2372-ում՝ *բողբոջացեալ*-ը: ԺԷ դարից ավանդված՝ բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ գրչագրերում *բողբացեալ* տարբերակն է, բառերի ոչ այբբենական դասավորությամբ ՁԲ-ներում՝ *բողբոջացեալ*-ը. բացառություն են ՄՄՁ 2281, 6097-ը և ՄՄՁ 2369, 3200-ը՝ համապատասխանաբար *փղփջացեալ* և *փղբձացեալ* տարբերակներով:

ցեալ→*ցից*, *ցցված*→*ուռած-փքված* իմաստային անցումի՝ հավելելի է նաև *բող*, *բողբոջ*-ի **bhel-*, **bhol-* նախաձևերի «հիմնական «ուռ-չիլ» նշանակությունը, որից էլ, ըստ Հրաչյա Աճառյանի, առաջացել են «բարձրանալ» (բլուր) և «գնդաձև (ուռուցիկ) կերպարանք առնել» (բրբ.՝ բուլ) նշանակությունները (ՀԱԲ, հ. Ա, էջք 461-462, 464). պարզորոշ է, որ երկու դեպքում էլ հավանական է նշված փոխաբերական իմաստը:

ՄՄՁ 537-ի նույն շՖՇ-ում (217ա) առկա է *ստափառ*-ը, որը ՆՀԲ-ն «Ուրիցէ սուտ վարկ կամ կարծիք» մեկնությամբ քաղում է ԺԲ դարում (կամ դրանից հետո) ստեղծված մի գրվածքից (հ. II, էջ 743): ԱԲ-ն, Սիմոն Գաբամաճյանը բառը հիշատակում են «կարծիքը սուտ» նշանակությամբ (ԱԲ, էջ 766: ԳՆԲՀԼ, էջ 1211): *Ստափառ*-ը հունարեն *չարափառ* (ՀԱԲ, հ. Դ, էջ 482) բառի նմանությամբ կազմություն է՝ «կեղծ փառքի արժանացած» նշանակությամբ, որ առկա է ՄՀԲԲ-ում՝ «Սուտ՝ մոլորական կարծիք կամ վարդապետություն պարունակող, չարափառ» նշանակությամբ և «հագուադեպ բառ» նշումով (հ. IV, էջ 262), այլև ԱՀԲԲ-ում (էջ 1330)՝ «հնց.» նշումով⁴⁵: Ակնհայտորեն հենց այս իմաստն է ակնարկվում նաև *Սյտուցեալ* հենարառով շՖՇ-ում:

ՄՄՁ 2019-ում *Ասել. ոգել. պատմել. թուել. ձայնել. ճառել. առակս հրամայել. առագրել. արտադրել. արտասել. վիպել. հաւանել. վարկանել. բացառոցել. բացիրել. բանալ. խոստովանել. դաւանել. ճամարտակել. առասել. հատուցանել. բարբառել. համարել. քարոզել. վճարել. աստենախոսել. նօթճել. հրապարակել* շՖՇ-ի (166բ) վերջին բառը փոխարինվել է *հրատարակել*-ով: Այն կարելի է *տ* և *պ* տառերը շփոթելու հետևանքով վրիպակ համարել, բայց կարելի է նաև բառարաններով պարզաբանել այս բառ-հավելումը: Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ *հրատարակ*-ը⁴⁶ «մունետիկ, հրապարակող»-ն է (ՀԱԲ, հ. Գ, էջ 133), ասել է՝ լուր տարածողը, և բնակա-

⁴⁵ ՀԼՀԲ-ն բառը հումանիշ է համարում *չարափառ-չարադավան*-ին՝ *հերետիկոս*-ին (էջք 524, 525, 586):

⁴⁶ Գ. Զահուկյանն այն համարում է ածանցավոր կազմություն. տե՛ս ՀԼՊՆԺ, էջ 568:

նաբար ենթադրվում է ասել-խոսելը: Մխիթար Մեբաստացին *հրատարակել*-ը հղում է «մէյտան հանել. ամմէնուն իմացնել» իմաստով *հրապարակել*-ին (ԲՆԼՄՍ, էջ 235(848)): Գրաբարում *հրատարակել*-ն արձանագրվել է «հռչակել. քարոզել. հրապարակել. հանդիսացուցանել» իմաստներով (ՆՀԲ, հ. II, էջ 138: ԱԲ, էջ 512), ԲՀ-ում՝ «հայտնել, կամ քարոզել, կամ մեկնել, կամ վճարել» (էջ 191): Նշված իմաստները ՄՀԲԲ-ում, ԱՀԲԲ-ում «հին բառ կամ նշանակութիւն», «հնց.» նշումներով են (ՄՀԲԲ, հ. III, էջ 149: ԱՀԲԲ, էջ 906), ԺՀԼԲԲ-ում՝ առանց որևէ նշումի, բայց և առաջնային են համարվում «տրպագրել և լույս ընծայել, որևէ պարբերականի լույս ընծայումը ձեռնարկել և տնօրինել» իմաստները (հ. III, էջ 393): Արդի հայերենում արձանագրելի է բառիմաստի փոփոխություն՝ նախնական, առաջնային իմաստի՝ *հրապարակել*-ին փոխանցումով⁴⁷:

Ինչ վերաբերում է ՀԲՇ-ում առկա *վճարել*-ին, ապա բայի առկայությունը թերևս բացատրելի է *վճար* արմատի ստուգաբանությամբ: Հրաչյա Աճառյանն այն բխեցնում է «պիլ. *vičār* ձևից» («վարձք, փոխարեն հատուցում» նախնական իմաստով, որից *վճարել* «կատարել, գործադրել, վերջացնել»)՝ համեմատվող տարբերակներում հիշատակելով նաև *vičartan*-ը՝ «բաժանել, լուծել, գատել, բացատրել, մեկնել, կատարել», և *vazardan*-ը՝ «բաժանել, մեկնել, մեկնաբանել» (ՀԱԲ, հ. Դ, էջ 345-346. ընդգծ.՝ Ն. Հ.): Իսկ «բացատրել, մեկնել, մեկնաբանել»-ն անկասկած ենթադրում է նաև «բացահայտում պարզաբանում», ուրեմն և դարձյալ՝ ասել-խոսել: *Հրատարակել. վճարել*-ի համար ենթադրելի է նաև *Dixi* արտահայտությունը՝ ««Ասի. վերջացրի»: Այսպես էին վերջացնում հռոմայեցի հռետորներն իրանց ճառը, ցանկանալով ասել, որ խօսքը վերջացած է»⁴⁸:

⁴⁷ Պ. Բեդիրյանը բառիմաստի «ֆունկցիոնալ անցումների» մի քանի օրինակ ներկայացնելիս հիշատակում է նաև «*հրատարակ* «մունետիկ» - *հրատարակ առնել* «լուրը տարածել, ամենքին քարոզել», *հրատարակիչ*, այժմ *հրատարակել* «տպագրության միջոցով տարածել»-ը. Պ. Բեդիրյան, նշվ. թեկն. ատեն., էջ 33:

⁴⁸ Բառգիրք լատիներեն և օտարազգի դարձուածների, Համառոտ քերականութիւնով կազմեց Վ.Ա., Թիֆլիս, 1911, էջ 26: *Վճար*-ը «վերջ, լրումն» իմաստով վկայվում

ՄՄՁ 5995-ում *Հիւղինակ. դէտ. պարէտ. էապատիւ. առաջնորդ. հովիւ. վերակացու. տեսաւղ. ինամիչ. նախախնամաւղ. յոգաբարձու. ինամածու. տնտես. հագարապետ. մատակարար. ապահով. ապաքինիչ. փարատիչ. վարդապետ և բժիշկ* ՀԲՇ-ին (211բ) հավելվում է *դիտապետ*-ը, իսկ ՄՄՁ 6097-ում (281բ)՝ *տանուտէր, ինամարար*-ը*։ Ըստ ՆՀԲ-ի՝ *հեղինակ*-ը «առաջնորդ. առաջնորդօղ. ... գլուխ սկզբնահայր»-ն է (հ. II, էջ 83), *դիտապետ*-ը՝ նաև «առաջնորդ»-ը (հ. I, էջ 626), *տանուտէր*-ը՝ նաև «ազգապետ, ցեղապետ, նահապետ»-ը (հ. II, էջ 843)։ Իսկ նահապետ-ազգապետ-առաջնորդ-ը, պատասխանատու լինելով հպատակների համար, պետք է հոգ տանի նրանց մասին, հոգա կարիքներն ու պետքերը. այստեղից էլ *ինամարար* բառի հավելումը (*ինամ* «հոգատարութիւն, հոգացողութիւն, ջանադրութիւն»։ ՀԱԲ, հ. Բ, էջ 378. հմմտ.՝ *Խնամարար*, տե՛ս *Խնամածու*. ԱԲ, էջ 381)։ Ըստ բառարանների՝ արդի հայերենում որոշակի նշումներով առկա են *դիտապետ*-ը («կրոն., հնգ.». ԺՀԼԲԲ, հ. I, էջ 515: ԱՀԲԲ, էջ 301), *տանուտէր*-ը («պատմ., հնգ.». ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 445: ԱՀԲԲ, էջ 1410) և *ինամարար*-ը (տե՛ս *Խնամատար*. ԺՀԼԲԲ, հ. II, էջ 531: ԱՀԲԲ, էջ 585), իսկ *հեղինակ*-ի «նոր նշանակութիւնն է «երկասիրող»» (ՀԱԲ, հ. Գ, էջ 78. հմմտ.՝ ԺՀԼԲԲ, հ. III, էջ 335: ԱՀԲԲ, էջ 855)։

* *
*

Էդուարդ Ադայանի վկայությամբ՝ «... ժամանակակից հայերենի պատմական իմաստաբանության համար առաջնակարգ նըշանակություն ունեն գրաբարյան իմաստափոխությունները, որովհետև մեր լեզվի բառապաշարի հիմնական զանգվածը կամ միջուկը գրական ժառանգորդությամբ գրաբարից է գալիս և գրաբարյան իմաստափոխությունները, բնականաբար, ժառանգորդաբար ան-

է միջնադարյան պանդխտության տաղերում. տե՛ս Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV-XVIII դդ.), Ե., 1979, էջ 183:

* Առանձնացված բառերն առկա են ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (3բ):

ցել են ժամանակակից հայերենին»⁴⁹: Նա, վերլուծելով «գրաբարից գրական ժառանգորդությամբ աշխարհաբարին անցած բառերի գրաբարյան և ժամանակակից իմաստների հարաբերակցությունները», հանգում է այն եզրակացության, որ «գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցությունը» որոշելը «հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի ոչ գրաբարյան նշանակությունները..., որոնց օգնությամբ միայն կարելի է ճշտորոշել գրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և դրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին»⁵⁰:

Արդեն նշվել է, որ բառարանների դիտարկումներն ու պրպրտումները հնարավորություն են ընձեռում առանձնացնելու նաև գրչագրերում առկա ժամանակակից հայերենում իմաստափոխված կամ իմաստային այլ երանգով վկայվող բառերը:

ԺԳ դարից ավանդված գրչագրերում *Ասել* հենաբառով ՀԲԾ-ում առանձնանում է *արտադրել* բայը (ՄՄՁ 4612, 173ա. 5596, 221 ա): ՆՀԲ-ն այն առաջին հերթին նշում է «Որպես Բացադրել, և բացատրել. առաջի դնել. ճառել. մեկնել. վճռել. յայտ առնել» (հ. I, էջ 376): Երեմիա Մեղրեցին արձանագրում է «յանձնէ ի բաց մերժել. կամ ի վեր երեւել կամ հոսել» (ԲՀ, էջ 40), Մխիթար Սեբաստացին՝ «դուրս դնել շինել. շարադրել... պտուղ տալ. ծնանիլ» (ԲՀԼՄՍ, էջ 60 (673)), ԽԲՀՌ-ն՝ "Производить, произращать, произносить, приносить доходъ" (հ. I, էջ 184) բացատրությունները: Բառը «հին» նշումով և ՆՀԲ-ի վկայած իմաստով առանձնացնում է ՄՀԲԲ-ն՝ հավելելով «արդիւնք առաջ բերել իր միջից», «արդիւնաբերել, աշխատանքով ստեղծել, շինել առաջ բերել իր միջից», «մտքով ստեղծագործել, հեղինակել» իմաստները (հ. I, էջ 281): Արդի հայերենի բառարաններն արձանագրում են «հեղինակել, ստեղծագործել» և «փխր.» նշումով «ստեղծել, ծնել» նշանակությունները (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 242: ԱՀԲԲ, էջ 142):

⁴⁹ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 76-77:

⁵⁰ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 77- 78:

Իրաւարար բառն առկա է *Դատաւոր. դատող* (ՄՄՁ 5596, 218 ա)⁵¹ ՀԲԾ-ում: Աստվածաշնչում *իրաւարար*-ը վկայվում է մեկ անգամ՝ «Եղիցի Տէր դատաւոր եւ իրաւարար ընդ իս եւ ընդ քեզ»⁵²: Մխիթար Սեբաստացին բառը մեկնում է՝ «Իրաւարար զիրաւունքս, կամ զարդարութիւն կամ զդատաստան առնօղ, կամ իրաւացուցանօղ: կամ դատաւոր. և կամ դատ առնօղ» (ԲՀԼ, էջ 344 (377), «եախ ընօղ.... դատօղ» (ԲՀԼՄՄ, էջ 157 (770)): Գևորգ Պալատացին *իրաւարար* բառը հիշատակում է պարսկերէն *Տատ* («Արդարութիւն.... ուստի և արդար և իրաւարար թագաւորն կոչոյի Տատկէր, որ ըստ այսմ հայերէն ևս ասի դատ, որ է իրաւունք»), *Տատար* («է անուն մի յանուանցն աստուծոյ. և նշանակէ արդար և իրաւարար»), *Տատկիւեթէր* («իրաւարար կամ արդարագործ») բառահոդվածներում⁵³: ՆՀԲ-ում «Որ առնէ իրաւունս դատարանաւ. արդար դատաւոր» բացատրությունն է (հ. I, էջ 872)⁵⁴, ԱԲ-ում՝ «դատաւոր. իրաւունք ընող» նշանակությունը (էջ 348): ՋԲ-ն «որ առնէ իրաւունս և արդարութիւն. արդարադատ» իմաստներին աստղանիշով (այսինքն՝ իբրև «նոր բառ») հավելում է «Միջնորդ դատաւոր ընտրեալ երկուց կողմանց զժողովոց յորոշել զդատ նոցա ըստ կանոնի խոհեմութեան» նշանակությունը (էջ 617)⁵⁵, ԽԲՀՌ-ն նշում է՝ "оказывающую справедливость" (հ. I, էջ 465 (տե՛ս նաև էջ 25)), Գրիգոր Փեշտրմալճյանը՝ արձանագրում՝ «Իբրև գոյական՝ նշանակէ արդար դատաւոր....»⁵⁶: ԳՀԲ-ում *իրաւարար*-ի հոմանիշն է «իրաւընտիր (արդար դատաստան անող)»-ը (էջ 308)⁵⁷: Հրայր Աճառյանի

⁵¹ ՄՄՁ 4612-ում *Տէր. դատաւոր. իրաւարար. քննաղ ՀԲԾ*-ն է (170բ):

⁵² Համարաբար գրաբար Աստվածաշնչի, էջմիածին, 2012, էջ 815:

⁵³ Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատոցոյ, Կ. Պօլիս, 1826, էջ 537 (601):

⁵⁴ ՆՀԲ-ում *իրաւարար* բառը հիշատակվում է *Անգրկող. Արդար, Դատաւոր, Իրաւարէր, Իրաւախոհ, Կշտարար* բառահոդվածներում (հ. I, էջք 146, 346, 601, 871, 872):

⁵⁵ Մ. Ջախջախյանը *Ուղղագործ* բառահոդվածում նույնպէս հիշատակում է *իրաւարար* և *արդար* բառերը (ՋԲ, էջ 1140):

⁵⁶ ՓԲ, հ. I, Կ. Պօլիս, 1844, էջ 508:

⁵⁷ Նույն հեղինակի կազմած «Գրաբարի բառարան»-ում արձանագրվում է նաև «միջնորդ դատաւոր» իմաստը. տե՛ս ԳԲ, հ. Ա., էջ 524:

հավաստամամբ՝ «*Իրաւ* իբր ուղ. գոյական ըմբռնուելուց յետոյ՝ տուել է նորանոր ածանցներ... իրաւունք, իրաւարար. իրաւացի» (ՀԱԲ, հ. Բ, էջ 250)⁵⁸: ՄՀԲ-ն նշում է *իրաւաբեր* բառը «իրաւունք և արդարութիւն բերող՝ անող, իրաւարար» (ՄՀԲ, 2009, էջ 294): Ստեփան Մալխասյանցը, *իրաւարար* «հին բառ»-ը բացատրելով «Իրաւունք և արդարութիւն անող, արդար դատաստան անող», «Միջնորդ դատաւոր»-ը նշում է իբրև «հագուադէպ նշանակութիւն» հղելով՝ (Տ. Դատաւոր) (ՄՀԲԲ, հ. II, էջ 174): Արդի հայերենի բացատրական բառարանները *իրավարար* (այսինքն՝ արդար դատավոր) են համարում միայն միջնորդ (արբիտր) և հաշտարար դատավորներին՝ «արդարադատ»-ը նշելով «հնց.», «հին» ի հակադրութիւն գրաբարում արձանագրված ընդհանրապէս արդար և անարդար դատավորների (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 361: ԱՀԲԲ, էջ 508)⁵⁹: Փաստորեն արդի հայերենում (ըստ բացատրական բառարանների) իրավարար-արդարադատ են համարվում միայն հաշտարար և միջնորդ դատավորները: Ուրեմն արդի հայերենում կարելի է իմաստի նեղացումով արձանագրել իմաստային տարբերակում:

Խոշոր. կարծր. ընդդիմահար. յաստատուն* . պինդ. անշարժ ՀԲԾ-ի (ՄՍՁ 4612, 177ա. 5596, 225ա) հենաբառը ՆՀԲ-ն բացատրում է՝ «անողորկ. կոշտ. անհարթ. հաստ. խիստ և կարծր» (հ. I, էջ 964), ԲՀ-ն՝ «խոշոր-կարծր» (էջ 146), ԲՀԼՄՍ-ն՝ «կոպիտ. հաստ. ծանտր» (էջ 175 (788)): ՄՀԲ-ն նշում է *խոշորնալ*, *խոշորցնել* բայերը՝ իբրև «կոպիտ՝ հաստ՝ անողորկ դառնալ, դարձնել», իսկ *խոշորութիւն* բժշկական եզրը՝ «պնդացում, կոշտացում» (ՄՀԲ, հ. Ա, էջ 348): Հրաչյա Աճառյանի վկայությամբ՝ «Գաւառականների և արդի գրական լեզուի մէջ *խոշոր* նշանակում է «մեծ, աւելի՝ կոպիտ կերպով

⁵⁸ Նաև հմմտ.՝ *Իրաւարար* և *Իրաւասեր* բառահոդվածները ՀԼՀԲ-ում (էջ 238):

⁵⁹ Տե՛ս նաև՝ ՄՀԲԲ, հ. II, էջ 174: Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 461: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 209: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 747: Ա. Կռանյանը հիշատակում է միայն՝ «դատաւոր (խաղի)» (Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 154):

* ՄՍՁ 2295-ում (122ա) առկա է երկու ՀԲԾ՝ *Խոշոր. կարծր. ընդդիմահար* և *Հաստատուն. պինդ*: ՄՍՁ 2369-ում (265ա) նույնպէս առկա է երկու ՀԲԾ՝ *Խոշոր. կարծր. ընդդիմահար* և *Հաստատուն. պինտ. անշարժ*:

մեծ» (ՀԱԲ, հ. Բ, էջ 395)⁶⁰: Ակնհայտորեն *խոշոր, հաստ, կարծր*-ը իմաստի փոփոխությամբ կամ, ինչպես հավաստում է Պետրոս Բեդիրյանը, բառիմաստի անցումով հանգել է *մեծ*-ին⁶¹։ Ժամանակին «կարծր, անշարժ, պինդ», այլն «ծանտր» համարվող *խոշոր*-ը, կարող էր դիտվել նաև «հաստատուն», ուրեմն և «դիմադրող, ընդդիմացող», հետևաբար, թերևս, «մեծ» (հմմտ.՝ большой, крупный, твердый, жесткий и сильный բառերի նշանակությունները հին ռուսերենում)⁶²։ Արդի հայերենի բացատրական բառարանները վերոնըշյալ իմաստները չեն նշում (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 550: ԱՀԲԲ, էջ 594):

Վաշկանդեղ-ը ՆՀԲ-ում վկայված է իբրև «Պնդապես կապել քարշելով. պրկել, արգելով և պնդել անշարժ» (հ. I, էջ 1052), ԱԲ-ում՝ «պիրկ կապել՝ կապկպել» (էջ 422): Բայն առկա է *Յարել. հիւսել. յարաշարել. մերձենալ. շողկապել. բեւեռել. ընդ միմեանս միատրել* ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 176ա-176բ. 5596, 224բ): Երեմիա Մեդրեցին ունի «հանգուցանել» բացատրությունը (ԲՀ, էջ 158), Մխիթար Սեբաստացին՝ «չորս դիէն կամ ամէն դիէն կապել» (ԲՀԼՄՍ, էջ 192 (805)): «Ամուր, կապել, կապկպել» իմաստն արձանագրում են և՛ ԱՀԲԲ-ն, և՛ ԺՀԼԲԲ-ն. առաջինը՝ «հնց.» նշումով (էջ 690), մյուսը՝ առանց որևէ նշումի (հ. III, էջ 49. բնագրային օրինակն էլ Բաֆֆու երկերից է («... կաշկանդեցին նրանց ձեռքերը»))՝ առաջնային համարելով «խոչընդոտել, արգելել» իմաստը. այն կարելի է իմաստի փոփոխություն համարել, քանի որ ամուր կապ(կպ)ված, անշարժ ամրացված լինելը սահմանափակում է շարժումները, հնարավորությունները, արգելակում դրանք, խոչընդոտում:

Նույն գրչագրերում *Վհուկ* հենարառով ՀԲՇ-ում (համապատասխանաբար՝ էջք 176բ և 224բ) վկայվում է *ձեռնածու*-ն: Մխիթար

⁶⁰ Հիշատակելի է նաև, որ Հ. Աճառյանի դիտարկմամբ՝ ««Մեծ, խոշոր» նշանակությամբ բառերը նաև «կոպիտ, տգեղ» իմաստն ունեն: Գրք. *խոշոր* բառը նշանակում է «կոպիտ», որից էլ ունենք *խոշորագեղ, խոշորաձայն* ևն». ՀԱԲ, հ. Դ, էջ 674:

⁶¹ Տե՛ս Պ. Բեդիրյան, նշվ. առեն., էջ 72:

⁶² Вл. Даль, Толковый словарь живого великорусского языка, т. 1, Москва, 1955, ст. 113. Հիշատակելի է նաև Գ. Ջահուկյանի՝ դասական հայերենի հուշարձաններում առանձնացրած «կարծր - պինդ - տրամ - ամուր - բիրտ - խեփ - խիստ-կոշտ - կոպիտ -մեստ (ուշ)» համանիշային շարքը (ՀԼՊՆԺ, էջ 400):

Մեքաստացու մեկնությունն է. «...զձեռս իւր վեր ի վայր ածող, որով նշանակի դիւթն, կամ վիուկն, որ շարժելով զձեռս իւր հմայե զսպաննեաց, կամ առնե զգործ ինչ դիւթական...» (ԲՀԼ, էջ 567 (616)): ՆՀԲ-ն, բառը բացատրելով որպէս՝ «Դիւթ. վիուկ. կիւս. կախարդոյ կամ հմայոյ՝ ածելով և յածելով զձեռս ի վեր և ի վայր...», հավելում է՝ «ի Հին բռ. ի կարգի փաղանուանց դնին ...»՝ բառաշարքը ներկայացնելով առանց վերջին երկու բառի (հ. II, էջ 152): ԱԲ-ն վկայում է «կախարդ» նշանակությունը (էջ 517): Արդի հայերենի բացատրական բառարանները ՆՀԲ-ում նշված իմաստներն արձանագրում են «հնց.»՝ առաջնային հավաստելով «աճպարար, ծաղրածու»-ն, փոխաբերորեն՝ «կամակատար, ստրկամիտ»-ը (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 411: ԱՀԲԲ, էջ 919): Աշոտ Սուքիասյանը *Խարեբա* բառահոդվածում հիշատակում է *ձեռնածու*-ն (ՀԼՀԲ, էջք 252, 412. տե՛ս նաև *հնարատր* բառի դեպքում): Արդի հայերենի բացատրական բառարանները չունեն «խարեբա» բացատրությունը, թեև ԱՀԲԲ-ում *ձեռնածություն*-ը «խարեություն»-ն է (տե՛ս ԱՀԲԲ, ն. տ.): Ուրեմն արդի հայերենում հավանական է համարել իմաստի տարբերակում:

Շինել. պատկանել. ցանկ ածել. յարդարել ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 177բ. 5596, 225բ) առկա *յարքինել* բայի համար Մխիթար Մեքաստացին օրինակներ է նշում հայ մատենագրությունից և այն մեկնում «ճարտար արուեստի կազմել. կամ շինել. կամ կերտել. կամ դրուագել. և կամ ձևացուցանել... Իսկ մերթ բարեկարգութեամբ առնել զիմն. կամ գործել. կամ իրակել. և կամ կատարել... Մերթ ևս պատրաստել. կամ հանդերձել. կամ յարդարել. կամ զամենայն պէտս իրիք հոգալով կատարելագործել զնա... Եւ մերթ՝ զարդարել. կամ պաճուճել. և կամ պճնել... Երբեմն ևս բարեձև վայելչութեամբ զիմն կարգել. կամ ի տեղուջ իւրում կացուցանել. կամ զետեղել. և կամ յարմարել... Իսկ երբեմն շարագրել. կամ շարամանել. և կամ գեղեցիկ կարգաւ յողել. և ըստ այսմ ասի՝ յօրինել զբանս. կամ զերգս. կամ զգիրս. և զայլս նմանս» իմաստներով (ԲՀԼ, էջ 734 (793): ԲՀԼՄՄ, էջ 287 (900)): ՆՀԲ-ում նշված «Օրինօք՝ ըստ օրինի՝ բարոք օրինակաւ կազմել. առնել. յարդարել. յերիւրել. յարմարել. յողել. կարգաւորել. ուղղել. տնօրինել. կարգել. յարդարել. յե-

դանակել. շարագրել. շարադրել» (հ. II, էջ 382) նշանակությունները ՄՀԲԲ-ն արձանագրում է իբրև «հին բառ կամ նշանակություն»՝ առադրելով «2. Սահմանել մի բան, ստեղծել, շինել:.... 5. Կազմել, կազմակերպել: 7. Շարադրել, հեղինակել» իմաստները (հ. III, էջ 424): ԺՀԼԲԲ-ն միայն «կազմել, կազմակերպել»-ի համար է նշում՝ «հնց.» (հ. II, էջ 383), իսկ ԱՀԲԲ-ն առանց որևէ նշումի արձանագրում է նաև «գարդարել, հարդարել, ձևավորել» իմաստները (էջ 897): Ուստի կարելի է *հորինել*-ի համար ևս արդի հայերենում ընդունել իմաստի տարբերակում:

Մի դիտարկում ևս. մի քանի գրչագրում վերը նշված ՀԲԾ-ում վկայվում են նաև *պաճուճել. պճնել. զեղազարդել. գունել. յղկել. զեղեցկացնել. զարդարել* բայերը (ՄՄՁ 530, 1654, 2371, 4612, 5126, 5596, 8198(I)). մյուսներում առկա է *Շինել* և *Պաճուճել* հենաբառերով երկու ՀԲԾ⁶³): Թվում է՝ ՄՀԲԲ-ի՝ «հին բառ կամ նշանակություն» նշումով *յորինել*-ի համար արձանագրած «գուզել, զարդարել»-ը (սա նշում է նաև Մխիթար Սեբաստացին) ԱՀԲԲ-ում առանց որևէ նշումի զետեղելը բխում է հենց գրչագրերի այս բառաշարքից. *հորինել*-ը արդի հայերենում *զարդարել*-ը չէ, ինչպես որ *հարդարել*-ը, ըստ բառարանների, այլևս «զարդարել» չի նշանակում (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. III, էջ 321), ինչպես դարձյալ նշվում է ԱՀԲԲ-ում (էջ 843):

*Չանխուլ. ծածուկ. անյայտ. առանց գիտելոյ. դաւադէտ. դարանամուտ. սքողեալ. խփեալ. ընդ գրուանաւ. ընդ վարագորաւ*⁶⁴ ՀԲԾ-ում (ՄՄՁ ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա) առանձնանում է *ընդ պատրուակաւ*-ը: ՆՀԲ-ն **պատրուակ** բառի համար նշում է «Ծածկոյթ երեսաց. քող և Դիմակ.... լայնաբար՝ Որպիսի և իցէ ծածկոյթ վերարկիչ. նուարտան. վարագոյր նմանությամբ՝ որպէս Կեղծիք. պատճառանք. առիթ» (հ. II, էջ 624: ԱԲ, էջ 688): Հետա-

⁶³ Հ. Ամալյանը, ըստ ՄՄՁ 2371-ի՝ մյուս ձեռագրերի օգնությամբ լրացումներ և մասնակի ճշգրտումներ կատարելով, ներկայացնում է բառարանի գլխաբառերը և նշում *շինել* և *պաճուճել* գլխաբառերով բառաշարքեր (Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 131):

⁶⁴ *Վարագոյր-պատրուակ*-ի մասին տե՛ս նաև Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 199:

գայում լույս տեսած բառարանները մեկնում են նույն կերպ (ՄՀԲԲ, հ. IV, էջ 475: ՀԱԲ, հ. Դ, էջ 54), իսկ արդի հայերենի բացատրական բառարաններում առաջնային է «մտացածին պատճառ. առիթ»-ը (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 183: ԱՀԲԲ, էջ 1199): ՀԲՇ-ից պարզորոշ է, որ թաքուն, ծածուկ, գաղտնի վիճակը հավասարազոր է ծածկոցի տակ կամ վարագույրի հետևում գտնվելուն, կամ նույնն է՝ կեղծ, մտացածին պատճառաբանությամբ իրողությունը թաքցնելուն: Այնպես որ եթե անտեսվեն բառաշարքում բառին նախորդող և հաջորդող *գրուան* և *վարագոյր* բառերը, ապա արդի հայերենի *պատրուակ*-ը միանգամայն օգտագործելի է դառնում և այս գրչագրում:

* *
*

Բառիմաստների փոփոխությունների տեսանկյունից հետաքրքրական են գրչագրերում վկայվող մի շարք բառեր, որոնք Նոր հայկազյան բառգրքի բառահողվածներում առկա են (կամ դրանք ավարտվում են) «Ըստ Հին բռ. որպէս փաղանուն դնի», «Գտանի ի Հին բռ. ի կարգի փաղանուանց այսպէս», «Իբրու փաղանուանք դրնին ի Հին բռ.», «Ի Հին բռ. որպէս փաղանուն դրին/դնին/դնի», «Ի Հին բռ. ի կարգի փաղանուանց դնին» «...զի որպէս փաղանուն դրին ի Հին բռ.» նշումներով⁶⁵: Դրանք հավաստում են, որ Մխիթարյան միաբանները ծանոթ են եղել հոմանիշների՝ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններին: Հատկանշական է, որ բառգիրքն աշխատասիրած միաբանները «Հին բռ.» համառոտագրությամբ արձանագրում են. «Հաւաքումն բառից ի գրչագիր համառոտ բառագիրս. գործ ժգ և ժդ դարուց՝ *ի գիտնոց և ի տգիտաց կցկցեալ, ի պէսպէս օրինակս այլևայլ օրինակս*» (ՆՀԲ, հ. I, էջ 14. ընդգծ.՝ Ն. Հ.): Եվ իրոք, այս գրչագրերում վկայվում են բառեր, որոնց առկայությունը հոմանիշների համապատասխան բառա-

⁶⁵ Տե՛ս, օրինակ, *Համոզել, Ձեռնածու, Յախունախասու, Շիւանք, Շոճք, Ուղփաճեմ, Վարնիկ, Յուց, Փեշաւոր* բառահողվածները. համապատասխանաբար՝ ՆՀԲ, հ. II, էջք՝ 29, 152, 314, 479, 489, 532, 548-549, 785, 917, 939-940:

շարքերում արդի տեսանկյունից շփոթեցնող է: Այդուհանդերձ, բառարանային դիտարկումներն ու պրպտումները հնարավորություն են ընձեռում պարզաբանելու, հիմնավորելու այդ բառերի գոյությունը հոմանիշների համապատասխան բառաշարքերում, այլև ներկայացնելու այդ իմաստների փոփոխությունները: Հարկ է նշել, որ այս դեպքերում օգնում են հատկապես գրաբարի տպագիր բառարանները՝ բնագրային օրինակներով, վկայություններով, հղումներով: Հայկ Ամալյանի հավաստմամբ՝ ««Հանդէս բանաստեղծաց»-ի հոմանիշները հիմնականում գրական լեզվի բառեր են. այն էլ մասամբ քիչ գործածական ու գրքային բառեր, որոնք հանդիպում են կրոնական, ճարտասանական, ներբողական և այլ գրական երկերում»⁶⁶:

Հետևաբար՝ կարելի է քաղել օրինակներ՝ սկսելով վաղ շրջանում ընդօրինակված գրչագրերից՝ մասնավորապես ԺԳ դարից ավանդվածներից⁶⁷:

Ռետոր. տելետի. վարժապետ. փիլիսոփայ. իմաստասեր. ամենիմաստ ՀԲԾ-ում առանձնանում է **Իմաստակ**⁶⁸ բառը (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 217բ): Ստեփան Մալխասյանցի հավաստմամբ՝ սկզբնապես նշանակելով «փիլիսոփայ-հռետոր, որ վարձով սովորեցնում էր հռետորութիւն և փիլիսոփայական գիտելիքներ. սոփեստէս»՝ այժմ *իմաստակ*-ը «խարդախ ապացոյցների միջոցով ու լեզուի ճարտարութեամբ ամեն ինչ և՛ հերքում է և՛ ապացուցում», այլև «թերուս. երևակայող» անձն է (ՄՀԲԲ, հ. II, էջ 175): Եվ բնականաբար արդի հայերենի բառարաններում *իմաստակ*-ը բացատրվում է որպես «Իմաստակության վրա հիմնված դատողություններ անող», «ճարտարամտությամբ հայտնապես սխալ դրույթները որպես ճշմարիտ ներկայացնող», այլև «Թերուս՝ տգետ, բայց իրեն իր-

⁶⁶ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 110-111:

⁶⁷ Բառերը ներկայացվում են ոչ թե այբբենական կարգով, այլ ըստ գրչագրերում վկայվող էջերի:

⁶⁸ *Իմաստակ*-ը դասական հայերենում համարվում է հունաբանություն՝ «հայերենի բառակազմական կաղապարների տեսանկյունից նորարարական կազմություն», որ ցույց է տալիս «բայական հիմքից կազմված գործող անձի անուն». տե՛ս Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, էջ 77:

րն գիտուն ներկայացնող մարդ» (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 305: ԱՀԲԲ, էջ 487), «ինքնզինքը խելացի կարծող, կեղծ ճարտարաբան, կեղծ իմաստուն»⁶⁹: Ինչ վերաբերում է *իմաստակ*-ի՝ արդի հայերենում արտահայտած իմաստին, ապա հասկանչական է Մանուկ Աբեղյանի՝ գրաբար-աշխարհաբար նույնանիշներին առնչվող դիտարկումը. «... բուն աշխարհաբար բառերն ունեն ավելի ընդարձակ նշանակություն, մինչդեռ գրաբարից առնվածները գործածվում են սահմանափակ, ավելի բարոյական իմաստով»⁷⁰:

Ստեփան Մալխասյանցի «սկզբնապես» վկայած իմաստը մասնակիորեն հաստատում է Երեմիա Մեղրեցին՝ *իմաստակ*-ը մեկնելով «փաղաքշական. փոքր իմաստուն», բայց և «ձևով իմաստուն կերպարանեալ»⁷¹: Մխիթար Մեբաստացին, արձանագրելով «կերպարանեալ իմաստուն. կամ ձևով միայն իմաստուն... կամ ճարտարախոսութեամբ զինքն իմաստուն երևեցուցանէ. բայց ի ճշմարտութենէ նորա է թափուր» նշանակությունը, հավելում է. «Իսկ մերթ նշանակէ զիմաստասէրն. կամ զիմաստունն. և այս ասէ զարտաքին փիլիսոփայից»⁷²՝ հղելով Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի յոգևորութեան» երկի («Նարեկ. ծե և դե»)՝ «Քանզի եւ որպէս *իմաստակի* ումեմն արտաքնոյ Բարուք թուեցաւ չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի...» նախադասությունը⁷³ (ընդգծ.՝ Ն. Հ.): Որպէս *իմաստակ*-ի բնագրային օրինակ՝ այս նախադասությունն արձանագրում է նաև ՆՀԲ-ն (հ. I, էջ 847): Նարեկացիագետների կարծիքով՝ «Նարեկացին ակնարկում է Եղիշեի՝ ոմն *հին իմաստա-*

⁶⁹ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 366: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 25: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 145: Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերենի, էջ 151:

⁷⁰ Մ.Աբեղյան, Երկեր, Զ, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1974, էջ 131-132:

⁷¹ <http://sur1.li/cupuaie>, <http://sur1.li/yrrokn> (հասանելի են՝ 31.03.2026). տե՛ս նաև՝ ԲՀ, էջ 129:

⁷² ԲՀԼ, էջ 335 (368). ԲՀԼՄՍ, էջք 153 (766), 201 (1239): Մ. Ջախջախյանը նույնպես արձանագրում է «հմուտ իմաստութեան և գրոց, իմաստուն: իմաստասէր փիլիսոփայ» նշանակությունը (ՋԲ, էջ 600), իսկ սահա ԱԲ-ն՝ վկայում որպէս «զինքը իմաստուն կարծող կամ սեպուած, անունը էլած, ճարտասան» (էջ 339):

⁷³ Մ. Գրիգոր Նարեկացի, Մատենանոցի յոգևորութեան և այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003, էջ 241(246):

սերից բերած այս արտահայտությունը. «Որպէս և ասաց ոմն ի հրնումն. մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, որ* երկրնչի ի նմանէ»⁷⁴ (ընդգծ.՝ Ն. Հ.): Այն վերագրվել է Պլատոնին, իմաստասեր, աստղաբան Հերմես Եռամեծին⁷⁵: Հետևաբար Գրիգոր Նարեկացու ակնարկած *իմաստակ*-ը չէր կարող նշանակել «ձևով իմաստուն կերպարանեալ», այլ միայն «զիմաստասերն. կամ զիմաստունն»: Եվ հայ մատենագրության մեջ առկա հենց այս իմաստով գործածվելով է ներառվել գրչագրում:

Մանրամասն բառը հիշատակվում է *Բոպե. քթթելական. ժամ. մասն ինչ. տարեր նուրբ* ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 217բ-218ա): Ըստ ՆՀԲ-ի՝ «Մանր և մանրագոյն մասն ժամանակի և իրաց» իմաստը վկայվում է է դարից (հ. II, էջ 208: տե՛ս նաև՝ ԱԲ, էջ 540): Մխիթար Սեբաստացու բացատրությունն է. «Մանրամասն ... ունօղ զմանր, և զնուրբ մասունս. կամ ի մանր մասունս փշրեցեալ, և անջատեցեալ: Իսկ մերթ ասի զքննութեանց, կամ զպատմութեանց, որով իւրաքանչիւր մասունք, կամ որպիսութիւնք իրին մանր մանր քնին. կամ յայտնին. և յայնժամ նշանակէ զմանրամասնականն»: Նա բառահողվածը եզրափակում է ԺԲ դ. մատենագիր Ներսես Լամբրոնացուն հղումով (ԲՀԼ, էջ 615-616(664-665)): «Մանր և մանրագոյն մասն ժամանակին, վայրկեան» նշանակությունը հիշատակում են Մանվել Զախջախյանը (ԶԲ, էջ 948), Ստեփան Մալխասյանը՝ որպէս «հին նշանակութիւն» (ՄՀԲԲ, հ. III, էջ 256):

Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ «վկայութիւնը անյայտ» *մասն*-ի «վայրկեան» իմաստն առկա է ԱԲ-ում (որում առկա է նաև «րոպէ»-ն. էջ 541): Նա նկատում է. «... այս նշանակութեան համար վկայութիւն ունինք Վանակ. տարեմ. «Զի տայ կամ կրէ գիշերն

* Վրիպակ է. պետք է լինի՝ ոչ:

⁷⁴ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., 1985, էջ 1063-1064: Մանրամասն տե՛ս նաև Հ. Մանանդյան, Հերմես Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք, Բանբեր Մատենադարանի, 3, 1956, էջ 293 (290):

⁷⁵ Նույն տեղում:

յօրէն գժամն և զմասունքն» (տե՛ս ՆՀԲ **տրէ** բառի տակ): Բառիս այս նշանակութիւնը անվաւեր պիտի համարէինք, եթէ չլինէր վրաց. Յսո մասի «15 վայրկեանի ժամանակամիջոց» (ՀԱԲ, հ. Գ., էջ 264): Հարկ է նշել, որ Վանական Վարդապետ Տավուշեցիին ԺԳ դ. մատենագիր է: Եվ եթէ, ինչպէս արդէն նշվել է, լեզվաբանների հավաստմամբ՝ «Հանդես բանաստեղծաց»-ի «հնագույն ձեռագիրը XII դ. ընդօրինակություն է», «կազմված է 10-11-րդ դարերում», ապա կարելի է փաստել, որ գրչագրում բառի ավելի վաղ վկայություն է: Հատկանշական է, որ արդի հայերենի բացատրական բառարաններում արձանագրվող «Բոլոր մասերը լրիվ պարունակող, լիակատար, անթերի», «Բոլոր մասերը լրիվ քննված, մանրակրկիտ, մանրագնին», «Մանրամասն» իմաստները (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 478: ԱՀԲԲ, էջ 967)⁷⁶, ըստ ՆՀԲ-ի, առկա են ԺԳ դ. մատենագիրներ Գևորգ Սկևռացու և Հովհաննես Երզնկացու երկերում (հ. II, էջ 208):

Վաղվաղակի. փութանակի. ճեպով. առժամայն. գործառործ. շտապով. տազնապով. շեշտակի ՀԲԾ-ն (ՄՄՁ 4612, 171ա-172բ. 5596, 219բ) ամփոփում է **առձեռն պատրաստ** հարադրական կազմությունը: Երեմիա Մեղրեցիին վկայում է միայն «ձեռն ի ձեռն, կամ պատրաստ» իմաստով *առձեռն* -ը (ԲՀ, էջ 32): Մխիթար Սեբաստացին հարադրական կազմության համար նշում է, որ այն «...մերթնշանակել՝ վաղվաղակի, կամ իսկոյն» (ԲՀԼ, 90(119)), «Իսկ մերթնանդէն վաղվաղակի. կամ փութանակի. և կամ ճեպով» հղելով հին պատմագիրների երկերը («... ըստ այնմ ի հին պատմագիրս: Եւ առձեռն պատրաստ զհայցուածն կատարել: կամ որք առձեռն պատրաստ եկեալ հասեալ որջացեալ էին, այսինքն անդէն վաղվաղակի»), այլև մանրամասնելով, որ ասվածը վերաբերում է նաև Մովսէս Խորենացուն. «... ուր ասի գարբոյն մեսրօպայ. ստեղծ գնըշանագիրս մեր, կերպածնեալ զգիրն առձեռն պատրաստ, այսինքն ձևացուցեալ զգիրն փութանակի» (ԲՀԼՄՍ, 60(83)):

Հարկ է թերևս նշել, որ «վաղվաղակի, իսկոյն, անյապաղ» իմաստով *առձեռն պատրաստ* հարադրական կազմությունն առկա է

⁷⁶ Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 502: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 87: Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերենի, էջ 285:

միայն ՋԲ-ում (էջ 202). մյուս բառարանները, ինչպես, օրինակ, ՆՀԲ-ն, թեև արձանագրում են «անյապաղ» իմաստով *անձեռն*-ը (հ. I, էջ 307), սակայն չեն առանձնացնում *անձեռն պատրաստ*-ը, իսկ ԱԲ-ն, *անձեռն*-ի՝ «շուտով, պատրաստ» նշանակություններից բացի, վկայում է նույն իմաստով *անձեռնպատրաստ* բաղադրյալ կազմությունը (էջ 116): Այն հիշատակում է նաև Աղեքսանդր Խոուարաշյանցը՝ "скоро, поспешно" նշանակությամբ (ԽԲՀՆ, հ. I, էջ 147):

Ամեղել. գլացումն. ուրացումն. ժխտող. ստաբան. երդմնագանց. պատուիրանագանց. անպատկառ. անամալթ. լիրբ. անլիր. յանդուզն. ժպիրհք ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա) առանձնանում է *անվեհեր* բառը: Մխիթար Սեբաստացին, «անդանդաղ. կամ անդեգեր. կամ անյապաղ. կամ անձանձրոյթ», «Իսկ մերթ՝ անկասկած. կամ անտարակոյս. կամ աներկբայ» նշանակություններից բացի, վկայում է, իր դիտարկմամբ, «ի հին քեր.» առկա «Երբեմն ևս անամօթ, կամ անպատկառ, կամ լկտի, կամ լիրբ» իմաստները՝ նշելով՝ «ըստ այսմ է և ի վարս հարց. ժղ. ուր ասի. Մուտ յայտնեցաւ անվեհեր, և լրբենի աղքատս» (ԲՀԼՄՄ, 46 (71)): ՆՀԲ-ն նույնպես այս նշանակության համար հղում է «Վարք սրբոց հարանց» ժողովածուն (հ. I, էջ 240), որի առաջին խմբագրությունը «XII դարի վերջում նախաձեռնել է հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ն. Լամբրոնացին, ի մի բերելով ժողովածուի գանազան մասերի հնագույն թարգմանությունները»⁷⁷: *Անվեհեր*-ի «անամօթ, լիրբ, անպատկառ» իմաստներն է հիշատակում նաև Մանվել Ջախջախյանը (ՋԲ, էջ 155): Հետաքրքրական է, որ Աղեքսանդր Խոուարաշյանցը *անվեհեր*-ը ռուսերեն նշում է նաև "наглѣй" (ԽԲՀՆ, հ. I, էջ 111): Հայերեն բառարաններն արձանագրում են «անվախ, աներկյուղ, սրտոտ, խիզախ, արիասիրտ, համարձակ.

⁷⁷ Լ. Տեր-Պետրոսյան, Louis Leloir, Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“, t. I (Vol. 353 Subs. 42), 1974; t. II (Vol. 361 Subs. 43), 1975; t. III (Vol. 371 Subs. 47), 1976; t. IV (Vol. 379 Subs. 51), 1976, Louvain. Լուի Լըլուար, Հայոց «Վարք Հարանցի» լատիներեն թարգմանությունն ըստ Մխիթարյան Հայրերի 1855թ. հրատարակության, հ. 1-4, Լուվեն, 1974-1976, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1979, էջ 255:

ժիր» իմաստները (ՄՀԲԲ, հ. I, էջ 178: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 136: ԱՀԲԲ, էջ 80)⁷⁸, Անդրանիկ Կոստյանն ունի նաև «յանդուզն» բացատրությունը⁷⁹: Եվ այս առիթով կարելի է նկատել, որ անշուշտ ընդունելի է անվախ, աներկյուղ, արիասիրտ, խիզախ անհատի՝ հանդուզն, անգուսպ, անխոհեմ լինելը, բայց և ճիշտ չէր լինի անվերապահորեն պնդել, որ այդպիսի անձնավորությունն անամոթ, անպատկառ է: Այդուհանդերձ փաստ է, որ *անվեհեր*-ն այդ իմաստով առկա է մատենագրության մեջ:

Մուրկ. հասկ. խայրիք. բերք. բեղուն. արգասանդ. բեղմ(ն)արեր ՀԲԾ-ն ավարտվում է **ծննդական** բառով (ՄՄՁ 4612, 175բ. 5596, 223բ): Երեմիա Մեղրեցին այն բացատրում է «տօն, կամ նաւակատիք» (ԲՀ, էջ 152): Մխիթար Սեբաստացին, հղելով Աստվածաշունչը, *ծննդական*-ը մեկնում է որպէս «անուն անանգական, որով նշանակի ծնանօղն. կամ երկնօղն», այլև դարձյալ հիշատակելով Աստվածաշունչը՝ նշում. «Իսկ մերթ նշանակի այն, որ կարէ ծնանիլ. և ոչ է ամուլ. կամ այն՝ որ է յաճախածին. այսինքն ունի բեղմնաւոր արգանդ, որով հաճախ ծնանի»: Բառահողվածի վերջում նա հավելում է. «Իսկ մինչ ասի գումեքէ զոլ ծննդական մտօք, նշանակէ զնա, որ յոյժ ճոխարար՝ և դիրապէս կարէ յառաջ բերել զիմն ի մըտաց. և կամ որ է յոյժ բեղմնաւոր մտօք. և ըստ այսմ ասի զմեծէն մեսրօպայ», և վկայակոչում Խորենացուն՝ քաղելով «Ձի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ» նախադասությունը (ԲՀԼ, էջ 416 (449)): Մխիթար Սեբաստացին արձանագրում է նաև «բերուկ» նշանակությունը (ԲՀԼՄՍ, էջ 186 (799)), որը ՆՀԲ-ն վկայում է «Որպէս Բերրի» (հ. I, էջ 485): «Բազմածին, բեղ(մ)նաւոր, պտղաբեր» իմաստներն ունեն ԱԲ-ն (էջ 409), ՋԲ-ն (էջ 729), ՄՀԲԲ-ն՝ «հին նշանակութիւն» նշումով (հ. II, էջ 346)⁸⁰:

⁷⁸ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 444: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 202: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 730:

⁷⁹ Ա. Կոստեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 31:

⁸⁰ Տե՛ս նաև՝ ԳՆԲՀԼ, էջ 671: Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 633: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 290: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 916:

Համոզել. ողորթել. ամոքել ՀԲԾ-ն (ՄՄՁ 4612, 176ա. 5596, 224ա) եզրափակող *միջնորդել*-ը, ՆՀԲ-ի վկայությամբ, «Ի Հին բռ. որպես փաղանուն դնին, **Համոզել, ողորթել, ամոքել, միջնորդել,*» (հ. II, էջ 29): Բառգրքում բայի համար առաջնային են համարվում «Ի մէջ անկանիլ, ընդ մէջ մտանել՝ առթել. լինել որպես միջնորդ, պայման, սատար» նշանակությունները, և *միջնորդել*-ը «որպես Բարեխօսել» նշվում է «ըստ ոճոյ յետին դարուց» հղելով ԺԳ դ. նշանավոր գործիչ Կիրակոս Գանձակեցուն (հ. II, էջ 280)⁸¹: Միևիթար Սեբաստացին նախապես նշում է *միջնորդել*-ի «միջնորդ լինել. կամ բարեխօսել. և կամ ի մէջ մտանելով համոզել ի խաղաղութիւն» իմաստը՝ հղելով ԺԲ դ. մատենագիր Ներսես Լամբրոնացուն և Ժամագիրք ժողովածուն⁸² (ԲՀԼ, 665 (714)): Իսկ *Համոզել* բառահոլովածում ներկայացնում է Աստվածաշնչից և Մովսես Խորենացուց քաղած «միջնորդել. կամ խաղաղացուցիչ լինիլ. կամ քաղցր բանիւք հակեցուցանել ի հաւանումն. կամ յորդորել. և կամ փաղաքշել» նշանակությունները (ԲՀԼ, 504 (549)): Երեմիա Մեղրեցին հիշատակում է *Համոզել. միջնորդել կամ խաղաղացուցանել* բառաշարքը (ԲՀ, էջ 178)⁸³: Ստեփան Մալխասյանցը գրաբարի տպագիր բառարանների արձանագրած առաջնային իմաստները համարում է «հին նշանակութիւն» և առանց որևէ նշումի արձանագրում «Իբրև միջնորդ միջամտել՝ մի բան աջողեցնելու, հաշտեցնելու նպատակով. բարեխօսել»-ը (ՄՀԲԲ, հ. III, էջ 337): Հայերեն մյուս բառարաններում «բարեխօսել, միջնորդություն անել» (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 541: ԱՀԲԲ, էջ 1015), «հաշտեցնել, բարեխօսել, միջամտել» նշանակություններն են⁸⁴:

⁸¹ ԱԲ-ն ունի միայն «մէջ ձգել» բացատրությունը (էջ 566):

⁸² «Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց, հաստատեա՛լ զբազուկս մեր կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ»:
<http://surl.li/khbphy> (հասանելի է՝ 31.03.2026):

⁸³ <http://surl.li/jztigx> (հասանելի է՝ 31.03.2026):

⁸⁴ Տե՛ս Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1026: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 546: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, էջ 196: Ա. Կոստանեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 303:

ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում (285բ) *իմաստուն. զգոյշ. զգաստ. հանդարտ. զուարթ* ՀԲԾ-ի հենաբառը *Զգաւն*-ն է*։ Երեմիա Մեղրեցին վկայում է «հանդարտ, կամ հաւան, կամ զգոյշ, կամ զգաստ, կամ ուշիմ» (ԲՀ, էջ 101), իսկ Մխիթար Սեբաստացին նշում է «իմաստուն. կամ հանճարեղ. կամ խոհեմ. կամ ուշիմ. կամ խելամուտ. կամ զգաստ» (ԲՀԼ, էջ 276 (309)), նաև «խելօք, խելացի, մեծ գլուխ, իմաստուն» իմաստները (ԲՀԼՄՍ, էջ 127 (740)։ ՆՀԲ-ն բառը հիշատակում է «Ուշիմ, և ուշեղ. այսինքն մեղմ, հանդարտ, հեզ. ընդել. ցածուն. հլու, (մարդ, և անասուն)». ևս և ... Հանճարեղ, իմաստուն, ներհուն, բանիբուն» բացատրությամբ՝ բառահոդվածի վերջում հավելելով. «Իսկ Զգոն՝ ըստ որում իմաստուն՝ յոյնք և լատինք զուրբն յակոբ մծբնացի կոչեն»⁸⁵ (հ. I, էջ 729)։ Հարկ է նկատել, որ Մխիթար Սեբաստացին այս արմատով կազմված բայերի (*զգօնանամ, զգօնացուցանես*) և ածանցավոր կազմությունների (*զգօնութիւն, զգօնարան*) համար առաջնային նշում է «իմաստնանալ... կամ հանճարեղանալ», «իմաստացուցանել. կամ հանճարեղ առնել», «իմաստութիւն. կամ հանճարեղութիւն», «իմաստարան» նշանակությունները (ԲՀԼ, էջ 276 (309)։ ԲՀԼՄՍ, էջ 127(740), 134 (157))⁸⁶, մինչ հայերեն բառարանները, թեև նշում են *զգօն/զգոն*-ի «խելացի, իմաստուն» (ԱԲ, էջ 292), «խելօք, իմաստուն, ծանրագրլուխ, խոհական» (ԳՆԲՀԼ, էջ 462), «իմաստուն, հանճարեղ» (ԶԲ, էջ 504։ ՄՀԲԲ, հ. II, էջ 20), «իմաստուն, խոհական»⁸⁷ իմաստները, բայց և այդ արմատով կազմված բաղադրյալ կազմություններում արձանագրվում են նախնական «հանդարտ, մեղմ, հեզ, ուշիմ, խոհեմ» նշանակությունները⁸⁸։ Ըստ բառարանների՝ արդի հայերենում

* ՄՄՁ 4612-ում և 5596-ում *Զգօն. զգոյշ. զգաստ* ՀԲԾ-ն է (175բ և 223բ)։

⁸⁵ Հակոբ Մծբնացու և «Զգօն» խորագրով երկասիրության հեղինակի մասին տե՛ս Ե. Տեր-Մինասյան, «Զգօն» կոչված գրքի հեղինակի հարցը, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1964, էջ 257-264։

⁸⁶Թերևս համեմատելի է նաև Հ. Աճառյանի թեականորեն նշած *զգալ*-ի «շատ լիքը լինել» իմաստը Նիկոմեդայի բարբառի Չենկիլերի խոսվածքում (ՀԱԲ, հ. Բ, էջ 87)։

⁸⁷ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 296։

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, նաև Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 150։ Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 610։ Ա. Կոանեան, Բառգիրք գործնական հայերենի, էջ 122։

գգոն-ը գործածվում է «խոհեմ, ինելացի», «արթուն, զգաստ, աչալուրջ», «հեզաբարո, հեզ, հանդարտ», «պարկեշտ» իմաստներով (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 26: ԱՀԲԲ, էջ 370):

Ինչ վերաբերում է նույն ՀԲԾ-ում հիշատակվող *գուարթ*-ին, ապա Մխիթար Սեբաստացին Աստվածաշնչից վկայում է «Եւ մերթարթուն, կամ զգաստ» նշանակությունը (ԲՀԼ, էջ 283 (316)): ՆՀԲ-ն, մեկնելով «զգաստ և ուրախ» («Այլ դու զուա՛րթ կաց յամենայնի»), դարձյալ հղում է Աստվածաշունչը (հ. I, էջ 743)⁸⁹: Մանվել Զախջախյանի կազմած բառարանում *գուարթ*-ի «զգաստ, արթուն, լուրջ» իմաստներն են (ՋԲ, էջ 514): Այս բառարաններից բացի՝ հայերեն մյուս բառարանները վերոնշյալ իմաստները չեն նշում՝ արձանագրելով «ուրախ, աշխույժ, կայտառ, եռանդուն, առույգ, պայծառ» և այլ նշանակություններ:

ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2291(II)-ում՝ *Չարաբարոյ. նենգաժետ. խորամանգ. հնարաւոր. անմեկին* ՀԲԾ-ում (346բ), վկայվող *կրկնակ* բառը՝ «կեղծաւոր, երկու երես» նշանակությամբ, ՆՀԲ-ն արձանագրում է Եփրեմ Ասորու «չորից աւետարանաց» մեկնության հայերեն թարգմանության մեջ՝ «Ո՛վ ընդ մարդկան կրկնակին» (հ. I, էջ 113): Բառը կարելի է թարգմանչի հեղինակային նորակազմություն կամ դիպվածային համարել, քանի որ գրաբարի տրպագիր (ԱԲ, էջ 454)⁹⁰ և Ստեփան Մալխասյանցի կազմած բառարաններից բացի՝ հնարավորություն չի ընձեռվել որևէ այլ վկայությամբ հաստատելու բառի գոյությունը⁹¹:

Իսկ ահա նույն գրչագրում՝ *Լուտալ. պարսաւել. բամբասել. քարքողել. այպանել. քամահել. անարգել. արհամարհել. դսրովել. աւաղել. հիքել. քիքել. նախատել. ձաղել. ձառակոծել. խոտել. աղտեղել. անիծանել. եպերել. անգոսնել, պախարակել. գայրացուցանել. ափսոսել* ՀԲԾ-ում (345բ), հավելված *երզիծուցանել* բայը Երեմիա Մեղրեցին բացատրում է որպես «յափշտակեցուցանել, կամ

⁸⁹ Տե՛ս նաև Համարաբարո գրաբար Աստվածաշնչի, էջ 700:

⁹⁰ «Փխբ.» իմաստով են նշում ԳԲ-ն (հ. Ա, էջ 680) և ԳՀԲ-ն (էջ 394):

⁹¹ Ս. Մալխասյանցը *կրկնակ*-ի «երկերեսանի, երկդիմի, կեղծաւոր» իմաստը նշում է «հազուադէպ» նշանակությամբ և «նմանութեամբ». տե՛ս ՄՀԲԲ, հ. II, էջ 506:

կսկծեցուցանել, կամ խոռվեցուցանել, կամ ափսոսալ» (ԲՀ, էջ 92): Մխիթար Սեբաստացին *երգիծուցանել*-ը հղում է *երգիծանել*-ին՝ բացատրելով որպէս «մեղադրել ... դարձեալ սիրտ կսկծցնել կամ երել» (ԲՀԼՄՍ, էջ 116-117 (729-730)), իսկ *Քամահրել* բառահոդվածում (ԲՀԼՄՍ, էջ 669 (1698)) հիշատակում ոչ միայն *երգիծանել*-ն ու *երգիծուցանել*-ը, այլև համարյա բոլոր այն բայերը, որոնք վկայվում են այս գրչագրում: ՆՀԲ-ն, *Երգիծուցանես* բառահոդվածում հիշատակելով *երգիծանել*-ը, Խոսրով Անձևացու, Գրիգոր Նարեկացու, Ներսէս Լամբրոնացու երկերից քաղվող բնագրային օրինակներում նշում է «Իբր Կծանել. զկծեցուցանել. կշտամբել. եպերել» իմաստները (հ. I, էջ 673): Հրաչյա Աճառյանը *երգիծանել*-ի համար նույնպէս նույն երկերից արձանագրում է «կծել, նախատել, ծաղրել» իմաստները, իսկ «երգիծանք, երգիծաբան, երգիծական, երգիծաբանական, երգիծաբանութիւն» «նոր բառեր»-ի համար նշում ««գաւեշտ» իմաստը, որ հնում չկայ» (ՀԱԲ, հ. Ա., էջ 43): Մանվել Ջախջախյանը *երգիծանել*-ը բացատրում է «եպերել, կշտամբել» (ՋԲ, էջ 459), Ստեփան Մալխասյանցը՝ «փոխ.» նշանակությամբ «յանդիմանել, պախարակել» (ՄՀԲԲ, հ. I, էջ 575):

«Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայվող բառիմաստների քննությունը հիմք է տալիս ամրագրելու, որ

- գրիչները քաջածանոթ են եղել հայ ինքնուրույն և թարգմանական գրականությանը.

- բառաշարքերում այդ բառիմաստներով բառեր են ներառվել ուսուցողական նպատակներով. հավանական է, որ դրանք գործածել են ժամանակակիցները.

- առանձնացված բառիմաստներն առկա են գրաբարի՝ ԺԵ դարից հետո հրատարակված և բնագրային օրինակներով համալրված բառարաններում՝ մեծավ մասամբ այս ձեռագիր բառարաններում վկայվող բառիմաստներով.

- ըստ բառարանների՝ որոշ բառիմաստներ արդի հայերենում փոփոխվել են կամ չեն պահպանվել:

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարի և միջին գրական հայերենի «բառապաշարային ստաբիլությունների գլխավոր աղբյուրները», ինչպես իրավացիորեն նկատվել է, նաև բառային նորաբանություններն են (ԱՄԳՀՊ, էջ 246): «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները հետազոտողները հավաստել են, որ դրանց «մանրագին ուսումնասիրությունը ի հայտ կբերի բավական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականության ու ժողովրդական խոսվածքի մեջ»¹: Արձանագրվել է, որ այդպիսի բառեր գործածվել են «ժամանակի համար նորաստեղծ, այսօր մեզ անհայտ երկերում», կամ էլ դրանք կերտել են բանարվեստի ուսուցիչները, ճարտասանները և այլք²: Ըստ հետազոտողների՝ ցանկացած ժամանակաշրջանի գրական լեզու «իր բառային կազմում ունի նաև նորակերտ բառեր, որոնք ուսուցողական և այլ նպատակներով... պիտի որ արտացոլված լինեն տվյալ շրջանում կազմված բառարաններում»³: Նշվել է նաև, որ միջին հայերեն գրված բնագրերում «ավելի շատ են հանդիպում նորաբնույթ կամ նորակազմ հոմանիշ բառեր»⁴: Գևորգ Զահուկյանն էլ, անդրադառնալով միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ որոշ բառերի առաջարկված ստուգաբանությունների, ճշգրտելով դրանք և կատարելով բառաքննական դիտողություններ, ընդգծում է, որ «... միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»⁵:

¹ Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, էջ 36: Տե՛ս նաև Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), էջ 130:

² Տե՛ս Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 80:

³ Նույն տեղում:

⁴ Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 156:

⁵ Գ. Զահուկյան, Ստուգաբանություններ. -Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976, էջ 41:

Ասվածն անվերապահորեն վերագրելի է նաև քննվող ՁԲ-ներին, որոնցում առկա, բայց գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրված բառերը կարելի է նորակազմություններ համարել: Եվ քանի որ այս ՁԲ-ները, ինչպես արդեն նշվել է, չունեն բնագրային վկայություններ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատելու հայերենի բառակազմության առանձնահատկություններով, հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաև բնագրային օրինակներով⁶:

Նորակազմ բառը քննելիս կարևորվում է՝ որ դարից ավանդված գրչագրում է այն վկայվում, հետևաբար ստորև առանձնացվող դասակարգումներում դրանք ներկայացվում են ըստ դարերի, նախ՝ ԺԳ, ապա՝ հետագա դարերից ավանդված գրչագրերում վրկայվողները:

Ըստ միջին գրական հայերենի բառապաշարը քննող, մասնավորապես բառակազմությանն անդրադարձող լեզվաբանների՝ այդ լեզուն «վկայում է գրաբարին անձանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմություն է» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 250): Այդպիսին են ԺԳ դարից ավանդված գրչագրերից ստորև առանձնացվող բայերը:

Արդեն հիշատակված *Ամեղել* ՀԲՇ-ի⁷ (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա) հենաբառի համար Հրաչյա Աճառյանը նշում է, որ այն «գործածուած» է «ի հին Քերականս» և հիշատակելով Մխիթար Սեբաստացու և Գրիգոր Փեշտրմալճյանի կազմած բառարանները, «անշուշտ» նույնն է համարում նաև Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում «զլանալ» իմաստով առկա «*ամեղելել*»-ը (ՀԱԲ, հ. Ա, էջ 153)⁸: *Ամեղել*-ն արձանագրում է Հակոբ Վիլլոտը (*Nego, are. ուրախալ: բացասել: ամեղել*)⁹: Մխիթար Սեբաստացին *ամեղել*-ը վկա-

⁶ Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Գրահավաք» կայքի «Հայերեն բնագրերի առցանց շտեմարան»-ում հայերեն բառերի որոնումը:

⁷ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում (284բ) ՀԲՇ-ն ավարտվում է *որպէս հրեայքըն հայհոյիչք(ն) եւ նենգաորք եւ պատուիրանագանցք* նկարագրությամբ:

⁸ ԲՀ-ում «Ամեղել - զլանալ» բառահոդվածն է. տե՛ս էջ 15:

⁹ J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714, p. 494.

յում է «ուրանալ. կամ ժխտել. կամ զլանալ. կամ ստունգանել. կամ անհավան կալ» իմաստներով՝ նշելով նաև «ի հին քերական» գործածվելը (ԲՀԼՄՄ, էջ 16(41)): Գրիգոր Փեշտրմալճյանի վկայությամբ՝ *ամեղեմ*-ն ունի «զլանալ. ժխտել» նշանակությունները (ՓԲ, հ. I, էջ 24(40)): Ստեփան Մալխասյանցը բայը վկայում է «հազուադեպ բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հ. I, էջ 59): Պետրոս Ճիգմեճյանը հավելում է «ամեղած, -ելի, -ելիք, ամեղող»¹⁰ բառերը:

Թշուառանալ. մարկանալ. տառապել. խոնարհանալ ՀԲԾ-ն եզրափակում է *անկածիլ* բայը¹¹(ՄՄՁ 4612, 174բ. 5596, 222ա): Գրաբարի տպագիր բառարանները հիշատակում են *անկած*-ը՝ նաև «Յետնեալ յիմիք կարգի. աննշան. նուաստ. տկար» (ՆՀԲ, հ. I, էջ 168: ԱԲ, էջ 64: ԳԲ, հ. Ա, էջ 101: ԳՆԲՀԼ, 96: Տե՛ս նաև ՀԱԲ, հ. Ա, էջ 198): *Անկածել* բայն արձանագրում է Ստեփան Մալխասյանցը՝ «Անկած... դառնալ, նուաստանալ, արհամարհվել, թշուառանալ» իմաստով՝ «հազուադեպ բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հ. I, էջ 129):

Նույն գրչագրերում՝ *Խրոխտալ. պանձալ. պարծել. կոկորդալի խաւսել. ճոխարանել. ճամարտակել. խանձալ. ծաւալ սփռել*^{*} ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 177ա. 5596, 225բ), առկա են *կոկոլտել* և *պրսպուզել* բայերը: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *Կոկոլ* «փքոցուռոյց խօսքեր, մեծաբանութիւն» արմատից է *կոկոլանք*-ը¹², որից էլ՝ *կոկոլտել*-ը, և որը վկայում են Երեմիա Մեղրեցին և Մխիթար Սեբաստացին (ՀԱԲ, հ. Բ, էջ 618): Ըստ ԲՀԼՄՄ-ի՝ *կոկոլտել* նշանակում է «ճոխարանել» (էջ 169), ըստ ԲՀԼՄՄ-ի՝ «խիստ գովել. շատ լեզու թափել. զարդարանքով խօսիլ» (էջ 161 (1190), 118 (1147), 204 (817)):

Ինչ վերաբերում է *պսպուզել*-ին, ապա Հրաչյա Աճառյանը վկայում է. «**Պսպուղել** «ճակատամտել». ունի միայն Բառ. երեմ. այս բառն է որ դարձել է **պսպուզել** «ճամարտակել» ՀՀԲ (առանց վկայութեան)» (ՀԱԲ, հ. Դ, էջ 110): Եվ թեև «Բառգիրք հայոց»-ի ա-

¹⁰ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 131:

¹¹ ՄՄՁ 2371-ում՝ *անկածանալ* բայն է (283բ):

* ՄՄՁ 5596-ում՝ *ծաւալ փռել*:

¹² Բառը վկայում են ՆՀԲ-ն (հ. I, էջ 1110) և ԱԲ-ն (էջ 444):

ուաջին և երկրորդ հրատարակություններում «Պսպուղել - ճակատամտել» բառահոդվածն է¹³, այդուհանդերձ Հայկ Ամալյանը, ներկայացնելով բառգրքի «քննական բնագիրը՝ վերականգնված հիմնօրինակը՝ բառարանի լավագույն ձեռագրերի և առաջին տպագրության (1698թ.) տարբերակներով» (ԲՀ, էջ Ե), արձանագրում է «Պսպուղել - ճակատամարտել» բառահոդվածը (ԲՀ, էջ 276)՝ «Ծանոթագրություններ»-ում նշելով. «№ 3287 ձեռագիրը մեկնում է «ճակատամարտել»: Հմմտ. Արմ. Պսպուղել» (ԲՀ, էջ 425): Ամեննիին չհավակնելով «ուղղելու կամ սրբագրելու» Հրաչյա Աճառյանի և Հայկ Ամալյանի դիտարկումները՝ հարկ է հավելել, որ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ների՝ ԺԳ-ԺԶ դարերից ավանդված բոլոր գրչագրերում *պսպուղել* բայն է, ԺԷ դարից ավանդված ՄՄԶ 682 (5ա), 3468 (461ա), 10223 (195բ)-ում և ԺԸ դարից ավանդված ՄՄԶ 3450 (75ա)-ում՝ *պսպղել* տարբերակն է, և միայն ԺԷ դարից ավանդված ՄՄԶ 3824-ում է վկայվում *պսպուղել*-ը (49ա): Բայց և անշուշտ հարկ է նկատի առնել, որ ընդօրինակող գրիչները, ձգտելով հարագատ մնալ բուն օրինակին, այդուհանդերձ արտագրել են ըստ լեզվին տիրապետելու մակարդակի: Մխիթար Սեբաստացին *պսպուղել*-ն արձանագրում է «տե՛ս Ճամարտակել» հղումով (ԲՀԼՄՄ, էջ 342 (955)), այլև այդ բայով է բացատրում *Լեզու թափել*-ը, *Մեծ-մեծ խօսիլ*-ը (ԲՀԼՄՄ, էջ 224 (1253), 408 (1437)): Երկու բայերն էլ հիշատակում է Ստեփան Մալխասյանցը՝ «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» նշումով, *պսպուղել*-ի համար մանրամասնելով՝ «(անստ. բառ և նշ.)» (ՄՀԲԲ, հ. II, էջ 459: ՄՀԲԲ, հ. VI, էջ 123): *Պրսպուղել*-ը վկայում է նաև Պետրոս Ճիզմեճյանը¹⁴:

Հակատել. խորհել. խոկալ. պարուրել ՀԲԾ-ի (ՄՄԶ 4612, 171ա. 5596, 218բ) հենարառը, Հրաչյա Աճառյանի հավաստմամբ, «ունին միայն» Երեմիա Մեղրեցին և Մխիթար Սեբաստացին (ՀԱԲ, հ. Գ, էջ 13: Տե՛ս նաև ԲՀ, էջ 176: ԲՀԼՄՄ, էջ 440 (1467)): Հետագայում հրատարակված բառարաններից այն հիշատակում են ՄՀԲԲ-ն՝ դարձյալ «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» նշումով և ման-

¹³ <http://sur1.li/qulpgs>, <http://sur1.li/ufbnq> (հասանելի են՝ 31.03.2026):

¹⁴ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1236:

րամասնելով՝ «(անստ. բառ և նշ.)» (հ. III, էջ 17), Պետրոս Ճիզմեճյանը¹⁵:

Յարել հենաբառով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 176ա. 5596, 224բ) առանձնանում են *հանգուցել* և *սոսնձել* բայերը: ՆՀԲ-ում՝ *Հանգոյց* բառահոդվածում, փակագծերի մեջ նշվում է. «(ումկ. հանկուց, հանկուրց. ուստի և հանկուցել)» (հ. II, էջ 38): Նորայր Բյուզանդացին, *Հանգուցանեմ* բառահոդվածում ՆՀԲ-ից հիշատակելով «ի *Հանգրիճեմ*՝ "ումկ. հանկուրցել"»-ը, ԺԲ-ԺԴ դդ. մատենագրությունից քաղում է «աճական-որոշի կիրառությամբ» առանձնացող *հանգուցեալ* անցյալ դերբայը («... եւ նորա հանգուցեալ զգօտին՝ ցուցանէր սուլթանին ըստ իւրեանց սովորութեանն ...»)¹⁶: Հրայր Աճառյանը *Հանգոյց* բառահոդվածում նույնպես վկայում է «վրան հանգոյց շինած» իմաստով *հանգուցեալ*-ը՝ նաև հիշատակելով բարբառներում «բայական ձևով» և «հանգոյց կապել» իմաստով գործածվող «հանգուցել, հանգուրցել, հանգուստել, հանգուրստել, հանգուշտել» բայերը (ՀԱԲ, հ. Գ, էջ 37)¹⁷: Մխիթար Սեբաստացին *հանգուցել*-ը բացատրում է «հանկուրցել. հանկուրց ընել» (ԲՀԼՄՍ, էջ 217 (830): Մանվել Ջախջախյանը և Աղեքսանդր Խոլոպաբաշյանը «յօղել, կապել, կցել», "связывать узлом, завязывать" իմաստներով *հանգուցել*-ն արձանագրում են երկլեզվյան բառարաններում¹⁸: Ստեփան Մալխասյանը բայը հղում է բարբառային *հանգուստել*-ին (ՄՀԲԲ, հ. III, էջ 44): Հարկ է արձանագրել, որ բայը վկայում են արդի հայերենի բացատրական բառարանները՝ «հանգույց անել», «հանգուցաձև կապել», «հանգոյց շինել» և փոխաբերական «կապել, միավորել, կապակցել», «իրարու կապել» նշանակություններով (ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 290: ԱՀԲԲ, էջ 817)¹⁹:

¹⁵ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 775:

¹⁶ Ն. Բյուզանդացի, Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԵ դարուց, Ժնեւ, 2000, էջ 411-412 (414-415):

¹⁷ Այս բայերն առկա են նաև ՀԼԲԲ-ում (հ. Գ, Ե., 2004, էջ 241):

¹⁸ Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, աշխատ. Ն. Մանուէլ վ. Ջախջախեան, Վենետիկ, 1829, էջ 34 (46): ՋԲ, էջ 835: ԽԲՀՈ, հ. II, էջ 24:

¹⁹ Տե՛ս նաև Յ. Գալայեան, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938, էջ 269: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 801: Հայոց

Սոսնձել բայը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «սոսնձով մածուցանել. կամ շաղկապել» (ԲՀԼ, 997 (1056)), «թուրթխալով փակցնել» (ԲՀԼՄՍ 356 (969)): Գրաբարի տպագիր բառարաններում առկա է միայն *սոսինձ* բառը (ՆՀԲ, հ. II, էջ 728: ԱԲ, էջ 728: ԳԲ, հ. Բ, էջ 464: ԳՀԲ, էջ 611): Հրաչյա Աճառյանը այն մեկնում է որպես «կայցնելու մի նյութ»՝ նշելով՝ «որից սոսնձեալ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 244): *Սոսնձել*-ը հիշատակում են Մանվել Ջախջախյանը *Appiccáre, Attacáre, Commétere, Congegnáre, Incolláre, Rincolláre, Sergénte*²⁰ և Հարություն Ավգերյանը *Coller, Conglutiner, Encoller, Maroufler, Mastiquer* բառահոդվածներում²¹: Բայն արձանագրում են Ստեփան Մալխասյանցը («սոսնձով կայցնել՝ փակցնել». ՄՀԲԲ, հ. IV, էջ 241), արդի հայերենի բառարանները (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 319: ԱՀԲԲ, էջ 1318)²²:

Հիքել, քքել բայերը վկայվում են *Հուսալ* հենարառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223բ): Հրաչյա Աճառյանը, «ուղղագոյն» ձև համարելով *հէգ* արմատը և այն բխեցնելով «հնխ. peik- «խաբել, խաբուիլ» արմատից», նշում է նաև «**հիք**»-ը (ՀԱԲ, հ. Գ, էջ 90-91)²³: Երեմիա Մեղրեցու բառգրքում *հիքել*-ը «թշնամանել» նշանակությամբ է (ԲՀ, էջ 337): Մխիթար Սեբաստացին վկայում է «աւաղել. կամ այպանել. կամ նախատել. կամ անարգել» իմաստները (ԲՀԼ, էջ 539 (584))՝ մինևույն ժամանակ *հիքացուցանել*-ն ու *հիքել*-ը բացատրելով նաև «խեղճ ընել. վա՛յ տալ. խախք ընել. անարգանք

լեզուի նոր բառարան, 1968, էջ 412: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 1150: Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերենի, էջ 239:

²⁰ Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, ընծայեալ ի լոյս երկասիրութեամբ Սանուէլ վրդ. Ջախջախեան, Վենետիկ, 1804, էջք 56, 78, 184, 195, 407, 663, 726:

²¹ Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, գոր աշխատասիրեաց Հ. Յարութիւն վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1840, էջք 139, 151, 259, 445, 446:

²² Տե՛ս նաև ԳՆԲՀԼ, էջ 1202: Յ. Գայայեան, Բառարան գանձարան հայերէն լեզուի, էջ 453: Հայերէն աշխարհարար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1285: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 769: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 822: Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերենի, էջ 416:

²³ Գ. Ջահուկյանն արձանագրում է միայն *հիգ*-ը նշելով՝ «Թերևս բնիկ հնդեվրոպական *peiu-՝ *pe(i)- «ցավեցնել, վնասել, նախատել» արմատից». Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՋՀՄԲ), Ե., 2010, էջ 459:

տալ» (ԲՀԼՄՍ, էջ 229 (842)), այլև նշելով՝ «Հիքեն:// Հիքացուցանել, որ է թշուառացուցանել. և այլն: ի հին քերական» (ԲՀԼՄՍ, էջ 196 (219)): Գրաբարի տպագիր բառարաններն արձանագրում են *հիքացեալ, հիքութիւն* բառերը (ՆՀԲ, հ. II, էջ 104: ԱԲ, էջ 498: ԳԲ, հ. Բ, էջ 75: ԳՀԲ, էջ 429): Մանվել Ջախջախյանը *Հիքացուցանել: թշուառացուցանել* բառահոդվածն (ՋԲ, էջ 881) առանձնացնում է աստղանիշով (*-ով), այսինքն՝ «աստղանիշ բառքն և նշանակութիւնքն չեն նախնի մատենագրաց, այլ արդիք և նորահնարք» (ՋԲ, էջ 9): «Պարսաւել, ամբաստանել» իմաստով *հիքել*-ն առկա է նաև ԺԷ դ. ձեռագրում²⁴:

Քրել, այլև *քուրքել*, *քուքել* բայերը Հրաչյա Աճառյանը վկայում է *Քուրք* «սուտ, զուր, թշնամանք» բառահոդվածում՝ նշելով. «.... բուրն էլ գիտէ միայն Բառ. երեմ.» (ՀԱԲ, հ. Դ, էջ 596)²⁵: Մխիթար Սեբաստացին համարում է, որ *քքել*-ը «նոյն է ընդ բային *քքուել*. որպէս կծելն ընդ բային կծուել....»՝ *Քքուել* բառահոդվածում հավաստելով բայի «մերթ թշնամանել. կամ կշտամբել. կամ նախատել. և կամ դսրովել» (ԲՀԼ, էջ 1235 (1302)), այլև «քքուել://խիստ ծեծել: քքուիլ:// մենծ ծեծ ուտիլ. ծեծի տակ փտտիլ (ԲՀԼՄՍ, էջ 413 (1026)) իմաստները:

Պարենիլ բայն առկա է ՄՄՁ 4612-ում՝ *Ըմբռշխնել* հենարանով ՀԲԾ-ում (274ա)²⁶:

Սույն գրչագրերից առանձնացվող նորակազմ մյուս բայերը բաղադրյալ կազմություններ են:

Տարակուսել հենարանով ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 176բ. 5596, 224 բ) առկա է *բաժամտել* բայը: ՆՀԲ-ն և ԱԲ-ն վկայում են «երկմիտ, փոփոխամիտ, թերահաւատ» նշանակությամբ *բաժամիտ, բաժամտութիւն* բառերը (ՆՀԲ, հ. I, էջ 421: ԱԲ, էջ 163)²⁷: *Բաժամտիւ*-ը

²⁴ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 122:

²⁵ Սյս արմատը և բայերը նշում է նաև Հ. Ամալյանը (ԲՀ, էջ 443-444):

²⁶ Բայի մասին տե՛ս Ն. Հովհաննիսյան, Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., 2022, էջ 77:

²⁷ Ն. Բյուզանդացին նշում է նաև *բաժամոբար* բառը. տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով, Հրա-

«երկմտիլ, երկբայիլ» իմաստով նշում են Մխիթար Սեբաստացու, Մանվել Ջախջախյանի և Գրիգոր Փեշտրմալճյանի կազմած բառգրքերը (ԲՀԼՄՄ, էջ 68 (681), 90 (113): ՋԲ, էջ 278: ՓԲ, հ. I, էջ 176 (192)): Հետագայում *բաժամտել* բայը՝ «հազուադեպ բառ կամ նշանակութիւն», «հազվադեպ գործածվող բառ» նշումներով վկայում են Ստեփան Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. I, էջ 314), Աշոտ Սուքիասյանը (ՀԼՀԲ, էջք 109, 190):

Բացառցել, բացհրել բայերը նույն գրչագրի *Ասել* հենարանով ՀԲՇ-ում առադրվում են *ոզել, պատմել, թռնել, ձայնել, ճատել, վիպել, ճամարտակել, առասել, բարբառել, քարոզել, հրասպարակել* և այլ բայերի (ՄՄՁ 4612, 173ա. 5596, 221ա): Մխիթար Սեբաստացին *բացառցել*-ն արձանագրում է «գատել. մէկ դի դնել. ուրիշի հետ խառնել» նշանակությամբ (ԲՀԼՄՄ, 76 (689)), նաև *բացառցեալ* անցյալ դերբայը կիրառում երկերում և աշխատասիրած քերականության մեջ («...որքան սաղօմօն ի բնականաց իւրոց վերաշահելով (բացառցեալ գներիեղեցեան յաստուծուստ) եղև իմաստուն»²⁸, «Եւ սակայն բացառցեալ զպատճառսն, զորս առ բերաք...»²⁹, «Դարձեալ դիտելի է, զի բացառցեալ զառաջին դէմն եղանակին՝ մնացեալք...»³⁰)³¹: Այն, որպէս գլխաբառ և «See Ի բաց առ-

տարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը (այսուհետև՝ ՆԲՀԼ), հ. I, Ժնև, 1990, էջ 421:

²⁸ Մեկնութիւն գրոց Ժողովողին, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1736, էջ 393:

²⁹ Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1737, էջ 188:

³⁰ Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, Վենետիկ, 1770, էջ 350:

³¹ Լեզվաբանները նշում են, որ գրաբարի անցյալ դերբայը «...միջին հայերենի խոնարհման համակարգում... հանդէս է գալիս առանձին բառական արժեքով՝ ըմբռնվում է որպէս ածական»։ Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևավորանական նշանակությունը, Ե., 1953, էջ 355: Ս. Անթոսյանի դիտարկմամբ էլ անցյալ դերբայը «ածական-որոշչի կիրառությամբ» առանձնանում է ԺԵ-ԺԷ դարերում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 372):

նույն» հղումով, վկայվում է Հարություն Ավգերյանի օգնությամբ հրատարակված երկլեզվյան բառարանում³²: Ստեփան Մալխասյանը վերոնշյալ իմաստներն արձանագրում է «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հ. I, էջ 354): Հատկանշական է, որ բայը վկայում է Պետրոս Ճիզմեճյանը՝ «զատել, որոշել» իմաստով³³: Հարկ է նշել, որ Գոհար Մուրադյանը դասական հայերենի հունարանությունների շարքում արձանագրում է «արհեստական բայական ձևեր»՝ ««ոց» վերջածանցով բայական հիմքեր»՝ *բացասոցել, ապասոցել, յարառոցեալ, պիտառոցել* և այլն³⁴, հետևաբար *բացասոցել*-ը կարելի է համարել դրանց նմանությամբ կազմված:

Ինչ վերաբերում է *բացհրել* բային, ապա այն, Հրաչյա Աճառյանի հավաստմամբ, «յունարան հեղինակների մօտ» նախամասնիկ դարձած *բաց* բառով (ՀԱԲ, հ. Ա, էջ 404) և դարձյալ Հրաչյա Աճառյանի առանձնացրած *իրել* «խորհրդածել» բայով (ՀԱԲ, հ. Բ, էջ 250) համադրական կազմություն է. ըստ նրա՝ այն արձանագրում է Գաբրիել Մենեվիշյանը Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական» երկում (ն.տ.)³⁵: Գաբրիել Մենեվիշյանը Ստեփանոս Ռօշքայի բառարանից հիշատակում է նաև «“հին բայ”, մը՝ *իրել*»³⁶: *Բացհրել*-ը «պատմել, ներկայացնել» իմաստով առկա է ԺԷ դ. ձեռագրում³⁷:

Մասիւն հենարանով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 172ա. 5596, 220ա) *սասսափիւն, սասառնսձայն, իսաշիւն, գանգիւն* բառերին առադրվում է *թնսձայնել* բայը³⁸, որը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ դրանով բացատրելով «Թները իրար զարնելով ձան հանել»-ը

³² Բառարան հայերէն եւ անգղիական, Աշխատասիրեալ ի Յ. Պրէնտէան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. Բ, Վենէտիկ, 1825, էջ 122:

³³ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 657:

³⁴ Գ. Մուրադյան, Հունարանությունները դասական հայերենում, էջ 130-131:

³⁵ Տե՛ս նաև Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականի», ամբողջական լուծումը, Երկասիրեաց Հ. Գաբրիել ծ. վ. Մենեվիշեան, Վիեննա, 1912, էջ 45-46 (59-60):

³⁶ Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականի», ամբողջական լուծումը, էջ 46 (60):

³⁷ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 45:

³⁸ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149 (362ա)-ում *թնսձայն* տարբերակն է, ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566 (II)-ում՝ *թեւսձայնեալ*-ը (296ա): ՆԲՀԼ-ն նշում է *թեւսձայն*-ը (հ. 2, էջ 809):

(ԲՀԼՄՄ, 193 (1222)), նաև նշելով «բաղխելով զթևս առ միմեանս ձայն հանել. որպէս առնեն թռչունք» (ԲՀԼ, էջ 315 (348)): ՆՀԲ-ն *թեւածայնել* բայը հիշատակում է *Խօջիւն* և *Սօսիւն* բառահոդվածներում՝ վկայակոչելով հին բառարանները՝ «... ի Հին բռ. դնին որպէս փաղանուն», և ներկայացնելով նույն բառաշարքը (հ. I, էջ 996, հ. II, էջ 769): Գրիգոր Փեշտրմալճյանը բայը հիշատակում է Մխիթար Սեբաստացու առանձնացրած նշանակությամբ (ՓԲ, էջ 458 (474)): Ստեփան Մալխասյանցի կազմած բառարանում դարձյալ «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումն է (ՄՀԲԲ, հ. II, էջ 101): Հատկանշական է, որ *թևածայնել*-ն առկա է միայն ԱՀԲԲ-ում նույն նշանակությամբ (էջ 433):

ՄՄՁ 4612 (172ա)-ում՝ *Կորացեալ. ընկճեալ. հոլեալ. ընգեցեալ. ջրջեալ. քահեալ* ՀԲԾ-ում, *կորանկեալ* բառն է³⁹: ՆՀԲ-ում *կորակնել*-ի բացատրությունն է. «...որ և Ակնկորել. Ջակն ի վայր կորացուցանել. լի լինել ամօթով. նկուն լինել» (հ. I, էջ 1118): Մխիթար Սեբաստացին հիշատակում է «կամ ընկճիլ»-ը (ԲՀԼ, էջ 474 (507)), այլն «վար նայիլ. երեսը կախիլ. սմքիլ. խաղք ըլլալ, վիզը ծռել» իմաստները (ԲՀԼՄՄ, էջ 205 (818)): Տե՛ս նաև ԱԲ, էջ 448)⁴⁰: Բառիմաստային նրբերանգր նկատի առնելով՝ կարելի է ընդունել, որ «ամոթահար, աչքերը գետնին հառած, վիզը ծռած, խայտառակված» անձը հավանաբար ընկճված է, ասել է այն, ինչ արձանագրել է Մխիթար Սեբաստացին: ԺԷ դարից ավանդված «ՄՄ 2281-ում» արձանագրվում է *կորակնեալ* տարբերակը՝ նշված իմաստով⁴¹:

³⁹ ՄՄՁ 5596-ում (219բ)-ում *կորանգանել* (219բ) տարբերակն է, ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371 (279ա)-ում՝ *կորակնեալ*, ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 2335-ում՝ *կորանկեալ*, ԺԶ դարից ավանդված ՋԲ-ներում (ՄՄՁ 268 (307ա), 533(8ա), 537 (222բ) և այլն)՝ *կորակնեալ* տարբերակները: ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566 (II)-ում հավելվել են *խոնարհեալ. սահեալ. թափեալ. համեստացեալ. նուստացեալ. նստագոյն. ցած* բառերը (288բ):

⁴⁰ «Հզվղ.» նշումով «աչքերը խոնարհել, ամոթահար լինել» իմաստն առկա է ԺՀԼԲԲ-ում (հ. III, էջ 194) և ԱՀԲԲ-ում (էջ 761):

⁴¹ Տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 111:

*Հայցելի*⁴² հենաբառով ՀԲԾ-ում առկա է *մանրախուզել* բայը (ՄՄՁ 4612, 172բ. 5596, 220ա): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *մանր* և *խոյզ* արմատներով բաղադրված *մանրախոյզ*-ը «մանր խուզող, պրպտող» իմաստով (ՆՀԲ հ. II, էջ 207: ԱԲ, էջ 540): *Մանրախուզել*-ը վկայում է Մխիթար Մեբաստացին՝ «մանրամասնաբար խուզել. կամ հետազոտ քննութեամբ որոնել» նշանակությամբ (ԲՀԼ, էջ 615 (664)): Այն գործածում է Վարդան վարդապետը «Հաւաքումն պատմութեան» գրքի առաջաբանում՝ «...կամ առ ձերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել ի ստոյգ պատմչաց ...»⁴³:

ՆՀԲ-ն *նրբաբայել* բայի «Նուրբ բայիւք այսինքն բառիւք և բանիւք խօսել, յուզել» իմաստը բացատրելիս հիշատակում է նաև *մանրախուզել*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 455): Այսինքն՝ բայն անվերապահորեն կիրառել են Մխիթարյան միաբանության հայրերը: Այն իբր գլխաբառ արձանագրում են Մանվել Ջախջախյանը՝ «մանր խուզիլ կամ որոնիլ» բացատրությամբ (ՋԲ, էջ 947), և Ստեփան Մալխասյանցը՝ «հագուադէպ բառ» նշումով և «Մանրամասնօրէն՝ մանրագնին կերպով խուզարկել, հետազօտել, քննել» նշանակությամբ (ՄՀԲԲ, հ. III, էջ 256): Արդի հայերենի բացատրական բառարանները *մանրախուզել*-ը չեն վկայում, բայց և արձանագրում են *մանրախոյզ*, *մանրախուզորեն*, *մանրախուզություն* բառերը:

Յարել հենաբառով* ՀԲԾ-ում առկա *յարաշարել*-ը, կարելի է *շարահարել*-ի «շարադասական տարբերակ» դիտել⁴⁴: ՆՀԲ-ն, ԱԲ-ն, ԳԲ-ն ունեն միայն՝ **Յարաշար** ... շարահարեալ. կից անընդմեջ», «իրար կից շարուած» (ՆՀԲ, հ. II, էջ 343: ԱԲ, էջ 588: ԳԲ, հ. II, էջ

⁴² ՆՀԲ-ում՝ *Հայցել* բառահոդովածի վերջում, արձանագրվում է. «Ի Հին բռ. որպէս փաղանուն դնին, *Հայցել, այցել, գննել, յուզել, խնդրել» (հ. II, էջ 35):

⁴³ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ Է:

* ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 1654, 2371-ում՝ *Շարել*, ՄՄՁ 4149, 8189(II)-ում՝ *Հիւսել* հենաբառերն են:

⁴⁴ Այս տիպի բառային որոշ տարբերակներ, ինչպես նկատել է Լ. Հովհաննիսյանը, ժամանակային նույն հատվածին չեն վերագրվում (Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում, էջ 57):

231): Նորայր Պողոսյանը *յարաշարել*-ը վկայում է ԺԷ դ. ձեռագրում⁴⁵: Արդի հայերենի բացատրական բառարանը *հարաշարել*-ն արձանագրում է «շարահարել» նշանակությամբ (ԱՀԲԲ, էջ 842):

ԺԴ դարից ավանդված գրչագրերում վկայվող *պարզ բայեր*:

Դուռել, խուղել, դաղել, թաքչիլ, սուզանել ՀԲԾ-ից⁴⁶ առանձնացող առաջին երկու բայերն առկա են ՄՄՁ 2371 (285ա): ՀԱԲ-ը նրշում է. «Դուռել թաքչիլ». այս անստույգ բառի վրա տե՛ս դուղել» (հ. Ա, էջ 684), վերջինս էլ բացատրում՝ ««թոչիլ. վերաթնիլ. **օղագնաց լինել**» գիտե միայն ՀՀԲ. բայց Բառ. Երեմ. էջ 80 կայ դուռել «թաքչիլ» ձևով մի բառ, որ սրա հետ նոյն պիտի լինի և հետևաբար մեկը կամ միւսը վրիպակ» (հ. Ա, էջ 681): Գրչագրերում արձանագրվում են *դուղել* (ՄՄՁ 266, 532, 538, 843, 2295, 2431, 3197, 3286, 3937, 5925, 5995, 6097, 7250, 8198(I), 9992), *դուղել* (ՄՄՁ 2291, 4149, 8106), *դուրթել* (ՄՄՁ 8198(II)) տարբերակները: Մյուսներում *դուռել* բայն է: *Խուղել*-ն առկա է ՄՄՁ 267, 276, 516, 533, 1654, 2330, 2370, 2372, 2381, 2431, 3170, 3261, 3468, 3824, 3937, 5126, 10223-ում: Բոլոր այս գրչագրերում վկայվում է նաև *դուռել*-ը: *Ղաղել*-ն առկա է ՄՄՁ 268, 529, 530, 2331, 2335, 5919-ում, *դուղել*-ը՝ ՄՄՁ 537, 540, 545, 682, 2019, 3200, 3488, 5008, 7004, 7955-ում, *դողել*-ը՝ ՄՄՁ 2369-ում: ՄՄՁ 2281-ում ՀԲԾ-ն *դուղել, թաքչիլ*-ն է: ԺԸ դարից ավանդվածներում *Դուռել* (ՄՄՁ 566(II), 3450, 9166), *Դուղել* (ՄՄՁ 843, 9992) հենաբառերն են:

Ակնհայտորեն գերակշռում են *դուռել* և *խուղել* բայերը, հետևաբար պարզապես անհնար է դրանք անտեսել: Ուստի համեմատելով այդ և միջին հայերենում արձանագրված *հարկել, ափել, ճապղիլ* և այլ բայեր՝ կարելի հավանական համարել *դուռ* և *խուղ* արմատներից *դուռել* և *խուղել* բայեր կազմելը՝ «փակ(վ)ել, ծածկ(վ)ել, թաքնվել» իմաստներով: Գնորգ Ջահուկյանը, *խուց* բառի առիթով հնարավոր համարելով «նաև հնդեվրոպական մեկնությունը», հավաստում է. «Պատրուբանին, Պետերսոնը և Պոկոռնին ...

⁴⁵ Տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 144:

⁴⁶ ՄՄՁ 5596-ում (220բ) և 4612-ում (173ա) հենաբառը *դուղել*-ն է:

բխեցնում են հ.-ե. *(s)ké'u- «ծածկել» արմատից (*khu-sk'o) խուղ բառի հետ միասին» (ՀԼՊՆԺ, էջ 462)⁴⁷:

Դուռ արմատն էլ կարելի է հիշատակել դարձյալ Գևորգ Չահուկյանի հավաստմամբ Վլադիսլավ Իլիչ-Մվիտիչի առանձնացրած այն զուգադիպությունների շարքում, «որոնք արդյունք են սեմականից կատարված հնդեվրոպական հնագույն փոխառությունների»՝ «դուռն (հ.-ե. *dh̥er-) արաբ. ṭawār «ցանկապատ», tūr «բակ», ասոր. ṭəyarā «փարախ», եբր. tūr «քարե պատ. սյունաշար»» (ՀԼՊՆԺ, էջ 450), ուստի և ինքնին ենթադրվում է ինչպես «առանձնացում, անջատում», այնպես էլ իմաստի փոփոխությամբ՝ «ծածկ, փակ»:

Հարկ է նաև անդրադառնալ Հրաչյա Աճառյանի՝ «թռչիլ. վերաթևիլ. օդագնաց լինել» նշանակությամբ առանձնացրած *դուղեղի*-ին, որը, ըստ նրա, *դուռեղի*-ի «հետ նույն պիտի լինի և հետևաբար մեկը կամ միւրը վրիպակ»: Վրիպակը (այն Հրաչյա Աճառյանը վերագրում է Երեմիա Մեղրեցուն) սկիզբ է առնում գրչագրերից, որոնցում առկա է նաև *Դուռել. խուղել. դաղել. թաքչիլ. սուզանել. վերապարել. ճախրել. վերաթռչել. վերաթեւել. սլանալ. թեւածել. աւղագնայ. աւղապարել. ճեպել. փութալ. ստիպել. արագել. ընթանալ. հասանել* ՀԲԾ-ն: Ամենայն հավանականությամբ, Հայկ Ամալյանը նույնպես նկատի ունի 16 հոմանիշներից կազմված տվյալ բառաշարքը, երբ ըստ ՄՄՁ 2371-ի (այն համարելով «Հանդէս»-ի գրչագրերից լավագույնը) «բերում» է «բառարանի գլխաբառերը, նրանց դիմաց նշելով համապատասխան բառով սկսվող բառախմբում եղած բառերի քանակը (այդ թվում նաև գլխաբառը)»⁴⁸: Ուստի կարելի է ընդունելի համարել քննվող բառաշարքը երեքի տրոհելը՝ *Դուռել. խուղել. դաղել. թաքչիլ. սուզանել: Վերապարել. ճախրել. վերաթռչել. վերաթեւել. սլանալ. թեւածել. աւղագնայ. աւղապարել:*

⁴⁷ Նաև հմմտ.՝ նույն աշխ., 253-րդ էջը: Բայց և նույն աշխատությունում Գ. Չահուկյանը ենթադրաբար նշում է. «...*խուղ* (հ.-ե. *khu-l- *keu- «ծածկել» արմատի՞ց) ...» (ՀԼՊՆԺ, էջ 610):

⁴⁸ Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 130-131:

*Ճեպել. փութալ. ստիպել. արագել. ընթանալ. հասանել*⁴⁹: Այդուհանդերձ, եթե վերոնշյալը ընդունելի համարվի, ապա հարկ է արձանագրել, որ դա հավանական է, եթե թաքնվելու լինեն ընդհանրապես (մեղմ արտահայտվելու դեպքում) վատ արարքների դեպքում՝ բացառելով քաղաքական հետապնդումներից, պետության դատախիրավական մեքենայի ապօրինություններից խուսափելը (և համանման երևույթներ). այնպես որ բառաշարքում ներառված բայերը բուն և փոխաբերական իմաստներով լրացնում են միմյանց կազմվելով հետևանքային հարաբերությամբ (*եթե...սպա...*) շրջուն կառույց՝ տվյալ դեպքում հակադարձ ընթացքով՝ *աճապարել, արագել, փութալ, վերաթռել, վերաթռչել, ... թաքչիլ*, ուրեմն ենթադրելի է շտապում են նաև թաքնվելու համար և այդ նպատակով:

Պիտալ. տարփել. ըղձանալ. տենչալ. փափագել. գեղձալ ՀԲԾ-ում (ՄՄՁ 4149, 176բ)⁵⁰ առանձնանում է **բարքել** բայը: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ այն արձանագրում է Երեմիա Մեղրեցին՝ «որից ՀՀԲ «ըղձալ, ցանկալ»» (ՀԱԲ, հ. Դ, էջ 565): Մխիթար Սեբաստացին հավելում է նաև «տարփալ.և կամ փափաքիլ» (ԲՀԼ, էջ 1217(1284)): Նույն իմաստն են վկայում Ստեփան Մալխասյանցը՝ «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» (ՄՀԲԲ, հ. IV, էջ 565), Աշոտ Սուքիասյանը՝ «տե՛ս Ըղձալ 1 նշան.» նշումներով (ՀԼՀԲ, էջ 670):

ԺԴ դարից ավանդված գրչագրերից առանձնացվող *բաղադրյալ կազմությամբ բայերից* է ՄՄՁ 2371-ում՝ *Ասել* ՀԲԾ-ում, վկայվող **առագրել**-ը (ՄՄՁ 4612, 173ա. 5596, 221ա): Հրաչյա Աճառյանը, անդրադառնալով *առ* նախդրին, նշում է, որ այն «Շատ սովորական է բառակերտութեան մէջ, ուր դրում է բառասկզբում կամ մի նախդիրից յետոյ» հավելելով՝ «Յունաբան հեղինակների մօտ դարձել է յն. *πρός* ձևին համապատասխան նախամասնիկ, որով կազմուած են բազմաթիւ բառեր», հիշատակելով նաև *առբերել, առդնել* բայերը

⁴⁹ Հատկանշական է, որ նույնանիշների՝ ԺԸ դարից ավանդված ՁԲ-ներում տարբերակվում են *Դարանել, Թաքչիլ, Թոչիլ* հենաբառերով ՆԲԾ-ներ (ՄՄՁ 556 (I), (241բ, 245բ, 246ա), ՄՄՁ 6762 (105բ, 108ա-108բ)):

⁵⁰ ՄՄՁ 5596-ում *Պիտալ. բարքել տարփել. ըղձանալ. ցանկանալ. սիրել. տենչալ. փափագել* ՀԲԾ-ն է (224բ):

(ՀԱԲ, հ. Ա, էջ 247): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *առագրութիւն*-ը՝ «առընթեր գրութիւն. յաւելուած գրութեան. մեկնաբանութիւն. ճառ» իմաստներով (ՆՀԲ, հ. I, էջ 282: ԱԲ, էջ 108), որոնք Մանվել Զախջախյանն արձանագրում է երկլեզվյան բառարանում (ԶԲ, էջ 185): Երեմիա Մեղրեցին *առագրել*-ը նշում է «ինքնագրել» բացատրությամբ (ԲՀ, էջ 29): Մխիթար Սեբաստացին «Առագրեմ... գրել ումեք. կամ համարիլ ումեք. և կամ հանուն ուրուք ընծայել» բառահոդվածին հավելում է՝ «ի հին քերականութենէ» (ԲՀԼՄՍ, էջ 56(79)), միաժամանակ *Սեպել* բառահոդվածում *գրել. վերագրել* բայերին առադրում *առագրել*-ը՝ «գոր օրինակ» նշելով՝ «Սուչը անոր կըսեպուի: // նմա առագրին յանցանքն» (ԲՀԼՄՍ, էջ 569(1598)), այլև այն արձանագրում իր աշխատասիրած Քերականության մեջ⁵¹: Բայն առկա է ԺԷ դ. ձեռագրում⁵²:

ՄՄՁ 530-ում առանձնանում է *Առիշեղել* հենաբառը (65ա): ԲՀ-ն արձանագրում է «*Առիշեղեալ-խտտորեալ*» (էջ 31), Մխիթար Սեբաստացին «*Առ շեղիմ. եցայ. իլ ...*ի մի կողմ շեղիլ. կամ խտտորիլ. և կամ թիրիլ» բառահոդվածը (ԲՀԼՄՍ, էջ 61 (84)), հայոց լեզվի բառարանները՝ *Առշեղեալ* տարբերակը (ՆՀԲ, հ. I, էջ 310: ԱԲ, էջ 206: ՀԱԲ, հ. Գ, էջ 508: ԳԲ, հ. Ա, էջ 183: ԳՀԲ, էջ 99)⁵³:

ՄՄՁ 4149-ում (354բ. նաև ԺՁ դարից ավանդված ՄՄՁ 8106-ում (57բ))՝ *Ղուղել* հենաբառով ՀԲՇ-ում առկա է *աղապարել* բայը⁵⁴: Հայոց լեզվի բառարանները վկայում են *օղապար* և *օղապարիկ* բառերը (ՆՀԲ, հ. II, էջ 1023: ԱԲ, էջ էջ 842: ԶԲ, էջ 1487: ՀԱԲ, հ. Դ, էջ 608: ԳԲ, հ. Բ, էջ 648: ԳՀԲ, էջ 697: ՍՀԲԲ, հ. IV, էջ 602)⁵⁵: Մխիթար Սեբաստացին վկայում է *օղապարել*-ը՝ «հաւան ժուռ գալ. հաւան գնալ. հաւայէն թոչիլ» իմաստներով (ԲՀԼՄՍ, էջ 414 (1027), 690

⁵¹ Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռի, էջք 396, 522:

⁵² Տե՛ս Ն.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 32:

⁵³ Տե՛ս նաև Եղ. Հիրսմիզեան, Բառգիրք յաշխարհարառէ ի գրաբար հանդերձ ո՞ճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869, էջ 118:

⁵⁴ ԺԳ-ԺՁ դարերից ավանդված մյուս գրչագրերում *աղազնաց* բառն է:

⁵⁵ Տե՛ս նաև Հայերէն աշխարհարար լեզուի լիակատար բառարան, հ. II, 1957, էջ 1444: Յ. Գայայեան, Բառարան գանձարան հայերէն լեզուի, էջ 539: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 905: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 1131:

(1719): Էդուարդ Հյուրմյուզյանը այն հիշատակում է *Օղ* բառահոդվածում («Օղի մէջ ժուռ գալ կամ գնալ. օղաչու լինել. օղապարել. օղավարել. արփեգնաց լինել»)՝⁵⁶: ԳՆԲՀԼ-ում «օղի մէջ երերալ չուանի վրայ կամ յակուրջիով» բացատրությունն է (էջ 1386): Արդի հայերենի բացատրական բառարաններից *օղապարել*-ն արձանագրում է միայն ԱՀԲԲ-ն՝ (բնաստ.) նշումով բացատրելով «օղում պարել՝ պտույտներ գործելով ճախրել» (էջ 1585):

Նույն գրչագրում՝ *Վտանկք* հենարառով ՀԲՇ-ում (362բ), *խոշոմել* և *առոզել* բայերին հավելված *սրտաթափել* բայը վկայում է միայն Մխիթար Սեբաստացին՝ *Վախցնել* բառահոդվածում առադրելով նաև *սրտաբեկել*, *սրտաբեկ առնել*, *սրտաթափ առնել* բայերը (ԲՀԼՍՄ, էջ 598 (1627)): Վերջին հարադրական կազմությունը քաղվում է Եղիշեի երկից՝ որպես նորահայտ բառ՝⁵⁷: Հատկանշական է, որ ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 5925-ում (100բ) *սրտաթափանք* բառն է: Գրաբարի բառարանները նշում են *սրտաթափ* և *սրտաթափումն* բառերը, որոնք վկայում են նաև ՄՀԲԲ-ն (հ. IV, էջ 280), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 345), ԱՀԲԲ-ն (էջ 1342):

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566(II)-ում՝ *Շինել* հենարառով ՀԲՇ-ում, վկայվում է *գեղ* և *գոյն* արմատներով բաղադրված ***գեղագունել*** բայը (293ա)⁵⁸: Գրաբարի բառարաններում առկա է *Գեղագոյն*-ը «Իբրև Գեղեցկագոյնս» (ՆՀԲ, հ. I, էջ 534), «աւելի տեսքով» բացատրությամբ (ԱԲ, էջ 206), ՄՀԲԲ-ն հիշատակում է «Տ. Գեղեցկագոյն» նշումով (ՄՀԲԲ, հ. I, էջ 419), որը պահպանել են արդի հայերենի բացատրական բառարանները (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 378: ԱՀԲԲ, էջ 224): *Գեղագունել*-ը կարելի է *գունագեղել*-ի «շարադասական տարբերակ» դիտել, որն էլ վկայում են հայերեն բառարանները: Ինչպես արդեն նշվել է, «այս տիպի բառային որոշ տարբերակներ ժամանակային նույն հասովածին չեն վերագրվում», հետևաբար *գե-*

⁵⁶ Եղ. Հյուրմյուզյան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 566:

⁵⁷ Տե՛ս ու Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Նորահայտ բառեր գրաբարում, Ե., 2007, էջ 94:

⁵⁸ Ավելի վաղ ավանդված գրչագրերում վկայվում են *գեղատրել*, *գունել* բայերը:

դազունել-գունագեղել և *յարաշարել-շարահարել* բայերը բառային տարածամանակյա տարբերակներ են:

Նույն գրչագրում՝ *Ցասնուլ. գայրանալ. վրդովել. խոռվիլ. աղ-մրկիլ. բարկանալ. նեղասրտիլ* ՀԲՇ-ում (298ա) է առկա *նեղ* (ՀԱԲ, 3, 439) և Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ «ձգել» իմաստով «հր-ների մէջ առանձին անգործածական» *արկ* (ՀԱԲ, հ. Ա, էջ 320) արմատներով բաղադրված *նեղարկել* բայը, որն ամենայն հավանականությամբ «նեղը գցել, նեղել» նշանակությամբ *ի նեղ արկանել* դարձվածային միավորի (ՆՀԲ, հ. II, էջ 410: ԳԴԲ, էջ 130) կրճատ և միասին գրությունն է. այն կազմությամբ հիշեցնում է Սեդա Էլոյանի արձանագրած և այժմ լայնորեն կիրառվող *չեղարկել*-ը⁵⁹:

ԺԳ դարից ավանդված գրչագրերում վկայվող *բաղադրյալ կազմություններ*:

ա) *Ածանցավոր բառեր*

Անգուտ-ը վկայվում է *Բիծ* հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 174ա. 5596, 221բ): Մխիթար Մեբաստացին բառը «ի հին քերակ.» հղումով բացատրում է որպես «... անյատակ. կամ անմաքուր. կամ անսուրբ» (ԲՀԼՄՄ, էջ 34 (59). տե՛ս նաև էջ 25(638)): Մանվել Քաջունիի բառը հիշատակում է երկլեզվյան բառարաններում (Անգուտ (շաքար). Brut. Շաքար անգուտ. Որ չէ զտեալ)⁶⁰: Ստեփան Մալխասյանցի կազմած և հայերեն բացատրական բառարաններում *անգուտ*-ը «չզտված, ոչ մաքուր, խառը» իմաստներով է (ՄՀԲԲ, հ. I, էջ 114: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 91: ԱՀԲԲ, էջ 56)⁶¹: ՀԼՀԲ-ում այն սոնտեսագիտական եզր է՝ *Համախառն* (էջ 45):

Գծաւորք բառով ավարտվում է *Գիծ. տառք* ՀԲՇ-ն (ՄՄՁ 4612, 177ա. 5596, 225բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *գծաւորութիւն* բառը՝ «գծագրութիւն յար և նման. տպաւորութիւն. նկարագիր» նշանակությամբ (ՆՀԲ, հ. I, էջ 562: ԱԲ, էջ 219), Մանվել

⁵⁹ Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորարանությունների բառարան, Ե., 2002, էջ 386:

⁶⁰ Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետի Քաջունի (այսուհետև՝ ՔԲ), հ. I, Վենետիկ, 1891, էջ 325: <http://surli.fzoxowx> (հասանելի է՝ 31.03.2026):

⁶¹ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 241:

Ջախջախյանը հավելում է՝ «տիպ, պատկեր» (ՋԲ, էջ 366): *Գծաւոր* բառը հիշատակում է Մխիթար Սեբաստացին՝ նշելով՝ «ունօղ զգիծ. կամ ունօղ ըզգիր. կամ նկարացեալ» իմաստները (ԲՀԼ, էջ 187 (216)): Հրայր Աճառյանը *գծաւոր*-ը նշում է «նոր բառեր»-ի շարքում (ՀԱԲ, հ. Ա, էջ 556): Ստեփան Մալխասյանցը վկայում է «գրծեր ունեցող, գծված» նշանակությունը (ՄՀԲԲ, հ. I, էջ 450), որն էլ արձանագրում են արդի հայերենի բառարանները: Հատկանշական է, որ *գծաւոր* բառն առկա է Մխիթարյան միաբանության հայրերի թարգմանած երկերում («... ամենայն բաժանման և ստորաբաժանման երկու նեթ լինիցին մասունք. և թէ սոքա երկու երկու գնայցեն թափօրապէս. ըստ որում ինքն գտարած քանակն փոխանակ ընդ այլոց ի գիծ, ի մակերևոյթ և ի հաստատուն բաժանելոյ, ասէր նախ մեծութիւն է գիծ կամ գծաւոր ինչ, և ապա թէ գծաւոր է մակերևոյթ կամ հաստատուն»)՝⁶²:

Անտառախիտ հենաբառով ՀԲԾ-ում վկայվող *ծառանոց*-ը Մխիթար Սեբաստացին նշում է նաև *ծառնոց* տարբերակով՝ և «ծառաստան. ծառուտ. դարաստան», «դրախտ. թփուտ» իմաստներով (ԲՀԼ, էջ 410 (443): ԲՀԼՄՄ, էջ 275(1304)): Հարություն Ավգերյանը *ծառանոց*-ն ներառել է երկլեզվյան բառարաններում⁶³: Գրիգոր Փեշտրմալճյանի բացատրությունն է՝ «տեղի՝ ուր գոյ բազմութիւն ծառոց» (ՓԲ, էջ 63): Ըստ Նորայր Բյուզանդացու՝ Դիոնիսիոս Թրակացին վկայում է «"Օառանոց. դրախտ. թփուտ. մացառ. մայրի"» փաղանունների շարքը (ՆԲՀԼ, հ. 3, էջ 1012): Բառն արձանագրվում է ԺԷ դ. ձեռագրում՝ որպէս «դրախտ, թփուտ»⁶⁴: Էդուարդ Հյուրմյուզյանը *ծառնոց*-ը բացատրում է որպէս *ծառաստան*⁶⁵, ՄՀԲԲ-ում *ծառնոց*-ը «գաւառական բառ» է (հ. II, էջ 332), իսկ ՀԼՀԲ-ն *ծառաստան* բառահոդվածում է նշում *ծառնոց*-ը (էջ 285): Հայերեն բացա-

⁶² Մրուեստ բանական կամ տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սոաւէի. Փոխեսաց ի հայ հ. Արսէն վ. Անթիմոսեան Մխիթարեանց, Վենետիկ, 1825, էջ 300 :

* Այս տարբերակն է ՄՄՉ 9992-ում՝ *Բնութիւն* հենաբառով ՀԲԾ-ում:

⁶³ Տէ՛ս Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատ. Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. II, Վենետիկ, 1817, էջ 313: Բառարան հայերէն եւ անգղիական, հ. Բ., էջ 286:

⁶⁴ Ն.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 100:

⁶⁵ Եդ. Հիւրմյուզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 248:

տրական բառարաններում *ծառանց*-ի համար առաջնային է «պտղատու ծառերի այգի, պարտեզ» իմաստը (ԺՀԼԲԲ, հ. II, 655: ԱՀԲԲ, 640): Տեղի իմաստ արտահայտող *-անց*-ը հայոց լեզվի գործածական վերջածանցներից է⁶⁶:

ՄՄՁ 4612-ում (172ա) և ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2431-ում (292բ), 3824-ում (50բ) *նաւուղիդ. նաւազն. նաւաստի. նաւապետ* ՀԲՇ-ի հենաբառը *Ղեկաւոր*-ն է: Հրայր Աճառյանը այն, քաղելով Գրիգոր Մագիստրոսի թղթերից, «ղեկ բռնող» նշանակությամբ «նորագիտ բառ» է դիտում (ՀԱԲ, հ. Գ, էջ 167): Բառն արձանագրում է Հակոբ Վիլյոտը *Remex* բառահոդվածում՝ «վարող: ղեկախաղաց: նավաւար: ղեկաւոր»⁶⁷: Միսիթար Սեբաստացին վկայում է «... վարելն զղեկ նաւու. և մերթ կառավարութիւն» նշանակություններով *ղեկաւորութիւն* բառը (ԲՀԼ, էջ 578 (627)): Նորայր Բյուզանդացին՝ «Ղեկաւորիլ. որ և ղեկաւարիլ. ղեկաւորիլ անդոյր մուրական գնացողացն Բառ. գով 259» բառահոդվածը (ՆԲՀԼ, հ. 4, էջ 163): ՆՀԲ-ն և ՋԲ-ն այն արձանագրում են *Քեղաւոր* բառահոդվածի բացատրության մեջ՝ «...Ղեկաւոր, որպէս Նաւ՝ որ ունի զքեղի այսինքն զղեկ, ղեկաւ ամրացեալ» (ՆՀԲ, հ. II, էջ 1002: ՋԲ, էջ 1475): ՄՀԲԲ-ն «հզվդ.» նշումով «ղեկ բռնող»-ին հավելում է «ղեկավար» իմաստը (հ. III, էջ 185), արդի հայերենի բացատրական բառարանները՝ «ղեկ ունեցող, ղեկ բռնող անձ» նշանակությունները, ԱՀԲԲ-ն՝ *ղեկանվորդ*-ը՝ «ղեկանիվը վարող՝ կառավարող» հղումով (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 428: ԱՀԲԲ, էջ 930-931):

Նենգաժետ. խորամանկ. հնարաւոր. անմեկին. պատուիրանազանց. յաչաղկոտ. նենգաւոր ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 218 ա) առանձնանում է *մախացող*-ը: Գրաբարի տպագիր բառարաններից՝ այն հիշատակում է միայն ԱԲ-ն՝ *Մախամ* բառահոդվածում նշելով «... կամ խացող, կամ խող.... նախանձիլ, բախլիլ...» (էջ

⁶⁶ Տե՛ս Վ.Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Հայոց լեզու, հ. I, Ե., 1979, էջ 431: Տե՛ս նաև՝ Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976, էջ 591-593:

⁶⁷ J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 621.

533)⁶⁸: Համարյա նույն բառահոդվածն է ԳՆԲՀԼ-ում (էջ 882): Հրաչյա Աճառյանը «առանձին անգործածական» *Մախ* «նախանձ» արմատի բառահոդվածում վկայում է *մախալ* և *մախել* բայերը, վերջինը՝ Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական»-ում, *մախող*-ը՝ Ներսես Լամբրոնացու երկում (ՀԱԲ, հ. Գ, էջ 227): Գաբրիել Մենեվիշյանը, նշելով՝ «Սովորաբար կը գրուի *մախալ*, ծանօթ՝ *մախանք* բառէն», և առանձնացնելով նաև *մախանս*-ը և *մախացեալ*-ը, նկատում է. «Ոսկեդարու հայերէնին անծանօթ բառ մը, որ թե՛ իւր գործածութեամբն եւ թե՛ իւր բարդութիւններով ի ցոյց կը դնէ գրչութեան միջնադարեան հայերէն ըլլալը: Զարմանալի է. բոլոր ձեռագիր ու տպագիրներն համաձայն են այս բառին գրչութեան մէջ... Լավ կը ճանչնան իրենց ապրանքը»⁶⁹: *Մախացող* բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «ըզմախանս ունօղ. կամ նախանձոտ. կամ յաչաղկոտ. և կամ ռխակալ» իմաստով (ԲՀԼ, էջ 601(650)), այն հիշատակելով նաև *Յաչաղկոտ*, *Նախանձոտ*, *Ոխերիմ* բառահոդվածներում (ԲՀԼ, էջ 699(748)), 741(800)), 819 (878)): ՆՀԲ-ն նույնպես *Յաչաղկոտ*-ը բացատրում է *մախացող* բառով (հ. II, էջ 189): *Մախող*-ն առկա է «Վարք սրբոց հարանց» ժողովածուում (Յորժամ ոչ կարասցէ գուշն շարժել զաղօթելոյն մախող դէն, յայնժամ զխառնումն մարմնոյն բոնաւորէ...)⁷⁰: ՄՀԲԲ-ում այն «հին բառ կամ նշանակութիւն» նշումով է (հ. III, էջ 235):

Մոլար. խաբերա. հրապուրեալ ՀԲԾ-ի հենաբառը ***Տարատողական***-ն է (ՄՄՁ 5596, 224ա)⁷¹: Հրաչյա Աճառյանը *տարատողել* բայը նշում է «ուղիղ շարք (մարգարիտների, շղթայի, բազմականների, խօսքի կամ բառերի)» իմաստով *Տող* բառահոդվածում՝ նշե-

⁶⁸ ԱՄԳՉՂ-ում նշվում է, որ *մախալ* «նախանձել»-ը «գրաբարին անծանօթ» այն պարզ բայերից է, «որոնց նորակերտ կամ հին լինելը դժվար է որոշել», բայց և հավելվում է «բառերի մի մասը անշուշտ գործածական է եղել **հին հայերենի** բարբառներում» (էջ 251):

⁶⁹ Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականի», ամբողջական լուծումը, էջ 97-98 (111-112):

⁷⁰ <https://www.digilib.am/book/1472/1775/13786/?lang=am> (հասանելի է 03.04.2026):

⁷¹ Այն վկայվում է նաև ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 532 և 2371-ում: ՄՄՁ 4612-ում *Տարտողական. մոլար. սխալ. խաբերա. հրապուրեալ* ՀԲԾ-ն է (176ա):

լով. «=Թուում է խալդեան շրջանի բառ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 415)⁷²: ՆՀԲ-ն *տարատողումն*-ը բացատրում է «Ի բաց հեռացումն ի տողէ. ի կարգէ. օտարանալն» (հ. II, էջ 855)⁷³: Մխիթար Սեբաստացին *տարատողական*-ի համար նշում է «տարանջատական. կամ բաժանողական. և կամ տրոհական: Իսկ մերթ վտարողական. կամ տարագրողական. և կամ մերժողական» իմաստները (ԲՀԼ, էջ 1106 (1165)): Ստեփան Մալխասյանցը «հագուադեպ բառ» նշումով առանձնացնում է *տարատողական*-ի «Տարատողոյ, տարատողված, շարքից դուրս ձգող, շարքից դուրս ձգված, տարագրված» նշանակությունը՝ նույն նշումով արձանագրելով *տարատել*, *տարատողել* բայերը, և միաժամանակ նշելով դրանց «հեռացնել, տարագրել, վտարել» իմաստները (ՄՀԲԲ, հ. IV, էջ 384): Նույն նշումով *տարատողել* և *տարատումն* բառերը հիշատակում է Հովհաննես Բարսեղյանը⁷⁴: Նկատի առնելով ՀԲՇ-ում ներառված մյուս բառերը՝ կարելի է հավանական և ընդունելի համարել արդի հայերենի բառարաններում *հրապուրիչ*-ի համար նշված «խորամանկությամբ՝ խաբկանքով՝ պատրողական խոսքերով (դեպի մի վատ բան) ձգող, «մոլորեցնող» «մի վատ բան անելու թելադրող» նշանակությունները (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 392: ԱՀԲԲ, էջ 905) *տարատողական*-ին վերագրելը, քանի որ, ի վերջո, դրանք հանգեցնում են «տարանջատման, բաժանման», այլև «հեռանալու, օտարանալու»:

Հոյակապ հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 172բ-173ա. 5596, 220բ) առանձնանում է նաև *ուրճանակ*-ը՝ «աճիլ, մեծանալ, լցուիլ, գորանալ» նշանակությամբ *ուրճանակ*-ի բայահիմքով (ՀԱԲ, հ. Դ, էջ 608) և միջին գրական հայերենում կենսունակ *-ակ* վերջածանցով՝ «գորել, հզոր մարդ» նշանակությամբ: Հոմանիշ է *համակալ*, *մեծա-*

⁷² *Տող*-ի ստուգաբանությանն անդրադարձել է Է. Աղայանը՝ հանգելով այն եզրակացության, որ «...հայերեն **տող** և **տաղ** բառերը ծագում են հնիս. *del- արմատից ...». մանրամասն տե՛ս Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 137-140:

⁷³ *Տարատող*-ի համար արձանագրվում է նաև «բաժանող» նշանակությունը. տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրարարի բառարան, էջ 273:

⁷⁴ Տե՛ս Զ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973, էջ 889:

տուն, հարուստ բառերին. հարուստ մարդը միշտ զորեղ է (հմմտ. Փողի տիրոջ խոսքն ամեն տեղ կանցնի, Փող ունեցար աղա էս, փող չունեցար գյաղա (ծառա) էս, կամ՝ Փողան սարերն էլ են վախում)⁷⁵: Մխիթար Սեբաստացին բառը արձանագրում է «ուռճացեալ. կամ բարգաւաճ. կամ բեղմնաւոր. կամ պարարտ. կամ ճոխ. և կամ յղփացեալ բարեօք» (ԲՀԼ, էջ 869 (928)), «ծլած, ծաղկած. խիստ աճած. պարարտ. պտղով լցուած» իմաստներով (ԲՀԼՄՍ, էջ 322 (935)), ՄՀԲԲ-ն՝ «հզվդ.» նշումով՝ իբրև «ուռճացած, ամեն բարիքներով լցված» (հ. III, էջ 613):

Կապարճք. աղեղանց բոյն* ՀԲԾ-ում (ՄՄՁ 5596, 225բ) վկայվող փառանգոր-ը ՄՄՁ 4612-ում առկա է փառանգաւոր տարբերակով (177ա)⁷⁶, իսկ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում (357ա) հավելվում են նաև պատկանդարան և նետբոյն բառերը: Բառաշարքի բառերից միայն աղեղանց բոյն-ն է աղեղնաբուն ձևով արձանագրում ԱԲ-ն (էջ 16): Փառանգաւոր-ը, աղեղնաման-ը, նետբոյն-ը չկան գրաբարի և միջին հայերենի բառարաններում: Փառանգաւոր-ը «կապարճ» նշանակությամբ վկայում է ՀԱԲ-ը՝ հղելով Երեմիա Մեղրեցու բառգիրքը (ՀԱԲ, հ. Դ, էջ 483)⁷⁷, թեև Հայկ Ամալյանի կազմած քննական բնագրում այն չկա (տե՛ս ԲՀ): Ստեփան Մալխասյանցն արձանագրում է «հզվդ.» նշումով, «Տ. Կապարճ» հրդումով (ՄՀԲԲ, հ. IV, էջ 488)⁷⁸, նույն հղումով է նաև ՀԼՀԲ-ում (էջ 650): Եվ եթե պարզորոշ է աղեղ(ն)աման, նետբոյն բառերի՝ աղեղ, նետ և բոյն արմատների կցումով կազմությունը, ապա նույնը չի կարելի ասել փառանգաւոր-ի մասին: Փառանգ-ը թերևս հիշեցնում է փաղանգ-ը, թեև *ղ/ռ* բաղաձայնական հերթագայությամբ տարբերակներ հայերենում չեն արձանագրվում: Այն կարելի է նաև սխա-

⁷⁵ Տե՛ս Ա. Ղանալանյան, Առածանի, Ե., 1960, էջ 248-249:

* ՄՄՁ 3261-ում (234բ) և 9166 -ում (6բ) աղեղնաման տարբերակն է, ՄՄՁ 3468-ում (461բ) և 3450-ում (76ա)՝ աղեղնաման-ը, ՄՄՁ 566(II)-ում՝ աղեղանց բուն-ը, ՄՄՁ 10233-ում (196բ) աղեղան աման-ը: Աղեղաբոյն և աղեղանցբոյն բառերն արձանագրվում են ԺԷ դարի ձեռագրերում. տե՛ս Ն.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 23:

⁷⁶ Տարբերակները տե՛ս 87-րդ էջում:

⁷⁷ Տե՛ս նաև ՋՀԱԲ, էջ 759:

⁷⁸ Նույն հղումով ՀԼՀԲ-ում է (էջ 650):

լագրություն դիտել՝ *դ*-ի մասնիկի կարճ գրությամբ: Եվ եթե ընդունելի է այս վարկածը, ապա ենթադրելի է հունարեն՝ «ճյուղերից մաքրված բուն, ցողուն, կոթ, գերան...»⁷⁹ առաջնային իմաստով *փաղանգ*-ը, որը նմանությամբ կարող էր *նետ* կոչվել: Հարկ է նաև հիշեցնել արտալեզվական մի փաստ. մակեդոնացիների՝ հույների ստեղծած փաղանգ-գորագունդը առավել կատարելագործելուց հետո էլ դրա հիմնական սպառազինությունը տեղերն ու նետերն էին⁸⁰: Եվ *փաղանգ*-ին կցված «ունեցող»-ի բառակազմական իմաստով (*-ա*)վոր ածանցով արդյոք *փաղանգավոր*-ը նույն նետ(եր) ունեցողը չէ՞ (հմմտ.՝ *զինվոր, ազևոր, նետաւոր* (ՄՀԲ, հ. Բ, էջ 190), այլև *աշտարակավոր, բժավոր, գունավոր*): Ուստի և *փաղանգավոր*-ը կարող էր նշանակել նաև «նետեր ունեցող, նետերով լցված», տվյալ դեպքում «նետաման, կապարճ»:

բ) *Բարդ և բարդածանցավոր բառեր*

Ինչ վերաբերում է վերոնշյալ գրչագրերում և ՀԲՇ-ում վկայվող *աղեղան աման, աղեղնաման և նետքոյն* տարբերակներին, ապա, որքանով հաջողվեց պարզել, դրանք բառարաններում չեն վկայվում: Համանման բաղադրություններից *աղեղնակապարճ*-ն արձանագրում է ՆՀԲ-ն (հ. I, էջ 37), *նետաման*-ը՝ ՀԼՀԲ-ն (էջ 484), *նետ դնելու աման*-ը՝ Էդուարդ Հյուրմյուզյանը⁸¹:

Բազմապատիկ հենարառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 173ա. 5596, 220բ) առկա են *ամենորակ, ամենակերպ, ամեներանգ*⁸² բառերը, որ բաղադրված են *ամեն* «բոլոր» և համապատասխանաբար *որակ, կերպ, երանգ* արմատներով՝ «ամեն որակի, ամեն տեսակի, ամեն գույնի (բազմագույն)» նշանակություններով, որոնցով էլ հավաստվում է տվյալ բառերի գոյությունը «բազմազան, բազում, բազմապիսի» իմաստներն արտահայտող *բազմապատիկ*-ի շարքում: *Ամեն*-

⁷⁹ Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, ст. 1742:

⁸⁰ Մանրամասն տե՛ս Փ. Шахермайр, Александр Македонский, М., 1984, ст. 84-85, 297:

⁸¹ Եդ. Հյուրմյուզյան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 393:

⁸² ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (3ա) և ՄՄՁ 843-ում (283բ) *ամեներանգ*-ի փոխարեն առկա է *ամենազոյն*-ը, որն արձանագրում է ՆՀԲ-ն:

րակ-ն արձանագրել է Մխիթար Սեբաստացին «բազմակերպ. կամ զանազան. կամ գոյնզգոյն» (ԲՀԼ, էջ 25 (54)), այլև միայն «գունզգուն» նշանակությանը (ԲՀԼՄՍ, էջ 14 (627))՝ որակը հանգեցնելով միայն գոյնին: *Ամենորակ, ամենակերպ* բառերն առաջինն առանձնացնում է Հակոբ Մանանդյանը՝ նշելով, որ այդ «նոր բառեր»-ը «չունեն նոր Հայկազյան և Առձեռն բառարանները»⁸³: ՄՀԲԲ -ն *ամենորակ*-ը դիտում է «հագուադէպ բառ» (հ. I, էջ 67):

Նույն գրչագրերում՝ *Անհաս* հենարառով ՀԲՇ-ում (համապատասխանաբար՝ 173բ, 221ա), առկա է *ան-* նախածանցով և *այլանուն* բառով բաղադրված *անայլանուն* կազմությունը⁸⁴: *Այլանուն*-ը վկայում են Գվիտոն Լուսինյանը՝ դրանով մեկնելով Hétéronymie-ը⁸⁵, Ստեփան Մալխասյանցը՝ «Ուրիշի կամ այլ անուն, որով մեկը հրատարակում է իւր գրուածքը. կեղծանուն» իմաստով և «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, հ. I, էջ 77), Աշոտ Սուրբասյանը՝ «Տարանուն» բացատրությամբ (ՀԼՀԲ, էջ 34): Հետևաբար բառարաններում սույն բաղադրության արձանագրումը հնարավորություն է ընձեռում ընդունելի համարելու նաև «այլ անուն չունեցող» իմաստով, ժխտական նախածանցով *անայլանուն* կազմությունը, որով գրչագրերում բնութագրվում է Աստված:

Կարելի է նաև հավանական համարել, որ *անայլանուն*-ը *անայլայլուն* բառի սխալ գրությունն է. վերջինը վկայում են Մխիթար Սեբաստացին՝ «անայլայլելի. կամ անփոփոխ» (ԲՀԼ, էջ 35 (64)), «չըփոխտող, չըփոփոխտող» (ԲՀԼՄՍ, էջ 20 (633)) իմաստով, Ստեփան Մալխասյանցը՝ «Տ. Անայլայլելի», «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» (ՄՀԲԲ, հ. I, էջ 87), այլև ՀԼՀԲ-ն՝ «տե՛ս Անայլայլ» նը-

⁸³ Հ. Մանանդյան, Հերմեյա Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք, Բանբեր Մատենադարանի, 3, 1956, էջ 295 (292): Բառերն արձանագրում է Լ. Հովհաննիսյանը. տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջք 26, 27:

⁸⁴ Այն վկայվում է նաև ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371 (282ա), 3937 (55բ), 4149 (351բ), 8198 (56բ, 64ա)-ում: Գրչագրերի համեմատությունից նկատելի է, որ այդ հենարառով և *Ապարանք* ու *Աստուածագան* հենարառերով ՀԲՇ-ով՝ հետագա դարերից ավանդված գրչագրերում բառը չի վկայվում:

⁸⁵ Տե՛ս Գուլիտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. I, A-H, Փարիզ, 1900, էջ 1033:

շումներով (էջ 37): Գրաբարի բառարանները վկայում են *անայլայլուկ*-ը՝ հղելով «Տ. Անյեղյեղուկ»⁸⁶:

Հոյակապ . ականաւոր . առլցեալ . ըստ ամենայն ազատ . հոշակաւոր . գառբերան . բնաւ անգտանելի . չնաշխարհիկ . կարաւղ . բառացի . բաշխող . աշխարհայլուր . հարուստ . բազմաբեր . հոծ . խիտ . լի . կուռ . պատարուն . պղպզուն . ամենալի . չքնաղ . երկնքադաքացի . երուսաղէմացի . լիապատար . համակալ . աթենացի . գեղուն . թաթաղուն . մայրաքաղաքացի . պերճ . ճոխ . սեգ . գեղասպանձ . գերայան . ուրճանակ . հաճելի . առատ . փարթամ . ընչաւետ . անուանի . մեծատուն . գլխաւոր . կատարուն* ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 172բ-173ա) առկա **բազմամբար** բարդությունը արձանագրում է Մխիթար Սեբաստացին «զբազում համբարս բարեաց ունօղ . կամ բազում մթերիք ընչից ճոխացեալ» նշանակությամբ (ԲՀԼ, էջ 126 (155)): Այն հիշատակվում է Հարություն Ավգերյանի օգնությամբ հրատարակված երկլեզվյան բառարանում՝ «Բազմամբար, See Բազմահամբար» հղումով⁸⁷: *Փարթամ, կարող, համակալ* բառերի առադրմամբ այն վկայվում է նաև ԺԷ դ. ձեռագրում⁸⁸:

Նույն ՀԲԾ-ից (նաև՝ ՄՄՁ 5596, 220բ) *գեր-* նախածանցով և *միտ* արմատով բաղադրված **գերամիտ**-ը «Գրահավաք» կայքի որոնումներով գործածում է Կոմիտաս Աղեցեցին (Է դ.)⁸⁹: Երեմիա Մեղրեցին բառը մեկնում է «փարթամ»⁹⁰: Հայկ Ամալյանը Երեմիա Մեղրեցու բառգրքում վերականգնումներ և ճշգրտումներ կատարելիս նշում է՝ «մեկնությունը պետք է լինի փարթամ մտօք կամ ուղղակի փարթամամիտ»⁹¹: Մխիթար Սեբաստացին *գերամիտ*-ը վկայում է «վսեմամիտ . կամ առատամիտ . կամ զգերագոյն միտս ունօղ . կամ յոյժ նրբամիտ» և «խիստ խելացի» նշանակություններով՝ այն հիշատակելով նաև *Խելացի* բառահոդվածում և առադրելով *հան-*

⁸⁶ ՆՀԲ, Վենետիկ, հ. I, 1836, էջ 106: ԱԲ, 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 41:

* ՄՄՁ 5596-ում *Հնակասպ* հենարան է (220բ):

⁸⁷ Բառարան հայերեն եւ անգղիական, հ. Բ, էջ 105-106 (133-134):

⁸⁸ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 41:

⁸⁹ <http://surl.li/kybgia> (հասանելի է՝ 31.03.2026):

⁹⁰ <http://surl.li/nbwisf>, <http://surl.li/gfhwap> (հասանելի է՝ 31.03.2026):

⁹¹ Տե՛ս՝ Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 191:

ճարամիտ, վսեմամիտ, նրբամիտ և այլ բառեր (ԲՀԼ, էջ 179 (208): ԲՀԼՄՄ, էջք 88 (701), 247-248 (1276-1277)): Որպես գլխաբան՝ *գերամիտ*-ը նշում է նաև Գրիգոր Փեշտըմալճյանը (ՓԲ, հ. I, էջ 236 (252)): Հիշատակված իմաստներով բառը վկայում են ՄՀԲԲ-ն (հ. I, էջ 428), ՀԼՀԲ-ն (էջ 141), ԱՀԲԲ-ն (էջ 231), Հովհաննես Բարսեղյանը⁹²: Հայերենում շատ են *միտ* վերջնաբաղադրիչով բաղադրյալ կազմությունները՝ *խելամիտ, ծուլամիտ, ծածկամիտ, մանկամիտ, ուղղամիտ* և այլն⁹³:

Վերոնշյալ ՀԲՇ-ում նույն նախածանցով և *յաւն (յօն)* արմատով բաղադրված *գերայաւն*-ը Մխիթար Սեբաստացին (*գերայօն*) հղում է «բարձրամիտ»-ին (ԲՀԼ, էջ 179(208))՝ սա էլ բացատրելով իբրև «հպարտ. գոռոզ» (ԲՀԼՄՄ, էջք 88(701), 75(688)), ՄՀԲԲ-ն «հզվդ.» նշումով իբրև «Յօնքերը բարձր, բարձրամիտ» (հ. I, էջ 428): Դիտարկելով սակայն ՀԲՇ-ն և Երեմիա Մեղրեցու *գերամիտ* բառի «փարթամ մտօք» (ԲՀ, էջ 64), այլև Մխիթար Սեբաստացու՝ նույն բառի «խիստ խելացի» բացատրությունները (ԲՀԼՄՄ, էջ 88(701))՝ *գերայաւն*-ն էլ կարելի է մեկնել իբրև «փարթամ հոնքերով», ասել է՝ «երևացող, աչքի ընկնող անձ»:

Պատաղէպ բառն առկա է *Զանխուլ. ծածուկ. անյայտ. առանց գիտելոյ. դարանամուտ. սքողեալ. խփեալ. ընդ գրուանաւ. ընդ պատրրուակաւ. ընդ վարագուրաւ. յոգնատեսակ է սա* ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223 ա), ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում *դատաղէտ*-ն է (285): Բառերը բաղադրված են *դաւ* «խարդախություն, դարանակալություն, սպանություն» և *ղէպ* «պատահմունք, դիպված» կամ *ղէտ* «դիտող, պահապան» արմատներով: Երկու բացատրություններն էլ կարելի է ընդունելի համարել, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀԱԲ-ը նշված արմատների բառահոդվածներում վկայում է *դիրաղէպ, դիրաղէտ* բայերը (ՀԱԲ, հ. Ա, էջ 660, 661): Սակայն, ըստ բառաշարքի, ավելի հավանական է թվում «դավը դիտող» բացատրությունը, այսինքն՝ «դարանամուտ, թաքնված»:

⁹² Տե՛ս Ն. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, էջ 219:

⁹³ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 502-503:

Դլխիթ* հենաբառով ՀԲԾ-ում առադրվում են *դժուարին. տաժանելի. անյանդուրժելի. վտանգաւոր. աղետաւոր. տարակուսանք. սխրալի. ահագին. սուկալի* բառերը: **Դլխիթ**-ն առկա է ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371 (288)-ում: ՄՄՁ 5596 (225բ), 4612 (177ա)-ում *դղխին* և *ղխիթ* տարբերակներն են: Երեմիա Մեղրեցու բառգրքում վկայվում է *ղխխեն*-ը՝ «դժուարին» բացատրությամբ (ԲՀ, էջ 80), Մխիթար Սեբաստացու բառգրքում՝ *ղխխին*-ը՝ «տե՛ս Դժուարին» հղումով (ԲՀԼՄՄ, էջ 109 (722)), այլև նշելով «կամ տաժանելի. կամ վշտագին. կամ տառապելի» իմաստները (ԲՀԼ, էջ 227 (256)): «Բառգիրք հայոց»-ի քննական բնագրի ծանոթագրություններում անդրադառնալով բառին՝ Հայկ Ամալյանը նշում է. «Ձեռագրերում նաև **ղխխին** (№№ 533, 8606, 268 և այլն), որ մեկնվում են նաև «դժուարին կամ տաժանելի, կամ անհանդուրժելի, կամ վտանգաւոր, կամ աղետաւոր, կամ տարակուսական» (№№ 451, 3287 և այլն): Այս մեկնությամբ **ղխխին** բառն ունի ՍԲՀԱ (Մխիթար Սեբաստացին՝ Ն.Հ.), որը սակայն չի նշում բառի ծագումը և աղբյուրը: Այս հանգամանքը միտում է ենթադրել, թե **ղխխեն** (կամ **ղխխին**)-ը կեղծ բառ է և հավանաբար աղճատումն է **դժոխային** բառի, որի մեկնությունը նույնպես «դժվարին» է (տե՛ս 160)» (ԲՀ, 361)⁹⁴: Ամենևին չհավակնելով «ուղղելու կամ էլ սրբագրելու» Հայկ Ամալյանին՝ պարզապես հարկ է նշել, որ բառային տարբերակներից կարելի է թերևս ընդունելի համարել նաև *ղլխիթ*-ը՝ հետևյալ հիմնավորում-բացատրությամբ. այն կարելի է դիտել *դուլ* «դադար, հանգիստ» (որից՝ *դը-դալ* կամ *ղլալ*, և որոնցով կարելի է հաստատել բառի՝ *լ/ղ/խ* բաղաձայնական փոփոխություններով տարբերակները (ՀԱԲ, հ. Ա, էջ 682)) և *խայթ* «խայթոց, խթան» (վերջինիս *խիթ* ձայնդարձային տարբերակով. ՀԱԲ, հ. Բ, էջ 325)⁹⁵ արմատներով բաղադրված կազ-

* Գրչագրերում առկա են հետևյալ տարբերակները՝ *ղլխիտ, ղխղիթ, դ(ը)խին, դրխխին, դխխիսին*:

⁹⁴ Տե՛ս նաև Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 200:

⁹⁵ Կարելի է հավանական համարել նաև *խիթ* «ցավ. վերք» արմատը (ՀԱԲ, հ. Բ, էջ 364): Վ. Առաքելյանը «*խիթ* բաղադրիչ»-ով *ռոտխիթ* բառը վկայում է «Ոսկեբերանի թարգմանությունների մեջ». Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Ե., 1981, էջ 80:

մություն՝ «դադարը, հանգիստը խաթարված, վտանգված» նշանակությամբ:

Դլխիթ-ը կարելի է բացատրել նաև իբրև պրակ. J> [del] «սիրտ» և հիշատակված *խայթ* արմատներով բաղադրված կազմություն՝ «սիրտը խոցված, սիրտը ցավող», ասել է՝ «հանգիստը կորցրած» իմաստով: Բայց և միաժամանակ հարկ է նշել, որ բառի նման մեկնության դեպքում *լ/ղ/խ* անցումը բառային տարբերակներում առկա չէ: Եվ այդուհանդերձ երկու դեպքում էլ՝ և՛ «հանգիստը վրտանգված, խաթարված», և՛ «սիրտը խոցված կամ ցավող» հոգեվիճակները դժվարին, տաժանելի, ինչ-որ տեղ նաև վտանգավոր են:

Երգք հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 174բ. 5596, 222ա) վերկայվում են *գեղապարք* և *երգաձայնք* բառերը: Մխիթար Մեբաստացին *գեղապարք*-ն արձանագրում է «Գեղեցիկ պար. կամ վայելուչ կերպիւ պարօղ ի նուագս երգոց» (ԲՀԼ, 174 (203)), «աղէկ պար բոնօղ» (ԲՀԼՄՄ, 86 (699)) բացատրություններով: ՆՀԲ-ն այն նշում է «Մնացորդք»-ում («Մնացորդք նորագիտ բառից եւ վկայութեանց (Յաւուրս տպագրութեան ի վեր երեւելոց»)՝ «Ուր իցէ գեղեցիկ պար, և քաղցրանուագ գեղապարութիւն» իմաստով քաղված «Հին տաղարան, կամ երգարան եկեղեցական տաղից՝ նախնեաց, միջնոց, և հետնոց» ժողովածուից (հ. II, էջ 1049): Առձեռն բառարանում «Ուր կայ գեղեցիկ պարաւորութիւն» նշանակությունն է (ԱԲ, 1846, էջ 184 (194): ԱԲ, 1865, էջ 207 (215)): Բառը գործածում են Երեմիա Չելեպի Քյումուրճյանը (ԺԷ դ.)⁹⁶ և Պետրոս Ղափանցին (ԺԸ դ.)⁹⁷: Ստեփան Մալխասյանցի կազմած և հայերեն բացատրական բառարաններում *գեղապարք*-ը վկայվում է «Ուր կայ գեղեցիկ պար», «գեղեցիկ պար, գեղեցկորեն պարող», «գեղեցիկ խումբ» և «գեղեցիկ պարուհի», «արուեստով՝ գեղեցիկ պար» նշանակություններով

⁹⁶ «Երգ գեղապար րոճիք լցեալ, Առ կարօտեալսդ սիրահիւսեալ, Մակս որ գնոյն յամբ գտեալ, Յանկարծ փութով եւս ոչ տեսեալ». <http://surf.li/hjzqol> (հասանելի է՝ 31.03.2026):

⁹⁷ «Բարեյարմար լար եւ քնար, Ունկանց խլից՝ փող ազդարար, Ներսոփեստից՝ գեր գեղապար, Եւ հանճարով գոյգ հաւասար». <http://surf.li/kmjzrx> (հասանելի է՝ 31.03.2026):

(ՄՀԲԲ, հ. I, էջ 423: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 380: ԱՀԲԲ, էջ 225)⁹⁸: Այս կազմության առիթով կարելի է հիշատակել հայոց լեզվում առկա *մենապար, դարձպար, զուգապար, կենսոպար, շուրջպար* բառերը⁹⁹:

Ինչ վերաբերում է *երգաձայն*-ին, ապա հարկ է նշել, որ գրաբարի տպագիր բառարաններն արձանագրում են միայն *երգաձայնություն*-ը (ՆՀԲ, հ. I, էջ 672: ԱԲ, էջ 268): Միսիթար Սեբաստացին *երգաձայն*-ը վկայում է «երգի ձան», «ձայն և հնչումն երգոց. կամ երգաբանական ձայն» իմաստներով (ԲՀԼՄՍ էջ 116 (729): ԲՀԼ, էջ 248 (277)): Ստեփան Մալխասյանցի բացատրությունն է «Երգելու ձայն, այն ձայնը, որ հնչում ենք երգելիս» (ՄՀԲԲ, հ. I, էջ 574): «Գրահավաք» կայքի որոնումներով *երգաձայն* բառը վկայվում է նաև «ձայնաստիճան» կամ «ձայնաշար» նշանակությամբ «Տոլին հինգերորդը այնպիսի երգաձայն մըն է...», «Թէ որ ուրիշ երգաձայնէ մը սկսելով՝ նոյն միջոցներուն կարգաւր յառաջանալու ըլլանք...», «...կէս երգաձայն բարձր կը ցուցնեն եւ երգանշաններու կամ նօթաներու մէջ աւ ձևով # կը նշանակուին. իսկկէս երգաձայն վարիները ասանկ կը կոչուին՝ Ստ-bémol...»¹⁰⁰: Պետրոս Ճիզվեճյանը նույնպես նշում է միայն «ձայնաշար» և «եօթը ձայներու շարք գետեղուած բնական կարգով (Ֆրս. տօ րէ մի ֆա սօլ լա սի)» իմաստները¹⁰¹: Հայերեն բացատրական բառարաններն արձանագրում են «երգի ձայն», «երգելու ձայն», այլև «երգելով, երգելու ձայնով» (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 570: ԱՀԲԲ, էջ 338)¹⁰² նշանակությունները: ՀԼՀԲ-ն բառը հղում է *Երգահնչուն*-ին (էջ 183): Այս դեպքում էլ հիշատակելի են հայերենում գործածվող *լիաձայն, միաձայն, ողբաձայն, ցնծաձայն, մեղմաձայն* և այլ բառեր¹⁰³:

⁹⁸ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Յօրինեց Պետրոս վարդ. Ճիզվեճեան, հ. II, Նալեպ, 1957, էջ 32: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 376:

⁹⁹ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 536:

¹⁰⁰ Փորձառական բնագիտություն կամ ֆիզիկա համառօտ օղերևութաբանութեամբ եւ քիմիայով, Աշխատասիրեց Հ. Բարսեղ վ. Նուրիճանեան, Վիեննա, 1856, էջք 247, 248, 249:

¹⁰¹ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 240:

¹⁰² Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 557:

¹⁰³ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 376:

Երգք հենաբառով ՀԲՇ-ում առկա **ձայնառիկ** բառի կազմության համար ենթադրելի է *ձայն առնել* «ձայնել, ձայն հանել» (ՆՀԲ, հ. II, էջ 145: ԳԴԲ, էջ 184) դարձվածային միավորի միասին և կրրճատ գրությունը՝ հավելվող *-իկ* ածանցով՝ «ձայնող, ձայն արձակող» նշանակությամբ, այսինքն՝ «երգող»: Հարկ է նաև նկատի առնել ՆՀԲ-ում՝ *Չայնես* բառահոդվածում, «Ս. Եփրեմի Մատենագրութիւնք»-ից քաղված «Խնդրեաց ձայնող (երգիչ, կամ քնարահար)», բնագրային վկայությունը (հ. II, էջ 147), այլև առանձնացված բառի՝ *երգեցիկ*-ի համաբանությամբ (ցոյական հիմք *+իկ* ածանց), այս դեպքում՝ *առ* արմատ+*իկ* ածանց հավանական կազմությունը: Ըստ Նորայր Բյուզանդացու Դիոնիսիոս Թրակացին այն հիշատակում է «Տաւիդ. սոինչ. օրհնութիւնք. սրբասացութիւնք»՝ փաղանունների շարքում (ՆԲՀԼ, հ. 4, էջ 147): Բառը «երգ ու պարի, երաժշտության ձայն» նշանակությամբ արձանագրվում է ԺԷ դարի ձեռագրում¹⁰⁴:

Լոյս հենաբառով (բառերի այբբենական դասավորությամբ գրչագրերում՝ *Սրեզակն*) ՀԲՇ-ն ավարտվում է «որ է աստուած» բացատրությամբ: Բառաշարքում առկա **երեքիբեան, երեքիբաշեան, երեքսրանչ(ել)եան** բառերը (ՄՄՁ 4612, 170ա. 5596, 217բ) բաղադրված են *երեք* և *հուր, հրաշ, սրանչ* արմատներով¹⁰⁵, *-եան* վերջածանցով: Նշված բառերով (ասել է՝ «երիցս սքանչելի, երիցս հրաշալի»), Աստծուն փառաբանել-գովերգելիս վկայվում են *երեքսրբեան* («նա ինքն աստուած». ՆՀԲ, հ. I, էջ 681: ՀԱԲ, հ. Բ, էջ 50), *երեք(ա)լուսեան* (ՆՀԲ, հ. I, էջ 680: ՀԱԲ, հ. Բ, էջ 50. այն առկա է նաև գրչագրերում) բառերը, որոնց համաբանությամբ էլ անշուշտ կազմվել են վերոնշյալները: Հրաչյա Աճառյանը *երեքսրբեան*-ի կազմության առնչությամբ նշում է. «Հետևելով յունական ոճին՝ մի խումբ յետնադարեան բառերի մեջ՝ **երեք** կազմում է գերադրական. օր. **երեքսրբեան** «ամենասուրբ»....» (ՀԱԲ, ն. տ.): Հարկ է հավելել, որ *երեքիբեան*-ը արձանագրել են Մխիթար Սեբաստացին՝ «.... ունօղ գերիս հուրս. կամ յորմէ ելանեն երեք բոցք. կամ երեքլու-

¹⁰⁴ Տե՛ս ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 127:

¹⁰⁵ Ռ. Ղազարյանը միջին հայերենին բնորոշ է համարում թվական+ցոյական կադապարով բառերը. տե՛ս Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 35:

սեան» բացատրութեամբ և «ի հին քերակ.» հղումով (ԲՀԼՄՍ, էջ 128 (151)) և ՋԲ-ն (էջ 466): Նորայր Բյուզանդացու նշածն էլ Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ հիշատակվող «"երեքլուսեան ... երեքսանչեան"» փաղանունների շարքն է (ՆԲՀԼ, հ. 2, էջ 682): ՆՀԲ-ն ունի *եռահրաշ* բառը (ՆՀԲ, հ. I, էջ 661):

Հեղանակ հենաբառով¹⁰⁶ ՀԲՇ-ում (ՄՄՁ 5596, 221բ) վկայվող *Էսպատի*¹⁰⁷ բառն առկա է միայն Երեմիա Մեղրեցու կազմած բառգրքում՝ «առաջնորդ, կամ գոյապատի» բացատրությամբ (ԲՀ, էջ 107): Բառն արձանագրվում է նաև ԺԷ դ. ձեռագրում՝ որպես «պատուաւոր, առաջնորդ»¹⁰⁸: Երեմիա Մեղրեցու նշած «առաջնորդ կամ գոյապատի» իմաստով բառը վկայվում է Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրք» երկի «Լուծմունք բառից» հատվածում (ԺԸ դ.)¹⁰⁹: Հայոց լեզվում առկա են *արժանապատիվ, բարձրապատիվ, մեծապատիվ* բաղադրյալ կազմությունները¹¹⁰:

Խաւար և *ծին* արմատներով բաղադրված *խաւարածին*-ը նույնպես արձանագրվում է նշված գրչագրերում (համապատասխանաբար՝ էջք 170բ և 217բ): *Խաւար* հենաբառով ՀԲՇ-ում առադրվող *մութ, ստուերամած, նսեմ, խաւարարորբ, արջնաթոյր, սեւաթոյր, խաւարագգած, խաւարասէր, խաւարամած* բառերից և *որ է՝ սատանայ* բացատրությունից կարելի է ընդունել *խաւարածին*-ի ինչպես «խավար ծնող», այնպես էլ «խավարից ծնված» իմաստները: Բառը «սատանայ» բացատրությամբ առկա է ԲՀ-ում (էջ 142): Արդի հայերենի բացատրական բառարաններն ունեն նշված երկու բացատրություններն էլ՝ հավելելով փոխաբերական «դաժան, դժնի. սև և սգիտություն ծնող» իմաստները (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 494: ԱՀԲԲ, էջ 568):

Կարճ և *վճիռ* («Պիլ.vičir «վճիռ. որոշում. դատարան» ՀԱԲ,

¹⁰⁶ Բառային տարբերակները տե՛ս 81-րդ էջում:

¹⁰⁷ ՄՄՁ 4612-ում *Էսպատի* բառն է (173բ):

¹⁰⁸ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 72:

¹⁰⁹ https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/StepanosErec.pdf (հասանելի է՝ 03.04.2026):

¹¹⁰ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 487:

հ. Դ, էջ 346) արմատներով, «հակիրճ. համառոտ վճռված» նշանակությամբ **կարճավճիռ** բարդությունն է վկայվում *Հատու. հակիրճ* ՀԲՇ -ում (ՄՄՁ 4612, 177 ա. 5596, 225ա): Բառն առկա է Մխիթար Սեբաստացու բառգրքում՝ «կարճ և համառոտ վճռով. կամ այն՝ որ է կարճառոտ վճիռ. կամ բան» բացատրությամբ (ԲՀԼ, էջ 447 (480)), իսկ «կարճ բան կամ վճիռ»-ը «նոյնանշան բառից յարադրութեամբ» հանգեցվում է *կարճավճիռ*-ին (ԲՀԼՄՍ, էջ 296 (1325)): ՄՀԲԲ-ում «հագուադեպ բառ կամ նշանակութիւն» նշումով է՝ «կարճ ի կարճոյ վճռված. կարճ՝ համառոտ վճիռ» (հ. II, էջ 410): Բառը ՄՀԲԲ-ում արձանագրված նշումով և իմաստով վկայում է միայն ԱՀԲԲ-ն (էջ 708):

Հայ մատենագրության մեջ վկայվող *կէս* արմատով կազմություններին (*կիսաթուր, կիսավաստակ, կիսագրաստ, կիսահաս*)¹¹ համանման է նույն գրչագրերում՝ *Այտուցեալ* հենաբառով ՀԲՇ-ում, առկա **կիսագոռոզ**-ը (ՄՄՁ 4612, 172ա. 5596, 219բ): Այնպես որ նրման կառույցները խորթ չեն միջին հայերենին: Իմաստային առումով, թերևս, սին պարծեցող, ուռած-փքված մարդը նշված ժամանակաշրջանում կիսով չափ է գոռոզ (կիսագոռոզ)՝ համարվել:

Նույն գրչագրերում (համապատասխանաբար՝ էջք 173ա և 220բ)՝ *Բազմայպատիկ* հենաբառով ՀԲՇ-ում, առկա **համակալ** բառը բաղադրված է *համ* «բոլորը, ամբողջը» (ՀԱԲ, հ. Գ, էջ 17), *կալ* «բռնելու գործողություն» (որից էլ՝ *կալնուլ* «բռնել, տիրել» (ՀԱԲ, հ. Բ, էջ 483)) արմատներով և ունի «բոլորին, ամբողջը տիրող» նշանակությունը, ասել է՝ «գորեղ, ամենակարող»: Նույն բացատրությամբ էլ բառը հոմանիշ է *հարուստ, կարաւղ, ընչաւէտ, բառացի, մեծատուն* բառերին:

Արդակ հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 5596, 217ա) վկայվող **հարթաքանդակ**-ը հիշատակում են Սամվել Գանթարյանը և Գվիտոն Լուսինյանն իրենց կազմած երկլեզվյան և եռալեզվյան բառգրքերում՝ Médaillon և Anaglyphe գլխաբառերի բացատրություններ-

¹¹ Հ. Աճառեան, Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մեջ, հ. Ա, Վենետիկ, 1913, էջ 61-62: Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, էջ 34:

րում¹¹²: Բառը նշում է նաև ԺԹ դ. կրթական և մշակութային գործիչ Մ. Գ. Ծալյանն իր երկի բառարանում («Հարթաքանդակ. Քանդակուած կարկառուն գործ մը հարթ երեսի վրայ»)՝¹¹³: ՄՀԲԲ-ն և հայերեն բացատրական բառարանները «Հարթ քանդակ, որի մէջ քանդակված անձը կամ իրը քանդակի վրայ դուրս է ցցված ոչ անլիքան իւր կէս բարձրութեամբ» բացատրությամբ *հարթաքանդակ*-ը նշում են որպէս ճարտարապետական եզրույթ (ՄՀԲԲ, հ. III, էջ 68: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 322: ԱՀԲԲ, էջ 844)¹¹⁴, իսկ ՀԼՀԲ-ն՝ արվեստին առնչվող, բայց և «հազվադէպ գործածվող բառ» (էջ 378): Հայոց լեզվում *քանդակ* վերջնաբաղադրիչով գործածվում են *գարդաքանդակ*, *դիմաքանդակ*, *բարձրաքանդակ*, *մանրաքանդակ*, *խորաքանդակ* և այլ բարդ բառեր¹¹⁵:

Որջասուզեալ բառն է առկա *Պարունակեալ** հենաբառով ՀԲԾ-ում (ՄՄՁ 5596, 218ա): Այն բաղադրված է *որջ*, *սոյզ* արմատներով (ՀԱԲ, հ. Գ, էջ 587, հ. Դ, էջ 241) և *-եալ* վերջավորությամբ¹¹⁶: *Որջասոյզ*-ը վկայում են գրաբարի տպագիր բառարանները՝ «դարա-

¹¹² Տե՛ս Բառարան գաղղիերէն-հայերէն-տաճկերէն, աշխատասիրեաց Հ. Սամուել Վ. Գանթարեան, Վենետիկ, 1886, էջ 727: Գուիտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. I, էջք 98, 242:

¹¹³ Մ.Գ. Ծալյան, Համառոտ պատմություն ընդհանուր ազգաց, Ե. եւ Զ. մասեր, Արդի եւ ժամանակակից, Կ. Պոլիս, 1898, էջ 113:

¹¹⁴ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 817: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 424: Հ. Բարսեղյան, Հայերէն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, էջ 559: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 1182: Ա. Կոստենան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 244:

¹¹⁵ Հայոց լեզվի հանգարաբարան, էջ 207:

* *Պարունակեալ*-ը սխալագրություն է: ՄՄՁ 4612, ՄՄՁ 530, 1654, 5919-ում (նաև հետագա դարերից ավանդված գրչագրերում) *Պատրուակեալ* հենաբառն է (համապատասխանաբար՝ էջք 170բ, 60բ, 254ա, 204բ): Ըստ Հ. Աճառյանի՝ նաև «2. որն է ծածկոց, վարագոյր» իմաստով *պատրուակ* բառից կազմված *պատրուակել*-ը «ծածկել, քողարկել» նշանակությունն ունի (ՀԱԲ, հ. Դ, էջ 54):

¹¹⁶ Թէև ԺԵ-ԺԷ դդ. միջին գրական հայերէնի դերբայները քննելիս Ս. Անթոյանի դիտարկմամբ անցյալ դերբայը «ածական-որոշյի կիրառությամբ» առանձնանում է Հ. Թվկուրանցու տաղերում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 372), բայց և քննությունից պարզորոշ է, որ անցյալ դերբայը «ածական-որոշյի կիրառությամբ» արդեն առանձնանում է ԺԳ դարից ավանդված ՁԲ-ներում:

նեալ» (ՆՀԲ, հ. II, էջ 537: ԱԲ, էջ 657: ԳԲ, հ. Բ, էջ 350), ՄՀԲԲ-ն՝ «որ-ջի մէջ սուզված, որջամուտ եղած» նշանակությամբ և «հագուաղէպ բառ» նշումով (ՄՀԲԲ, հ. III, էջ 589): *Որջասուզել*-ը Մխիթար Սեբաստացին վկայում է «...բնու մէջ պահուրըսնել. դարձյալ ծածկել. պահել» իմաստով (ԲՀԼՄՍ 317 (930)): Նորայր Բյուզանդացին *որջասուզեալ*-ը քաղում է Անանիա Սոկացու երկից (ՆԲՀԼ, հ. 5, էջ 537): Բառը «սուզուած, ծածկուած» բացատրությամբ առկա է ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2019-ում՝ «Պարունակեալ- քողասուզեալ, ծածկեալ, **ողջասուզեալ**»¹¹⁷:

Համբակ հենաբառով* ՀԲՇ-ում հիշատակվող *մանկակերպ*, *մանկակերտ* և *մանկատիս* (ՄՄՁ 1654, 258բ. 2371, 286 բ)¹¹⁸ բառերի առաջին բաղադրիչը *մանուկ*-ն է, երկրորդ բաղադրիչները՝ համապատասխանաբար *կերպ*-ը (ասել է՝ «մանկան նման, մանկատիպ»), *կերտ*-ը («մանկան նման կերտված») և *տի*-ն («տարիք, հասակ»։ ՀԱԲ, հ. Դ, էջ 403)՝ «մանկահասակ»: *Մանկակերտ*-ի՝ Մխիթար Սեբաստացու բացատրությունն է՝ «այն, որ է կերտեցեալ. կամ շինեցեալ ի մանկանց: Բայց յատկապէս առեալ նշանակի սովաւ ունօղն զհասակ մանկութեան. և կամ զորպիսութիւն մանկական տիոյ» (ԲՀԼ, էջ 613 (662)), «տղէ շինած. տղի գործք...» (ԲՀԼՄՍ, էջ 251 (864)): Հավանական է թվում նաև *մանկակերպ*-ը (առկա է ԺԳ դարից ավանդված գրչագրերում). ի հավաստումն որի՝ կարելի է նշել ՆՀԲ-ում վկայվող *մանկատիպ*-ը (հ. II, էջ 205), իսկ «հզվդ.» նշումով այն արձանագրվում է նաև ՀԼՀԲ-ում՝ *Մանկատի* բառաշարքում (էջ 437): Հարկ է հավելել, որ *տիպ*-ն ու *կերպ*-ը հոմանիշներ են (ՀԼՀԲ, էջ 625): Մխիթար Սեբաստացին *մանկատի*-ն և *մանկատիք*-ը բացատրում է համապատասխանաբար «տղի արենք

¹¹⁷Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 162:

* Այս հենաբառն է ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371 (286)-ում: ՄՄՁ 5596-ում (224ա) և ՄՄՁ 4612 (176ա)-ում հենաբառը *Համակ*-ն է՝ համապատասխանաբար *մանգակերտ*. *մանգատիս* և *մանկայկերտ*. *մանկտիս* տարբերակներով:

¹¹⁸ Բառային տարբերակներն են՝ *մանկտի* (ՄՄՁ 5925), *մանգտիս* (ՄՄՁ 3937), *մանգտի* (ՄՄՁ 4149). տե՛ս նաև Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 277:

ունօղ» և «տղի արենք» (ԲՀԼՄՍ, ն. տ.): ՀԼՀԲ-ից բացի՝ «դեռահաս, դեռատի» իմաստով *մանկատի*-ն վկայվում է միայն ԺՀԼԲԲ-ում (հ. II, էջ 476):

Նույն ՀԲԾ-ն եզրափակում է *յաստիս* բառը, որը բաղադրված է *յաս* (ըստ ՆՀԲ-ի՝ «արմատ հասանելոյ, որպէս հասանելն, հասունանալն» (հ. II, էջ 49)), *տի* արմատներով, և ունի «տարիք, հասակ» իմաստը (ՆՀԲ, հ. II, էջ 873: ՀԱԲ, հ. Դ, էջ 403): Երեմիա Մեղրեցու բառգրքում այն բացատրվում է իբրև «տիք կատարեալ» (ԲՀ, էջ 225). կարելի է ենթադրել, որ հեղինակի ապրած ժամանակաշրջանում կատարյալ է համարվել արբունքի հասած տարիքը:

ՄՄՁ 4612-ում *մանուկ* բառով կազմված մեկ այլ բառ՝ *մանգագիտիք*-ը¹¹⁹, առկա է *Պոռնիկ* հենաբառով ՀԲԾ-ում (175բ-176ա)՝ «մանկան գիտակ, մանկամուկ, մանկատոհիփ» նշանակությամբ: Բառի երկրորդ՝ *գետ* «գիտուն, գիտակ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 551) բաղադրիչին առադրվել է *-իք* վերջածանցը:

Յախունախասու. շաղակրատել. թանկուզել. յոռոտարան. պաճուկարան ՀԲԾ-ում առկա է *յոռոտարան*-ը (ՄՄՁ 4612, 172ա)¹²⁰, ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149 (359ա)-ում՝ *յոխորտարան* տարբերակը: Հատկանշական է, որ կազմությամբ *պոռոտարան*¹²¹ բառը հիշեցնող *յոռոտարան*-ը վկայում է միայն Մխիթար Սեբաստացին «պոռոտ. շատ գրուց. լեզուանի» բացատրությամբ (ԲՀԼՄՍ, էջ 284 (897))¹²²: *Յոռոտարան*-ի համար ենթադրելի է *յոռ(ի) + ոտ + ա + բան*

¹¹⁹ Բառային տարբերակներն են՝ մանկագիտիք (ՄՄՁ 2371), *մակագիտել* (ՄՄՁ 5596), *մանկագիտել* (ՄՄՁ 8198 (II)):

¹²⁰ ՄՄՁ 5569-ում *Յախունախասու. շաղակրատել. յոռոտարան. պաճուճարան. թելադրել* ՀԲԾ-ն է (220ա): «Պոռոտախոս» նշանակությամբ *յախունախասու*-ն արձանագրում են ՆՀԲ-ն (հ. II, էջ 314), ՀԱԲ-ը (հ. Գ, էջ 377) այն վկայելով «Բ Հին բռ.», «Հին բռ.», ՄՀԲԲ-ն՝ «հագուաղեպ բառ կամ նշանակութիւն» նշումներով (հ. III, էջ 382):

¹²¹ *Պոռոտարան* բառը «պոռոտախոս» իմաստով վկայված է Ժ դ. հայ պատմիչների երկերում. տե՛ս Ե. Ղուկասյան, 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն, թեկն. ատեն., 2004, էջ 59-60: Տե՛ս նաև ՀԱԲ, հ. Դ, էջ 100:

¹²² Ս. Սեբաստացին վկայում է նաև *յուռուտարան* տարբերակը *Շատգրուց* բառահոդվածում «նոյնանշան բառից յարադրութեամբ» (ԲՀԼՄՍ, էջ 472 (1499)): Այդ տարբերակն է ՄՄՁ 6097-ում (279բ):

կառույցը: Ըստ ՀԱԲ-ի՝ *յոռի*-ն «վատ, գէշ»-ն է (հ. Գ, էջ 406), որից էլ՝ *յոռանամ* «Յոռի և անպիտան գտանիլ, վատթարանալ, անարգ երևիլ», *յոռութիւն* «Վատթարութիւն. անպիտանութիւն. խոտանութիւն. յոռի ինչ...» (ՆՀԲ, հ. II, էջ 369): Ինչ վերաբերում է *-ոտ* ածանցին, ապա ինչպես նշվում է, այն «ածականներ է կերտում գոյականներից, որոնք արտահայտում են տվյալ գոյականով արտահայտված առարկան, իրը կամ երևույթը ունենալու (իր վրա կրելու) հատկանիշ: ...Ոտ ածանցով բայահիմքերից կազմված ածականները արտահայտում են ոչ միայն տվյալ բանը ունենալու, այլև այն կատարելու համար ունակ լինելու իմաստ»¹²³: Մերգեյ Գալստյանը ժամանակակից հայերենում առանձնացնում է *-բան* ածանցով երկու կառույց՝ գոյականից և այլ խոսքի մասերի արմատներից կազմված. առաջինը՝ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (*արվեստաբան, ախտաբան, երկրաբան, լեզվաբան* և այլն)¹²⁴: Նրա հավաստմամբ՝ մյուս տիպի բաղադրություններում *-բան* արմատի բառային նշանակությունը (որպես բաղադրության երկրորդ եզր գործածվելիս) «մթազնվում է», և դրանք ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ¹²⁵: Սակայն չի նշվում, թե *-բան* բաղադրիչն այս կազմություններում բառակազմական ինչ նշանակություն ունի, բայց և *լսաբան*-ը բացատրվում է «ձայնագետ», *կոնծաբան*-ը՝ «հարբեցող, հարբեցողության մասնագետ»: Ըստ բառարանների՝ *գռեհկաբան, դատարկաբան, զավեշտաբան, զվարճաբան, կատակաբան, կարճաբան, համառոտաբան, հեզնաբան, ճարտարաբան, ճոռոմաբան, մեծաբան, սակավաբան* կազմություններում *-բան* բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող» (*դատարկաբան՝ «դատարկ բաներ խոսող», զվարճաբան՝ «նույնն է Զվարճախոս», սակավաբան՝*

¹²³ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974, էջ 175:

¹²⁴ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 48-49:

¹²⁵ Նույն տեղում:

«քիչ խոսող, քչախոս» (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. III, էջք 331, 386, 442. ԱՀԲԲ, էջք 259, 280, 363, 381, 699, 707, 804, 947, 987, 1268): Այստեղից էլ, թերևս, կարելի է բխեցնել *յոռոտաբան*-ի «ամբարտավան, հանդուգրն խոսող» իմաստը:

ՄՀԲԲ-ն, ԺՀԼԲԲ-ն և ՀԼԲԲ-ն *հոռ*-ն արձանագրում են Արարատյան, Ղարաբաղի, Գանձակի, Մշո, Մոկսի և այլ բարբառներում նաև «լավ կերած-խմած... փարթամ աճած» իմաստներով (ՄՀԲԲ, հ. III, էջ 130: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 376: ՀԼԲԲ, հ. Գ, էջ 301): Իսկ «լավ կերած-խմած» վիճակը դարձյալ հանգում է «ուռչել, փքվել»-ին, փոխաբերական իմաստով՝ «ամբարտավանալ»-ին:

Յոխորտաբան-ը բաղադրված է *յոխորտ* («խրոխտ. յանդուգն» ՆՀԲ, հ. I, էջ 367: ՀԱԲ, հ. Գ, էջ 403) և *բան* բաղադրիչներով: Մխիթար Սեբաստացին բառը բացատրում է իբրև «հպարտ խօսող» (ԲՀԼՄՄ, էջ 284 (897)): *Յոխորտաբան*-ը արձանագրում է Նորայր Բյուզանդացին՝ հղելով Դիոնիսիոս Թրակացու առանձնագրած «"Յախուռնախօս. շաղակատել. յոխորտաբան. պաճուճաբան"» փաղանունների շարքը (ՆԲՀԼ, հ. 4, էջ 367): Հետագայում լույս տեսած բառարաններից այն «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» նշումով և «համարձակ խոսող, մեծախօս» բացատրությամբ արձանագրում է միայն ՄՀԲԲ (հ. III, էջ 414):

Նամանութիւն հենարառով ՀԲԾ-ում (4612, 170ա. 5596, 217ա) *նոյնակերպ, նոյնաձև* բառերին առադրվող *նոյնաղէմ*-ը Մխիթար Սեբաստացին վկայում է «ունօղ գնոյն կամ զհամանման դէմս ընդ այլում: Իսկ մերթ՝ նոյնակերպ. կամ նոյնաձև. և կամ համանման ...» իմաստներով (ԲՀՆ, էջ 769(828)): Հետագայում այն արձանագրում են ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 475) և արդի հայերենի բառարանները (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 53: ԱՀԲԲ, էջ 1090):

Աստուածազան հենարառով ՀԲԾ-ում (ՄՄԶ 4612, 176ա. 5596, 224ա) վկայվող *քրիստոսափառ*-ը որպես նորահայտ բառ, «հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. հիշատակարաններում» վկայում է Ալեքսանդր Մարգարյանը¹²⁶: ՄՀԲԲ-ն հիշատակում է «Քրիստոսով փառավորված» իմաստը (հ. IV, էջ 594), Լավրենտի Հովհաննիսյա-

¹²⁶ https://arar.sci.am/Content/174212/file_0.pdf (հասանելի է՝ 31.03.2026):

նր նշված հիշատակարաններում՝ «Քրիստոսին փառաբանող, քրիստոնյա» իմաստը¹²⁷:

ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 3937-ում՝ *Վհուկ* հենաբառով ՀԲՇ-ում(57բ)¹²⁸, *որովայնակոչ*-ի փոխարեն առկա է *գերեզմանակոչ*-ը՝ կազմված *որովայնակոչ* և *գետնակոչ* բառերի նմանությամբ և բաղադրված «իրանեան փոխառութիւն» *գերեզման*-ով (ՀԱԲ, հ. Ա, էջ 542) և *կոչ* «բնաձայն բառ»-ով (ՀԱԲ, հ. Բ, էջ 635): Կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողի կարծիքով *գերեզմանակոչ*-ն առավել լիարժեքորեն, ամբողջական է բնորոշել կախարդությունը՝ «մեռելահամայութեան, այսինքն՝ մեռելոց ոգիներուն հետ իբր թէ խօսելու արուեստին կարգը»¹²⁹, քան *որովայնակոչ*-ը, որը ՆՀԲ-ն բացատրում է իբրև «Որովայնախօս. վհուկ, կամ այս հարցուկ, որ ձայնէ յորովայնէ» (հ. II, էջ 535):

Ղեկավար. նաւավար. նաւագ. նաւաստի. նաւապետ. նաւալիւղ. նաւուղիղ. նաւակառոյց ՀԲՇ-ին (ՄՄՁ 4149, 359ա)¹³⁰, «Ուղղիչ նաւու. նաւավար. ղեկավար» նշանակությամբ *նաւուղի(ե)ղ*-ին (ՆՀԲ, հ. II, էջ 409: ՀԱԲ, հ. Գ, էջ 433, 596) զուգահեռ, ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում (279բ) հավելվել է *նաւուղ(ղ)իչ*-ը*։ Այն թերևս կարելի է սխալագրություն համարել *ղ*-ի և *չ*-ի գրությունը շփոթելու պատճառով, բայց և կարելի է նորակազմ բառ դիտել՝ իբրև «նավին ուղղություն տվող»՝ ստեղծված *գրիչ, ծնիչ, ուսուցիչ ...* բառերի համաբանությամբ. մանավանդ *ուղղիչ*-ը նաև «առաջնորդ, կառավար, ղեկավար» է (ԱԲ, էջ 660: ՆՀԲ, հ. II, էջ 548), իսկ ՄՀԲԲ-ում՝ «հին բառ կամ նշանակութիւն» նշումով՝ նաև «2. նաւին ուղղութիւն տուող, ղեկավար» (հ. III, էջ 599): Հետագայում *ուղղիչ*-ը

¹²⁷ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 291:

¹²⁸ Ուշագրավ է, որ չնչին փոփոխություններով համարյա նույն ՀԲՇ-ն է արձանագրում Ա. Սուքիասյանը *Կախարդ* գլխաբառով բառահոդվածում (ՀԼՀԲ, էջ 297):

¹²⁹ Բառարան Սուրբ Գրոց, էջք 262, 354:

¹³⁰ ՄՄՁ 4612-ում *Ղեկաւոր. նաւուղիղ. նաւագն. նաւաստի. նաւապետ* ՀԲՇ-ն է (172ա):

* Բառն առկա է նաև ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 7117, ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 2372, ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 268, 516, 536, 2281, 2330, 2381, 3286, 599-ում, վաղաշխարհաբարյան աղբյուրներում (տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 150):

կիրառվել է իմաստային այլ երանգով, ինչպես հուշում է Եղիշե Չարենցի՝ «Երևանի ուղղիչ տնից» ստեղծագործությունը (1927 թ.), և արդի հայերենում արդեն արձանագրվել «ուղղելու ծառայող, ուղղելու նպատակ ունեցող» առաջնային իմաստներով (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 594: ԱՀԲԲ, էջ 1493): Համացանցային որոնումների տվյալներով քառն օգտագործել է Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը¹³¹:

ՄՄՁ 2371(284ա), 1654(257բ)-ում՝ *Չայն. դնդին. բոմբին. թընդին. վանգ. գանչին. կանչին. աղաղակ. կառաչին. կոչել. հաչել. որոտմունք և անոպա մարդիկ ի հողմոյ տարուբերք* ՀԲՇ-ում, առանձնանում է *հողմ, հար* («գարնել, խփել»): ՀԱԲ, հ. Գ, էջ 52) արմատներով և *-ոյց* վերջածանցով¹³² բաղադրված *հողմայարոյց(ք)*-ը¹³³՝ «հողմից գարկվելը, խփվելը, ծեծվելը»: Հետաքրքրական է, որ գրաբարի տպագիր բառարանները *հողմահար*-ը վկայում են «հարեալ հողմոյ, հողմակծեալ», իսկ *հողմահարիչ*-ը՝ «Իբրու հողմահարալ գովանալ, կամ վանել զճանճս» իմաստներով (ՆՀԲ, հ. II, էջ 117-118: ԱԲ, էջ 503): ՄՀԲԲ-ն *հողմահարել*-ը նշում է «Հողմով գարնել, քամուն տալ, այնպես անել որ քամի դիպչի» բացատրությամբ (հ. III, էջ 128):

ՄՄՁ 4149-ում՝ *Ռահ. ճանապարհ. շավիղ. պողոտա. կուռ. բազմակոխ* ՀԲՇ-ում (361բ-362ա), վկայվող *յոզնընթաց* բաղադրության առաջին բաղադրիչի՝ *յոզն* «շատ, բազում» արմատի համար

¹³¹ Օրագրություն Երեմիա Չելեբի Քեօմուրճեանի. Յանւրւած Ա. Թղթեր. Բ. Ուղերձներ. Գ. Գանձեր եւ Ողբեր, Երուսաղէմ, 1939, ԻԵ (Գովեստ Նահապետ կաթողիկոսի). «...Նեղիմ նոր անձկութեամբ, նուիրանաց նիագեմ, նոյնակերպ նշուլիւք, նատուղիչ նախնագան...»: Ըստ Հայաստանի Ամերիկյան համալսարանի հայ մատենագրության թուանշային գրադարան-կայքի տվյալների՝ (Ձեռ. թիւ 1059, թղ. 54ա-54բ) նաև նշվում է՝ «Հ. Ներսէս Ակիմեան լուծած է սոյն բառախաղը, որ կը ներկայացնէ ՌՃԽ=1691 թուականը, այն է՝ Նահապետ կաթողիկոսի գահ բարձրանալու տարին (Հ. Ն. Ակիմեան, Երեմիա Չելեբի, էջ 165-166)»:

<https://bit.ly/3KnRad3> (հասանելի է՝ 03.04.2026):

¹³² Տե՛ս Մ.Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, էջ 181:

¹³³ ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566 (II)-ում՝ նույն ՀԲՇ-ում, *հողմայարոյց որոտմունք* նկարագրական արտահայտությունն է (290ա): ԺԸ դարի ձեռագրից առանձնացվում է *հողմահարոցք*-ը՝ որպես «որոտմունք»։ Ն.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 124:

Հրայյա Աճառյանը նշում է, որ «սրանից ունինք կազմուած բազմաթիւ ածանցներ (ԱԲ ունի 135 հատ), որոնք սովորաբար յետին են»՝ «հնագոյններ»-ից վկայելով չորսը (յոզնագոյն, յոզնագնալի, յոզնաճարակ, յոզնաշնորհ) (ՀԱԲ, հ. Գ, էջ 402): *Ընթաց* բաղադրիչը նույնպէս հայերէնում գործուն է. «Հայոց լեզվի հանգաբառարան»-ում առկա են բազմաթիվ կազմություններ¹³⁴: Հետևաբար ընդունելի է հայոց լեզվի բառարաններում չարձանագրված «շատ շարժում ունեցող, քանուկ» նշանակությամբ սույն նորակազմությունը:

Նույն գրչագրում՝ *Աստուածազան* հենաբառով ՀԲՇ-ում (352 ա), վկայվում է *քրիստոսատես*-ը, որն օգտագործում է Վարդան Այգեկցիին¹³⁵: Այն, ամենայն հավանականությամբ, կազմվել է բառարաններում «աստվածային տեսք՝ կերպարանք ունեցող» նշանակությամբ հիշատակվող *աստուածատես*-ի համաբանությամբ, թեև հարկ է նշել, որ արձանագրվում են նաև «Տեսող աստուծոյ՝ ո՛ր և է օրինակաւ. Ի նոյն միտս թարգմանի սովորաբար անունս Իսրայել, որպէս և Տեսանող կոչիլն մարգարէից. զաստուած տեսնող, աստուծոյ հետ տեսնուող» (ՆՀԲ, հ. I, էջ 330), «Յակոբ նահապետի մակդիրը. («Իսրայել» բառը եբրայեցերէն նշանակում է աստուածատես) իմաստները (ՄՀԲԲ, հ. I, էջ 246):

ՄՄՁ 8198(I)-ում՝ *Շինել* հենաբառով ՀԲՇ-ում (59բ), առկա է *վայելչագեղեալ* բաղադրությունը: Բառարանները վկայում են *վայելչագեղ* և *վայելչագեղութիւն* բառերը՝ «չքնաղ, գեղապանծ, վայելուչ և գեղեցիկ», «վայելչագեղ լինելը» իմաստներով: «Գրահավաք» կայքի որոնումներով *վայելչագեղել* բայը գործածում է Կոստան Չարյանը¹³⁶: Նորայր Բյուզանդացին «Ճառք» ժողովածուից արձանագրում է *վայելչագունեղ*-ը (ՆԲՀԼ, հ. 5, էջ 776):

¹³⁴ Տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 581-58: ՀԱԲ, հ. Բ, էջ 125-126:

¹³⁵ <https://sur.livulewaj> (հասանելի է՝ 03.04.2026):

¹³⁶ «Սպրում են մի ինչ-որ մշուշում, որ պետք է զարդարել, ոճավորել, վայելչագեղել՝ նրան կյանքի բնույթ տալու համար».

<https://www.kinoversus.com/2016/08/marco-ferreri.html> (հասանելի է՝ 31.03.2026):

Վազաչք բառն է հավելված միայն **ԺՁ դարից ավանդված** ՄՄՁ 5126-ում (28ա)՝ *Շայտեալ*^{*} հենաբառով ՀԲԾ-ին^{**}: Բառը բաղադրված է *վազ* (ՀԱԲ, հ. Դ, էջ 292–293) և *աչ(ք)* արմատներով՝ հիշեցնելով բարբառներում (ըստ ՀԼԲԲ-ի՝ Ուրմիա, Կարին (հ. Դ, էջ 272)) և ժողովրդախոսակցականում գործածվող *շոռաչք*-ը՝ «վավաշոտ, ցանկասեր, պազշոտ, տոփոտ» (ՄՀԲԲ, հ. III, էջ 531: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 84: ԱՀԲԲ, էջ 1117¹³⁷. հմմտ.՝ նաև՝ *աչքը շոռ, աչքից շոռ* արտահայտությունները (ԱՀԲԲ, էջ 93: ՀԼԴԲ, էջ 46))¹³⁸: Հարկ է արձանագրել, որ ենթադրելի է *վազ* արմատը ոչ միայն «վազող, ցատկող» (հմմտ.՝ *աչքերը վազեցնել* դարձվածային միավորը), այլև «ի վերայ վազող. էգի վրայ ցատկող (արու ձիու մասին...)» (ՆՀԲ, հ. II, էջ 769: ՄՀԲԲ, հ. IV, էջ 286) նշանակությամբ:

ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2281-ում՝ *Միշտ. մշտնջենաւոր. էական. իսկական. յաւէտ. յարակից. յաիտենական. որէն. հանապազորդ. ցանկ. յավէժ. յարաձգական. տնաւդ. յարագն. տակաւին. յարամիշտ. յարաձիգն. անարգելին. յարամնայաբարն. յիտուքրիստոս. երէկ և այսաւր. նոյն և յաիտեանս* ՀԲԾ-ում (127բ), առանձնանում է **անհատելի**-ն՝ «չվերջացող, չավարտվող» իմաստով: Գրաբարի բառարանները վկայում են *անհատ*-ը՝ «ոչ հատեալն, և ոչ հատանելին. ոչ կտրեալ կամ հատեալ ի բաց. յարաձգեալ. անվերջ. յաւեժաբար» նշանակություններով (ՆՀԲ, հ. I, էջ 182: ԱԲ, էջ 69): Ստեփան Մալխասյանցը *անհատնելի*-ն հղում է «չվերջացող, չսպառվող, չհատնող» *անսպառ*-ին (ՄՀԲԲ, հ I, էջք 139. 176), նույն

* Ճիշտը՝ *Շուայտեալ*. մյուս գրչագրերում *Շուայտեալ* հենաբառով ՀԲԾ չկա. այն վկայվում է *Պոռնիկ* հենաբառով ՀԲԾ-ում (հմմտ.՝ ՄՄՁ 2371, 286բ. 4149, 361ա. 4612, 176ա. 530, 64բ. 532, 93բ՝ շուայտ. 5596, 224ա):

** Վազաչք-ն առկա է նաև ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 268 (309բ), 533, 537, 540, 545, 682, 2019, 3261, 3468, 3824, 8606, 10223-ում, ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 3450-ում (79ա), 9166-ում (9բ): ՄՄՁ 6097-ում (264բ) *վավաչք* տարբերակն է. այն, թերևս, *զ* և *վ* տառերի գրությունը շփոթելու հետևանքով սխալագրություն չհամարվի, եթե հնարավոր լինի բացատրել իբրև «վավաշոտ աչք» (՛). չշփոթել *վաւաչ* բառի հետ:

¹³⁷ Տե՛ս նաև Հ.Մետրոպոլիտան, Աժականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, էջ 282–283:

¹³⁸ Նաև հմմտ.՝ *Աչքերը խաղացնել, աչքերը փայլել, աչք(ը) տնկել և աչքերը վազեցնել* դարձվածային միավորները (ՀԼԴԲ, էջք 34, 36, 37, 47):

իմաստներն են նշում արդի հայերենի բառարանները (ԺՀԼԲԲ, հ, I, էջ 109: ԱՀԲԲ, էջ 66)¹³⁹: *Անհատելի*-ն բազմիցս հիշատակվում է համացանցային հարցազրույցներում և քննարկումներում¹⁴⁰:

ՄՄՉ 3170-ում՝ *Հոյակապ* հենաբառով ՀԲՇ-ում (172բ-173ա), առկա *հոծախիտ* բառը վկայվում է գերմանացի փիլիսոփա, աստվածաբան Ալբերտ Մեծի երկի «ի մեծամեծաց վարդապետաց մերոց» հայերեն թարգմանության մեջ («...գոյն՝ ըստ որում է ի հոծախիտ մարմինսն»)՝¹⁴¹: Բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին «հոծ եւ խիտ, սաստիկ խտտացեալ» նշանակությամբ (ԲՀԼ, էջ 545 (590)), այլև *Լեփ լեցուն* բառահոդվածում *ամենայից, գերահոծ* և այլ բառերի առադրմամբ (ԲՀԼՍՄ, էջ 226 (1255)): Ստեփան Մալխասյանը, հիշատակելով նույն իմաստով, այն համարում է «հագուադեպ բառ» (ՄՀԲԲ, հ. III, էջ 125): Հատկանշական է, որ այս բառը նշվում է միայն Հովհաննես Բարսեղյանի կազմած բառարանում¹⁴². առկա է նաև համացանցային հարթակում («Ծաղիկները հավաքված են ծաղկափթթության մեջ, որոնք տարբեր աստիճանի հոծախիտ ողկույզներ կամ հուրաններ են»)՝¹⁴³:

Մանկայտես բաղադրությունն է նույն դարից ավանդված ՄՄՉ 516-ում՝ *Համբակ* հենաբառով ՀԲՇ-ում (107բ): Այն արձանագրում է Աշոտ Սուքիասյանը՝ հղելով «երեխայադեմ (մանկական դեմք ունեցող)» բացատրությամբ *Մանկադեմ*-ը (ՀԼՀԲ, 2009, էջ 728): «Գրահավաք» կայքի հայերեն բառերի որոնման հարթակով *մանկայտես*-ը վկայվում է Չարենցի անտիպ բանաստեղծություններում¹⁴⁴, «անգլալեզու փաստական նյութի հիման վրա» գրված ատենախոսության մեջ («Գծային հեքիաթում թզուկները անանուն,

¹³⁹ Տե՛ս նաև Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 287:

¹⁴⁰ <https://surl.li/qanvoh>, <https://surl.cc/zjghgs> (հասանելի է՝ 31.03.2026):

¹⁴¹ Համառոտությիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալբերտին, Թարգմանեցեալ ի վաղնջուց ժամանակաց, ի մեծամեծաց վարդապետաց մերոց, ի լաթին լեզուէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1715-1716, էջ 88:

¹⁴² Տե՛ս Ն. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական – ուղղախոսական – տերմինաբանական բառարան, էջ 588:

¹⁴³ <http://surl.li/ngvvea> (հասանելի է՝ 31.03.2026):

¹⁴⁴ <http://surl.li/cjosph> (հասանելի է՝ 31.03.2026):

մանկատես տղամարդիկ են, որոնք զբաղվում են հանքափորի մրրոտ աշխատանքով»¹⁴⁵, մամուլում («Ոչ միայն մանկատես էր, այլև մանկամիտ»)՝¹⁴⁶:

Միայն ՄՄՁ 2331-ում է *Ղեկավար* հենաբառով ՀԲԾ-ն (229ա) ավարտվում է **նաւագէտ** բառով: Այն բաղադրվել է *նաւ* և *գէտ* (ՀԱԲ, հ. Ա, էջ 551-553) արմատներով՝ հայերենում գործուն կառույցով (հմմտ.՝ *անասնագէտ, խորագէտ, երկնագէտ...* (ն.տ.), նաև *բնագէտ, ձեռագրագէտ, բնեռագէտ...* կազմությունները)՝ «նավի գիտակ, նավերի մասնագէտ» նշանակությամբ:

Ինչ վերաբերում է ՄՄՁ 2291-ում վկայվող *անկաղէտ, արուճան, գաղգէլ, դէկնոս, եճեճ, նաւկոռոս, փաղանգամայն* բառերին, ապա դրանք արձանագրում է Նորայր Պողոսյանը ԺԷ դարից վկայվող ՄՄՁ 2281-ում: Թեև հարկ է նշել, որ, ըստ ձեռագրացուցակների, ՄՄՁ 2291-ը թվագրվում է «ՌՃԺԴ.-1665», իսկ ՄՄՁ 2281-ը՝ «ԺԷ. դար՝ 1668ից առաջ»¹⁴⁷:

ԺԸ դարից ավանդված գրչագրերում առկա նորակազմ բաղադրյալ բառերը հետևյալներն են:

Ան- նախածանցով **անայլահաւատ-**ը վկայվում է ՄՄՁ 566 (II) - ում՝ *Անհաս* հենաբառով ՀԲԾ-ում (280ա): Բառարաններում *այլահաւատ-*ի՝ հայ մատենագրության մեջ վկայվող «ուրիշ հաւատքի տէր» (ԲՀԼՄՄ, էջ 17 (630)), «Որ է յօտար կրօնից կամ ի հաւատոց» (ՆՀԲ, հ. I, էջ 86: ԱԲ, էջ 34), «ունօղ զօտար կամ գմուլար հաւատս» (ՋԲ, էջ 53), «Տ. Այլակրօն» (ՄՀԲԲ, հ. I, էջ 77) նշանակություններն են¹⁴⁸. դրանց օգնությամբ էլ *անայլահաւատ-*ը կարելի է բացատրել որպես «ուրիշ հավատք չունեցող». նշանակություն, որով գրչագրերում բնութագրվում է Աստված:

¹⁴⁵ councils.ysu.am/pdf_files/009/2017/009-Armine_Danielyan.pdf

¹⁴⁶ https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/2010/28_ocr.pdf (հասանելի է՝ 31.03.2026):

¹⁴⁷ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Ձեռագիրք 2101-2400, Խմբ.՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Ե., 2012, էջք 776, 814:

¹⁴⁸ Այս իմաստներն արձանագրում են նաև արդի հայերենի բառարանները:

Նույն գրչագրում *Պատրուակեալ* հենաբառով* ՀԲԾ-ն եզրափակվում է *զանխլակի* բառով (293բ): Գրաբարի բառարաններն արձանագրում են *զանխլաբար*, *զանխլանսալ*, *զանխլանք*, *զանխլըլութիւն*, *զանխուլ* բառերը (ՆՀԲ, հ. I, էջ 713-714: ԱԲ, էջ 286 : ՆՀԲԼ, հ. 2, էջ 715): Մխիթար Մեքաստացին *զանխլակի*-ն հիշատակում է *Չանուծուն չհանելով* բառահոդվածում՝ առադրելով *անբարբառ. անմունչ. անշրշունչ. լռելեան. լռելեայն. զանխուլ. զանխլաբար. գաղտագողի. առանց ոտնաձայնի* բառերը (ԲՀԼՍՍ, էջ 372 (1401)): Մինևույն բառահոդվածը և համարյա նույն բառաշարքն է վկայում Էդուարդ Հյուրմյուզյանը¹⁴⁹: *Չանխլակի*-ն՝ «Չանխուլ կերպով, ծածկաբար, լռելյայն» իմաստով և «հագուադեպ բառ կամ նշանակություն» նշումով, վկայում են ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 8), «Հայոց լեզուի նոր բառարան»-ը՝ հավելելով՝ «գաղտնօրէն, գաղտնաբար»¹⁵⁰: Ղևոնդ Ալիշանը *զանխլակի*-ն գործածում է իր աշխատասիրություններում («զանխլակի խոյս տուեալ», «սորա իրագէկ լեալ, զանխլակի ծանուցմամբ իշխանուհոյն», «գոր և ծանոյց զանխլակի»¹⁵¹, «համառոտս իմն բովանդակեալ զամենայն ծանուցանէ զանխլակի»¹⁵²):

Ժանտ. պիղծ բարութ. բիծ. դժնեայ ՀԲԾ-ին (285բ) (*կամ այսպէս*) ծանոթագրությամբ առադրվում են *ժանտաւոր. բժաւոր. ախտաւոր. աղտաւոր. արատաւոր* բառերը: Այս շարքում, որպէս նորակազմ բառ, առանձնանում է *ժանտ* արմատով և «ունեցող»-ի բառակազմական իմաստով (*-ա*)վոր ածանցով բաղադրված *ժանտաւոր*-ը:

Նախաիշխան-ը առկա է նույն գրչագրում՝ *Գահերեց. նախադաս. նախագահ. նախամեծար. նախկին. առաջին. առաջնակարգ* ՀԲԾ-ում (282բ): Հրայր Աճառյանի հավաստմամբ՝ «առաջ, առաջուց. 2. զլխաւոր, հինը, առաջինը» նշանակություններով *նախ*-ից

* ԺԳ և հետագա դարերից ավանդված գրչագրերում *Չանխուլ* հենաբառն է:

¹⁴⁹ Եդ. Հիրսփիզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 572:

¹⁵⁰ Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 597:

¹⁵¹ Միսուան համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Հաւաքեալ ի հ. Ղևոնդեայ վ. մ. Ալիշան, Վենետիկ, 1885, էջք 52, 426, 508:

¹⁵² Հ. Ղևոնդ վ. մ. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 243:

«աճանցուած են բազմաթիւ բառեր (ԱԲ ունի 409 ձև), որոնց մեծագույն մասը յետին է» (ՀԱԲ, հ. Գ, էջ 419): Նորայր Բյուզանդացին *նախ* արմատով բաղադրված շուրջ 25 բառ է արձանագրում ԺԱ-ԺԷ դդ. մատենագրությունից՝ հիշատակելով *նախահաւատ*, *նախամեղ*, *նախապայպ*, *նախամամ*, *նախապետ* և այլ բառեր¹⁵³: *Նախ* և *իշխան* արմատներով բաղադրված *նախաիշխան* կազմությանը վերագրելի է «իշխաններից առաջինը, գլխավորը» նշանակությունը:

Նույն ՀԲՇ-ում վկայվող *առաջնակարգ* բառը կարելի է բառարին տարածամանակյա տարբերակ դիտել՝ առադրելի գրաբարի բառարաններում «Յառաջագոյն կարգեալ. և Առաջին կարգաւ» (ՆՀԲ, հ. II, էջ 334), «1. առաջուց կարգաւորած. 2. կարգով առաջ» (ԱԲ, էջ 585) իմաստներով առկա *յառաջակարգ*-ին:

ՄՄՁ 9992-ում՝ *Բնութիւն. անտառախիտ. բազմաշաւիղ. ծառնոց. ծաղկոց. դրախտ. տփուտ. մացառ. մայրի. խոռ վայրք* ՀԲՇ-ում (4բ) առանձնանում է *տերևափթիթ* բառը, որն արձանագրում է Մըխիթար Սեբաստացին «տե՛ս ս զՏերևագարդ» հղումով (ԲՀԼ, էջ 1118 (1177): ԲՀԼՄՍ, էջ 388 (1001)), այլև հիշատակում «Տերևներով զարդարւած կամ զարդարող» բառահոդվածում (ԲՀԼՄՍ, էջ 627(1656)): Բառն առկա է Մխիթար Սեբաստացու և Գրիգոր Փեշտրմալճեանի կազմած բառարաններում՝ *Գրճակ* բառահոդվածում՝ «է թուփ ինչ բազմաճիւղ. որոյ շիւղքն են իբր թզաչափ տերևափթիթ» (ԲՀԼՄՍ, էջ 113 (136): ՓԲ, հ. I, էջ 260): Այն գործածվում է նաև Մըխիթարյան միաբանության հայրերի երկերում («Տերևափթիթ որթ ուռազարդ յոլորապտոյտ պարունակ Ողջագուրեալ երկնաբերձ բունէ վերաթնէ բարունակ»)՝¹⁵⁴:

Այսպիսով՝ քննությամբ պարզվում է, որ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանի գրչագրերում առկա հայերենում գործուն կառույցներով բաղադրված վերոնշյալ նորակազմ բառերի շուրջ երկու տասնյակը վկայվում է միայն այս գրչա-

¹⁵³ Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, էջ 548-549:

¹⁵⁴ Տաղք Մխիթարեան վարդապետաց, հատոր առաջին, Վենետիկ, 1852, էջ 172:

գրերում, մյուսներն արձանագրում են Երեմիա Մեղրեցու (ԺԷ դ.), Հակոբ Վիլլոտի, Մխիթար Սեբաստացու (ԺԸ դ.), Նորայր Բյուզանդացու, Մխիթարյան հայրերի (ԺԹ դ.) կազմած բառգրքերը, երկլեզվյան և եռալեզվյան բառարանները, տարբեր ժողովածուներ և քերականական աշխատություններ: Ասել է՝ դրանք գործածել են ժամանակակիցները. ըստ բառարանների՝ մի քանիսը պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, որքան էլ «չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը», այդուհանդերձ ընդօրինակողները կարողացել են որոշ բացատրություններ տալ (հմմտ. նաև՝ բառարանի գործնական բնույթով պայմանավորված ծանոթագրություններն ու հղումները 19-20-րդ էջերում), հավելումներ կատարել: Այս տեսանկյունից հիշատակելի է նաև Լևոն Խաչիկյանի՝ ԺԴ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններին վերաբերող դիտարկումը. «Հիշատակագիրները փորձում են, անշուշտ, գրել գրաբար, սակայն շատ քչերին է այդ հաջողվում: Ըստ մեծի մասին նրանք օգտագործում են խոսակցական լեզվի բազմաթիվ տարրեր, գավառական այս կամ այն խոսվածքին բնորոշ դարձվածքներ ու տերմիններ, որով և միջնադարյան խոսակցական լեզվի ուսումնասիրության համար մատակարարում են արժեքավոր տվյալներ»¹: Հայկ Ամալյանի կարծիքով էլ «Հանդես բանաստեղծաց»-ը ստեղծվել է ուսուցողական նպատակներով, և ամենայն հավանականությամբ ձեռագրերն ընդօրինակողները բառաշարքերին հավելել կամ բառաշարքերում ներառել են բառեր, որոնք, իրենց կարծիքով, սովորելիս հեշտությամբ կարելի է հիշել, կամ դրանք կարող են առավելագույն պատկերացում տալ երևույթի, գործողության, հատկանիշի մասին, կամ էլ պարզապես առադրել-լրացրել են իրենց իմացածը: Եվ այս առումով չբացատրելով «միջավայրի լեզվի» ազդեցությունը, այլև, ինչպես արդեն նշվել է, նկատի առնելով գրչագրերի ընդօրինակումների ծավալուն տարածքը, որոշ բառաշարքերում առկա բարբառային բառերով, թերևս, կարող են ճշգրտվել գրչագիրն ընդօրինակելու տարածքը կամ էլ ընդօրինակողի այդ տարածքին պատկանելը:

ԺԳ դարից ավանդված գրչագրերում *Բոնադատել. յաղթել. հերքել. դրդուել. շարժել. խախտել. գայթակղել. սայթաքել. դողդո-*

¹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Խաչիկյան, Ե., 1950, էջ XX- XXI:

չել. *վտանգել* հենարառով ՀԲԾ-ն (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա) ավարտվում է *գենգեգել* բայով: Հրայյա Աճառյանը, *գենգեգալ* կամ *գենգեգել* բայերը համարելով հայակերտ, նշում է, որ «ՆՀԲ չունի», և դրանք, որպես անստույգ բառեր և առանց վկայության, հիշատակում են Մխիթար Սեբաստացին և Առձեռն բառարանը (ՀԱԲ, հ. Ա, էջ 536): Նրա հավաստմամբ և բացատրությամբ՝ «Ուղիղ մեկնությունը տալիս են գաւառականները, որոնց մէջ գտնում ենք **գենկեգնալ...գենկըգնալ...Համառոտուած է գետին կզիլ** ձևից (իբր ի գուճըս անկանելով՝ ծնկաչօք աղաչել)»՝ բարբառախոս վայրերից նշելով Խարբերդը, Մանիսան², Չարսանձաքը, Ակնը (ՀԱԲ, հ. Ա, էջ 536-537): Հարկ է նշել, որ Մխիթար Սեբաստացին այն վկայում է *Երերցնել* և *Սահեցնել* բառահոդվածներում (ԲՀԼՄՍ, էջ 151 (1180), 563(1592)): ԱԲ-ում «Գենգեգամ կամ Գենգեգեմ. չ. դողդղալ» բառահոդվածն առանձնացվում է աստղանիշով (էջ 209)³: Նորայր Բյուզանդացին «Գենգեգամ, գենգեգեմ... դողդղալ» բառահոդվածում նշում է Դիոնիսիոս Թրակացու Քերականությունից քաղած «*Բոնսադատել, յաղթել, սայթաքել, դողդոջել, վտանգել, գենգեգել*» փաղանունների շարքը⁴: Ստեփան Մալխասյանցը «դողդողալ, երերալ» իմաստով և «հագուադեպ բառ կամ նշանակություն» նշումով արձանագրում է նաև *գենգեգալ* տարբերակը (ՄՀԲԲ, հ. I, էջ 423), որը հիշատակում է ՀԼՀԲ-ն՝ *Դողդողալ* բառահոդվածում ուղղանկյուն փակագծերում հավելելով *զլուխ* բառը (էջ 140, 174):

² «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում՝ *Մանիս*. տե՛ս Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 688:

³ Բայն առկա չէ 1846 թ. հրատարակված Առձեռն բառարանում. տե՛ս Առձեռն բառարան հայկագնեան լեզուի, Յօրինեաց Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, Վենետիկ, 1846:

⁴ Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԵ դարուց, էջ 132 (135): ՆԲՀԼ, հ. 2, էջ 539: ՄՄՁ 5596-ում՝ փաղանունների սույն շարքում, հենարառին հաջորդում են *հերքել, դողուել, շարժել, խախտել* բայերը, իսկ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 2371-ում՝ շարքի վերջում, առադրվում են *խոտորել, թիրել* բայերը, այլև *բունն և զլացաղ մարդիկ* նկարագրական արտահայտությունը:

ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 3937-ում՝ *Անհաս* հենարառով ՀԲԾ-ում (55բ), առկա է *լափանթերի* հավելումը⁵՝ դժվարընթեռնելի ձեռագրով. ենթադրելի է նաև *լոխանթերի* տարբերակը: ՀԲԾ-ն ավարտվում է «և *ահա աստուած*» արտահայտությամբ⁶, որն էլ ակնհայտորեն հավաստում է *Անհաս*→*Աստուած* իմաստային անցումը: Ինչպես վկայում է «Բառարան Սուրբ Գրոց»-ը, *Աստուած* անունը տրվել է «այն յաւիտենական, անսահման, **կատարեալ** և անհասանելի էակին, արարչին ամենայնի, որ կը խընամէ և կը վարէ զամենայն ամենակալ զօրութեամբը և **իմաստութեամբ** ...»⁷ (ընդգրծ.՝ Ն. Հ.): Հավելված բառերը կարելի է մեկնել և՛ իբրև *լոխ*, և՛ *լափանթերի*, ինչպես և նշված բառարանում բնութագրվում է Արարիչը՝ «ամբողջովին, բոլորովին անթերի՝ կատարյալ», այսինքն՝ «ամենակատարյալ»⁸: Հայկանուշ Մեսրոպյանի վկայությամբ՝ ածականի գերադրական աստիճանը Հաղորթի բարբառում կազմվում է նաև *լնփ* բառով⁹: Ըստ նրա՝ «*Լափ* գերադրական մասնիկը բնորոշ է նաև -ում ճյուղի Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի և -լ ճյուղի Մարաղայի բարբառներին...»¹⁰: «Ամենը, ամենքը, բոլորը, ամբողջը» նշա-

⁵ Բառերը ներկայացվում են ըստ գրչագրերն ընդօրինակելու դարերի և ոչ այբբենական կարգով:

⁶ Նմանատիպ «որ է աստուած» արտահայտությամբ ավարտվում է նաև *Լոյս* հենարառով ՀԲԾ-ն:

⁷ Բառարան Սուրբ Գրոց, էջ 56:

⁸ ՄՄՁ 5596 (221ա), 4612 (173բ), 4149 (351բ)-ում՝ նույն ՀԲԾ-ում, առկա է *լռութուն* բառը. հանրահայտ է *լռութունը*, *լռութիւնը* և *լռել* կարողանալը խելքի նշան է (հմմտ.՝ *Շատ գիտես, քիչ խոսա: Քիչ խոսա, շատ լսի: Առաջ միտք արա, հետո խոսք ասա* առածները. տե՛ս Ա. Ղանալանյան, Առածանի, էջ 6): Հ. Աճառյանը *լռութի* համար նշում է՝ «անխօս, լռած, տուս ... Բնիկ հայ բառ. նշանակում էր նախապէս «լտող, միտ դնող, ականջ դնող, հլու» և պատկանում է **լռ**, **լուր** արմատին (տե՛ս **լսել** բառի տակ)...» (ՀԱԲ, հ. Բ, էջ 302): Այնպես որ ընդունելի է՝ այդ երկու հավելումներով բնութագրվել է արարիչը՝ և՛ որպէս կատարյալ, և՛ որպէս լսելու ունակ, այլև լռություն պահպանող իմաստուն:

⁹ Հ. Մեսրոպյան, Ածականական հումանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, էջ 59:

¹⁰ Հ. Մեսրոպյան, նշվ. աշխ., էջ 60:

նակող լռիւ-ը¹¹ գործածվում է Ղարաբաղի¹² և Շամախիի, «բոլորովին, ամբողջովին» նշանակությամբ լաւի-ը՝ Արարատյան, Ղարաբաղի, Հավարիկի, Շամախիի, Ուրմիայի բարբառներում (ՀԼԲԲ, հ. Բ, էջք 207, 239): Եվ քանի որ ն՝ լռիւ-ը, ն՝ լաւի-ը գործածվում են Ղարաբաղում կամ Շամախիում, ենթադրելի է, որ տվյալ ձեռագիրը կամ ընդօրինակվել է այդ տարածքում, կամ էլ ընդօրինակողն է եղել այդ տարածքից:

ՄՄՁ 4149-ում վկայվող *Դեգերել. դանդաղել. արմանալ. յապաղել. պղերգանալ. ծուլանալ. վատանալ. վեհերել. թուլանալ. դոդալ. տատանել. յամրանալ. աղաւաղել. հեղգալ. յիրալ. մեղկել. գոփալ. յուլանալ. երկնչիլ. զարհուրել. զահի հարկանել. զանգիտալ. պակնուլ. կեղակարծիլ. կասկածել. սոսկալ. դաւղել. յահարել. ջերանիլ* ՀԲԾ-ում (354ա) ԺԶ դարից ավանդված ՄՄՁ 8106-ում (57բ) *յուլանալ*-ի փոխարեն առկա է *ուլանալ* բայը: «Ծուլանալ, ալարել, դանդաղել» նշանակությամբ *ուլանալ*-ը «գաւառական բառ կամ նըշանակութիւն» նշումով հիշատակում են Ստեփան Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. III, էջ 593), ՀԼԲԲ-ն՝ Ղարաբաղի, Հավարիկի, Նոր Նախիջևանի, *ուլնիլ, ուլնոլ* տարբերակներով՝ Սվեդիայի, Հաճնի բարբառներում (հ. Զ, Ե., 2010, էջ 293), Հրաչյա Աճառյանը՝ Ղազախի, Ղարաբաղի բարբառներում¹³, «Ղարաբաղի բարբառի բառարան»-ը *ուլնանալ* տարբերակով¹⁴, «Միջին հայերենի բառարան»-ը՝ բնագրային օրինակը քաղելով Ամիրդովլաթ Ամասիացուց (ՄՀԲ, 2009, էջ 616), այլև Պետրոս Ճիզմեճյանը՝ «գաւառական» նշումով¹⁵: Պարզո-

¹¹ Ստուգաբանությունը տե՛ս Ալ. Մարգարյան, Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 131-133:

¹² Հ. Աճառյանի վկայությամբ՝ «Այս բառը այնքան բնորոշ է Ղարաբաղի համար, որ շրջական գավառներում լօխ բառը ծածկալեզվով նշանակում է դարաբաղցի. օր. լօխերը եկան» դարաբաղցիք եկան»։ տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. II, Ե., 1954, էջ 426: Տե՛ս նաև Հաղորդի բառ ու բան, Աշխ.-մբ և իմբ.-մբ՝ Ա. Մարգարյանի, Ե., 2023, էջ 147:

¹³ Տե՛ս նաև Հայերեն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան (այսուհետև՝ ՀԳԲ), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 865:

¹⁴ Տե՛ս Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 753:

¹⁵ Տե՛ս Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1180:

րոշ է՝ այս բառի դեպքում էլ գերակշռում է հետազոտողների առանձնացրած Ղարաբաղի բարբառը, և հետևաբար դարձյալ կարելի է արձանագրել գրչագիրն ընդօրինակողի՝ այդ տարածքին պատկանելը:

ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 7117-ում՝ *Ծպտել. յայտել*¹⁶. *կերպարանել. փթթել. ծաղկել. բողբոջել. ցցուել* ՀԲԾ-ում (319բ), առկա է երկու հավելում՝ *պտկել, կանաչել**: Ծպտված-թաքնված վիճակը ենթադրում է այլակերպում, փոխակերպում, իսկ վերջինն էլ տվյալ դեպքում՝ բողբոջել-պտկել («... ընձիղել. բողբոջել. ցցուիլ». ՆՀԲ, հ. II, էջ 665), ծաղկել-փթթել-կանաչել-ն է («...ուռճանալ. ծաղկիլ». ՆՀԲ, հ. I, էջ 1047). գարնանը բնության ամբողջովին վերափոխվելը նույնպես փոխակերպում-այլակերպում է նշանակում: Ուրեմն և ընդունելի է *պտկել* և *կանաչել* բայերի հավելումը ՀԲԾ-ին, որոնցով էլ ձեռագիրն ընդօրինակողը հավանաբար ցանկացել է հավաստել իր՝ բարբառների իմացությունը, որքանով *պտկել*-ը հայերենի բարբառներում (Չրմ., Պլ., Նկմ., Կրն, Ակն, Վն, Մկս) «բողբոջել» իմաստն ունի (տե՛ս ՀԼԲԲ, հ. Ե, էջ 126), և այն ՄՀԲԲ-ն (հ. IV, էջ 123), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 128) և ԱՀԲԲ-ն (էջ 1228) ներկայացնում են «գւռ.», «ժղ.», «բրբ.» նշումներով: *Պտկել*-ի «կանաչել» բացատրությունն է նշում ԲՀ-ն (էջ 276). (*պտուկ* բառի մասին՝ ստորև):

Առակել բայն է հավելվել ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 6097-ում (284ա) և ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (4ա)՝ *Լուտալ* հենաբառով ՀԲԾ-ում**։ ՆՀԲ-ն *առակել*-ը մեկնում է նաև «Խայտա-

¹⁶ Հ. Աճառյանը, հղելով Մխիթար Աբբայի կազմած բառարանը, *յայտիլ*-ը համարում է «անստոյգ»՝ «ծպտիլ, այլակերպել. մտանել յայլ կերպարանս. ձևանալ» նշանակությամբ (ՀԱԲ, հ. Գ, էջ 383):

* Բայերն առկա են նաև ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 6097-ում (286), 6624-ում (147 ա), ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում (4բ)՝ *Ծպտու* հենաբառով ՀԲԾ-ում:

** ԺՁ դարից ավանդված ՄՄՁ 530-ում, 5919-ում, ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 2335-ում, ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 529-ում, 2019-ում *Լուտալ. պախարակել. բամբասել. բարբոջել. նշանակել* ՀԲԾ-ն է, ՄՄՁ 7117-ում այն չկա: Միայն ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում *պախարակել* բառի փոխարեն արձանագրվում է *անիձանել* (356ա):

ռակել. մերկանալ զամօթալիս. նշուակել յանդիման առնել ի նշուակ», և վկայություններն էլ «մերկ կամ մերկացած խայտառակվել» իմաստով են՝ բառահողվածի վերջում մանրամասնելով՝ «...բայց *Լւք.* (Լամբրոնացին՝ Ն. Հ.) իմանայ՝ նշուակեալ, նախատեալ ի բերան ամենեցուն» (հ. I, էջ 284): Ակնհայտորեն *առակել* բայը ՀԲԾ-ում ներառվել է «նախատել, հայհոյել, խայտառակել (խոսքով)» իմաստով, ասել է՝ ՄՀԲԲ-ում առկա «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով (հ. I, էջ 214): Մխիթար Մեքաստացին վկայում է «առակ հանել. էօրինէկ բերել. նմանցընել խաղք ու խաւեր ընել մասխարայ ընել» (ԲՀԼՄՍ, էջ 44 (657)): ՀԼԲԲ-ն «նախատել, խայտառակել, հանդիմանել» իմաստներով *առակել*-ը արձանագրում է Ղարաբաղի, Կարինի, Պոլսի, Վանի, Ուրմիայի բարբառներում (հ. Ա, էջ 97): Հրաչյա Աճառյանը հավելում է նաև Մոկքը և Ասլանբեգը (ՀԱԲ, հ. Ա, էջ 250): Արդի հայերենի բացատրական բառարանները այդ իմաստները վկայում են «հնց.» և «արևմտ.» նշումներով (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 170: ԱՀԲԲ, էջ 101): ՀԼՀԲ-ում նույնպես «հնց.» նշումն է (էջ 255): Բայն արևմտահայերենում ունի «ամոթանք տալ, նախատել, խայտառակել» նշանակությունները¹⁷:

Միայն ԺԷ դարից ավանդված ՄՄԶ 2291(II)-ում՝ *Եզերք* հենարառով ՀԲԾ-ում է վկայվում *պտուկք*-ը (344բ): Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ «ընձիւղ, ծիլ, բողբոջ» նշանակությամբ *պտուկ* արմատի «Նախաւոր «ծիլ» իմաստը պահում են Վն. Գոր. Ղրբ. վերջինիս մէջ նշանակում է նաև «ծայր» (ինչպէս լեռան, գրչի նն)» (ՀԱԲ, հ. Դ, էջ 111-112)¹⁸: ՀԼԲԲ-ն *ՊՏՈԿ* տարբերակով և «ծայր» իմաստով հավելում է նաև Ագուլիսի բարբառը (հ. Ե, էջ 129): «Ծայր», այլև «գագաթ, կատար» իմաստներն է վկայում «Ղարաբաղի բարբառի բառարան»-ը¹⁹: Ուրեմն ենթադրելի է, որ սույն գրչագիրը կա՛մ ընդօրինակվել է այդ տարածքներում, կա՛մ էլ ընդօրինակողն է եղել այդ տարածքներից:

¹⁷ Տե՛ս Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Ե., 1992, էջ 33:

¹⁸ ՀԳԲ-ում նշվում են նաև Ագուլիսը և Ղարաղաղը (էջ 931):

¹⁹ Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 628:

ԺԸ դարից ավանդված ՄՄԶ 9116-ում *Դուռել. խուղել. թաքչի. վերապարել. ճախրել. վերաթռչել. վերաթնել. սլանալ. թնածել. օղագնաց. փութալ. ստիպել. արագել. ընթանալ. հասանել* ՀԲԾ-ում (Յա) *ճեպել*-ի փոխարեն առկա է **ճպել** տարբերակը: Կարելի էր իհարկե *ճպել*-ը համարել վրիպակ, սխալագրություն և չանդրադառնալ դրան: Սակայն քանի որ *ճպել* տարբերակը, ըստ Սահակ Ամատունու, օգտագործվում է «Արարատեան գաւառ»-ում, Լոռի-ում, այլև «այն գործածում են դագախեցիք»²⁰, և նրանից բացի՝ *ճրպել*-ն արձանագրում են Հրաչյա Աճառյանը՝ («աչքը կամ արտևանունքը թարթել»)՝ Ղազախի, Ղարաբաղի բարբառներում, Երևանում և Շուլավերում (ՀԳԲ, էջ 733)²¹, ՄՀԲԲ-ն՝ «աչքերը թարթել, բանալ-խփել» «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով (հ. III, էջ 225), ՀԼԲԲ-ն՝ Արարատյան և Ղարաբաղի բարբառներում²², «Ղարաբաղի բարբառի բառարան»-ը՝ «ճրպել ...-տե՛ս Աշկը ճրպել» հղումով²³, թերևս որոշ պարզաբանումների խնդիր է ծագում: *ճպել* «բարբառային բառ»-ի ստուգաբանությանն անդրադարձել է Ալեքսանդր Մարգարյանը: Արձանագրելով բայի «գաւառական» լինելու հիշատակումները Սահակ Ամատունու, Հրաչյա Աճառյանի կազմած բարբառային, Ստեփան Մալխասյանցի կազմած բացատրական բառարաններում, այլև այն, որ Հրաչյա Աճառյանը «այդ բառը աստղանիշով ներկայացրել է իբրև «գրաբարի մեջ գոյություն չունեցող, բոլորովին նոր արմատ»՝ նա ընդգծում է. «Պետք է, սակայն, ասել, որ դա այդպիսին չէ և, ինչպես առիթ ենք ունեցել առաջին անգամ նշելու մեր «Գորիսի բարբառը» ... ուսումնասիրության մեջ, **ճպել**-ը գրաբարում լայնորեն գործածվող **ճեպել** («Շտապեցնել,

²⁰ Հայոց բառ ու բան, Աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912, էջ 447:

²¹ Հատկանշական է, որ առանց որևէ նշումի են արձանագրում արդի հայերենի բացատրական, հայոց լեզվի նոր, հայոց լեզվի հումանիշների բառարանները (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 453: ԱՀԲԲ, էջ 948: ՀԼՀԲ, էջ 429. տե՛ս նաև Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 956: Հայոց լեզուի նոր բառարան, 1968, էջ 489: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 597):

²² ՀԼԲԲ, հ. Գ, Ե., 2004, էջ 412:

²³ Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, էջք 471, 60:

փութացնել») բայի հնչյունափոխված մի ձևն է, որ գիտեն միայն Արարատյան, Արցախի (Ղարաբաղի) և Գորիսի բարբառները...»²⁴: Քննելով «բարբառային բառ»-ը հնչյունական և իմաստային տեսանկյուններից՝ Ալեքսանդր Մարգարյանը նշում է, որ հնչյունականն «առանձնակի բարդություն չի ներկայացնում, և **ճեպել**-ից **ճըպել** ձևը առաջ է եկել պարզապես ե>ը հնչյունափոխությամբ, որ նկատելի է հենց հիշյալ բարբառներին հատուկ որոշ բառերում, ինչպես դեղնել-տղնել... ճեղել-ճղել, խեճեպ-խըճեպ//կըճեպ... և այլն»²⁵: Իմաստային տեսանկյունից, ըստ նրա, «... ճիշտ է, **ճպել** (<**ճըպել**)-ը զգալապես հեռացել է իր նախնական՝ **ճեպել** ձևից, բայց ամբողջապես չի խզել իմաստային կապը դրա հետ»²⁶: Այս բառի դեպքում էլ, ամենայն հավանականությամբ, ձեռագիրն ընդօրինակողը ցանկացել է հավաստել իր բարբառի իմացությունը:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 9992-ում՝ *Փանաքի. չքաւոր. աղքատ. փինատ. կնատ. վատաբախտ. անգաւակ. ողորմ. տնանկ. տրկար. պանդոյր. պանդուխտ. թափառական. նժտեհ. հեք. թշուատ. շուատ. չուատ. մերկ. կողոպուտ. ուրուկ. մուրոյ. տապալեալ. անգոր. անտարր. թարմատար. տրուպ. աղկաղկ. ներքն. կարօտ. եղկելի. չնքին* ՀԲԾ-ին հավելվում է **գուզ** բառը (Յա): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *գուզ գուզ*-ը՝ «Բառ անյայտ. որպէս ռմկ. կուզ. իամպուր. կամ Կծկեալ իբր ի գուճս անկեալ. կամ Կաղ ի կաղս...» (ՆՀԲ, հ. I, էջ 578), «կուզ կուզ, կծկած, կամաց կամաց» (ԱԲ, էջ 225): Հրաչյա Աճառյանը նույնպես նշում է՝ «անստոյգ բառ»՝ հիշատակելով Նոր հայկազյան բառգրքի մեկնությունը՝ «որպէս յն. γοτός «խեղ, հաշմանդամ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 587)²⁷: Ստեփան Մալխասյանցը «կուզէկուզ, կուչ գալով» իմաստով *գուզ-գուզ*-ը վկայում է

²⁴ Ալ. Մարգարյան, Ստուգաբանություններ, էջ 161-163:

²⁵ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 162:

²⁶ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 162-163:

²⁷ Նոր ստուգաբանություն է առաջարկում Տ.Դալայանը. տե՛ս Տ.Դալայան, «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո, «Ջառուկյանական ընթերցումներ», 1(21), Ե., 2024, էջ 5-18:

որպես «հագուադեպ բառ կամ նշանակություն» (ՄՀԲԲ, հ. I, էջ 467): «Միջին հայերենի բառարան»-ում առկա է միջնադարյան հանելուկներում գործածվող *գուգ ի գուգ*-ը՝ «կոացած, կուզեկուզ» նշանակությամբ (ՄՀԲ, 2009, էջ 149): Ըստ բառարանների՝ հայերենի բարբառներում գործածվում են *գուգ*-ով հարադրական կազմություններ. Վանի բարբառում՝ *գուգ անել* «Ձայն ու ծպտուն չհանելով կծկվել՝ կուչ գալ», Նոր Ջուղայի բարբառում՝ *գուգ մտնել* «1. Դարան մտնել... 2. Կուչ գալ» (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 290-291): Նոր Նախիջևանի բարբառում վկայվում է «կկգած» իմաստով *գուգուգ* բաղադրությունը²⁸: Եվ դարձյալ ըստ բառարանների՝ *կուչ*²⁹ *գալ*-ը նաև նշանակում է «ընկճվել, խոնարհվել, խեղճանալ» (ԱՀԲԲ, էջ 783), «խոնարհվել (առավ. նվաստանալով)»³⁰, *կուչ բերել առջևը*՝ Երևանում՝ «խոնարհեցնել, հպատակեցնել, ընկճել սարսափով» (ՀԳԲ, էջ 605)³¹: Հետևաբար կուչ եկած՝ ընկճված, խոնարհ, խեղճ, նվաստացած անձը թշուառ, խղճուկ, աղքատ, չունևոր է (ՀԼՀԲ, էջք 262, 494, 650), ասել է՝ այն, ինչ արձանագրվում է գրչագրում:

Կարելի էր իհարկե շրջանցել և չանդրադառնալ գրչագրերում վկայվող վերոնշյալ բառերին՝ դրանք համարելով պարզապես սրխալագրություններ, բայց և ակնհայտ է՝ դրանք գործածվում են հայերենի բարբառներում: Անշուշտ, քննվող բառերի քանակը որոշակի եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում, այդուհանդերձ, հավելված բառերից երեքն առկա են Ղարաբաղի բար-

²⁸ Գ. Ջալաշյան, Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան, Դոնի Ռոստով, 2012, էջ 114:

²⁹ Ստուգաբանությունը, այսինքն՝ առնչությունը *գուճ*-ին, տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 13-15:

³⁰ Գ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011, էջ 706:

³¹ Ղարաբաղի բարբառում *դուգ կենալ*-ը միայն «կրանալ» իմաստով է. տե՛ս Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 458: Հատկանշական է, որ քրդերենում ևս գործածվում են *qûz*-ը ("горбатый; согнутый, наклонившийся") և *qûz bûn* (горбиться; нагибаться, наклоняться; сгибаться), *qûz kirin* ("сгибать; нагибать, наклонять; гнуть") հարադրական կազմությունները (Канат Курдоев, Курдско-русский словарь, Москва, 1960, ст. 491). շնորհակալությունս պատմաբան, պ.գ.թ. Թերեզա Ամրյանին սրա մասին հուշելու համար:

բառում: Ուստի անդրադառնալով այս առիթով ծագող հարցերին հիշատակելի է Հրաչյա Աճառյանի դիտարկումը: Խոսելով Ղարաբաղի բարբառի «նոր հայերենի 31 բարբառներուն մէջ ամենէն տարածուածը» լինելու մասին՝ նա նշում է, որ այն «շատ հեռու տեղեր ալ գացած է. Փոքր-Ասիոյ մէջ Զմիւռնիոյ և Այտընի քովերը հին հայ գաղթականութիւն մը կայ, որ մէկ երկու դար առաջ Ղարաբաղէն հեռանալով այս տեղերը հաստատուեր է», նաև մանրամասնելով՝ «Թէն յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է, բայց երկու տեղ՝ այն է Պուրտուր և Էօտեմիշ դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն Ղարաբաղցիք...»³²:

Ինչպես իրավացիորեն նկատել է Հովհաննես Մուրադյանը, բարբառների լեզվական հարուստ նյութի համեմատական քննությանը հնարավոր է թափանցել լեզվի պատմության խորքերը, վերականգնել բարբառային տարբերությունները և նպաստել հայերենի հնագույն շրջանի բարբառային բաժանվածության աստիճանի մասին պատկերացումներն ընդլայնելուն³³: Այս դիտարկումները հրնարավորություն են ընձեռում եզրակացնելու, որ վերոնշյալ փաստերը հետաքրքիր են նաև միջբարբառային առնչությունների տեսանկյունից:

³²Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911, էջ 61: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 331: Հ. Աճառյանի հավաստմամբ՝ «... Պուրտուր և Էոտեմիշ գաղթել են Ղարաբաղից ԺԷ դարում կամ ավելի ուշ...» (Հ. Աճառյան, նշվ. աշխ. էջ 437): Սրա մասին հիշատակում է նաև Բ. Ուլուբաբյանը (Բ. Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981, էջ 54-55):

³³ Հ. Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985, էջ 75:

ՓՈՆԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՌ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտողների հավաստմամբ, ինչպես արդեն նշվել է, Հաստանի տարբեր վայրերից Ժ և հետագա դարերում ոչ միայն ձեռագրեր են տարվել կրթության տարբեր օջախներ, գրչության արվեստի կենտրոններ՝ ընդօրինակելու-վերակազմելու, և այնուհետև հետ բերվել, այլև ձեռագրեր են ընդօրինակվել թելադրելով¹: Եվ այս առումով՝ գրչագրեր ընդօրինակողների՝ ձեռագրին միջամտելու և ըստ լեզվին տիրապետելու մակարդակի՝ արտագրելու ենթադրությունն ամրագրվում է նաև գրչագրերի մի քանի բառաշարքում առկա փոխառյալ բառերով (դրանք, թերևս, արտացոլում են ժամանակաշրջանի լեզվական վիճակը), որոնք հնչյունական տարբերակներով առկա են նաև հայերենի բարբառներում և խոսակցական լեզվում:

Հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները, ինչպես հավաստում են հետազոտողները, պայմանավորվում են նաև օտար լեզվական ազդեցություններով: Մասնավորապես նշվում է, որ փոխառյալ բառերը, ունենալով «տարածման իրենց շառավիղը», նկատելիորեն գերակշռում են տարածքային առումով սահմանային գոտիներում, որտեղ այլալեզու հարևանների հետ շփման հնարավորություններն ավելի շատ են²: Եվ քանի որ մի քանի բառաշարքեր ավարտվում են փոխառյալ բառերով, կարելի է ենթադրել, որ դրանք միջամտություններ են, և ընդօրինակողները հավելել, լրացրել են իրենց իմացածը:

¹ Տե՛ս նաև Samet Budak, Michael Pifer, Learning Middle Armenian at the Court of Mehmed II: Language, Knowledge, and Power Before the Imperial Rise of Ottoman Turkish, <https://journals.library.columbia.edu/index.php/alusur/article/view/uw32budakpifer> (էջք 279, 254 (հղում 7)). (հասանելի է 31.03.2026):

² Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 424: Հ. Մուրադյան, Բառային գուգարանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, էջ 69-70:

Նշվածից բացի՝ հարկ է նկատի առնել Հովսեփ Օրբելու՝ Ժամանակաշրջանին վերաբերող այն դիտարկումը, որ արհեստները զարգացնելու թելադրանքով կարևորվում է ոչ միայն արհեստավորների գրագիտության անհրաժեշտությունը, այլև գրական կերպարների իմացությունը՝ թե՛ տեղական, թե՛ օտար վերնախավի և թե՛ արտասահման համար նախատեսված արտադրանքը՝ նկարագարդելու-դրվագագարդելու, գծանկարելու դասական բանաստեղծության լեզվով, այն է՝ պարսից: Լեզու, որը, Հովսեփ Օրբելու հավաստմամբ, պատվավոր տեղ էր զբաղեցնում աշխարհիկ վերնախավում՝ անկախ ազգությունից և դավանանքից⁴: Բարկեն Չուգասրբյանի համոզմամբ էլ. «Որ պարսկերենը դեռևս XI-XII դարերից ուսուցվել և գիտական լեզու է եղել Հայաստանում, վկայում են ձեռագրական առանձին հաղորդումները և, որ հատկապես շատ արժեքավոր է, Մխիթար Հերացին»⁵:

Քննվող գրչագրերում վկայվում են արաբերեն, ասորերեն, եբրայերեն, լատիներեն, հունարեն, վրացերեն և իրանական լեզուներից փոխառյալ բառեր, որոնք նույնպես ստորև ներկայացվում են՝ ըստ վաղ շրջանում ընդօրինակված գրչագրերի:

Առանձնահատուկ նշելի է ԺԳ դարից ավանդված (ՄՄՁ 4612, 170բ. 5596, 217բ) և մյուս գրչագրերում առկա *Րեստոր. իմաստակ. տելետի. վարդայետ. վարժայետ. փիլիսոփա. իմաստասեր. ամենիմաստ* ՀԲԾ-ն: *Րեստոր* հենաբառի առնչությամբ ՆՀԲ-ն նշում է «ՐԵՏՈՐ. Տ. ՀՌԵՏՈՐ: Հին քեր.» (հ. II, էջ 903)՝ *հռետոր*-ի համար արձանագրելով՝ «Բառ. յն. ... այսինքն Սսող. ճարտասան, և ճարտարախօս. ատենախօս. փաստաբան. պերճաբան», և վկայակոչելով Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու երկերը (հ. II, էջ 127):

ՀԲԾ-ում վկայվող *տելետի*-ն նույնպես փոխառյալ է հունարենից՝ «կատարումն. և սրբազանութիւն. նուիրագործութիւն. և

³ Հմմտ.՝ Սարգիս Պիծակի պատվերները բարձրաստիճան հոգևորականությունից և ազնվականությունից. տե՛ս Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, էջ 10:

⁴ Տե՛ս Կ. Օրբելու, *Избранные труды*, т. I, ст. 260.

⁵ Բ. Չուգասրյան, Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Ե., 1963, էջ 35 (տե՛ս նաև 173-րդ էջում):

նուիրական ռք» նշանակությամբ. ըստ ՆՀԲ-ի՝ վկայվում է Ստեփաննոս Սյունեցու թարգմանած երկում. նշվում է նաև «Իսկ ի Հին բռ. գրի, *Տելետին՝ Գլուխ իմաստասիրաց և հռետորաց» (հ. II, էջ 862): Հրաչյա Աճառյանն առանձնացնում է *տելետի* և *տելետիս* բառերը՝ ՆՀԲ-ում նշվող «գլուխ իմաստասիրաց և հռետորաց» նշանակությունը վերագրելով վերջինին: Ըստ նրա՝ Գրիգոր Մագիստրոսի (ԺԱ դ.) թղթերում վկայվող *տելետիս*-ը հունարեն «կատարելություն» բառն է, որը «բիզանդական շրջանում իբր տիտղոս էր գործածում, ճիշտ ինչպես Մագիստրոսի մօտ ենք գտնում» (ՀԱԲ, հ. Դ., էջ 392):

Նույն ՀԲՇ-ում ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում (363ա) առկա է *փիլիսոփոս*-ը, ՄՄՁ 8198(II)-ում (68ա)՝ *ֆիլիսսոփասս*-ը, իսկ ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 3286-ում (293բ)՝ *ֆիլիսոֆ*-ը: ՆՀԲ-ն *ֆիլիսոֆոս*-ը հղում է *փիլիսոփայ*-ին (հ. II, էջ 1037)՝ վերջինի համար նշելով՝ «փիլիսոփայ Բառ յն. այսինքն Իմաստասեր» (հ. II, էջ 941): Հատկանշական է *փիլիսոփայ* տարբերակի համար Հրաչյա Աճառյանի դիտարկումը. «... հայերենը գալիս է ասորի ձևից (-այ յօղով). և տարբեր է *փիլիսոփոս* կրկնակից, որ ուղղակի յունարենից է փոխառեալ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 502): Նա արձանագրում է նաև *փիլիսոփոս*-ը՝ «=Յն. φιλότητος «իմաստասեր» բառից»՝ առաջարկելով համեմատել *փիլիսոփայ* բառը, «որը յառաջացած է ասորերենից փոխառությամբ, ինչպես ցոյց է տալիս ասորական -այ վերջաւորութիւնը» (ն.տ.): Միաժամանակ նշվում է, որ *փիլիսոփայ* բառը վկայվում է նաև Աստվածաշնչում, Հովհան Ոսկեբերանի երկի թարգմանության մեջ, «Վարք սրբոց հարանց» ժողովածուում, *ֆիլիսոֆոս*-ը՝ «հին մատենից» հիշատակարաններում:

Այս ՀԲՇ-ում ԺԵ դարից ավանդված ՄՄՁ 267-ում (183բ) վկայվում է հունարենից փոխառյալ *սոփեստէս*-ը (ըստ ՆՀԲ-ի՝ «իմաստակ. ուսումնասեր. բանագետ. հռետոր. գիտնաւոր՝ իրօք կամ կարծեօք. և իմաստակական. ճարտար» նշանակությամբ. վկայվում է Բուզանդի երկում, «Վարք սրբոց հարանց» ժողովածուում և այլն (հ. II, էջ 734)):

Նույն դարից ավանդված ՄՄՁ 2370-ում էլ (290բ) առկա են *պունեսիկոս* (հունարենից փոխառյալ՝ «բանաստեղծ. բանահիւս. քերթող. կերտող. չափաբան». ըստ ՆՀԲ-ի՝ վկայվում է Եվսեբիոս Կեսարացու, Եփրեմ Ասորու երկերի թարգմանություններում (հ. II, էջ 660)), *էկլեսիեստես* (հունարենից փոխառյալ՝ *եկլեսիաստես* կամ *եկկլեսիաստես* «եկեղեցացուցիչ. ժողովող. աստենախօս. վարդապետ». ըստ ՆՀԲ-ի՝ վկայվում է Աստվածաշնչում (հ. I, էջ 651)), *բարունի* (եբրայերեն՝ «վարդապետ իմ. պետ և տեր». ըստ ՆՀԲ-ի՝ առկա է Աստվածաշնչում, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Նարեկացու երկերում, Ժամագիրք և «Գանձք կամ քարոզք» ժողովածուներում (հ. II, էջ 902)), *դաբանոս* (ըստ ՄՀԲԲ-ի՝ «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն», ««բառ այլազգական»... Իմաստուն, իմաստասէր» (հ. III, էջ 182)), *իբրոնոս* (ըստ ՀԱԲ-ի՝ «Իբրինոս «փիլիսոփայ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 130». հ. Բ, էջ 251) բառերը:

ՄՄՁ 5596-ում՝ *Սուրբ. պարզ. յստակ. մաքուր. վճիտ. ընդիր. ականակիտ. զիքն. մեկին. անսպական. հասուն. ամբիծ. զուտ. արդար. ասպարտակ* ՀԲՇ-ում (221բ), վկայվող *սորեկ*-ը⁶, ըստ ՆՀԲ-ի և ՀԱԲ-ի, «Մակդիր որթոյ խաղողոյ՝ իբր Ազնիւ, պատուական, ընտիր», «=Եբր. סֹרֵק *կամ* סֹרֵק *sōrēq* մի տեսակ ընտիր խաղող բառն է, որ յն. ժարիչ տառադարձութեան վրայից անցած է մեզ», և առկա է Աստվածաշնչում, Հովհան Ոսկեբերանի երկի թարգմանության մեջ, Ներսես Շնորհալու, Թեոդորոս Քոթենավորի երկերում (ՆՀԲ, հ. II, էջ 730: ՀԱԲ, հ. Դ, էջ 247):

Նույն գրչագրում՝ *Հանճար. մակացութիւն. տրամախոհութիւն. տեսուն. կարծունակցութիւն. ասք՝ շարժումն մտաց* ՀԲՇ-ում (223բ), առանձնանում է *ուշպարակի* բառը, որի համար ընդունելի է «կատարելություն, ամբողջականություն» (սֆսրռ «լիքը, կատարյալ, լրիվ», իսրրիկ «կատարյալ, ամբողջական, լիքը») նշանակությամբ միջին պրակ. *սֆսրիկի*-ը⁷:

Կարելի է նաև հավանական համարել բառի՝ *ուշ* արմատով և *պարարակ*-ով (ըստ ՆՀԲ-ի՝ «սնուցեալ, պարարտեալ, պարարտ,

⁶ ՄՄՁ 4612-ում *սորեկ* տարբերակն է (174ա):

⁷ Գ. Նալբանդյան, Պահլավերեն-հայերեն բառարան, Ե., 1994, էջ 54:

գեր»․ հ. II, էջ 630) բաղադրյալ կազմությունը, այն է՝ «մտքով սնուցեալ, պարարտեալ»:

Գրչագրերում վկայվող *ուշպատակի* տարբերակը⁸ նույնպես կարելի է դիտել բաղադրյալ կազմություն՝ *ուշ* «միտք, ինքը» և *պատար* «լի, լեցուն» արմատներով (ՀԱԲ, հ. Դ, էջ 37): Այդուհանդերձ, այս կազմություններում էլ է առկա միջին պարսկերենի *-ih*-ը:

Ռուար. հարան. ամնու. առնիս. գառն ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 175բ. 5596, 224ա), առանձնանում է ստորերեն *ամարու* բառը (ըստ ՆՀԲ-ի՝ «... Հին բռ. մեկնի, Որոջ կամ ոչխար: Այն է ըստ ասորւոց *էմարու*, այսինքն՝ էգ գառն, որոջ»․ հ. I, էջ 53: Հրաչյա Աճառյանը այն դիտում է «նորագիւտ բառ»՝ նշելով՝ «... Ասոր. **امرا** emrā «գառն»․ այս բառը գործածուած է Ս. Գրքի ստորի թարգմանութեան միննոյն տեղը և Իրենէոսի ստորի բնագրի միջոցով անցել է մեզ»․ ՀԱԲ, հ. Ա, էջ 148):

Համակ⁹. կացի. պարմանի. պատանի. մանկակերտ. մանգտի, արբումն. մանկութիւն. հասակ. հաստիս ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 176 ա. 5596, 224ա), առանձնանում է *կացի* բառը: ՆՀԲ-ի և ՀԱԲ-ի վկայությամբ՝ «տղայ. մանուկ. համբակ. աշակերտ» նշանակություններով վրացերեն *կացի*-ն¹⁰ առկա է «Գիրք պիտոյից» ճարտասանական ձեռնարկում¹¹ (ՆՀԲ, հ. I, էջ 1078: ՀԱԲ, հ. Բ, էջ 560): Հրաչյա Աճառյանը հավելում է, որ «Նոյն բառն ունի Բառ երեմ. **կացի** և ...**կաթսի** «տղայ» ձևով», և հայերենը համարելով փոխառություն՝ նշում՝ «շատ սահմանափակ գործածութիւն ունի» (ՀԱԲ, ն.տ.): Այդուհանդերձ, սահմանափակ գործածություններից մեկը վկայվում է այս գրչագրում:

⁸ Այն վկայվում է ԺԳ, ԺԴ, ԺԵ դարերից ավանդված գրչագրերում (ՄՄՁ 4612, 175բ. 8198(Լ), 58ա. 266, 82ա): Բառային տարբերակներն են՝ *ուշպատակի* (ՄՄՁ 7117), *ուշ նապատակի* (ՄՄՁ 4149), *ուշնպատակի* (ՄՄՁ 8106): ԺԵ դարի ձեռագրերում արձանագրվում է *ուշպատակի* բառը. տե՛ս Ն.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 163:

⁹ Մյուս գրչագրերում *Համբակ* հենարան է. տե՛ս և, օրինակ, ՄՄՁ 4149-ը (357ա):

¹⁰ Առավել հայտնի վրացերեն *կացո*-ն նշանակում է «մարդ, տղամարդ»․ տե՛ս Ռ.Կ. Գորգաձե, Վրացերեն-հայերեն բառարան, Ե., 2005, էջ 312:

¹¹ Գիրք պիտոյից, Աշխատասիրության Գոհար Մուրադյանի, Ե., 1993, էջ 6-7:

Բուրաստանք. դարաստանք ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 177ա. 5596, 225ա)¹² առկա *դարաստան*-ը, ՆՀԲ-ի բացատրությամբ, «...Ծառաստան, որպես մեկնի և ի Հին բռ.»։ նշվում են նաև Աստվածաշունչը, Գրիգոր Նարեկացու «աղոթամատոյց մատեան»-ը (հ. I, էջ 604)։ Հրայր Աճառյանը բառի համար արձանագրում է. «... ամբողջը պատրաստ փոխառեալ է իրանեանից», քանի որ հայերենում «չկա դար «ծառ» բառը» (ՀԱԲ, հ. Ա, էջ 635)։

Վերոնշյալ ՀԲԾ-ին ՄՄՁ 4612-ում հավելվում է *դրաստ*-ը (177 ա)։ Հրայր Աճառյանը, այն համարելով «հին գաւառական մի ձև», հղում է իրանական լեզուներից փոխառյալ *դրախտ* բառին («=Պիլ. պագենդ. draxt «ծառ», պրս. درخت diraxt «ծառ»....»։ ՀԱԲ, հ. Ա, էջ 690-691)։ Նա, *Բախտ* բառահոդվածում վկայելով *բաստ*-ը որպես *բախտ*-ի «յետին գաւառական մեկ ձև», անդրադառնում է իս>ս և այնափոխությանը՝ հիշատակելով նաև *դրախտ>դրաստ, տախտակ>տաստակ* բառերը և նշելով, որ «անշուշտ եղել են ուրիշ գաւառական բառեր իստ>ստ ձայնափոխեամբ, բայց գրականութեան մէջ չեն մտել։ Արդի բարբառների մէջ այսպիսի ձայնափոխութիւն չի նկատուած» (ՀԱԲ, հ. Ա, էջ 390)։

*Կարպետ*¹³. *աւթոց. ձորձ. թաշկինակ* ՀԲԾ-ում (ՄՄՁ 4612, 175բ. 5596, 224ա) վկայվող հունարենից փոխառյալ «անթն վերարկու, կրկնոց» իմաստով *փիլոն*-ը, ըստ ՀԱԲ-ի, վկայվում է Աստվածաշնչում, «Վարք հարանց» ժողովածուում (ՀԱԲ, հ. Դ, էջ 502)։

Նույն գրչագրում առադրվում է դարձյալ հունարենից փոխառյալ *վիռոն*-ը՝ *վեռոն* տարբերակով՝ որպես «փիլոն, եկեղեցական վերարկու», և գործածված միայն Հովհան Ոսկեբերանի երկի թարգմանության մեջ (ըստ ՆՀԲ-ի՝ *վիռ* կամ *վիռն* (հ. II, էջ 825)։ ՀԱԲ, հ. Դ, էջ 342)։

¹² Տե՛ս նաև ՄՄՁ 4149-ը (354ա)։

¹³ Հ. Աճառյանը *կարպետ*-ը համարում է «շորի կտոր, քուրջ, լաթ» նշանակությամբ *կարպետ*-ի «ռամկական ձև», որ արձանագրում է Վ. Այգեկցու առակներում, «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ»-ում (ՀԱԲ, հ. Բ, էջ 523-524)։ Հատկանշական է, որ ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում *Կարպետ* հենարան է։

Նույն գրչագրերում՝ *Բոց. հուր. հրատ. շանդիւք. դամբարք. ջահք. պնկե. կայծակն. խարույկ. եռանդն. քուրա. բորբ. հալոց, տոչորել. կիզուլ. տապակել* ՀԲՇ-ում (համապատասխանաբար էջք 176բ և 224բ), առանձնանում են *դամբար*-ը և *պնկե*-ն: Հրաչյա Աճառյանը *դամբար*-ը հղում է «ջահ, ճրագ, լոյս, բոց» նշանակությամբ *լամբար*-ին՝ «Յն. λαμπάς ...«ջահ, ճրագ, կանթեղ»», որ «փոխառութեամբ տարածուած է ամէն կողմ», միաժամանակ նշելով՝ հունարեն բառի «ուղիղ տառադարձութիւնը պիտի լինէր *հյ. լամպադ* կամ *դամպադ*, և նախորդ *մ*-ի պատճառով՝ *լամբադ* կամ *դամբադ*. սակայն $\delta > \rho$ տառադարձութիւնը ցոյց է տալիս՝ ըստ Meillet MSL 17, 248, որ յոյն բառը անցել է մեզ հիւս. պիլ. *lampaδ ձևի միջոցով» (ՀԱԲ, Բ, էջ 263): *Ղամբար*-ը, ըստ ՆՀԲ-ի, առկա է Աստվածաշնչում¹⁴, Եդիշեի, Գրիգոր Նարեկացու երկերում:

Պնկե-ի համար ՆՀԲ-ն արձանագրում է. «Բառ յն. բե՛ւզի, Πέυχη. որ է Սոճի, սօս, թեղօշ, սարդ. մարխ. և Ոստ սոճոյ կամ մարխ լուցեալ», և նշում. «Ուստի առեալ՝ Բոց, հուր, ջահ, պնկե. ի Հին բռ. դնին որպէս փաղանուն, որ չէ ի դէպ» (հ. II, էջ 647): Հրաչյա Աճառյանը նույնպէս հիշատակում է «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ» երկը (Ե դ.), Ղևոնդ վարդապետի պատմությունը (Ը դ.)՝ հավելելով «Գիրք վաստակոց» ժողովածուն (ՀԱԲ, հ. Դ, էջ 77):

Հիպերէտ-ը վկայվում է *Արքանեակ. սպասուոր. պաշտաւ նեայ* ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 177բ. 5596, 225բ). ըստ ՆՀԲ-ի՝ *հիւպերէտ*. հունարենից փոխառյալ բառ է՝ «պաշտօնեայ. փոքրատր» նշանակությամբ. վկայվում է Մովսէս Խորենացու երկում (հ. II, էջ 102):

Նույն գրչագրում *Շամբուշ. անուղղա. խելագարեալ. թմրեալ. ցնորականք* ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 175բ. 5596, 223բ) վկայվող *սնորու*-ը, ըստ ՆՀԲ-ի, նույնպէս փոխառյալ է հունարենից՝ «Յիմար. անմիտ խելագար. բախած. ռակայ» նշանակությամբ. վկայվում է Աստվածաշնչում (հ. II, էջ 299):

¹⁴ Համարաբար գրաբար Աստվածաշնչի, էջ 1167:

ՄՄՁ 4612-ում (172բ) և ԺԴ դարից ավանդված ՄՄՁ 4149-ում (358ա)՝ *Հիւթ. տարր. նիւթ* ՀԲՇ-ում¹⁵, առանձնանում է *հիւղէ*-ն, որ ՀԱԲ-ը համարում է փոխառյալ՝ «յն. օղ»¹⁶, և հիշատակում որպէս *հիւղ* «նիւթ, տարր, նախանիւթ» նաև Եզնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի երկերում (ՀԱԲ, հ. Գ, էջ 100):

ՄՄՁ 4149-ում *Ղամբար. ջահ. լոյս. ժողով* ՀԲՇ-ին¹⁶ (359ա) հավելված *մաշալայ* բառը՝ «ջահ, լապտեր, կերոն» իմաստով արձանագրում է ՄՀԲ-ն բնագրային օրինակը քաղելով Նահապետ Քուչակից (ՄՀԲ, 2009, 494): Հրայր Աճառյանը «ջահ» նշանակությամբ արաբերենից փոխառյալ բառը արձանագրում է Պոլսի և Ղարաբաղի բարբառներում¹⁷: «Ղարաբաղի բարբառի բառարան»-ում նշվում է «Երկար փայտի ծայրին փաթաթված եւ նավթով՝ բենզինով եւն թաթախած լաթ, որ վառում են լուսավորելու համար, ջահ» նշանակությամբ¹⁸: ՀԼԲԲ-ն, բառն արձանագրելով Կարին և Բալու բարբառախոս վայրերում, փաստում է. «Հարսանիքի ժամանակ թափորին ուղեկցողների ձեռքերին եղած կրակները, որ կամ աթարի վրա նավթ են լցնում կամ մեծ մոմեր վառում» իմաստով (հ. Դ, էջ 26):

Նույն գրչագրերում (ՄՄՁ 4149, 361բ-362բ. 8198(II), 67բ. 5925, 100ա. և ՄՄՁ 8106 (61բ)) առկա են երկու ՀԲՇ-ներ՝ *Ռակա(յ). անմիտ. յիմար. անզգա. անիմաց* և *Ռահ. ճանապարհ. շաւիղ. պողոտա. կուռ. բազմակողի. յոզնընթաց*, որոնք չկան ԺԳ-ԺԷ դարերից ավանդված մյուս գրչագրերում: Հենաբառերը փոխառություն են. ըստ ՀԱԲ-ի՝ *ռակա(յ)*-ն՝ հունարենից, *ռահ*-ը՝ «պիլ. rāh ձևից» (հ. Դ, էջ 138-139)¹⁹: *Ռակայ* բառը հիշատակվում է «Հայաստանեայց

¹⁵ ՄՄՁ 5596-ում *Հութ. հեղե. տարր. նիւթ* ՀԲՇ-ն է (220բ):

¹⁶ *Մաշալայ* տարբերակն է ՄՄՁ 5925-ում (97ա), 8198(II)-ում (66բ):

¹⁷ Տե՛ս Զ. Աճառեան, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ եւ թուրքերենէ փոխառեալ բառերը Պոլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, էջ 228:

¹⁸ Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 490:

¹⁹ Երկու բառերն էլ գործածում են ուշ միջնադարի բանաստեղծները. տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխատ. Զ. Սահակյանի, Ե.,

եկեղեցեաց հասարակաց աղօթից» ժամանակագրության մեջ («Ռաբի կոչեցայ Ռակայ անուանիմ. ռամկական վարուք»)՝²⁰ երկլեզվյան բառարանում («Ռակայ...Fool, dolt: See Յիմար»)՝²¹ «Սուրբ Աւետարանին» մեկնության («Իսկ մորոսն՝ բա՛ռ է գաւառի, հասարակաբար ասացեալ՝ թշնամանք առ ընտանիս, բայց յեբրայեցի լեզուն՝ ռակայ կոչեցաւ...»)՝²² և լատիներենի քերականության մեջ՝²³: ՆՀԲ-ն նշում է՝ «Ռակայ. անգգամ, կամ ա՛յ դու անմիտ. Հին բո» (հ. II, էջ 680), այսինքն՝ արձանագրվում է, որ «հին բառարանները» վկայում են բառը և իմաստները: ՆՀԲ-ում բառն առկա է նաև *Սոբոս* և *Սանդաստական* բառահոդվածներում (հ. II, էջք 299, 693):

Ռահ-ը միջին գրական հայերենում դիտվում է պարսկերենից փոխառություն (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 234): Գրաբարի տպագիր բառարաններում *nah*-ը վկայված է «ճանապարհ. ուղի. արահետ. շաւիղ» իմաստներով (ՆՀԲ, հ. II, էջ 680: ԱԲ, էջ 708: ԳԲ, հ. Բ, էջ 434: ԳՀԲ, էջ 598): Նույնն են արձանագրում ՍՀԲԲ-ն (հ. IV, էջ 163), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 249) և ԱՀԲԲ-ն (էջ 1258. վերջին երկուսը՝ «հնց.», «բնստ.» նշումներով): Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ Փավստոս Բուզանդի երկում *nash* բառի առկայությունը հնարավորություն է ընձեռում հանգելու *nash* արմատի՝ «Ոսկեդարում գոյութիւն» ունենալուն (ՀԱԲ, ն.տ.): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *nash*-ը *նայ*, *ռե* տարբերակներով գործածվում է միայն Ղարաբաղի (Գնձ.) բարբառում (հ. Ե, էջ

հ. I, 1986, էջ 720. հ. II, 1987, էջ 782: *Ռակայ* և *nash* բառերը վկայվում են նույնանիշների՝ ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566(I)-ում և ՄՄՁ 775-ում. առաջինում՝ համապատասխանաբար *Ճանապարհ* (258ա) և *Յիմար* (261ա) հենաբառերով բառաշարքերում, իսկ երկրորդում *Ռահ. ուղի. անցք. շաւիղ* բառաշարքն է (79բ):

²⁰ Ժամանակագրություն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց, 1705, Ամստերդամ, էջ 29: Տե՛ս նաև Կարգաորություն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցոյ, 1803, Թրեստ, էջ 21:

²¹ Բառարան հայերեն եւ անգլիական, հ. Բ., էջ 533:

²² Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի Արարեալ ի սրբոյն Ներսիսէ շնորհալոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. և անտի արարեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ որ և կոչի Օրծորեցի, Կոստանդնուպօլիս, 1825, էջ 114:

²³ Համառօտ քերականութիւն լատին բարբառոյ, Վենետիկ, 1839, էջ 8:

225), թեև Ղարաբաղի բարբառին վերաբերող աշխատություններում այն չի հիշատակվում²⁴:

ՆՀԲ-ն Կանոնագրքից քաղված միակ օրինակով՝ «Իւրաքանչիւր ոք ի մէնջ յանցս և յոսիս կարգեալ են», *nush*-ը բացատրում է՝ «իմս՝ որպէս ջրանցք. առու. յն. լտ. Καναλιον. Canalis» (ՆՀԲ, ն.տ.)²⁵:

Խար բառն է հավելվել ԺԶ դարից ավանդված ՄՄԶ 532-ում՝ *Խստերախ. խստավիզ. խստաբան. խստասիրտք* բառաշարքի վերջում (94բ): Պարսկերենից փոխառյալ «թշուառ, անարգ» նշանակությամբ այս բառը²⁶, ըստ ՀԼԲԲ-ի, վկայվում է միայն Թբիլիսի և Բորչալու բարբառախոս վայրերում՝ «ստոր, անարգ» նշանակությամբ, և բառարանում արձանագրվում է «անարգել, ստորացնել» նշանակությամբ *խար անել* հարադրությունը (բնագրային օրինակը՝ Մայաթ-Նովայից. հ. Բ, էջ 296): Հատկանշական է, որ քննվող որևէ գրքչագրում տեղեկություն չկա գրչագիրն ընդօրինակողի մասին: Այս մեկում, սակայն, նշվում է. «Գրեցաւ բառալոյծ»²⁷ գիրս ձեռամբ թոխաթցի ստեփաննոս իրիցու ի գեղն մուխաթ. ի դուռն սուրբ աստուածածնին. ի թվին ռխէ. մայիս ամսոյ» (87ա): Ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի՝ Մուխաթ գյուղը, «Վրացական ՄՄՀ Թերթիծղարոյի շրջանում» է՝ «Թբիլիսի-Կողա-Թերթիծղարո ճանապարհին: Հիշատակվում է թաթարմոնղոլական արշավանքների ժամանակներից (13-14-րդ դդ.), երբ գ ավերվել է: Հետագայում այստեղ բնակություն են հաստատել Կախեթից, Կարսից ու Ղարաբաղից գաղթած հայերը, որոնք այժմ մո-

²⁴ Տե՛ս Կ. Դավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966: Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան:

²⁵ Հատկանշական է, որ նույնանիշների՝ ԺԸ դարից ավանդված ՄՄԶ 775-ում *nush* բառին կից *անցք*-ը հուշում է, որ գրչագիրը կազմողը կամ ընդօրինակողը հավանաբար ծանոթ է եղել միջնադարյան հայ եկեղեցական իրավունքի ժողովածուին:

²⁶ Տե՛ս Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրէ Տեր Յոհաննէսեան Պալատոցոյ, էջ 182 (258):

²⁷ «Դժուար բառերը լուծող՝ մեկնող» նշանակությամբ *բառալոյծ*-ն արձանագրում է Ա. Մալխասյանցը որպէս հազվադէպ կիրառվող բառ. տե՛ս ԱՆԲԲ, հ. I, էջ 332:

ուացել են մայրենի լեզուն և խոսում են վրացերեն»²⁸: Հետևաբար բացատրելի է գրչագիրն ընդօրինակողի՝ «անսանձ, խրոխտացող, համառ, հանդուգն, անսաստ» նշանակություններով բառերին *խար*-ի հավելումը:

Ինչպես արդեն նշվել է, միայն ԺԷ դարից ավանդված ՄՄՁ 2291(II)-ում է վկայվում *Ռահվար. ուղղեզնաց. ճանապարհորդ. անցաւոր. ուղևորական. գնացեալ. յառաջեալ. եղեալ. երթալ* ՀԲՇ-ն (346բ): Հենաբառը պարսկերեն *ռահայեր*-ն է՝ «առաջնորդ ճանապարհի» նշանակությամբ²⁹:

ԺԸ դարից ավանդված ՄՄՁ 566 (II)-ում՝ *Գիծ. տառ. գծաւորք. նշանախեց. նշանագիծ. նշանագիր կամ գիր* ՀԲՇ-ում (283ա), վկայվող *յովտ*-ը փոխառյալ բառ է՝ «... որ յն. *ւ* գրի անունն է. գործածուած է Ս. Գրքի նոյն համարում. երբայեցերէնում նոյն գրի անունն է 𐎎𐎂 yōd» (ՀԱԲ, հ. Գ, էջ 407. տե՛ս նաև ՆՀԲ, հ. II, էջ 370): Հրաչյա Աճառյանը վկայակոչում է նաև Հովհան Ոսկեբերանի ճառերը, Եղիշեի ճառը՝ «ի չարչարանս Քրիստոսի», Մովսես Կաղանկատվացու երկը՝ նշելով, որ բառը «լայնաբար նշանակում է նաև «կէտ, նշան»», և մանրամասնելով՝ «Բառիս գործածութեան ուրիշ օրինակ չկայ» (ն.տ.): Թերևս կարելի է հավելել նաև սույն գրչագիրը:

Օտարաբառ կազմություններ են ԺԳ դարից ավանդված գրչագրերում առկա *գառքերան*-ը և *կոտզանալ*-ը (ՄՄՁ 4612, 172բ. 5596, 220բ): Առաջինը վկայվում է *Հոսկհայ* հենաբառով ՀԲՇ-ում. բաղադրված է պրսկ. ز [zar] «ոսկի» և հայերեն *քերան* արմատներով, բա-

²⁸ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 885:

²⁹ Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրե Տեր Յոհաննեսեան Պալատոյ, էջ 460 (538): Բառարանում նշվում է նաև «ուղեցոյց, այսինքն առաջնորդ ճանապարհի» նշանակությամբ *ռեհայեր*-ը. տե՛ս էջ 462 (540): *Վար*-ը, ըստ Հ. Աճառյանի, «Իրան. vad- «վարել, քշել» ձևից, որ թեև յետոյ կորած է, բայց կայ զնդ. vādāyēiti «վարել, քաշել, քաշ տալ»: Պատկանում է հնիւ. vedh- «վարել, քշել, տանիլ, առաջնորդել» արմատին» (ՀԱԲ, հ. Գ, էջ 313): Նշելի է նաև, որ, Հ. Աճառյանի հավաստմամբ, Ոզմի բարբառում *վարիլ*-ը «երթալ» իմաստն ունի (ՀԱԲ, հ. Գ, էջ 314): Ն. Պողոսյանը *ռահվար*-ը «ճանապարհորդ» նշանակությամբ վկայում է ՄՄՁ 2281-ում. տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 117:

ռացի՝ «ոսկի բերան ունեցող», այսինքն՝ «պերճախոս, ճարտարախոս»: Նույն նշանակությամբ՝ հայերեն արմատներով *ոսկերբքան*-ը նշում են ԲՀԼՄՍ-ն, ՆՀԲ-ն, ՄՀԲԲ-ն, ԺՀԼԲԲ-ն, ԱՀԲԲ-ն³⁰:

Երկրորդն առկա է *Այտուցեալ* հենաբառով ՀԲՇ-ում. բաղադրված է *զլուխ* բառին հոմանիշ բարբառային *կոտ* (ԱՀԲՈԻԲ, էջ 381: ՀԼԲԲ, հ. Գ, էջ 155: ՀԼՀԲ, էջ 147) արմատով և իրանյան *zadan* «խփել, հարվածել» բայի *zan* հիմքով. վերջինը հայերենի բարբառախոս վայրերում (Նոր Բայազետ, Վան, Մուշ, Մոկս և այլն) առկա է նաև *զանել* ձևով (Զանել, տե՛ս Զարկել. ՀԼԲԲ, հ. Ա, էջ 398, 404)³¹: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը, *zan*-ը իմաստով նույնական է *հար*-ին³²: Արդի հայերենի բացատրական բառարանները նույնպես *զանել*-ը հղում են *զարկել* բային, որի բազում իմաստներից մեկն էլ *վարսել*-ն է՝ «ուժով գետին խրել անցկացնել, ցցել» (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 16: ԱՀԲԲ, էջ 366): Նույն «հարվածելով խրել, վարսել» նշանակությամբ՝ ՄՀԲ-ն ունի *զարնել* և *զարկել* բայերը (հ. Ա, էջ 212, 213), իսկ ՆՀԲ-ն՝ *հարկանել*-ը՝ «մխել, խթել, հարստել» նշանակություններով (հ. II, էջ 63. *հարստել*, այն է՝ *վարսել*՝ Ն. Հ.): Կարելի է հավանական համարել միջին հայերենում բայի «ցցել, տնկել» իմաստը, ուրեմն և *կոտզանալ*՝ «զլուխը ցցել, տնկել» (հմտ.՝ *քիթը ցցել, տնկել*՝ «գոռոզանալ, ամբարտավանալ, փքվել»): ՀԼՀԲ, էջ 599. նաև՝ հայերենի բարբառներում գործածվող *քիթը ցից, տնկած, քեթը ցեց* և այլ տարբերակներ³³): *Զանել* բայի փոխարեն *զանալ*-ի առկայությունը բացատրելի է ՀԲՇ-ում նախորդող և հաջորդող *կոկոզանալ, բարձրավզանալ* բայերի համաբանությամբ:

³⁰ Այն վկայվում է նաև ԺԷ դարում. տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 71:

³¹ Հ. Աճառյանը բարբառախոս վայրերից նշում է միայն «Նոր -Բայազետ»-ը (ՀԳԲ, էջ 316):

³² Լ. Հովհաննիսյան, V դարից վկայված մի քանի բառերի քննություն, Պատմաբանասիրական հանդես, 2, 1991, էջ 148: Տե՛ս և հմտ.՝ ԺԷտ արմատը. ՀԱԲ, հ. Բ, էջ 228:

³³ Հ. Մեսրոպյան, Ածական հոմանիշները հայերենի բարբառներում, էջ 167:

* *
*

Գրչագրերում առկա են նաև փոխառյալ արմատով (բառով) և հայերեն մասնիկով կազմություններ³⁴: Լեզվաբաններն այսպիսի կազմությունները փոխառություններ չեն համարում: Ինչ վերաբերում է «փոխառյալ» բայերին, ապա նկատի է առնվում, որ «դրանք փոխադրվել են հայերենի մեջ իրենց հիմնական մասով և բայական ձևավորում են ստացել հատկապես *-ել* մասնիկով»³⁵: Ստորև նույնպես որդեգրվում է այս մոտեցումը: Բայց և հարկ է նշել, որ ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 5596-ում նշված կազմությունները *-ալ* վերջավորությամբ են:

Մարկանայ, մուրկանայ տարբերակներն են վկայվում *Թշուառանայ* հենարառով ՀԲԾ-ում: Տարբերակներից առաջինն առկա է ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 5596 (222ա), 4612 (174բ)-ում, երկրորդը՝ ԺԳ դարից ավանդված ՄՄՁ 4149 (355բ): *Մուրանայ* բայն ունեն ԲՀԼՄՍ-ն՝ որպես «մուրալ» (էջ 269 (882))³⁶, և ԽՀԲՌ-ն՝ իբրև «нищенствовать» (հ. II, էջ 171): ՆՀԲ-ն և ԱԲ-ն վկայում են *մուրիկ, մուրկան* բառաձևերը իբրև «մուրացկան» (ՆՀԲ, հ. II, էջ 301: ԱԲ, էջ 575): ԲՀ-ն ունի «*Սօրկան-թշուառ*» (ԲՀ, էջ 222): ՄՀԲ-ն նշում է *մուրականություն* բառը՝ հղելով *մուրացություն* բառին (ՄՀԲ, հ. Բ, էջ 153): Աշոտ Սուքիասյանն արձանագրում է *Մուրկան*-ը «տե՛ս Սուրացկան» նշումով (ՀԼՀԲ, էջ 475): Բաղադրված է *մոյր* «մուրացկանություն, մուրացկանին տրուած ողորմութիւն» արմատով «=Պիլ. *mōð ձևից, որ պահում է միայն նորագիւտ սոգդ. mōð=mōð «աղքատի տրուած ողորմութիւն...»» (ՀԱԲ, հ. Գ, էջ 345: ՀԼՊՆԺ,

³⁴ Օտար հիմքով (արմատով) բայերի մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 114-120:

³⁵ Ա. Աբրահամյան, Բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 7-8, 1960, էջ 126:

³⁶ Բառարանում առկա է նաև «մուրացկան» նշանակությամբ *մուրակ* բառը (տե՛ս անդ):

էջ 534 -535), «անող, լինող» նշանակությամբ *-կան* բաղադրիչով³⁷ (հմմտ.՝ լացկան, մրսկան, որսկան...) և *ալ* բայական վերջավորությամբ:

Արդեն նշվել է, որ «...ող-ող վերջավորություններով ենթակայական դերբայները միջին հայերենում շատ ավելի լայն կիրառություն ունեն» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 314): Այնպես որ պատահական չէ, Հրաչյա Աճառյանի ստուգաբանությամբ, «... Արաբ. ڪر nakār «ուրանալ, անգիտանալ»...» «օտար փոխառյալ բառ» -ով (ՀԱԲ, հ. Գ, էջ 457) կազմված նաև *նկիրացող* դերբայի առկայությունը *Սմեղել* հենաբառով ՀԲՇ-ում (ՄՄՁ 4612, 175ա. 5596, 223ա): Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ «ունի միայն ՀՀԲ. աղբիւրը անյայտ է» (ՀԱԲ, ն.տ.): Հարկ է նշել, որ Մխիթար Մեբաստացին առանձնացնում է «Նկիրացող... Ժխտող կամ ուրացող. կամ դըժբող...» բառահոդվածը (ԲՀԼ, էջ 764 (823)), և բառը հիշատակում *Ուրացող* բառահոդվածում (ԲՀԼՄՄ, էջ 502 (1529)), այլև հավելել, որ «անյայտ» աղբյուր, թերևս, կարող է լինել ԺԳ դարից ավանդված այս գրչագիրը: ՄՀԲԲ-ում բառը «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով է (հ. III, էջ 466):

Այսպիսով՝ արձանագրելի է, որ գրչագրերում վկայվող վերոնշյալ ասորերեն, եբրայերեն, լատիներեն, հունարեն բառերը, ըստ բառարանների, հիշատակվում են հայ մատենագրության մեջ՝ պատմագիրների երկերում, հոգևոր գրականության մեջ, և գրիչները կամ ընդօրինակողները, քաջածանոթ հայ մատենագրությանը, կարող էին դրանք հավելել համապատասխան ՀԲՇ-ում: Ինչ վերաբերում է իրանական լեզուներից փոխառություններին, ապա դրանք, դարձյալ ըստ բառարանների, հնչյունական տարբերակներով և տարբեր նշանակություններով գործածվում են հայերենի բարբառներում:

³⁷ Հմմտ.՝ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, էջ 196: Մ. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, էջ 141-142:

SUMMARY

This work studies handwritten dictionaries of synonyms, summarized in sixty three manuscripts dated from the 13th to 18th centuries, as evidenced by the catalogs of the Matenadaran (Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts).

I) The introduction provides a brief historical background and discusses issues related to the relationship between language and the history of the Armenian people.

II) The types and compositions of handwritten dictionaries are presented. They are classified by titles, distinguishing between dictionaries with non-alphabetical and alphabetical arrangements of words.

III) The views of Armenian grammarians from the Middle Ages on synonymy are discussed. It is confirmed that they generally agree on certain points, albeit with some reservations. The grammarians considered words conveying the same meaning but differing in pronunciation as synonyms: words characterizing a phenomenon, reality, or object in a complex, multifaceted sense were regarded as synonyms without semantic restrictions, differing from the absolute, full, and partial synonyms identified in later studies.

IV) An examination of the principles for forming synonymous rows in handwritten dictionaries reveals that they were compiled according to the concepts of Middle Age Armenian grammarians. The units in synonymous rows are connected by meaning and united by a common concept. These rows are formed based on semantic cause-and-effect relationships, somewhat reminiscent of constructions like "if...then." Additionally, synonymous series are formed through semantic nuances of words.

V) When analyzing the lexical and morphological features of synonymous rows, it is noted that the principle of compiling synonymous rows with the same parts of speech is generally upheld. However, there are a few rows that include words from different parts of speech. Synonyms formed from different roots predominate, and the rows also contain prepositional formations, compound verbs, phraseological units, explanatory phrases, descriptive expressions, and references that arise from the essence and purpose of the dictionary.

In recording facts, the earliest handwritten dictionaries created or copied are of utmost importance, as earlier evidence of a given linguistic phenomenon holds greater significance for the history of the language.

VI) Word variants are highlighted and examined by combining all handwritten dictionaries. The study of word variants in synonymous rows confirms the existence of double forms with changes in vowels and consonants, as recorded in Old Armenian and medieval written sources. In some instances, double forms with consonant sounds are more characteristic of Western Armenian dialect-speaking areas, suggesting that these dictionaries may have been copied in Western Armenia.

VII) The changes in word meanings in handwritten dictionaries compared to the original monuments of Armenian literature are examined in detail. Words with new meanings and semantic nuances are highlighted. Given that the creation dates of the handwritten dictionaries are unknown (with the earliest copies dating back to the 12th century, though they may have originated earlier in the 10th-11th centuries), Old Armenian printed dictionaries were also compared to trace changes in word meanings. It suggests that the authors were well-acquainted with both independent and translated Armenian literature, and that these meanings were included in the vocabulary for educational purposes. The highlighted meanings are present in Old Armenian dictionaries published after the 17th century, supplemented with textual examples, primarily reflecting meanings recorded in these handwritten dictionaries. According to the dictionaries data, some meanings have changed or have not been preserved in modern Armenian. This study also reveals words that have shifted in meaning or have slightly different semantic nuances in modern Armenian.

VIII) The examined handwritten dictionaries contain words not attested in Old Armenian printed dictionaries, which can be considered newly created. Since these dictionaries lack textual examples, an attempt is made to confirm the existence of these words through the peculiarities of word formation in the Armenian language, later published dictionaries, and, where possible, textual examples. The handwritten dictionaries in which these newly created words are recorded are significant, with words presented by century - first those attested in the 13th century, followed by those from later centuries. The study reveals that the newly created words align with the word-formation structures of the Armenian language. Scribes created or added words used by contemporaries; some words are attested only in these dictionaries, while others appear in the dictionaries compiled

by E. Megretsi (17th century), J. Villotte, Mkh. Sebastatsi (18th century), N. Byuzandatsi, and in bilingual and trilingual dictionaries of the members of the Mekhitarist Congregation (19th century), as well as in various grammatical and historical works. According to dictionaries, some of these words are preserved in both Eastern and Western Armenian variants with the same meanings or different semantic nuances.

IX) In the handwritten dictionaries, several rows of synonyms contain words used in Armenian dialects and colloquial speech in phonetic variants. This confirms that, although there was an unwritten rule to remain close to the original manuscript, scribes had the opportunity to supplement the synonymous rows or include words known to them. Additionally, without excluding the influence of the surrounding language and considering the vast areas where manuscripts were copied, dialect words in these dictionaries may, perhaps, indicate the region of manuscript copying or the scribe's affiliation with that area.

X) The assumption that manuscript scribes intervened in the text and rewrote it according to their level of language proficiency is also supported by the borrowings present in several synonymous rows of handwritten dictionaries; they may reflect the linguistic situation of the time. According to dictionaries, Greek, Latin, Assyrian, and Hebrew words attested in these handwritten dictionaries are mentioned in independent and translated Armenian literature (in the Bible, in historical works, and in spiritual literature), allowing scribes to add them to the corresponding synonymous series. As for words borrowed from Iranian languages, according to the dictionaries, they are used in Armenian dialects with phonetic variations and different meanings.

Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., Երկեր, Զ, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1974:

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Գիրք II (XI-XIX դարի 30-ական թ.թ.), Ե., 1946:

Աբրահամյան Ա., Բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 7-8, 1960:

Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953:

Աբրահամյան Ա., Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության. Մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր. հասարակական գիտություններ, 4, 1957:

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:

Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972:

Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Ե., 1958:

Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. II, Ե., 1954:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951:

Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:

Ամալյան Հ., Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), Ե., 1966:

Անասյան Հ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976:

Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար), Ե., 1981:

Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրական լեզուն և ոճը, Ե., 1984:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Հայոց լեզու, հ. I, Ե., 1979:

Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (10-14-րդ դդ.), Ե., 1973:

Բեդիրյան Պ., Իմաստի փոփոխությունները հայերենում, թեկն. առևան., Ե., 1955:

Բեդիրյան Պ., Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մասին, Գիտական աշխատությունների Հայոց լեզվի բաժին N 1, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄԻ, Ե., 1965:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ.-մբ Պ. Խաչատրյանի, Ե., 2000:

Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:

Ղալայան Տ., «Թարուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո, Ջահուկյանական ընթերցումներ, 1 (21), Ե., 2024:

Ղավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

Ղավիթ Ջեյթունցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Եր. Մելքոնյանի, Ե., 1981:

Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Ե., 1966, էջ 121:

Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006:

Իշխանյան Ռ., Հայ գիրքը (1912- 1920), Ե., 1981:

Լեռ, Երկերի ժողովածու, հհ. I, II, Ե., 1967, 1969:

Խաչերեան Լ., Գր. Պահլաւունի Մագիստրոս. Կեանքն ու գործունեութիւնը, Լոս Անճելըս, 1987:

Խաչերյան Լ., Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Ե., 1973:

Կաժյան Վ., Հնչյունները և հնչյունափոխական իրողությունները Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» մեջ, Ասպիրանտական գիտական աշխատությունների ժողովածու, 8, պրակ II, Ե., 1975:

Կատվայան Վ., Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:

Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014:

Հաղորդի բառ ու բան, Աշխ.-մբ և խմբ.-մբ Ա. Սարգսյանի, Ե., 2023:

Հակոբյան Թ., Անիի պատմությունը, Գիրք II, Ե., 1982:

Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ -XIX դ.), հ. 1, Ե., 2006:

Համբարձումյան Վ., Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու, ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990:

Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976:

Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV-XVIII դդ.), Ե., 1979:

Հովհաննիսյան Լ., Բառային տարբերակներ V դարի գրաբարում. - Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, 1991:

Հովհաննիսյան Լ., Բառաքննական նկատառումներ, Պատմաբանասիրական հանդես, 3, 2003:

Հովհաննիսյան Լ., Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար), Ե., 2007:

Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990:

Հովհաննիսյան Լ., Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005:

Հովհաննիսյան Լ., XVII դարի գրաբարը.- Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., 1983:

Հովհաննիսյան Լ., V դարից վկայված մի քանի բառերի քննություն, Պատմաբանասիրական հանդես, 2, 1991:

Հովհաննիսյան Ն., Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն.-Հայոց լեզվի պատմության հարցեր, III, Ե., 199:

Հովհաննիսյան Ն., Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., 2020:

Ղազարյան Ռ., Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010:

Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Ե., 1993:

Ղազարյան Ս., Միջին հայերեն, Գիրք Ա, Ե., 1960:

Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, Ե., 1980:

Ղանալանյան Ա., Առածանի, Ե., 1960:

Ղուկասյան Շ., 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն, թեկնատեն., 2004:

Մանանդյան Հ., Հայաստանի քաղաքները X-XI դարերում, Ե., 1940:

Մանուկյան Տ., Լեզվաբանական տերմինները ԺԴ-ԺԷ դդ. հայերեն ձեռագիր քերականական աշխատություններում, թեկնատեն., Ե., 2017:

Մարգարյան Ալ., Ստուգաբանություններ, Ե., 2015:

Մեսրոպյան Հ., Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010:

Միրզոյան Հ., Միմեոն Ջուղայեցի, Ե., 1971:

Մկրտչյան Է., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980:

Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958:

Մուրադյան Ա., Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971:

Մուրադյան Գ., Հունարանությունները դասական հայերենում, Ե., 2010:

Մուրադյան Հ., Բառային զուգաբանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985:

Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., 1960:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն: Հնչյունաբանություն, հ. I, Ե., 1982:

Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955:

Յովհաննես Երզնկացի, Հուարքումն Մեկնութեան քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելլոս, 1983:

Յովհաննես Օրծորեցի, Համառատ տեսութիւն քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելլոս, 1984:

Յովհաննես Քոնեցի, Համառօտ հուարքումն յաղագս քերականի, Ե., 1977:

Չալոյան Վ., Հայկական ռենեսանս, Ե., 1964:

Չուգասոյան Բ., Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Ե., 1963:

Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910:

Ջահուկյան Գ., Բարբառային երկոյթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997:

Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Ստուգաբանություններ.- Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976:

Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Ե., 1954:

Սևակ Պ., Անտիպ ուսումնասիրություններ, Ե., 2016:

Սուքիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971:

Վազգեն վարդապետ, Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 2008:

Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Քերականի, աշխ.-մբ Լ. Խաչերեանի, Ե., 1972:

Տեր-Մինասյան Ե., «Ջգօն» կոչված գրքի հեղինակի հարցը, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1964:

Տեր-Պետրոսյան Լ., Louis Leloir, *Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita* (1855) nunc latine reddita, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“, t. I (Vol. 353 Subs. 42), 1974; t. II (Vol. 361 Subs. 43), 1975; t. III (Vol. 371 Subs. 47), 1976; t. IV (Vol. 379 Subs. 51), 1976, Louvain. Լուի Լըլուար, Հայոց «Վարք Հարանցի» լատիներեն թարգմանությունն ըստ Մխիթարյան Հայրերի 1855թ. հրատարակության, հտ. 1-4, Լուվեն, 1974-1976, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1979:

Տեր-Պետրոսյան Լ., Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, 1974, 3:
Ուլուբաբյան Բ., Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981:

Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխ.՝ Հ. Սահակյանի, Ե., հհ. I, II, 1986, 1987:

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Микаелян Г., История Киликийского армянского государства, Е., 1952:

Орбели И., Избранные труды, т. I, Москва, 1968.

Тер-Петросян Л., Армения и христианская Сирия: культурные связи (IV-Vвв.), Ереван, 2022:

Шахермайр Ф., Александр Македонский, Москва, 1984:

Օգտագործված բառարաններ

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Ե., 1971-1979:

Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղէքսանդրի Մակարեան Խոռոբաբաշեանց, հհ. I, II, Մոսկով, 1838:

Բառարան Սուրբ Գրոց, Կոնստանդնուպոլիս, 1881:

- Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց**, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի, հ. I, Վենետիկ, 1891:
- Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական**, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան, Վենետիկ, 1837:
- Բառգիրք լատիներէն եւ օտարազգի դարձուածների**, Թիֆլիս, 1911:
- Բառգիրք հայոց**, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրութիւնները Հ. Ամայանի, Ե., 1975:
- Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական -ուղղախոսական -տերմինաբանական բառարան, Ե., 1973:
- Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
- Բիւզանդացի Ն.**, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնեւ, 2000:
- Գաբամաճեան Ս.**, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:
- Գայայեան Յ.**, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938:
- Գորգաձե Ռ.Կ.**, Վրացերեն-հայերեն բառարան, Ե., 2005:
- Էլոյան Ս.**, Արդի հայրենի նորաբանութիւնների բառարան, Ե., 2002:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հհ. I-IV, Ե., 1969-1980:
- Կռանեան Ա.**, Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրութ, 1998:
- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991:
- Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան**, Յօրինեց Պետրոս վարդ. Ճիզվեճեան, հհ. I, II, Հալէպ, 1954, 1957:
- Հայոց բառ ու բան**, Աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912:
- Հայոց լեզուի նոր բառարան**, Աշխատասիրեցին՝ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ.Կ. Տոնիկեան, Պէյրութ, 1968:
- Հայոց լեզուի նոր բառարան**, Աշխատասիրեցին՝ Գ. Ճերեճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հ. I, Պէյրութ, 1992:

Հայոց լեզվի բարբառային բառերի բառարան, հհ. Ա, Բ, Գ, Զ, Ե., 2001, 2002, 2004, 2010:

Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:

Հիրմիզեան Եդ., Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869:

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:

Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հհ. Ա, Բ, Ե., 2000:

Ղազարեան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, 2006:

Ղազարեան Ռ., Աւետիսեան Հ., Նորայայտ բառեր գրաբարում, Ե., 2007:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հհ. Ա, Բ, Ե., 1987, 1992:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. I- IV, Ե., 1944-1945:

Նալբանդյան Գ., Պահլավերեն-հայերեն բառարան, Ե., 1994:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիելի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Միրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Վենետիկ, հհ. I, II, 1836-1837:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով, հ. 1-5, Ժնև, 1990:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազոյլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014:

Ջալաշյան Գ., Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան, Դոնի Ռոստով, 2012:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Ե., 1992:

Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

Սուրբիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

Սուրբիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Даль Вл., Толковый словарь живого великорусского языка, т. 1, Москва, 1955.

Древнегреческо-русский словарь, Сост. И.Х. Дворецкий, т. 2, Москва, 1958:

Курдоев К., Курдско-русский словарь, Москва, 1960.

Фасмер М., Этимологический словарь русского языка, т. 4, Москва, 1973.

«Գրահավաք» կայքի «Որոնում հայերեն բնագրերի առցանց շտեմարաններում» հարթակի միջոցով վկայվող աշխատասիրություններ և բառարաններ

Ալիշան Ղ., Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:

Ալիինեան Ն., Հ. Աճառեան. Հայերեն Արմատական Բառարան, Հանդես Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8:

Աճառեան Հ., Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա -Վաղարշապատ, 1902:

Աճառեան Հ., Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասատրութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա- Նոր-Նախիջեան, 1911:

Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ. Ա, Վենետիկ, 1913:

Արուեստ քանական կամ տրամաբանություն Փրանկիսկոսի Ստաւէի. Փոխեաց ի հայ հ. Արսէն վ. Անթիմոսեան Մխիթարեանց, Վենետիկ, 1825:

Գիրք պիտոյից, Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Ե., 1993:

Գրիգորի Մագիստրոսի “Գամագտականի,” ամբողջական լուծումը, Երկասիրեաց Հ. Գաբրիէլ ծ. վ. Մէնէվիշեան, Վիեննա, 1912:

Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա.Ա. Ղազինյանի, Ե., 1985:

Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան և այլ երկասիրությունք, Անթիլիաս, 2003:

Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ.Պոլիս, 1746:

Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, թարգմ. և ծանոթ. Հակոբ Քյոսեյանի, 1995:

Ժամանակագրություն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց, 1705, Ամստելքոդաս:

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Խաչիկյան, Ե., 1950:

Շալեան Մ.Գ., Համառօտ պատմություն ընդհանուր ազգաց, Ե. եւ Ջ. մասեր, Արդի եւ ժամանակակից, Կ. Պոլիս, 1898:

Կարգաւորություն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցոյ, 1803, Թրեստ:

Համառօտ քերականություն լատին բարբառոյ, Վենետիկ, 1839:

Համառօտություն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալբերտին, Թարգմանեցեալ ի վաղնջուց ժամանակաց, ի մեծամեծաց վարդապետաց մերոց, ի լաթին լեզուէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1715-1716:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862:

Մանանդյան Հ., Երկեր, Գ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ե., 1977:

Մանանդյան Հ., Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք, Բանբեր Մատենադարանի, 3, 1956:

Մեկնութիւն գրոց Ժողովողին, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1736:

Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1737:

Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի Արարեալ ի սրբոյն Ներսիսէ շնորհալոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. և անտի արարեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ՝ որ և կոչի Ծործորեցի, Կոստանդնուպօլիս, 1825:

ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, յօրինեալ ի Հ. Միքայէլ վրդ. չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Բ, Վենետիկ, 1785:

Միսուան համագրութիուն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Հաւաքեալ ի հ. Ղեւոնդեայ վ. մ. Ալիշան, Վենետիկ, 1885:

Տաղք Մխիթարեան վարդապետաց, հատոր առաջին, Վենետիկ, 1852:

Փորձառական բնագիտութիւն կամ ֆիզիգա համառօտ օղերեւութաբանութեամբ եւ քիմիայով, Աշխատասիրեց Հ. Բարսեղ վ. Նուրիճանեան, Վիեննա, 1856:

Քերականութիւն գրաբառ լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, Վենետիկ, 1770:

Քիւրքճեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919:

Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և հաւելուածով Յօրինեաց Հ. Արսէն վ. Այտընեան, Վիեննա, 1866:

Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմուրճեանի. Յաւելուած Ա. Թղթեր. Բ. Ուղերձներ. Գ. Գանձեր եւ Ողբեր, Երուսաղէմ, 1939:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Յօրինեաց Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, Վենետիկ, 1846:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865:

Բառարան գաղղիերեն-հայերեն-տաճկերեն աշխատասիրեաց Հ. Սանուել վ. Գանթարեան, Վենետիկ, 1886:

Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատ. Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. II, Վենետիկ, 1817:

Բառարան հայերեն եւ անգղիական, Աշխատասիրեալ ի Յ. Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. Բ, Վենետիկ, 1825:

Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, ընծայեալ ի լոյս երկասիրութեամբ Սանուել վրդ. Ջախջախեան, Վենետիկ, 1804:

Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատցոյ, Կ. Պօլիս, 1826:

Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, գոր աշխատասիրեաց Հ. Յարութիւն վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1840:

Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ, Վենետիկ, 1749:

Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աշալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, և րաբունապետին սեբաստացոյ, Վենետիկ, 1769:

Բառգիրք հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտրմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, հ. I, II, Կ. Պօլիս, 1844, 1846:

Լուսինեան Գ., Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հատոր առաջին, A-H, Փարիզ, 1900:

Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, աշխատ. Հ. Սանուել վ. Ջախջախեան, Վենետիկ, 1829:

Հայերէն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան, Էմիւնեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Villotte J., Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714.

Համարարբան

Համարարբան գրաբար Աստվածաշնչի, Էջմիածին, 2012:

Էլեկտրոնային կայքեր և հղումներ

councils.yasu.am/pdf_files/009/2017/009-Armine_Danielyan.pdf

<http://surl.li/cjosph>

<http://surl.li/cupue>

<http://surl.li/fzxowx>

<http://surl.li/gfhwap>

<http://surl.li/hjzqol>

<http://surl.li/jztigx>

<http://surl.li/khbphy>

<http://surl.li/kmjrxz>

<http://surl.li/kybgia>

<http://surl.li/nbwisf>

<http://surl.li/ngvvea>

<http://surl.li/qulpgs>

<http://surl.li/ufrbnq>

<http://surl.li/yrrokn>

https://arar.sci.am/Content/174212/file_0.pdf

<https://bit.ly/41d6caP>

<https://bit.ly/3KnRad3>

<https://journals.library.columbia.edu/index.php/alusur/article/view/uw32budakpifer>

<https://surl.li/fmqsbf>

<https://surl.li/qanvoh>

<https://surl.li/uleewj>

<https://surl.li/zghmun>

https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/2010/28_ocr.pdf

<https://www.digilib.am/book/1472/1775/13786/?lang=am>

<https://www.kinoversus.com/2016/08/marco-ferreri.html>

https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/StepanosErec.pdf

**Ձեռագրացուցակներ և
Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր**

Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Ե., 1965-1970:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Ձեռագիրք 2101-2400, Խմբ. Գեորգ Տէր-Վարդանեսանի, Ե., 2012:

ՄՄՁ 266-(76ա-84ա); 267-(183ա-194բ); 268-(302ա-312ա);

516-(102բ -108ա); 529-(129ա-137բ); 530-(59բ-65բ); 532-(87ա-95ա);

533-(2ա-14բ); 536-(110բ-116բ); 537-(216 ա-228բ); 538-(85բ-95ա); 540-

(219բ-234ա); 545-(185ա-194բ); 566(II)-(279բ-300ա);

682-(4ա-6բ);

843-(279բ-288բ);

1654-(253ա-260ա);

2019-(162բ-170ա); 2281-(122բ-131ա); 2291(I)-(316ա-325ա); 2291(II)-

(344ա-347ա); 2295-(111ա-122բ); 2330-(97ա -102բ); 2331-(226ա-323բ);

2335-(252ա-256բ); 2369-(255ա-265բ); 2370-(290ա-297բ); 2371-(277-

288); 2372-(331բ-350ա); 2381-(226բ-235բ); 2431(I)-(282ա-298ա); 2431

(II)-(265բ-282ա);

3170-(166ա-178ա); 3197-(145բ-160բ); 3200-(180ա-192բ); 3257-(238բ-

251ա); 3261-(227ա-240բ); 3286-(293ա-300բ); 3450-(67ա-79բ); 3468-

(457բ -465բ); 3488-(107ա-119ա); 3824-(47ա-52բ); 3937-(52բ-58բ);

4149-(351բ-364ա); 4612-(169բ -177բ);

5008-(119ա-124ա); 5126-(17բ-31ա); 5919-(203բ-210բ); 5925-(89բ-102

ա); 5596-(217ա-225բ); 5995-(203բ-218բ);

6097-(275ա- 287ա); 6624-(136ա-148ա);

7004-(124ա-136բ); 7014-(127ա-143բ); 7117-(309ա-320բ); 7250-(74բ-82

բ); 7995-(40ա-45ա);

8106-(56ա-62բ); 8198(I)-(54 ա-59բ); 8198(II)-(64ա-68ա); 8533-(121ա-

128բ); 8563-(101ա-112ա); 8606-(3ա-25բ); 9166-(1ա-11բ);

9992-(2ա-4բ);

10223-(190բ-202ա):

Հապավումներ

ԱԲ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Յօրինեաց Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան

ԱՀԲԲ - Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան
ԲՀ - Բառգիրք հայոց

ԱՄԳՀՊ – Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության

ԲՀԼ - Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ

ԲՀԼՄՍ - Բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Արարեալ բազմատըքուն, և աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեան Մխիթարայ մեծի արքայի, և բարունապետին սեբաստացոյ

ԳԲ - Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան

ԳՀԲ - Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան

ԳՆԲՀԼ - Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերեն լեզուի

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան

ԽԲՀՌ - Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղէքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց

ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀԲՇ - հոմանիշների բառաշարք

ՀԳԲ - Հայերեն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան

ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան

ՀԼԴԲ - Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան

ՀԼՀԲ - Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան

ՀԼՊՆԺ - Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան

ՁԲ - ձեռագիր բառարան

ՄՀԲ - Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան

ՄՀԲ, 2009 - Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 2009

ՄՀԲԲ - Ս. Մայիսասեանց, Հայերէն բացատրական բառարան
 ՄՄՁ - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր
 ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից
 վարդապետաց Հ. Գարրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմե-
 լեան, Հ. Մկրտչի Աւգերեան

ՆԲՀԼ- Նոր բառգիրք հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխա-
 ցուած Ն. Բիւզանդացու ձեռքով

ՋԲ - Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Հ. Մա-
 նուէլ վարդապետէ Ջախջախեան

ՋՀՄԲ - Գ. Ջահուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան

ՓԲ - Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտը-
 մալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի

ՔՄ - Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ զեղեցիկ դպրու-
 թեանց Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն: Պատմական ակնարկ.....	5
Ձեռագիր բառարանների կազմությունը և տեսակները.....	17
Հոմանիշությունն ըստ միջնադարի հայ քերականների.....	35
Բառաշարքերը ձեռագիր բառարաններում.....	44
Բառաշարքերի ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները.....	56
Բառային տարբերակներ կամ զուգաձևեր.....	69
Բառիմաստների փոփոխություններ և նրբերանգներ.....	112
Նորակազմություններ.....	152
Բարբառային իրողություններ.....	198
Փոխառյալ բառեր և օտարաբառ կազմություններ.....	208
Summary.....	222
Օգտագործված գրականություն.....	225
Հապավումներ.....	239

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**«ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՑ» ԽՈՐԱԳՐՈՎ ՁԵՌԱԳԻՐ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐ (ԺԳ-ԺԸ ԴԱՐԵՐ)**

Ձևավորումը և էջադրումը՝ Մելանյա Խառատյանի
Կազմը՝ Գոռ Գրիգորյանի



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ք. Երևան, Բաղրամյան 30 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ.՝ (374 11) 52 10 20, (374 11) 54 62 60
Էլ. փոստ՝ info@asoghik.com